1924 1939

ԼԵՆԻՆ

087.1
Լ-35

ՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՍՀ
ՊԵՏՀՈՍ

2 3 MAY 2005

087.1
Լ-35

ԼԵՆԻՆ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ 15-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՍԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1989

16327

10 SEP 2013

Գլխ. խմբագիր՝ ՍԻՄԱԿ
Կազմեցին՝ ԱՐԱՓՍ, ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

1886
39

ЛЕНИН

Сборник

(к 15-тилетней годовщине со дня смерти
В. И. Ленина)

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ 3 տարեկան հասակում

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Խորհուրդների համամիութենական II համագումարում արտասանած ճառից, 1924 թ. հունվարի 26-ին:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—բարձր պահել և մաքուր պահպանել կուսակցության անդամի մեծ կոչումը: Ցերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—աչքի լույսի պես պահպանել մեր կուսակցության միասնությունը: Ցերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—պահպանել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան: Յերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, վոր մենք չենք խնայի մեր ուժերը, վորպեսզի պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—բոլոր ուժերով ամրապնդել բանվորների ու գյուղացիների դաշինքը: Յերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—ամրացնել ու ընդլայնել Հանրապետությունների Միությունը: Յերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, վոր մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս:

Հեռանալով մեզնից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց—հավատարիմ մնալ Կոմունիստական Ինտերնացիոնալի սկզբունքներին: Յերդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, վոր մենք մեր կյանքը չենք խնայի, վորպեսզի ամրապնդենք ու ընդլայնենք ամբողջ աշխարհի աշխատավորների միությունը — Կոմունիստական Ինտերնացիոնալը:

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Ճառ կրեմլյան կուրսանտների յերեկույթում 1924 թ. հունվարի 28-ին

Ընկերնե՛ր: Ինձ ասացին, թե այստեղ ձեզ մոտ Լենինի մասին հուշերի յերեկո չե կազմակերպված, թեկ յես հրավիրված եմ յերեկույթին իբրև զեկուցողներից մեկը: Յես կարծում եմ, վոր Լենինի գործունեության մասին կոպակցված մի զեկուցում տալու անհրաժեշտություն չկա: Յես կարծում եմ, վոր ավելի լավ կլիներ սահմանափակվել մի շարք փաստերը հաղորդելով, վորոնք նշում են Լենինի միքանի առանձնահատկություններն իբրև մարդու և իբրև գործչի: Այդ փաստերի միջև գուցե ներքին կապ էլ չլինի, բայց այդ չի կարող վճռողական նշանակություն ունենալ Լենինի մասին ընդհանուր պատկերացում ստանալու համար: Համենայն դեպս, յես տվյալ դեպքում հնարավորություն չունեմ ձեզ ավելին տալու, քան այն, ինչ վերը խոստացա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՍԵՐԾԻՎԸ

Յես Լենինի հետ ծանոթացա առաջին անգամ 1903 թ.: Ճիշտ է, այդ ծանոթությունն անձնական չեր, այլ հեռակա, դրագրության կարգով: Բայց նա իմ մեջ թողել է անջնջելի տպավորություն, վորը յես չեմ մոռացել կուսակցության մեջ իմ ամբողջ աշխատանքի ժամանակ: Յես այն ժամանակ Սիբիրումն եյի, աքսորում: 90-ական թվականների վերջից և մանավանդ 1901 թվականից հետո, «Искра»-յի հրատարակումից հետո, Լենինի հեղափոխական գործունեության հետ իմ ունեցած ծանոթությունն ինձ այն հա-

մողման բերեց, վոր մենք հանձին Լենինի արտասովոր մի մարդ ունենք: Նա այն ժամանակ իմ աչքում կուսակցության հասարակ մի ղեկավար չեր, նա նրա իսաստական ստեղծողն եր. վորովհետև մենակ նա յեր, վոր հասկանում եր մեր կուսակցության ներքին եյությունը և անհետաձգելի կարիքները: Յերբ յես նրան համեմատում եյի մեր կուսակցության մնացած ղեկավարների հետ, ինձ ամբողջ ժամանակ թվում եր, թե Լենինի ղենակիցները—Պլեխանովը, Մարտովը, Ակսելրոդը և ուրիշները—մի ամբողջ գլխով ցածր են Լենինից, թե Լենինը նրանց համեմատությամբ վո՛չ թե պարզապես ղեկավարներից մեկն է, այլ բարձրագույն տիպի մի ղեկավար, լեռնային արծիվ, վորը պայքարի մեջ յերկյուղ տված բանը չի ճանաչում և կուսակցությունը համարձակորեն առաջ է տանում ռուսական հեղափոխական շարժման անծանոթ ուղիներով: Այդ տպավորությունն այնքան խորն եր թափանցել իմ հոգում, վոր յես անհրաժեշտություն զգացի այդ մասին գրել իմ մի մոտիկ բարեկամին, վորն այն ժամանակ տարագրության մեջ եր, նրանից կարծիք պահանջելով: Միքանի ժամանակ հետո, Սիբիրում աքսորական յինելով,— այդ 1903 թ. վերջին եր,— յես իմ բարեկամից ստացա հրճվանքով լի մի պատասխան և պարզ, բայց խորապես բովանդակալից նամակը Լենինի, վորին, ինչպես պարզվեց, իմ բարեկամը ծանոթացրել եր նամակիս: Լենինի այդ նամակը համեմատաբար փոքր եր, բայց տային եր կուսակցության պրակտիկայի համարձակ, աներկյուղ քննադատությունը և կուսակցության աշխատանքի ամբողջ պլանի զարմանալի պարզ ու հակիրճ շարադրանքը մոտավոր ժամանակաշրջանի համար: Միայն Լենինն եր կարողանում ամենախճճված բաների մասին գրել այդպես հասարակ ու պարզ, սեղմ ու համարձակ— յերբ ամեն մի ֆրազ վո՛չ թե խոսում, այլ կրակում է: Այդ պարզ ու համարձակ նամակիկն ինձ ե՛լ ավելի ամրապնդեց նրանում, վոր հանձին Լենինի մենք ունենք մեր կուսակցության լեռնային արծիվը: Յես ինձ ներել չեմ կարող, վոր Լենինի այդ նամակը, ինչպես և շատ ուրիշ նամակներ, յես կրակի մատնեցի, ըստ ընդհատակյա հին աշխատողի սովորության:

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի հետ:

ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Յես Լենինին առաջին անգամ հանդիպեցի 1905 թ. դեկտեմբերին՝ բոլշևիկների Տամերֆորսի (Ֆինլանդիայում) կոնֆերենցիայում: Յես հույս ունեյի տեսնելու մեր կուսակցության լեռնային արծվին, մեծ մարդուն, մեծ վո՛չ միայն քաղաքականապես, այլ, յեթե կուզեք, նաև ֆիզիկապես, վորովհետև Լենինն իմ յերևակայության մեջ պատկերանում եր իբրև մի հսկա, բարեկազմ ու վայելչատես: Իսկ վորպիսի՜ն եր իմ հիասթափությունը, յերբ տեսա մի ամենասովորական մարդ, միջակից ցած հասակով, վորը վոչնչով, առանցքորեն վոչնչով չեր տարբերվում սովորական մահկանացուներից...

Ընդունված է, վոր «մեծ մարդը» սովորաբար պետք է ուշանա ժողովներին, վորպեսզի ժողովի անդամները սրտատրոփ սպասեն նրա հայտնվելուն, ընդվզում մեծ մարդու հայտնվելուց առաջ ժողովի անդամները նախազգուշացնում են՝ «սը՛ս...լռություն... նա գալիս է»: Այդ ծիսականությունն ինձ ավելորդ չեր թվում, վորովհետև տպավորություն է թողնում, հարգանք է ներշնչում: Իսկ վորպիսի՜ հիասթափություն, յերբ իմացա, վոր Լենինը ժողովի յե յեկել պատգամավորներից ավելի վաղ և, մի անկյուն քաշված՝ հասարակ մարդու պես զրուցում է կոնֆերենցիայի ամենասովորական պատգամավորների հետ: Չեմ ծածկի, վոր այդ բանն ինձ այն ժամանակ վորոշ անհրաժեշտ կանոնների վորոշ խախտում թվաց:

Միայն հետագայում յես հասկացա, վոր Լենինի այդ պարզությունն ու համեստությունը, աննկատելի մնալու կամ, համենայն դեպս, աչքի չընկնելու և իր

բարձր դիրքը չշեշտելու այդ ձգտումը,— այդ գիծը Լենինի ամենաուժեղ կողմերից մեկն է, իբրև նոր մասսաների, մարդկության ամենախոր «ներքնախավերի» պարզ ու սովորական մասսաների նոր առաջնորդի:

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Ցերևելի եյին այդ կոնֆերենցիայում Լենինի արտասանած յերկու ճառերը՝ ընթացիկ մոմենտի և ագրարային հարցի մասին: Դրանք, դժբախտաբար, չեն պահպանվել: Դրանք վոգեշունչ ճառեր եյին, վոր բուռն խանդավառությամբ համակեցին ամբողջ կոնֆերենցիային: Համոզելու անսովոր ուժը, փաստարկման պարզությունն ու հստակությունը, կարճ ու ամենքին հասկանալի ֆրազները, ցուցամոլության բացակայությունը, գլխապտույտ ժեստերի և տպավորություն գործելու ձգտող եֆեկտավոր ֆրազների բացակայությունը,— այդ ամենը Լենինի ճառերը նպաստավոր կերպով տարբերում եր սովորական «պառլամենտական» հռետորների ճառերից:

Բայց ինձ այն ժամանակ Լենինի ճառերի այդ կողմը չեր գերում: Ինձ գերում եր Լենինի ճառերի մեջ տրամաբանության այն անհաղթահարելի ուժը, վորը մի քիչ չոր է, բայց դրա փոխարեն հիմնավորապես տիրում է լսարանը, ստիպանաբար ելեկտրականացնում նրան և հետո, ինչպես ասում են, գերի վերցնում առանց մնացորդի: Ցեսս հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ պատգամավորներից շատերն ասում եյին. «Լենինի ճառերի մեջ տրամաբանությունը ինչ-վոր ամենաղոր շոշափուկներ են, վորոնք քեզ չորս կողմից աքցաններով ցանցում են և վորոնց գերկից դուրս պրծնելու ուժ չկա. կա՛մ անձնատուր յեպիր, կա՛մ վճռիր լիովին խորտակվել»:

Ցեսս կարծում եմ, վոր Լենինի ճառերի մեջ այդ առանձնահատկությունը նրա հռետորական արվեստի ամենաուժեղ կողմն է:

Յերկրորդ անգամ յես Լենինին հանդիպեցի 1906 թ. մեր կուսակցության Ստոկհոլմի համագումարում: Հայտնի յե, վոր այդ համագումարում բոլշևիկները մնացին փոքրամասնության մեջ, պարտություն կրեցին: Ցեսս այդ ժամանակ Լենինին առաջին անգամն եյի տեսնում պարտված դերում: Նա մաղաչափ անգամ նման չեր այն առաջնորդներին, վորոնք պարտությունից հետո նվնվում և վհատվում են: Ընդհակառակը, պարտությունը Լենինին դարձրել եր խտացած յեռանդ, վոր իր կողմնակիցներին վոգևորում է նոր մարտերի, ապագա հաղթանակի համար: Ցեսս խոսում եմ Լենինի պարտության մասին: Բայց այդ ի՞նչ պարտություն եր վոր: Պետք եր նայել Լենինի հակառակորդներին, Ստոկհոլմի համագումարի հաղթողներին՝ Պլեխանովին, Ակսելրոդին, Մարտովին և ուրիշներին. նրանք շատ քիչ եյին նման իսկական հաղթողների, վորովհետև Լենինը մենշևիզմի իր անխընա քննադատության մեջ նրանց վրա, ինչպես ասում են, սաղ տեղ չեր թողել: Ցեսս հիշում եմ, ինչպես մենք, բոլշևիկ պատգամավորներս, իրար գլխի հավաքված, նայում եյինք Լենինին, խորհուրդ հարցնելով նրանից: Մի քանի պատգամավորների ճառերում յերևում եր հոգնածություն, վհատություն: Հիշում եմ, թե ինչպես Լենինը նման խոսքերին իբրև պատասխան ասամների արանքից կծու կերպով ասաց. «Մի՛ նվնվաք, ընկերնե՛ր, մենք անշուշտ կհաղթենք, վորովհետև մենք իրավացի յենք»: Ատելություն դեպի նվնվացող ինտելիգենտները, վստահություն իր ուժերին, հավատ հաղթանակին—ահա թե ինչի մասին եր խոսում մեզ հետ այն ժամանակ Լենինը: Զգացվում եր, վոր բոլշևիկների պարտությունը ժամանակավոր է, վոր բոլշևիկները պետք է հաղթեն մոտիկ ապագայում:

«Զնվնվալ պարտության առթիվ»—այդ՝ Լենինի գործունեության մեջ հենց այն առանձնահատկու-

թյունն է, վորը նրան ոգնում եր իր շուրջը մինչև վերջը անձնվեր և իր ուժերին հավատացող բանակ համախմբելու:

ԱՌԱՆՑ ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹՅԱՆ

Հետևյալ համագումարում, 1907 թ. Լոնդոնում բոլշևիկները հաղթող դուրս յեկան: Յես այն ժամանակ Լենինին առաջին անգամն եյի տեսնում հաղթողի դերում: Սովորաբար հաղթությունը պատեցնում է առաջնորդներից վոմանց գլուխները, նրանց դարձնում է գոռող և պարծենկոտ: Նման դեպքերում ամենից հաճախ սկսում են հաղթանակ տոնել, դափնիների վրա հանգստանալ: Բայց Լենինը մաղաչափ անգամ չեր նմանվում այդպիսի առաջնորդներին: Ընդհակառակը, հենց հաղթությունից հետո նա դառնում եր առանձնապես զգոն և աչալուրջ: Հիշում եմ, թե ինչպես Լենինն այն ժամանակ համառորեն ներշնչում եր պատգամավորներին՝ «առաջին գործն է՝ հաղթանակով չսարքվել և չմեծամտանալ. յերկրորդ գործն է՝ ամրացնել ձեռք բերված հաղթանակը. յերրորդն է՝ հակառակորդին ջախջախել մինչև վերջը, վորովհետև նա միայն ջարդված է, բայց ամբողջովին բնավ ջախջախված չէ»: Նա կծու կերպով ծաղրում եր այն պատգամավորներին, վորոնք թեթևամտորեն հավատացնում եյին, թե «այսուհետև մենշևիկների բանը պրծած է»: Նրա համար դժվար չեր ապացուցել, վոր մենշևիկները դեռևս արմատներ ունեն բանվորական շարժման մեջ, վոր նրանց դեմ պետք է վարպետորեն պայքարել, ամեն կերպ խուսափելով իր ուժերը գերագնահատելուց և մանավանդ՝ հակառակորդի ուժերը թերագնահատելուց:

«Հաղթանակով չպարծենալ»—այդ՝ Լենինի բնավորության մեջ հենց այն առանձնահատկությունն է, վորը նրան ոգնում եր զգաստորեն կշռելու հակառակորդի ուժերը և կուսակցությունն ապահովելու հնարավոր անակնկալներից:

Կուսակցության առաջնորդները չեն կարող թանդ չհամարել իրենց կուսակցության մեծամասնության կարծիքը: Մեծամասնությունը՝ այդ մի ուժ է, վորը չի կարող հաշվի չառնել առաջնորդը: Լենինն այդ բանն ավելի վատ չեր հասկանում, քան կուսակցության վորևե այլ ղեկավար: Բայց Լենինը յերբեք չեր պատնում մեծամասնության դերին, մանավանդ յերբ այդ մեծամասնությունն իր տակ սկզբունքային հիմք չեր ունենում: Մեր կուսակցության պատմության մեջ մոմենտներ եյին լինում, յերբ հենց մեծամասնության կարծիքը կամ կուսակցության բոպեական շահերն ընդհարվում եյին պրոլետարիատի արմատական շահերի հետ: Այդպիսի դեպքերում Լենինն, առանց յերկար մտածելու, վճռականորեն բռնում եր սկզբունքայնության կողմը՝ ընդդեմ կուսակցության մեծամասնության: Դեռ ավելին. նա այդպիսի դեպքերում չեր վախենում տառացիորեն մենակ դուրս գալու ամենքի դեմ, հույսը դրած այն բանին,— ինչպես նա հաճախ ասում եր այդ մասին,— վոր «սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է»:

Այս առնչությամբ հատկապես բնորոշ են հետևյալ յերկու փաստերը:

Առաջին փաստ: 1909—1911 թ. թ. ժամանակաշրջանն եր, յերբ կուսակցությունը հակահեղափոխության կողմից ջարդված, ապրում եր լիակատար քայքայվածություն: Դա կուսակցությանը չհավատալու ժամանակաշրջանն եր, կուսակցությունից վո՛չ միայն ինտելիգենտների, այլև մասամբ բանվորների համատարած փախուստի ժամանակաշրջանը, ընդհատակը ժխտելու ժամանակաշրջանը, լիկվիդատորության ու փլուզման ժամանակաշրջանը: Այն ժամանակ վո՛չ միայն մենշևիկները, այլև բոլշևիկները մի ամբողջ շարք ֆրակցիաներ ու հոսանքներ եյին ներկայացնում, վորոնք մեծ մասամբ կտրված եյին բանվորական շարժումից: Հայտնի յե, վոր հենց այդ ժամա-

նակաշրջանում ծագեց ընդհատակը լիովին լիկվիդացիայի յենթարկելու և բանվորներին լեգալ, սոցիալ-դեմոկրատական լիբերալ կուսակցության մեջ կազմակերպելու գաղափարը: Լենինն այն ժամանակ միակն եր, որ չենթարկվեց տրամադրությունների ընդհանուր համաճարակին և բարձր պահեց կուսակցության դրոշը, դարմանալի համբերությամբ և չտեսնված համառությամբ հավաքելով կուսակցության բաժան-բաժան ու ջարդված ուժերը, կռվելով բոլոր ու ամեն տեսակի հակակուսակցական հոսանքների դեմ բանվորական շարժման ներսում, աննախընթաց արիությամբ և չտեսնված հաստատակամությամբ պաշտպանելով կուսակցականությունը:

Հայտնի յե, որ կուսակցականության համար մղած այդ վեճում Լենինը հետո հաղթող դուրս յեկավ:

Յերկրորդ փաստ: 1914—1917 թ. թ. ժամանակաշրջանն եր, իմպերիալիստական պատերազմի յեռուն ժամանակաշրջանը, յերբ բոլոր կամ գրեթե բոլոր սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, ընդհանուր հայրենասիրական մոլուցքին յենթարկվելով, ծառայաստրվեցին հայրենի իմպերիալիզմին: Այդ այն ժամանակաշրջանն եր, յերբ II Ինտերնացիոնալը կապիտալի առջև խոնարհեցրեց իր դրոշները, յերբ շովինիստական այլիքի առջև չդիմացան նույնիսկ այնպիսի մարդիկ, ինչպես Պլեխանովն և, Կաուցկին, Գեդը և ուրիշները: Լենինն այն ժամանակ միակն եր կամ գրեթե միակը, որ վճռական պայքար բարձրացրեց սոցիալ-շովինիզմի և սոցիալ-պացիֆիզմի դեմ, մերկացրեց Գեդերի ու Կաուցկիների դավաճանությունը և խարանեց մենշևիկյան «հեղափոխականների» կիսակատարությունը: Լենինը հասկանում եր, որ ինքն իր հետևն ունի աննշան փոքրամասնություն, բայց այդ նրա համար վճռողական նշանակություն չուներ, որովհետև նա գիտեր, որ միակ ճիշտ քաղաքականությունը, որն ապագա ունի, հետևողական ինտերնացիոնալիզմի քաղաքակա-

նությունն է, որովհետև նա գիտեր, որ սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է:

Հայտնի յե, որ նոր Ինտերնացիոնալի համար մղված այդ վեճի մեջ ևս Լենինը հաղթող դուրս յեկավ:

«Սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է»—սա նույն այն ֆորմուլան է, որի ոգնությամբ Լենինը գրոհով վերցնում եր նոր «անառիկ» դիրքեր, հեղափոխական մարքսիզմի կողմը նվաճելով պրոլետարիատի լավագույն տարրերին:

ՀԱՎԱՏ ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Կուսակցությունների տեսաբաններն ու առաջնորդները, որոնք դիտեն ժողովուրդների պատմությունը, սերտել են հեղափոխությունների պատմությունը սկզբից մինչև վերջ, յերբեմն բռնված են լինում մի անվայելուչ հիվանդությամբ: Այդ հիվանդությունը կոչվում է վախ մասսաներից, հավատի բացակայություն դեպի մասսաների ստեղծագործական ընդունակությունները: Այդ հողի վրա յերբեմն առաջ և գալիս առաջնորդների մի տեսակ արիստոկրատիզմ մասսաների վերաբերմամբ, որոնք փոքր չունեն հեղափոխությունների պատմության մեջ, բայց կոչված են ջախջախելու հինը և կառուցել նորը: Վախ, թե տարերքը կարող է մոլեգնել, թե մասսաները կարող են «չատ ավելորդ բան ջախջախել», մասսաներին գերքուլիներով սովորեցնել ջանացող, բայց մասսաներից բան սովորել չկամեցող դայակի դեր խաղալու ցանկություն,—այս է այդ տեսակի արիստոկրատիզմի հիմքը:

Լենինն այդպիսի առաջնորդների լիակատար հակադրությունն եր: Ցես չեմ ճանաչում մի ուրիշ հեղափոխական, որն այնպես խորը հավատար պրոլետարիատի ստեղծագործական ուժերին և նրա դասակարգային բնազդի հեղափոխական նպատակահարմա-

4886
35

ությանը, ինչպես Լենինը: Ցեռ չեմ ճանաչում մի ուրիշ հեղափոխական, վորը կարողանար այնպես անխնա խարազանել «հեղափոխության քաոսի» և «մասսաների ինքնաբուխ գործողությունների վակխանալիայի» ինքնագոհ քննադատներին,—ինչպես Լենինը: Հիշում եմ, ինչպես մի զրույցի ժամանակ, ի պատասխան ընկերներից մեկի դիտողության, թե «հեղափոխությունից հետո պետք է նորմալ կարգ սահմանվի», Լենինը հեգնորեն նկատեց. «Դժբախտություն է, յեթե մարդիկ կամենալով հեղափոխական լինել՝ մոռանում են, վոր պատմության մեջ ամենից ավելի նորմալ կարգը հեղափոխության կարգն է»:

Այստեղից՝ Լենինի արհամարհական վերաբերմունքը դեպի այն բոլոր մարդիկ, վորոնք աշխատում էին բարձրից նայել մասսաներին և նրանց սովորեցնել դրքույկներով: Այստեղից՝ Լենինի անդադրում քարոզը—սովորել մասսաներից, իմաստավորել նրանց գործողությունները, խնամքով ուսումնասիրել մասսաների պայքարի պրակտիկ փորձը:

Հավատ մասսաների ստեղծագործական ուժերին—սա Լենինի գործունեության մեջ հենց այն առանձնահատկությունն է, վորը նրան հնարավորություն եր տալիս իմաստավորելու տարերքը և նրա շարժումն ուղղելու պրոլետարական հեղափոխության հունով:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

Լենինը ծնված եր հեղափոխության համար: Նա խոկապես հեղափոխական պայթյունների հանճարն եր և հեղափոխական ղեկավարման մեծագույն վարպետը: Նա իրեն յերբեք այնպես ազատ և ուրախ չեր զգում, ինչպես հեղափոխական ցնցումների դարաշրջանում: Ցեռ դրանով բնավ չեմ ուզում ասել, թե Լենինը միանման հավանություն եր տալիս ամեն մի հեղափոխական ցնցման կամ թե նա միշտ և ամեն պայմաններում հեղափոխական պայթյունների կողմնակից եր: Ամենին: Ցեռ դրանով ուզում եմ ասել, թե Լենինի հանճարեղ խորաթափանցությունը յերբեք այնպես լրիվ ու պարզորոշ յերևան չեր գալիս, ինչպես հեղափոխական պայթյունների ժամանակ: Հեղափոխական շրջանների որերին նա առաջնորդն ծաղկափթթում եր, դառնում եր հստակատես, նախազուշակում եր պատակարդների շարժումը և հեղափոխության հավանական զիգզագները, դրանք վոնց վոր ձեռքի ափի մեջ տեսնելով: Իզուր չե, վոր մեր կուսակցական շրջաններում ասվում է, թե «Իլյիչը հեղափոխության ալիքների մեջ կարողանում է այնպես լողալ, ինչպես ձուկը ջրում»:

Այստեղից ել՝ Լենինի տակտիկական լոզունգների «ապշեցուցիչ» պարզությունը և հեղափոխական մբոստահղացումների «դլխապտույտ» համարձակությունը:

Մոտաբերում եմ յերկու առանձնապես բնորոշ փաստեր, վորոնք նշում են Լենինի այդ առանձնահատկությունը:

Առաջին փաստ: Հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ յեղած ժամանակաշրջանն եր, յերբ միլիոնավոր բանվորներ, գյուղացիներ ու զինվորներ թիկունքի և ռազմաճակատի ճգնաժամից դրդված հաշտություն և ազատություն եյին պահանջում, յերբ գենեռալիտետն ու բուրժուազիան զինվորական դիկտատուրա եյին նախապատրաստում «պատերազմ մինչև վախճան»-ի ոգին, յերբ ամբողջ այսպես կոչված «հասարակական կարծիքը», բոլոր այսպես կոչված «սոցիալիստական կուսակցությունները» բոլշևիկների դեմ եյին կանգնած, արհամարհանքով նրանց «գերմանական լրտեսներ» անվանելով, յերբ Կերենսկին փորձում եր ընդհատակ քշել—և մասամբ արդեն կարողացավ քշել—բոլշևիկների կուսակցությունը, յերբ ավստրոգերմանական կոալիցիայի տակավին հզոր կարգապահ բանակները կանգնած եյին մեր հոգնած և քայքայվող բանակների դեմ, իսկ արևմտա-յեվրոպական «սոցիալիստները» բարեհաջող կերպով բլոկի մեջ եյին դրվում իրենց կառավարությունների հետ հոգուտ «պատերազմի մինչև լիակատար հաղթանակ»...

Ի՞նչ եր նշանակում ապստամբություն բարձրացնել այդպիսի մոմենտում։ Ապստամբություն բարձրացնել այդպիսի պարագայում՝ նշանակում է ամեն ինչ ռիսկի յենթարկել։ Բայց Լենինը ռիսկ անելուց չեր վախենում, վորովհետև նա գիտեր, իր պարզատես հայացքով տեսնում եր, վոր ապստամբությունն անխուսափելի յե, վոր ապստամբությունը կհաղթանակի, վոր ապստամբությունը Ռուսաստանում՝ կնախապատրաստի իմպերիալիստական պատերազմի վերջը, վոր ապստամբությունը Ռուսաստանում՝ կալեկոծի Արևմուտքի տանջված մասսաներին, վոր ապստամբությունը Ռուսաստանում՝ իմպերիալիստական պատերազմը կվերածի քաղաքացիական պատերազմի, վոր ապստամբությունը կտա Խորհուրդների հանրապետություն, վոր Խորհուրդների հանրապետությունն ամբողջ աշխարհում հեղափոխական շարժման պատվար կծառայի։

Հայտնի յե, վոր Լենինի այդ հեղափոխական կանխատեսումը հետագայում կատարվեց չտեսնված ճշտությամբ։

Յերկրորդ փաստ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին որերն եյին, յերբ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը փորձում եր խռովարար դեներալին, գլխավոր հրամանատար Դուխոնինին հարկադրել, վոր դադարեցնի ռազմական գործողությունները և զինադադարի մասին բանակցություններ սկսի գերմանացիների հետ։ Հիշում եմ, ինչպես Լենինը, Կռիլենկոն (ապագա գլխավոր հրամանատարը) և յես մեկնեցինք Գլխավոր շտաբը Պիտերում, հեռագրական ապարատի մոտ՝ Դուխոնինի հետ բանակցելու։ Սարսեցուցիչ բոպե յեր։ Դուխոնինը և Կայանը (ставка) կատեգորիկ կերպով հրաժարվեցին Ժողկոմխորհի հրամանը կատարելուց։ Բանակի հրամանատարական կազմն ամբողջությամբ Կայանի ձեռքին եր։ Ինչ վերաբերում է զինվորներին, ապա անհայտ եր, թե ինչ կասի 12 միլիոնանոց բանակը, վոր յենթարկված եր այսպես կոչված բանակային կազմակերպություններին, վորոնք խորհրդային իշխանության դեմ եյին տրամադրված։ Հենց Պիտերի մեջ, ինչպես հայտնի յե, այն ժամանակ հասունանում եր յունկերների ապստամբությունը։ Բացի այդ, Կերենսկին պատերազմի յեր դալիս Պիտերի վրա։ Հիշում եմ, թե ինչպես հեռագրական ապարատի մոտ վորոշ լռությունից հետո Լենինի դեմքը ինչ-վոր անսովոր լուսով փայլեց։ Նկատելի յեր, վոր նա արդեն վորոշում և ընդունել։ «Գնանք ռադիոկայան,—ասաց Լենինը,—նա մեզ ոգուտ կտա. մենք հատուկ հրամանով պաշտոնանկ կանենք դեներալ Դուխոնինին, նրա տեղը գլխավոր հրամանատար կնշանակենք ընկ. Կռիլենկոյին և հրամանատարական կազմի գլխի վրայով զինվորներին կդիմենք մի կոչով՝ շրջապատել դեներալներին, դադարեցնել ռազմական գործողությունները, կապվել ավստրո-գերմանական զինվորների հետ և հաշտության գործը վերցնել իրենց սեփական ձեռքը»։

Դա մի «թռիչք եր դեպի անհայտությունը»։ Բայց Լենինը չեր վախենում այդ «թռիչքից», ընդհակառակը, նա դրան ընդառաջ եր գնում, վորովհետև գիտեր, վոր բանակը հաշտություն է ցանկանում, և նա կնվաճի հաշտությունը, հաշտության ճանապարհից սրբելով բոլոր և ամեն տեսակի խոչընդոտները, վորովհետև նա գիտեր, վոր հաշտություն հաստատելու այդպիսի յեղանակը զուր չի անցնի ավստրո-գերմանական զինվորների համար, վոր դա առանց բացառության բոլոր ռազմաճակատներում կառաջացնի հաշտության ձգտումը։

Հայտնի յե, վոր Լենինի այդ հեղափոխական կանխատեսությունը ևս հետագայում կատարվեց ամենայն ճշտությամբ։

Հանճարեղ խորաթափանցություն, վերահաս դեպքերի ներքին իմաստն արագորեն ըմբռնելու և դուշակելու ընդունակություն—այդ՝ Լենինի հենց այն հատկությունն է, վորը հեղափոխական շարժման շրջապտույտներում նրան ոգնում եր նշելու ճիշտ ստրատեգիա ու հստակ վարքագիծ։

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԻՑ՝ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական okրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1937 թվականի դեկտեմբերի 11-ին:

Ընտրողները, ժողովուրդն իրենց պատգամավորներից պետք է պահանջեն, որպեսզի նրանք մնան իրենց խնդիրների բարձրության վրա, որպեսզի նրանք իրենց աշխատանքում չիջնեն մինչև քաղաքական որիվատների մակարդակը, որպեսզի նրանք մնան լենինյան տիպի քաղաքական գործիչների պոստի վրա, որպեսզի նրանք լինեն նույնպիսի պարզ ու որոշակի գործիչներ, ինչպես Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք մարտում լինեն նույնպես անվախ և անողոք դեպի ժողովրդի թշնամիները, ինչպես Լենինն էր (ծափահարություններ), որպեսզի նրանք ազատ լինեն որևէ խուճապից, խուճապի նման որևէ բանից, երբ գործն սկսում է բարդանալ և հորիզոնի վրա ուրվագծվում է որևէ վտանգ, որպեսզի նրանք նույնպես ազատ լինեն խուճապի նման որևէ բանից, ինչպես ազատ էր Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք բարդ հարցերի լուծման ժամանակ, որտեղ պետք է բաղմակողմանի կողմնորոշում և բոլոր պլյուսների ու մինուսների բազմակողմանի հաշվառում, լինեն նույնպես իմաստուն և չաճապարող, ինչպես Լենինն էր (ծափահարություններ), որպեսզի նրանք լինեն նույնպես ճշմարտացի ու ազնիվ, ինչպես Լենինն էր (ծափահարություններ), որպեսզի նրանք նույնպես սիրեն իրենց ժողովրդին, ինչպես սիրում էր նրան Լենինը (ծափահարություններ):

ԸՆԿ. Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆԻ ՃԱՌԻՑ՝ Յերևանի Ստալինյան ընտրական okրուգի ընտրողների ժողովում 1937 թ. դեկտեմբերի 9-ին:

Ումն ենք մենք պարտական, որ բազմամիլիոն յերկիրը համախմբվել է որպես մի ամբողջություն, որպես անպարտելի պետություն: Մենք պարտական ենք Լենինին, մարդկության մեծագույն հանճարին, որը վոչ միայն կարողացավ ամենայն հետևողականությամբ կիրառել Ռուսաստանում Մարքս-Ենգելսի հեղափոխական թեորիան, այլ և զարգացրեց, լրացրեց այն պրոլետարական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի ուսմունքով: Մենք պարտական ենք Լենինին, որը դատապարտեց բոլշևիկների կուսակցությունը ցարիզմի դեմ մղված պայքարում, դյուրավորեց Հոկտեմբերյան հեղաշրջումը, ապահովեց հաղթանակը քաղաքացիական պատերազմում և անցումը դեպի ավերված տնտեսության վերականգնումը:

Մենք պարտական ենք մեծ Ստալինին, որն այդպես հետևողականությամբ շարունակում է Լենինի գործը: (բուռն ծափեր. բացականչություններ տեղերից. «կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»):

Ընկեր Ստալինը Լենինի դագաղի առաջ սրբազան յերդում տվեց բարձր պահելու լենինիզմի մեծ դրոշը—մինչև վերջը հավատարիմ մնալու լենինյան պատգամներին և անդուլ շարունակելու Լենինի սկսած գործը: Ընկեր Ստալինը սրբությամբ կատարում է իր տված յերդումը: Ընկեր Ստալինը վոչ միայն շարունակում է Լենինի գործը: Անչափելիորեն հսկայական է ընկեր Ստալինի վաստակն այն բանում, որ նա զարգացրեց

ու լրացրեց Լենինի ուսմունքը՝ սոցիալիստական հասարակության կառուցման դարաշրջանում:

Ընկեր Ստալինի կողմից մշակված մեր Սահմանադրությունն իր մեջ մարմնացնում է պրոլետարական հեղափոխության բոլոր նվաճումները և վոչ այլ ինչ է, բայց յեթե սոցիալիստական հասարակության մասին ստալինյան ուսմունքի շարադրանքը, վորը կրծատայի վորպես ուղեցույց ասող՝ համայն աշխարհի ժողովուրդների համար: (Բուռն ծափահարություններ):

Մ. ԳՈՐԿԻ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

(Հատվածներ)

Վլադիմիր Լենինը մեռավ:

Նույնիսկ նրա թշնամիների բանակից վոմանք ապնվորեն խոստովանում են, վոր հանձին Լենինի աշխարհը կորցրեց մի մարդու, «վորն իր ժամանակակից բոլոր մեծ մարդկանց շարքում ամենից ավելի ցայտուն կերպով եր մարմնացնում իր մեջ հանճարեղությունը»: Գերմանական « Prager Tageblatt » բուրժուական թերթը, տպագրելով Լենինի մասին մի հոդված, լի հարգալից զարմանքով նրա վիթխարի կերպարանքի առաջ, վերջացրել է այդ հոդվածը հետևյալ բառերով.

«Մեծ, անմատչելի և ահավոր է թվում Լենինը նույնիսկ մեռած ժամանակ»:

Նրա պորտրետը նկարել դժվար է... Նա պարզ եր և անկեղծ, ինչպես այն ամենը, ինչ նա ասում եր:

Նրա հերոսությունը համարյա բոլորովին զուրկ է արտաքին փայլից, նրա հերոսությունը,— դա Ռուսաստանում վոչ հազվադյուտ համեստ, ասկետական սխրագործությունն է ազնիվ ռուս ինտելիգենտ հեղափոխականի, վորն անխախտ համոզված է սոցիալական արդարության հնարավորությանը յերկրի վրա, դա հերոսությունն է այն մարդու, վորը հրաժարվել է աշխարհի բոլոր ուրախություններից՝ մարդկանց յերջանկության համար ծանր աշխատանք կատարելու նպատակով:

Մեծ կանխատեսություն ուներ նա, և 19–21 թվերին, խորհելով ու խոսելով մարդկանց մասին, հա-

ճախ և անսխալ նախագուշակում եր, թե ինչ կլինեն նրանք մի քանի տարուց հետո: Վոչ միշտ կուզեյիր հավատալ նրա կանխատեսություններին, և հաճախ նրանք ցավալի եյին լինում, սակայն, դժբախտաբար, քիչ չեղան մարդիկ, վորոնք արդարացրին նրա սկեպտիկ բնութագրերը... Յես պետք է սկսած լինեյի Լոնդոնի համագումարից, այն որերից, յերբ Վլադիմիր Իլյիչը կանգնեց իմ առաջ, հրաշալի կերպով լուսավորված՝ վոմանց կասկածանքներով ու անվստահությամբ, մյուսների բացահայտ թշնամությամբ և նույնիսկ ատելությամբ:

Յես այժմ էլ, ահա, դեռ լավ տեսնում եմ Լոնդոնի ծայրամասում գտնվող, իր խեղճությամբ ծիծաղելի փայտաշեն յեկեղեցու մերկ պատերը, աղքատիկ դպրոցի դասարանի նմանվող փոքրիկ նեղ դահլիճի սլաքաձև պատուհանները: Այդ շենքը միայն արտաքուստ եր յեկեղեցի հիշեցնում, իսկ նրա ներսում բոլորովին բացակայում եյին պաշտամունքի առարկաները, և մինչև անգամ քարոզչի ցածրիկ ամբիոնը տեղավորված եր վոչ թե առջևում, դահլիճի խորքում, այլ նրա մուտքի մոտ, յերկու դռների միջև:

Մինչև այդ տարին յես Լենինին չեյի հանդիպել և նրա գրվածքներից չեյի կարդացել այնքան, վորքան պետք եր կարդալ: Սակայն այն, ինչ վոր հաջողվել եր ինձ կարդալ, և հատկապես նրան անձամբ ճանաչող ընկերների խանդավառ պատմությունները մեծ ուժով քաշում եյին ինձ դեպի նա: Յերբ մեզ ծանոթացրին, նա ամուր սեղմելով իմ ձեռքը, իր սրատես աչքերով անտղելով ինձ, սկսեց խոսել հին ծանոթի տոնով՝ կատակով.

— Այդ լավ է, վոր դուք յեկել եք: Ձե՞ վոր դուք կռվել սիրում եք. այստեղ մեծ կռիվ է լինելու:

... Յեվ ահա հանկարծ, ինչպես հեքիաթում, յես գտնվում եմ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում: Ի հարկե, տոն եր:

Սակայն յես տոնեցի միայն մինչև առաջին նիստը, մինչև «որակարգի» հարցի վերաբերյալ վեճերը:

Այդ վեճերի կատաղի բնույթը միանգամից սառեցրեց իմ հրճվանքը և վոչ այնքան նրանով, վոր յես զգացի, թե ինչպես խիստ պառակտված է կուսակցությունը յերկու մասի — ռեֆորմատորների և հեղափոխականների մասի — ռեֆորմատորների և մենշևիկների — այդ յես գիտեյի 1903 թվից,— այլ ռեֆորմատորների թշնամական վերաբերմունքով դեպի Վ. Ի. Լենինը:

... Աղտոտ բոպեներն ու ժամերը Լենինն անց եր կացնում բանվորների մեջ, հարցնելով նրանց ամենաչնչին, մանր կենցաղային հարցերի մասին:

— Իսկ կանա՞յք ինչպես են. տնտեսությունն ուտում, կլանում է նրանց, հա՞. բայց և այնպես սովորո՞ւմ, կարդո՞ւմ են:

Հայդ-պարկում մի քանի բանվորներ, վորոնք առաջին անգամ եյին տեսնում Լենինին, սկսեցին խոսել, թե ինչպես է պահում նա իրեն համագումարում: Նրանցից մեկը բնորոշ կերպով ասաց.

— Զգիտեմ, դուցե այստեղ, Յեվրոպայում բանվորներն ունեն և մի այլ, նույնպիսի խելոք մարդ,— Բեբելը, կամ մի ուրիշը: Սակայն չեմ հավատում, թե գտնվի մի ուրիշ մարդ, վորին յես միանգամից սիրեյի այնպես, ինչպես այս մարդուն:

Մի ուրիշ բանվոր ժպտալով ավելացրեց.

— Նա մերն է:

Նրան առարկեցին.

— Պլեխանովն էլ մերն է:

Յես լսեցի մի դիպուկ պատասխան.

— Պլեխանովը մեր ուսուցիչն է, մեր աղան, իսկ Լենինը մեր առաջնորդն է, մեր ընկերը:

Մի յերիտասարդ տղա յումորով նկատեց.

— Սյուրտուկն և Պլեխանովին նեղում:

Մի այսպիսի դեպք պատահեց: Ճաշարան գնալիս հանապարհին Վլադիմիր Իլյիչին կանգնեցրեց մի մենշևիկ բանվոր, ինչ-վոր բան հարցնելով: Իլյիչը քայլերը դանդաղեցրեց, իսկ նրա ընկերներն առաջ անցան: Մի հինգ բոպեյից հետո ճաշարան գալով՝ նա դեմքը խժռելով պատմեց.

— Տարորինակ է, վոր այսպիսի միամիտ մի տղա

կուսակցական համագումար է ընկել։ Հարցնում է ինձ, թե ինչն է վերջապես տարաձայնությունների իսկական պատճառը։ Ահա, ասում եմ, ձեր ընկերներն ուզում են նստել պառլամենտում, իսկ մենք համոզված ենք, որ բանվոր դասակարգը պետք է կռվի պատրաստվի։ Կարծես՝ հասկացավ...

Ճաշում էինք սակավաթիվ խմբով, միշտ միևնույն փոքրիկ, եժանագին ճաշարանում։ Ցես նկատեցի, որ Վ. Իլյիչը շատ քիչ է ուտում՝ յերկու-յերեք ձվից ձվածեղ, մի փոքր կտոր ապուխտ և խմում է մի բաժակ թանձր, մուգ գարեջուր։ Ամեն բանից յերևում էր, որ նա շատ անփույթ է վերաբերվում իրեն, իսկ ինձ ապշեցնում էր նրա զարմանալի հոգատարությունը դեպի բանվորները։ Նրանց սենդի գործը վարում էր Մ. Ֆ. Անդրեյեվան, և Վ. Իլյիչը հարցնում էր նրան.

— Ի՞նչ եք կարծում, քաղցած չե՞ն մնում ընկերները. վո՞չ։ Հը՛մ, հը՛մ... Գուցե պետք է ավելացնել բուտերբրոդները։

Ցեկավ այն հյուրանոցը, որտեղ յես իջել էի, և տեսնեմ՝ մտահոգված շոչափում է անկողինը։

— Այդ ի՞նչ եք անում։

— Նայում եմ,— խոնավ հո չե՞ն սավանները։

Ցես իսկույն չհասկացա, թե նա ինչու յե ուզում իմանալ՝ ինչպիսի սավաններ կան Լոնդոնում։ Այն ժամանակ նա, նկատելով իմ տարակուսանքը, բացատրեց.

— Դուք պետք է հեռևեք ձեր առողջությանը։

18 թվի աշնանը յես հարցրի սորմովցի բանվոր Դմիտրի Պավլովին, թե վորն է, նրա կարծիքով, Լենինի ամենաբնորոշ գիծը։

— Պարզությունը։ Պարզ է, ինչպես ճշմարտությունը։

Նա այդ ասաց վորպես լավ մտածված և վաղուց վճռված բան։

Հայտնի յե, որ մարդուն ամենից ավելի խիստ դատում են նրա ծառայողները։ Սակայն, Լենինի շոֆեր Գիլը, շատ փորձված մի մարդ, ասում էր.

— Լենինը մի առանձին մարդ է, նրա նմանը չկա։ Ցես նրան տանում եմ Մյասնիցկայա փողոցով, վորտեղ մեծ շարժում կա, հազիվ եմ քշում, վախենում եմ՝ մեքենան չկոտրեն, շշակն եմ սեղմում, շատ հուզվում եմ։ Նա բաց արեց դռնակը, մոտեցավ ինձ վոտնակալի վրայով, գլորվելու վտանգին յենթարկելով իրեն, և համոզում է ինձ. «Խնդրում եմ չհուզվեք, Գիլ, գնացեք ինչպես բոլորը»։ Ցես հին շոֆեր եմ, յես գիտեմ, որ այդպես վոչ վոք չի անի։

Դժվար է հաղորդել, նկարագրել այն բնականությունն ու ճկունությունը, վորով նրա բոլոր տպավորությունները ներհոսում էին մի հունի մեջ։

Նրա միտքը, ինչպես կողմնացույցի սլաք, շարունակ իր սուր ծայրով դարձած էր դեպի աշխատավոր ժողովրդի դասակարգային շահերը։ Լոնդոնում մի յերեկո ազատ էինք, փոքրիկ խմբով գնացինք «Մյուզիկ հոլլ»—դեմոկրատական փոքրիկ թատրոնը։ Վ. Իլյիչը հաճույքով և վարակիչ կերպով ծիծաղում էր, դիտելով կլոուններին և եքսցենտրիկներին, դեպի մնացած բոլոր բաներն անտարբեր էր, և մանավանդ ուշադիր դիտում էր Բրիտանական Կոլումբիայի փայտահատ բանվորների աշխատանքը։ Փոքրիկ բեմը ներկայացնում էր անտառային ճամբար, նրա առաջ, դեռևս վրա յերկու առողջակազմ յերիտասարդ մի բոպելյում հորատեցին ծառի մոտ մի մետր հաստություն ունեցող բունը։

— Ե՛հ, դե լհարկե, այդ հասարակության համար է, իրոք նրանք չեն կարող այդպիսի արագությամբ աշխատել,— ասաց Իլյիչը։—Սակայն պարզ է, վոր նրանք այնտեղ էլ կացիններով են աշխատում, ծառի վայտն անպետք տաշեղ դարձնելով։ Ահա ձեզ և կուլտուրական անդլիացիները։

Նա սկսեց խոսել կապիտալիստական կարգերի որով արտադրության անարխիայի մասին, թղուր փչացող, կորչող հումքի հսկայական տոկոսի մասին, և վերջում ափսոսանքով նկատեց, որ մինչև այժմ վոչ վոքի մտքով չի անցել այդ թեմայով մի գիրք գրել։

Ինձ համար այդ մաքից վորոշ բան պարզ չեր, սակայն յես չկարողացա հարցնել Վ. Իլյիչին — նա արդեն հեռաքրքիր կերպով խոսում եր «եքսցենտրիզմի» վորպես թատերական արվեստի մի առանձին ձևի մասին:

Ցերկու տարի անց, Կապրիում, Ա. Ա. Բոգդանով-Մալինովսկու հետ ուտոպիական վեպի մասին զրուցելու ժամանակ նա ասաց նրան.

— Ա՛յ, լավ կլիներ՝ դուք բանվորների համարմի վեպ գրեյիք այն թեմայով, թե ինչպես կապիտալիզմի գիշատիչները կողոպտեցին յերկիրը՝ վատնելով ամբողջ նավթը, ամբողջ յերկաթը, փայտը, ամբողջ ածուխը: Այդ մի շատ ոգտակար գիրք կլիներ սինյոր մախեատ:

... Նա մանրամասն հարց ու փորձ եր անում Կապրիի ձկնորսների, նրանց աշխատավարձի, տերտերների ազդեցության, դպրոցի մասին, նրա հետաքրքրությունների ընդարձակությունը չեր կարող զարմանք չպատճառել ինձ: Ցերը նրան ասացին, թե ահա այս ջահել տերտերը չքավոր գյուղացու վորդի յե, նա իսկույն և յեթ պահանջեց, վորպեսզի նրա համար տեղեկություններ հավաքեն, թե արդյոք վորքան հաճախ են գյուղացիները իրենց վորդիներին սեմինարիումներ ուղարկում, և արդյոք գյուղացիների վորդիները վերադառնո՞ւմ են իրենց գյուղերում տերտերություն անելու համար:

— Դուք հասկանո՞ւմ եք, յեթե այդ պատահական յերևույթ չե, ապա նշանակում ե՝ այդ Վատիկանի քաղաքականությունն ե: Խորամանկ քաղաքականությո՛ւն:

Չեմ կարող յերևակայել մի ուրիշ մարդ, վորն այդքան բարձր կանգնած լինելով մարդկանցից, կարողանար իրեն զերծ պահել փառասիրության գայթակղությունից և կենդանի հետաքրքրությունը չկորցներ դեպի «հասարակ մարդիկ»:

Նրա մեջ կար ինչ-վոր մաղնիսականություն, վորը դեպի նրան եր քաշում աշխատանքի մարդկանց

սրտերն ու համակրանքը: Նա իտալերեն չեր խոսում, սակայն Կապրիի ձկնորսները, վորոնք տեսել եյին Շալյապինին և բավական թվով ուրիշ ռուս խոշոր մարդկանց, մի ինչ-վոր բնազդով իսկույն Լենինին մի առանձին տեղ տվին: Հմայիչ եր նրա ծիծաղը — սրբատաշ ուղիղ ծիծաղն այն մարդու, վորը հրաշալի կերպով կարողանալով տեսնել մարդկային հիմարության անճոռնիությունը և բանականության լաբախաղացային խորամանկությունները, դիտեր հրճվել «պարզասիրտ մարդկանց» մանկական միամտությամբ:

Ծեր ձկնորս Ջիովանի Սպադարոն նրա մասին ասաց.

— Այդպես ծիծաղել կարող ե միայն ազնիվ մարդը:

Որոբվելով նավակում, խոր և յերկնքի նման վճիտ ալիքների վրա, Լենինը սովորեց ձուկ վորսալ «մատով»— կարթաթելով, առանց ձողի: Ձկնորսները բացատրում եյին նրան, վոր պետք ե բռնել, հենց վոր մատը թելի թրթռոց ե զգում:

— Կողի՛: դրին-դրին: Կապի՞չ:

Նա իսկույն բռնեց ձուկը, բերեց և մանկական հրճվանքով, վորսորդի հատկությամբ գոչեց.

— Ըհը՛, դրին-դրի՛ն:

Ձկնորսները քարձրաձայն և նույնպես յերեխաների նման ուրախ քրքջացին ու Լենինին անվանեցին «Սինյոր Դրին-Դրին»:

Նա գնաց, հեռացավ Կապրիից, բայց նրանք միշտ հարցնում եյին.

— Ի՞նչպես ե ապրում Դրին-Դրինը: Ցարը չե՞ բռնի նրան, չե՞:

Ցանը, սովահար 19 թվին Լենինն ամաչում եր ուտել այն մթերքները, վոր ուղարկում եյին նրան ընկերները, զինվորները և գյուղացիները դավառից: Ցերը նրա անպաճույճ բնակարանը ծանրոցներ եյին բերում, նա կնճռոտվում, չփոթվում եր և չատում

ալյուրը, շաքարը, յուղը բաժանել հիվանդ կամ ոնեղի պակասությունից թուլացած ընկերներին: Հրա-վիրելով ինձ իր մոտ ճաշի՝ նա ասաց.

—Ապխտած ձկով կհյուրասիրեմ — Աստրախանից են ուղարկել:— Յեվ, խոժոռելով իր սոկրատեսյան ճակատը, մի կողմ չեղելով իր ամենատես աչքերը, ավելացրեց.— Ուղարկում են, կարծես՝ ադա լինեմ. ինչպե՞ս սրան վերջ տալ. հրաժարվես, չընդունես— նվիրավորես, իսկ չորս կողմդ բոլորը քաղցած են:

Զատավոր, ժուժկալ, զերծ՝ գինի, ծխախոտ դոր-ծածելու սովորությունից, առավոտից մինչև յերեկո բարդ, ծանր աշխատանքով զբաղված, նա բոլորովին չդիտեր հոգալ իր մասին, բայց ուշադիր հետևում եր ընկերների կյանքին: Նստած է կաբինետում—սեղանի առաջ, արագ գրում է և խոսում, գրիչը չհեռացնելով թղթից.

— Բարև, ի՞նչպես է ձեր առողջությունը. յես խնդրում կվերջացնեմ: Մի ընկեր կա, գավառումն է աշխատում, ճանճրանում է, ինչպես յերևում է, հոգ-նել է: Պետք է ոգնել, արամադրությունը փոքր բան չե:

Մի անգամ Մոսկվայում գալիս եմ նրա մոտ, հարցնում է.

— Ճաշե՞լ եք.

— Այո:

— Ձե՞ք հնարում:

— Վկաներ կան,—ճաշել եմ Կրեմլի ճաշարանում:

— Յես լսել եմ՝ վատ են պատրաստում այնտեղ:

— Վատ չե, բայց կարող եյին ավելի լավ պատ-բաստել:

Նա խնդրուն մանրամասն հարցրեց՝ ինչու յե վատ, ինչպես կարելի յե լավացնել:

Յեվ սկսեց բարկացած խոսել.

— Ի՞նչ է, չե՞ն կարող դրանք շնորհքով խոհարար գտնել: Մարդիկ աշխատում են բառացի կերպով մինչև ուշաթափություն, նրանց պետք է համեղ ճաշ տալ, վորպեսզի նրանք ավելի շատ ուտեն: Յես գիտեմ, վոր մթերք քիչ կա և յեղածն ել վատ է,— այստեղ վար-պետ խոհարար է պետք: Յեվ հիշեց ինչ-վոր հիդրե-



ԼԵՆԻՆԸ և ՍՏԱԼԻՆԸ Գորկիում (1922 թ.)

Պ. Սարոնովի (փայտագրություն)

նիսաի կարծիքը համեմունքների դերի մասին՝ սննդաության և մարսողության պրոցեսում: Յես հարցրի.

— Այդ ինչպե՞ս եք դուք այդպիսի բաների մասին մտածելու ժամանակ գտնում:

Նա էլ հարցրեց.

— Ռացիոնալ սննդի՞ մասին:

Յեվ իր բառերի տոնով ինձ հասկացրեց, վոր իմ հարցն անտեղի յեր: Իմ հին ծանոթ Պ. Ա. Սկորոխոդովը, նույնպես սորմովցի, մեղմ հոգու տեր մի մարդ, դանդատվում եր Չեկայում կատարած աշխատանքի ծանրությունից: Յես ասացի նրան.

— Ինձ էլ թվում է, վոր այդ ձեր գործը չէ, չի համապատասխանում ձեր բնավորությանը:

Նա տխրությամբ համաձայնեց:

— Բոլորովին չի համապատասխանում իմ բնավորությանը:

Բայց, մտածելուց հետո, ասաց.

— Սակայն յերբ հիշում ես, վոր ախար Իլյիչն էլ անկատակած հաճախ ստիպված է հոգու թևերից կախ ընկնել,— ամաչում ես քո թուլության համար:

Յես ճանաչում եյի և ճանաչում եմ շատ բանվորների, վորոնք նույնպես ստիպված եյին և ստիպված են, ատամները պինդ սեղմած, «կախ ընկնել հոգու թևերից» — բռնադատել իրենց որգանական «սոցիալական իդեալիզմը» ի սեր այն գործի հաղթանակի, վորին նրանք ծառայում են:

Այդյո՞ք Լենինն ինքն էլ ստիպված չեր «կախ ընկնել հոգու թևերից»: Նա չափազանց քիչ ուշադրություն եր դարձնում իր վրա, վորպեսզի խոսեր ուրիշների հետ իր մասին. նա, ավելի քան վորևե մեկը, դիտեր լռել իր հոգին ալեկոծող դաղանի փոթորիկների մասին: Սակայն մի անգամ Գորկիում, փաղաքշելով ինչ-վոր մեկի յերեխաներին, նա ասաց.

— Ահա, սրանք ավելի լավ կապրեն, քան մենք. մեր ապրած-տեսածներից շատ բան նրանք չեն տեսնի: Նրանց կյանքը պակաս դաժան կլինի:

Յեվ, նայելով հեռուն, բլուրներին, վորտեղ ամուր նստած եր դյուղը, նա ավելացրեց խոհուն.

— Բայց և այնպես յես չեմ նախանձում նրանց։ Մեր սերնդին հաջողվեց կատարել մի աշխատանք, որ ապշեցուցիչ է իր պատմական նշանակությամբ։ Պայմանների անխուսափելի հետևանք՝ մեր կյանքի դաժանությունը կհասկանան ու կարդարացնեն։ Ամեն ինչ կհասկանան, ամե՛ն ինչ։

Յերեխաներին նա շոյում էր ինչ-որ առանձնապես քնքույշ և հոգատար փաղաքշանքով։

Մի անգամ յեկա նրա մոտ և տեսնեմ՝ սեղանի վրա դրված է «Պատերազմ և խաղաղություն» վեպի մի հատորը։

—Այո՛, Տոլստո՛յ։ Ուզեցի կարդալ վորսի տեսարանը, բայց հանկարծ հիշեցի, որ մի ընկերոջ բան պետք է գրեմ։ Իսկ կարդալու համար ամենևին ժամանակ չկա, միայն այսոր գիշերը կարդացի ձեր գրքույկը Տոլստոյի մասին։

Ժպտալով, աչքերը կկոցելով, նա հաճույքով մեկնվեց բազկաթոռի մեջ և ձայնը ցածրացնելով, արագ շարունակեց.

— Ինչ հսկա ժայռ է, չե՞։ Ի՞նչ վիթխարի մարդ։ Ա՛յ, սա գեղարվեստագե՛տ է, սիրելիս... Յեվ, գիտե՞ք, ինչն է դեռ զարմանալին։ Մինչև այս կոմսը իսկական գյուղացի չէ յեղել գրականության մեջ։

Հետո, նայելով ինձ իր կկոցած աչքերով, հարցրեց.

— Ո՞ւմ կարելի յե Յեվրոպայում սրա կողքին դնել։

Ինքն իրեն պատասխանեց.

— Վոչ վոքի։

Յեվ ձեռքերը չփելով՝ ծիծաղեց բավականությամբ։

Յես հաճախ եյի նկատել, որ նա հպարտանում էր ռուսական գեղարվեստով։ Յերբեմն այդ գիծն ինձ թվում էր տարորինակորեն խորթ Լենինին և նույնիսկ միամիտ, սակայն հետո յես զգացի, որ դա դեպի աշխատավոր ժողովուրդը տածած՝ նրա խորը թաղնված, հրճվալից սիրո արձագանքն է։

(Հիշողություններից)

ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Ստալինն առաջարկեց ինձ գնալ Լենինի մոտ։

Ինձ տրվեց մի բանվորի հասցե, որն ապրում էր Յեստրոբեցկիից վոչ շատ հեռու։ Մեծ վտանգ էր սպառնում. յերբ յես հանձն առա այդ գործը, վախենում եյի հանկարծ լրտեսի հանդիպեմ և իմացվի Վլադիմիր Իլյիչի տեղը։

Գիշերը հասա կայարան։ Մի քիչ թափառելուց հետո, գտա մի տուն, վորտեղ ապրում էր հիշյալ բանվորը։ Այդ նույն բանվորը տանը չէր և նրա կինն ինձ հետ դրեց ուղեկցելու 9–10 տարեկան իր տղային։ Մենք գնացինք լճի մոտ, նստեցինք նավակ և հասնելով մյուս ափը, գնացինք թփերի միջով։ Յես յենթադրեցի, վոր ընկեր Լենինն ապրում է վորևե ամառանոցում։ Հանկարծ մենք կանգ առանք հնձած խոտերի մոտ, վորտեղ կար վոչ շատ մեծ մի խոտի դեզ։ Տղան կանչեց ինչ-որ մեկի անունը։

Դուրս յեկավ ինչ-որ մարդ։ Պարզվեց, վոր այդ մարդը տղայի հայրն է։ Բարեվեցի, բացատրեցի նրան, թե բանն ինչումն է։ Մտածում եմ — կտանի հեռու, Լենինի մոտ։ Այդ բոպեին մոտենում է ինձ մի մարդ միրուքը և բեխերը սափրած։

Մոտեցավ՝ բարևեց։ Յես պատասխանեցի պարզ և չոր։ Այն ժամանակ նա խփեց իմ ուսին և ասաց. «Ընկեր Սերգո, ինձ չե՞ք ճանաչում»։ Պարզվեց, վոր դա ընկեր Լենինն էր։ Յես մեծ հրճվանքով սեղմեցի նրա ձեռքը և սկսեցինք զրուցել։

Մի քանի բոպեյից հետո Իլյիչն առաջարկեց ինձ

ընթրել իր հետ սև հացով և սելյոդկայով: Ուրիշ վոչինչ նրանք չունեին:

Այդ «ընթրիքից» հետո դրույցը շարունակեցինք Լենինի «ապարտամենտում»: Այդպես եր խոսի դեղը, վորի մեջ մենք սողացինք: Թարմ խոտը բուրում եր աքանչելի, տաք եր: Ցերկար յես նրան պատմում եյի, թե նրա բացակայության ժամանակ ինչ եր կատարվում քաղաքում, ինչպիսի տրամադրություններ կային բանվորների և գյուղացիների մեջ, ինչ եր կատարվում մեր կազմակերպության մեջ, Պետրոգրադի խորհրդում:

Վլադիմիր Իլյիչը լսեց ինձ, մի քանի հարցեր տվեց և ասաց.

— Իշխանությունն այժմ միայն կարելի յե վերցնել զինված ապստամբության միջոցով, և այդ կլինի վոչ ուշ սեպտեմբերին—հոկտեմբերին...

Այդ բոլորը յես լսում եյի լարված ուշադրությամբ. տպավորությունը շշմեցուցիչ եր:

Մեզ հենց նոր եր ջարդեցին, իսկ նա նախատեսում եր մեկ-յերկու ամսից հաղթական ապստամբություն:

Ցերբ յես հաղորդեցի Իլյիչին մի ընկերոջ խոսքերը, թե ոգոստոսից կամ սեպտեմբերից վոչ ուշ իշխանությունը կանցնի բոլշևիկներին և վոր կառավարության նախագահը պետք է լինի Լենինը, նա միանգամայն լուրջ պատասխանեց. «Այո, այդ այդպես կլինի»:

Հետո Իլյիչը տվեց մի քանի ցուցումներ, ինչպես տանել գործը: Խոսակցությունն ընդհատվեց, վորովհետև յես հոգնած եյի և աննկատելի կերպով քնեցի:

Առավոտյան փոխանակ վեր կենալու ժամը 6-ին, զարթնեցի 11-ին:

Այդ ժամանակ Իլյիչը պատրաստում եր մի շարք փոքրիկ հոդվածներ, նամակներ Ստալինին և ուրիշ ընկերների: Ցես վերցրի այդ բոլորը, մնաս բարով ասի և գնացի:

Շուտով ինձ վիճակվեց նորից գնալ Իլյիչի մոտ. տանում եյի նրա մոտ ընկ. Շոտմանին, վորը հաջողացրեց Վլադիմիր Իլյիչին անցնելու Ֆինլանդիա, և այլևս Վլադիմիր Իլյիչին յես չտեսա մինչև հոկտեմբերի 24-ը, յերբ նա առաջին անգամ հանդես յեկավ Սմոլնու դահլիճում:

Ցերբ յես նրա մոտ դահլիճ, Վլադիմիր Իլյիչը վերջացնում եր իր ճառը Պետրոգրադի խորհրդի նիստում հետևյալ կոչով.

— Կեցցե՛ սոցիալիստական հեղափոխությունը:

Դահլիճն ուրախությունից դղրդում եր: Ցերեկոյան թերթերում տպվեց մի հաղորդագրություն, վոր Լենինը փոխադրվել է Սմոլնի և ինքն է սկսել ղեկավարել ապստամբությունը:

Այդ լրագրողները չսխալվեցին: Լենինը Հոկտեմբերյան ապստամբության կազմակերպումը վերցրեց իր յերկաթյա ձեռքը և հասցրեց այն մինչև հաղթական:

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ.

(Հիշողություններից)

ԱՔՍՈՐՈՒՄ

1898—1901

Մինուսինսկ, ուր յես գնացի իմ հաշվով, ինձ հետ յեկավ և մայրս: Կրասնոյարսկ հասանք 1898 թ. մայիսի մեկին, այդտեղից շոգենավով պետք է գնայինք Յենիսեյից վեր, բայց շոգենավերը դեռ չեյին բանում: Կրասնոյարսկում ծանոթացա նարոդովոլբավեց Տյուտչեվի և նրա կնոջ հետ, վորոնք վորպես այդ բաներում փորձված մարդիկ, ինձ համար տեսակցություն սարքեցին Կրասնոյարսկով անցնող սոցիալ-դեմոկրատների խմբի հետ: Դրանց թվումն եյին ինձ հետ միևնույն գործով դատապարտված ընկերներ Լենդնիկը և Սիլվինը: Զինվորներն աքսորյալներին լուսանկարչատուն բերելով՝ նստեցրին մի կողմը և սկսեցին ծամել այն հացն ու յերշիկը, վորոնցով հյուրասիրեցինք նրանց:

Մինուսինսկում գնացի տեսա մարտմեկյան աքսորական Սերգեյ Տիրկովին, վորպեսզի բարևեմ նրան իր քրոջ կողմից, վոր իմ գիմնազիական ընկերուհին եր: Գնացի Ֆ. Յա. Կոնի մոտ, վորը ինձ ներկայանում եր հին անհաշտ հեղափոխականի լուսապսակով զարդարված. նա սաստիկ դուր յեկավ ինձ:

Շուշենսկոյե գյուղը, վորտեղ ապրում եր Վլադիմիր Իլյիչը, հասանք երեկնաժամին:

Վլադիմիր Իլյիչը վորսի յեր գնացել: Իջանք. մեզ տարան խրճիթ: Սիբիրում—Մինուսինսկի շրջանում—գյուղացիները շատ մաքուր են ապրում. հատակներին փռված են տանը գործած խայտաբղետ կարպետներ, պատերը մաքուր սպիտակեցված են և յեղեվնիներով զարդարված: Վլադիմիր Իլյիչի սենյակը թեև մեծ չեր, բայց նույնպես մաքուր եր: Տանտերերը խրճիթի մնացած մասը զիջեցին ինձ ու մորս: Տանտերերն ու նրանց հարևանները լցվեցին խրճիթը և սկսեցին յերանդով նայել ու հարց ու փորձ անել մեզ:

Վերջապես Վլադիմիր Իլյիչը վերադարձավ վորսից: Զարմացավ, վոր իր սենյակում լույս կա: Տանտերը ասաց, վոր սա Ոսկար Ալեքսանդրովիչն է (պետերբուրգցի աքսորյալ բանվոր), վոր հարբած յերկավ ու բոլոր դրքերը շաղ տվեց: Իլյիչը արագ վազեց դեպի պատշգամբը: Այդ ժամանակ յես խրճիթից դուրս յեկա: Այդ գիշեր մենք յերկար խոսեցինք:

Շուշենսկոյում աքսորյալներից կային մի յերկու բանվոր—լոճեցի սոցիալ-դեմոկրատ լեհ Պրոմինսկին իր կնոջ և վեց յերեխաների հետ և Գուսիլովի գործարանի բանվոր Ոսկար Ենդբերգը, վորն ազգով Ֆին եր: Յերկուսն ել լավ ընկերներ եյին: Պրոմինսկին հանդարտ, հավասարակշռված, բայց շատ պինդ մարդ եր: Նա քիչ եր կարդում և քիչ բան գիտեր, բայց ոժտված եր զարմանալի ցայտուն կերպով շեշտված դասակարգային բնազդով: Իր այն ժամանակ դեռևս հավատացյալ կնոջը նա վերաբերվում եր հանդիսատ հեգնանքով:

Նա շատ լավ յերգում եր լեհական հեղափոխական յերգեր— «Բանվոր մարդ, ճանաչիր քո ուժերը»: «Մայիսի մեկը» և մի շարք ուրիշներ: Յերեխաները ձայնակցում եյին նրան, յերգեցիկ խմբին միանում եր և Վլադիմիր Իլյիչը, վոր շատ սիրով յերգում եր Սիբիրում:

Պրոմինսկին յերգում եր և ռուսական հեղափոխական յերգեր, վոր սովորեցնում եր նրան Վլադիմիր Իլյիչը:

Պրոմինսկին պատրաստվում եր Լեհաստան աշխատանքի գնալու. նա անթիվ անհամար նապաստակներ ապանեց, վոր նրանց մորթուց մուշտակներ պատրաս-

ոչ յերեխաների համար: Բայց այնպես էլ նրան Լեհաստան հասնել չհաջողվեց: Ընտանիքով գնաց-հասավ Կրասնոյարսկին մոտիկ մի տեղ, ծառայության մոտավ յերկաթուղու վրա: Յերեխաները մեծացան: Ինքը դարձավ կոմունիստ, կոմունիստ դարձավ և կինը, պանի Պրոմինսկայան, կոմունիստ դարձան յերեխաները: Մեկը սպանվեց պատերազմում: Մյուսը քիչ մնաց ընկներ քաղաքացիական կռվի ժամանակ, իսկ հիմա Զիտայումն է: Միայն 1923 թվին եր, վոր Պրոմինսկին ճանապարհ ընկավ Լեհաստան գնալու, բայց հանապարհին մեռավ բծավոր տիֆից:

Մյուս բանվորը բոլորովին այլ տիպի մարդ եր: Նա ջահել եր. աքսորվել եր գործադուլին մասնակցելու և այդ գործադուլի ժամանակ ցույց տված տաքարյուն մի վարմունքի համար: Նա շատ եր կարդում ամեն տեսակի բան, բայց սոցիալիմի մասին խիստ աղոտ հասկացողություն ուներ: Մի որ յեկավ դավառակի վարչությունից, թե՝ «նոր գրագիր ե յեկել, մենք համոզմունքներով միացանք»: «Այսինքն»— հարցնում եմ: «Թե նա, թե յես դեմ ենք հեղափոխության»: Յես ու Վլադիմիր Իլյիչը ուղղակի ապշեցինք:

Հետևյալ որը սկսեցի նրան «Կոմունիստական մանիֆեստ» կարդալ (պետք յեղավ թարգմանել գերմաներենից): Վերջացնելով այդ՝ անցանք «Կապիտալի» ընթերցմանը: Մի անգամ գրոսանքի ժամանակ ներս մտավ Պրոմինսկին, նստեց ու սկսեց իր ծիսամորճը ծծել: Յես կարդացածի մասին ինչ-վոր հարց եմ առաջարկում: Ոսկարը չգիտի ինչ ասի, իսկ Պրոմինսկին հանդարտ ժպտալով պատասխանեց հարցիս: Մի ամբողջ շաբաթ Ոսկարը թողեց գրագրությունները: Բայց ելի լավ տղա յեր: Շուշենսկոյում ել ուրիշ աքսորյալ չկար: Վլադիմիր Իլյիչը պատմում եր, վոր ինքը փորձել եր ծանոթություն հաստատել ուսուցչի հետ, բայց բան չի դուրս յեկել: Ուսուցիչը լինում եր տեղական արիստոկրատիայի — տերտերի ու խանութպանների մոտ: Նրանք թուրթ եյին խաղում ու խմում: Ուսուցիչը վոչ մի հետաքրքրություն չեր ցույց տալիս դեպի հասարակական խնդիրները: Այդ ուսուցչի հետ շաբաթակ վիճաբանում եր Պրոմինսկու ավագ վորդին՝ Լեոպոլդը, վորն այն ժամանակից արդեն համակրում եր սոցիալիստներին:

Վլադիմիր Իլյիչը մի ծանոթ գյուղացի ուներ՝ Ժուրավլյով ազգանունով, վորին նա շատ եր սիրում: Թոքախտավոր, յերեսուն տարեկան Ժուրավլյովը առաջ գրագիր եր յեղել, Վլադիմիր Իլյիչը նրա մասին ասում եր, վոր բնավորությամբ հեղափոխական ե, բողոքող: Ժուրավլյովը համարձակ դուրս եր գալիս հարուստների դեմ, չեր հաշվում և վոչ մի անարդարության հետ: Միշտ ինչ-վոր տեղ եր մեկնում և շուտով մեռավ թոքախտից:

Իլյիչի մյուս ծանոթը չբավոր գյուղացի յեր: Վլադիմիր Իլյիչը հաճախ նրա հետ վորսի յեր գնում: Դա ամենապարզ գյուղացիներից մեկն եր. կոչում եյին նրան Սոսիպատիչ. նա շատ լավ եր վերաբերվում Վլադիմիր Իլյիչին և ել ինչ ասես վոր չեր նվիրում նրան — մերթ կուռնկ, մերթ յեղևնու կոներ:

Սոսիպատիչի, Ժուրավլյովի միջոցով Վլադիմիր Իլյիչը ուսումնասիրում եր սիբիրյան գյուղը: Մի անգամ նա պատմեց ինձ իր մի զրույցը ունեվոր մի գյուղացու հետ, վորի տանը ապրել եր: Բատրակը նրանից կաշի յեր գողացել: Գյուղացին վրա յեր հասել դեռատակի մոտ և սպանել նրան: Այդ առթիվ Իլյիչը խոսում եր մանր սեփականատերերի անողոք դաժանության և բատրակներին անխնայորեն շահագործելու մասին: Յեվ իսկապես, Սիբիրի տնային բատրակներն աշխատում եյին տաժանակիրների նման, հանդիսատանելով միայն տոներին:

Իլյիչը գյուղն ուսումնասիրելու մի ուրիշ միջոց ել ուներ: Կիրակի որերը նրա մոտ իրավաբանական կոնսուլտացիա յեր: Նա, վորպես իրավագետ, մեծ ժողովրդականություն եր վայելում, վորովհետև վոսկեհանքերից գշված մի բանվորի ոգնել եր տանտիրոջ դիմաց գործը տանելու: Տարած գործի այդ համբավը շուտով տարածվեց գյուղացիների շրջանում: Գալիս

եյին գյուղացիները, գեղջկուհիները և իրենց ցավերը պատմում։ Վլադիմիր Իլյիչը ուշադիր լսում եր, թափանցում ամեն բանի խորքը և հետո խորհուրդ տալիս։ Մի անգամ մի գյուղացի քսան վերստ ճանապարհ կարելով՝ յեկել եր խորհուրդ հարցնելու, թե ինչպես պատժի իր փեսին, վորը իրեն չի կանչել հարսանիք, ուր լավ քեֆ են արել։ «Իսկ հիմի փեսադ կհյուրասիրի՞, յեթե գնաս նրա մոտ»։ «Հա, հիմի կանի»։ Յեվ Վլադիմիր Իլյիչը համարյա մի ժամ կորցրեց, վորպես գյուղացուն համոզի փեսի հետ հաշվելու։ Յերբեմն միանգամայն անկարելի յեր լինում պատմություններից հասկանալ, թե բանն ինչումն է, ուստի Վլադիմիր Իլյիչը միշտ խնդրում եր գործի պատճենը բերել։ Մի անգամ հարուստ գյուղացիներից մեկի յեղբայրը ավելի չքավոր կնոջ կովի։ Գավառական դատարանը վճռել եր, վոր յեղբայրը տաս ռուբլի տա այդ կնոջը։ Կինը բողոքել եր վճռի դեմ և պահանջել գործի «պատճեն»։ «Ի՞նչ, քեզ սովխոզ կովի պատճե՞ն տանք, ինչ է»— ծիծաղել եր նրա վրա առենակալը։ Զայրացած կինը յեկավ Վլադիմիր Իլյիչին դանգատվելու։ Հաճախ բավական եր, վոր տուժողը սպառնա, թե կդանգատվի Ուլյանովին, վորպեսզի զրկանք հասցնողը գիջի։

Սիբիրյան գյուղը Վլադիմիր Իլյիչը լավ ուսումնասիրեց։ առաջ նա գիտեր Վոլգայի ափերի գյուղերը։ Իլյիչը պատմեց մի անգամ։ «Մայրս ուղում եր, վոր յես գյուղում ամառանոցով զբաղվեմ։ Յես սկսեցի, բայց տեսնեմ՝ չի լինում — վերաբերմունքը գեղի գյուղացիներն անտարբեր և դառնում»։

Իսկապես ասած, Վլադիմիր Իլյիչը, վորպես աքսորյալ, իրավունք չուներ իրավական գործերով զբաղվելու, բայց այդ ժամանակ Մինուսինսկի շրջանում ազատամիտ ժամանակներ եյին։ Փաստորեն վոչ մի հսկողություն չկար։

«Առենակալը», վոր տեղացի ունեվոր գյուղացի յեր, ավելի հոգ եր տանում մեղ հորթի մոտ վաճառելու մասին, քան այն մասին, վոր «իր» աքսորականները չփախչեն։ Շուշենսկոյում զարմանալի եժանություն եր։ Որինակ, Վլադիմիր Իլյիչը իր «ռոճիկով»—ութ ռուբլի նպաստով— ուներ մաքուր սենյակ, կերակուր, շորերը լվանում եյին և կարկատում, — յեվ դա դեռ թանգ եր համարվում։ Ճիշտ է, ճաշն ու ընթրիքը հասարկ եյին. շաբաթը Վլադիմիր Իլյիչի համար մորթում եյին մի վոչխար, վորով որեց որ կերակրում եյին նրան, մինչև բոլորը կուտեր. հենց վոր ուտում, վերջացնում եր, մի շաբաթվա համար միս եյին գնում. աղախինը գուրսը, տաշտում, վորի մեջ կեր եյին պատրաստում տավարի համար, դնված միսը մանրացնում եր, վորպեսզի Վլադիմիր Իլյիչի համար կատլետ պատրաստեն, ելի մի ամբողջ շաբաթվա համար։ Բայց կաթն ու չանդան առատ եյին թե իրենց՝ Վլադիմիր Իլյիչի և թե նրա չան՝ դեղեցիկ Ժենկայի համար, վորին Վլադիմիր Իլյիչը սովորեցրել եր և՛ կապոց տանել, և՛ հեռուի յերկու վոտի վրա կանգնել, և՛ այլ չնային գիտություններ։ Վորովհետև Զիբյանովների մոտ գյուղացիները հաճախ հաբում եյին յեվ այնտեղ ընտանեկան կյանք վարելն ել շատ կողմերով անհարմար եր, մենք չուտով ուրիշ բնակարան փոխադրվեցինք. դա մի ամբողջ տան կեսն եր, վորը և՛ բակ ուներ, և՛ բանջարանոց. վարձեցինք շորս ռուբլով։ Սկսեցինք տուն-տեղ դառնալ։ Ամառը անկարելի յեր դառնալ մեկին, վոր ոգներ մեզ անտեսության մեջ։ Յեվ յես ու մայրս յերկուսով կռիվ եյինք տալիս ռուսական փեչի հետ։ Սկզբում պատահում եր, վոր արդանակը շուռ եյի տալիս ու թափում ունելիով։ Հետո սովորեցի։ Մեր բանջարանոցում աճում հասնում եր ամեն ինչ—վարունգ, դազար, ճակնդեղ, դդում. իմ բանջարանոցով յես շատ եյի հպարտանում։ Բակը այդի չինեցինք։ Իլյիչի հետ գնացինք անտառ, բաղեղ բերինք և այդին տարքեցինք։ Հոկտեմբերին հայտնվեց մի ոգնականուհի, տասներեք տարեկան Դիհար, սուր արմունկներով Պաշան, վորը իր ձեռքն

առավ ամբողջ տնտեսությունը: Յեռ նրան գրագիտություն սովորեցրի և նա պատերը զարդարեց մայրիկիս հրահանգներով. «Յերբեք թեյը չթափես». ուներ իր որդիները, ուր գրում եր. «Յեղան Ոսկար Ալեքսանդրովիչը և Պրոմինսկին: Յերգ յերգեցին. յես էլ յերգեցի»:

Բակում ապրում եր մի գաղթական լատիշ, հարբեցող մի մարդ: Նա տասնչորս յերեխա յեր ունեցել, բայց ապրել եր միայն մեկը՝ Մինկան: Մինկան վեց տարեկան եր. գունատ, թափանցիկ դեմք ուներ, պայծառ աչքեր յեվ լուրջ խոսակցություն: Նա սկսեց ամեն որ գալ մեզ մոտ. դեռ անկողնից չելած, մեկ էլ տեսար դուռը բաց անելով հայտնվեց փոքրիկը՝ մի մեծ դղակ գլխին, մոր փափուկ կոֆտան հագին, շարֆով փաթաթված, և ուրախ հայտարարեց. «Ահա յեվ յես»: Գիտեր, որ մայրս գժի պես սիրում է իրեն, որ Վլադիմիր Իլյիչը միշտ կխաղա և հանաքներ կանի իր հետ: Նրա հետեվից վազում եր մայրը:

— Մինկա, մանեթանոցը չե՞ս տեսել:

— Տեսա՝ սեղանի վրա ընկած է, դրի տուփի մեջ:

Յերբ մենք մեկնեցինք, Մինկան վշտից հիվանդացավ: Այժմ նա յել չկա, մեռել է, իսկ հայրը գրել էր, խնդրելով հող հատկացնել իրեն Յենիսեյի այն կողմը. «ուզում եմ ծեր հասակում կուշտ ապրել»:

Մեր տնտեսական ուռճացումը քանի գնում ավելանում եր—ձեռք բերինք կատվի ձագ:

Առավոտից Վլադիմիր Իլյիչի հետ նստում եյինք Վերբը թարգմանելու, որ գտել եր ինձ համար Ստրուվեն: Ճաշից հետո յերկու ժամ յերկուսով միասին սրտագրում եյինք «Կապիտալի զարգացում»-ը: Հետո ուրիշ մանր գործեր կային:

Պոտրեսովը յերկու շաբաթով ուղարկեց մեզ՝ Կաուցկու Բերնշտեյնի դեմ գրած գրքույկը. բոլոր գործերը թողինք մի կողմ յեվ գրքույկը ժամանակին՝ յերկու շաբաթվա մեջ թարգմանեցինք: Աչխատանքից հետո գնում եյինք զբոսանքի: Վլադիմիր Իլյիչը մոլի

վորսորդ եր. ձեռք եր բերել կաշվե վարտիկ և ինչ ճահիճ ասեք, վոր չեր մտնում:

Ապրելով Մոսկվայում, Վլադիմիր Իլյիչը վերջին տարիները յերբեմն նույնպես վորսի յեր գնում, բայց վորսորդական յեռանդն արդեն զգալի չափով պակասել եր: Մի անգամ գնացին աղվեսի վորսի: Այս վորսորդության ծրագիրը շատ հետաքրքրեց Վլադիմիր Իլյիչին: «Նուրբ է մտածված», ասում եր նա:

Վորսորդները սարքել եյին այնպես, վոր աղվեսը վազել եր ուղիղ դեպի Վլադիմիր Իլյիչը, իսկ նա հրացանը բռնել եր այն ժամանակ, յերբ աղվեսը մի բոպե կանգնելուց ու նրան նայելուց հետո արագ թեքվել, մտել եր անտառ: «Ինչո՞ւ չկրակեցիր»։— «Գիտես, շատ գեղեցիկ եր»:

Ուշ աշնանը, յերբ դեռ ձյունը չեր յեկել, բայց գետերը սառչում եյին արդեն, հոսանքով գնում եյինք յերկար—յուրաքանչյուր քարը, յուրաքանչյուր ձկնիկը յերևում եր սառույցի տակ, կարծես ինչ-վոր կախարդական թագավորություն լիներ: Իսկ ձմեռը, յերբ անդիկը սառչում է ջերմաչափի մեջ յեվ գետերը սառչում են մինչև հատակը, ջուրը հոսում է սառույցի յերեսով յեվ շուտով ինքն էլ ծածկվում սառույցով, կարելի յեր վոտքի տակ ծռվող սառույցի վրայով յերկու վերստ սահել: Այս բոլորը Վլադիմիր Իլյիչը շատ եր սիրում:

Մորս հետ գնացինք Մոսկվա՝ Մարիա Ալեքսանդրովնայի-Վլ. Իլյիչի մոր մոտ: Այդ ժամանակ նա մենակ եր Մոսկվայում— Մարիա Իլյինիչնան բանտում եր, Աննա Իլյինիչնան արտասահմանում եր:

Մարիա Ալեքսանդրովնային յես շատ սիրեցի. նա այնպես նրբազգաց յեվ ուշադիր եր միշտ: Իլյիչը սաստիկ սիրում եր մորը. «Նա հսկայական կամքի տեր է,— ասաց նա մի անգամ:— Յեթե յեղբորս դեպքը պատահած լիներ հորս կենդանության ժամանակ, չգիտեմ, թե ինչ կլիներ»:

Իր կամքի ուժը Վլ. Իլյիչը ժառանգել եր մորից,

ժառանգել եր նմանապես նրա նրբազգացությունը յեվ գեպի մարդիկ ունեցած ուշադրությունը:

Ցերբ ապրում եյինք աքսորում և արտասահմանում, յես աշխատում եյի վորքան կարելի յե կենդանի նկարագրել մեր կյանքը, վորպեսզի նա մի քիչ գոնե մոտիկ զգա վորդուն: Ցերբ 1897 թ. Վլ. Իլյիչը աքսորված եր, լրագիրներում հայտարարություն և լինում Մոսկվայում մեռած Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովայի մահվան մասին: Ոսկերը պատմում եր. «Ցեկա Վլ. Իլյիչի մոտ, նա կտավի պես գունատ ասաց—մայրս մեռել ե»: Բայց պարզվեց, վոր հայտարարությունը ուրիշ Մ.Ա.Ուլյանովայի մահվան մասին եր:

Շատ վիշտ եր վիճակվել Մարիա Ալեքսանդրովնային—ավագ վորդու մահապատիժը, Ոլգա աղջկա մահը յեվ մյուս զավակների անվերջ ձերբակալությունները: Վլ. Իլյիչը հիվանդանում ե 1895 թվին, նա խնայում զալիս-խնամում ե նրան. ինքը կերակուր ե պատրաստում նրա համար: Ձերբակալում են Վլ. Իլյիչին—նա ելի իր դերքի վրա յե. ժամերով նստում ե նախնական բանտարկության տան կիսախավար ընդունարանում, գնում ե տեսակցության, կատարում ե հանձնարարությունները, և միայն մի փոքր նրա գլուխն ե դողում: Ցես նրան խոստացա պահպանել Վլադիմիր Իլյիչին, բայց չկարողացա...

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Մոբը՝ Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

3/1 [19] 13 [21/XII 1912 Կրակով]:

Թանկագին մայրի՛կ: Այսոր ստացա քո և Անյուտայի նամակը: Մեծապես merci:

Շնորհավորում եմ ձեր բոլորիդ տոները: Ցանկանում եմ, վոր ուրախ դիմավորեք տոներին և առողջ ու զվարթ լինեք:

Այսոր Մանյուշայից ելմի բացիկ ստացա Վոլոդգա գետի տեսարանով: Բացիկով յեթե գաղտնք, վո՛չինչ, վատ քաղաքիկ չի՛... Գրում ե, վոր վատ չե տեղավորվում:

Ցեթե Միության ձեզ մոտ ե — շատ-շատ մեծ բարև նրան: Մարկին ել: Հույս ունիմ, նա ել առողջ ե:

Իսկ Անյուտան գեռ ելի վատ ե գրում:

Ա՛յ դժբախտություն ե նրա մա՛տը:

Մեզ մոտ բոլորն առողջ են: Պատրաստվում ենք ավելի շատ ռուսական տոները տոնել, քան տեղական:

Ամուր գրկում եմ քեզ և ամենալավն եմ ցանկանում:

Քո Վ. Ուլ.

Քրոջը՝ Ա. Ի. ՅԵԼԻԶԱՐՈՎԱՅԻՆ

[1912 թվի աշնանը, Կրակով]:

Թանկագին Անյուտա: Շատ ուրախ եմ քեզնից տեղեկություն ստանալուս համար: Սակայն, բավական յերկար և շատ դավեց քո ձեռքը.— մինչև այժմ ել ձեռագիրդ թույլ ե:

Մեզ համար այստեղ ավելի լավ ե, քան Փարի-

գում,— նյարդերս հանգստանում են, ավելի շատ գրական աշխատանք,— ավելի քիչ սկլոկա...

Հույս ունիմ, ավելի հեշտությամբ կարող ենք տեսնվել,— յեթե պատերազմ չլինի, վորին քիչ եմ հավատում:

Գորկուց յերբեմն եմ տեղեկություն ստանում. նա այժմ դեպի մեզ ավելի լավ է տրամադրված, քան թե առաջ:

Մարկն ու Միտյան ինչպե՞ս են:

Խնդրում եմ իմ կողմից ավելի պինդ համբուրիր մայրիկին:

Այստեղ հիանալի աշնանային յեղանակ է, և մենք մեծ յեռանդով զբոսնում ենք:

Նյութական պայմաններս առայժմ տանելի յեն, բայց շատ անհուսալի յեն... Յեթե մի բան լինի, կգրեմ քեզ:

Պինդ սեղմում եմ ձեռքդ և ներողություն խնդրում շտապելուս համար:

Քո Վ. Ուլյանով:

P. S. Յե.Վ. և Նադյան խնդրում են բարևել և համբուրում են: Յերկուսն էլ առողջ են:

Մոբը՝ Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Բաց նամակ 15/VIII 1899 թ. [Շուշենսկոյե գյուղ]:

Թանդագին մայրիկ, ստացա Մանյուշայի և Միտյայի նամակները, վորոնք հայտնում են, թե իմ հեռագիրն ստացվել է և վոր դուք ճանապարհորդելուց վճռականապես հրաժարվել եք*): Արդյոք հիմա առողջացե՞լ ես: Յե՞րբ (և ուր) է գնում Մանյուշան: Դուք յե՞րբ եք տեղափոխվում նոր բնակարան կամ Մոսկվա: Այսոր պատվիրված ծանրոցով ուղարկում եմ քեզ այն գիրքը, վոր պետք է վերադարձնեյի: Ներողություն, վոր ուշացրի: Պինդ համբուրում եմ քեզ և վողջույն եմ ուղարկում մերոնց բոլորին:

Քո Վ. Ուլ.

Նադյան և Յեվ.—ն բարև են ուղարկում:

*) Խոսքը վերաբերում է Վ. Ի.-մոր՝ Շուշենսկոյե գյուղը գնալուն:

Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱ

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

ԲՐԻԿԱՍԿԻ, ՀՆԴԿԱՅԻՆԵՐ, ՍԵՎ ՓԱՅՏԻԿԸ

Վլադիմիր Իլյիչը վաղ մանկական հասակում չափազանց կայտառ յերեխա յեր: Ամենից չարաճճին: Բայց այդ մասին յես կարող եմ պատմել միայն քրոջս խոսքերից, վորովհետև յես դեռ ծնված էլ չեյի, յերբ Վլադիմիր Իլյիչը հինգ-վեց տարեկան եր: Քույրս պատմում եր, թե յերբ նրան խաղալիքներ եյին նվիրում, նա անչափ հետաքրքրվում եր, թե ինչից են նրանք չինված: Մի անգամ նրան նվիրել եյին պապյե-մաշեյից չինած մի խաղալիք՝ յերեք ձի յեվ մի սայլակ: Նա վերցնում է խաղալիքն ու անհայտանում. փնտռում են,— ո՞ւր է գնացել նա: Պարզվում է, վոր մտել է դռան հետևը և այնտեղ հանում է ձիերի վոտները: Բայց առհասարակ մեր ընտանիքում խաղալիքները շատ էլ ընդունված չեյին:

Նա անչափ սիրում եր աղմկալից խաղերը: Հիշում եմ, մեզ մոտ մի ինչ-վոր խաղ կար «բրիկասկի» անունով: Դմիտրի Իլյիչը նույնպես մասնակցում եր այդ խաղին: Խաղում եյին անպատճառ մութ սենյակում, յերեկոյան, յերբ մեծերը տանը չեյին լինում: Դա մի աղմկալից խաղ եր. թագնվում եյին, դուրս թռչում բազմոցի տակից: Յեվ մեզ մոտ ավելի շատ այդ տեսակ աղմկալից խաղեր եյին լինում բակում, վազվզոցով, քան սուս ու փուս խաղեր՝ խաղալիքներով: Ղեկավարներ հանդիսանում եյին Վլադիմիր

Իլյիչը յեվ միջնակ քույրս՝ Ոլգան։ Նրանք շարունակ հնարում էին նորանոր խաղեր։ Յերեխա հասակում մենք մի խաղ էինք խաղում, վորն այժմ կոչվում է «խոխոզ-փայտիկ», իսկ մենք անվանում էինք «սեվ փայտիկ»։ Խաղում էինք «հնդկացիներ»։ Յերբ «հնդկացիներ» էինք խաղում, կոստուկից յեվ ելի չգիտեմ ինչից շինում էինք գլխի ծածկոցներ։

ՄԵՆՔ ՀԱՄԵՐԱՇԽ ԵՅԻՆՔ ԱՊՐՈՒՄ

Մենք ապրում էինք համերաշխ։ Վլադիմիրը Իլյիչը միշտ իմ պաշտպանն էր։ Յես փոքր էի յեվ առհասարակ ընտանիքի սիրելին ու յերես առածն էի։

Հիշում եմ այսպիսի մի դեպք։ Մեր տան վերևում ապրում էին յերկու տղա։ Մի անգամ կանչում են ինձ յեվ ասում, վոր Ֆոկուս են ցույց տալու։ Գնում եմ վերևի հարկը և տեսնում. մայրիկի կարի մեքենայի արկղը ման է գալիս հատակի վրա։ Նայում եմ տարակուսանքով։ Յեվ ի՞նչ է պարզվում։

Մենք մի փոքրիկ շնիկ ունեյինք «Գարսոն» անունով, վորին մեր դայակը «Կարսոն» (վարտիք) էր ասում։ Այդ շնիկին դրել էին արկղի տակ յեվ նա յել շարժում էր այդ արկղը։ Յես սաստիկ շվարեցի, վախենում էի, վոր նա շնչասպառ կլինի ու կխեղդվի։ Բայց յեկավ Վլադիմիրը Իլյիչը և համոզեց ինձ, վոր վոչ մի վատնդ չի սպառնում շնիկին։ Նրա հեղինակությունը շատ մեծ էր իմ աչքում։

Մի ուրիշ անգամ յես անասելի վախեցա։ Մեկն ինձ ասել էր, թե քաղաքում հայտնվել են ուրվականներ։ Պարզվեց, վոր մի քանի յերեխաներ շինել են վոտնացուպեր, փաթաթվել են սավանների մեջ յեվ այդպես շրջում են քաղաքում։ Ինձ տիրեց մի անասելի սարսափ։ Յեկավ Վլադիմիրը Իլյիչը և հանգստացրեց ինձ։ Նա այսպես էր անում. գալիս էր, համոզում, յեվ յես հանգստանում էի։ Հետո վոտնացուպեր յերևան յեկան նայեվ մեր բակում։

ՄԻԹԵ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍՊԻՏԱԿ ՏԵՏՐԱԿԸ ՍԵՎ ԹԵԼՈՎ ԿԱՐԵԼ

Վլադիմիրը Իլյիչը մանուկ հասակից մի շատ բնորոշ հատկություն ուներ. ինչ էլ վոր նա աներ, անում էր շատ լավ։ Միշտ էլ, յերբ աշակերտին առաջադրված է դրել վորևե շարադրություն յեվ ժամկետն էլ մեծ է, նա նստում է գրելու իր շարադրությունը վերջին որերում, գրավոր աշխատությունը ներկայացնելուց քիչ առաջ։ Նա մտածում է. «Ժամանակ շատ կա, կհասցնեմ»։ Յերբ Վլադիմիրը Իլյիչին տալիս էին վորևե մի շարադրություն տանը գրելու,— նա իսկույն կպչում էր գործի— պատրաստում էր նյութը, ընտրում էր գրքեր, կարդում էր, քաղվածքներ անում։

Նա սովորություն ուներ մատիտով գրելու։ Շատ բարակ սրում էր մատիտը, ստացվում էր գերազանց սրած մատիտ։ Քաղվածքներ նա անում յեվ գրում էր միայն յերկայնքով ծալած թղթի մի կողմի վրա։ Յերբ մի նոր միտք էր ծագում նրա գլխում, նա վերցնում էր հարկավոր եջը յեվ գրի առնելով ավելացնում էր թղթի աջ կողմում։ Շարադրության պլանը նա կազմում էր նախորդը։ Այդ գիծը շատ էլ հատուկ չէ ռուս մարդկանց։ Մեզանում շատերը, յերբ գնում են վորևե զեկուցում անելու, ասում են, վոր հենց զեկուցման ժամանակ կհիշեն նյութը։ Յես ճանաչում եմ այդ տեսակ ընկերների։ Իսկ Վլադիմիրը Իլյիչը, ինչ տեսակ զեկուցում կամ զրքույկ գրելիս լիներ, միշտ կազմում էր պլանը։ Նույնիսկ մանուկ հասակում նա կազմում էր իր շարադրությունների պլանները։

Յերբ յես գիմնազիայի յերկրորդ դասարանումն էի, նա յերբեմն ոգնում էր ինձ իմ պարապմունքներում, յեթե վորևե բան չէի հասկանում։ Յեվ միշտ պահանջում էր մեծ ճշտապահություն ու ճշգրտություն։ Հիշում եմ, ինձ պատվիրել էին նկարել Յեվրոպայի քարտեզը։ Նայելով քարտեզին, յես նկարեցի ձեռքով։ Նա ասաց, վոր դրա համար կա կարկին, հարկավոր է ճշտությամբ չափել տարածությունը յեվ տիպեց ինձ նորից ամեն ինչ նկարել։ Ահա մի ուրիշ

գեպք: Նա պարապում էր ինձ հետ լեզուներից: Հարկավոր էր գրել անծանոթ բառերը: Ցես վերցրի տետրակը, վերցրի առաջին պատահած թելը յեվ սկսեցի կարել: Սեվ թել էր ընկել ձեռքս: Նա տեսավ յեվ ասաց. «Ի՞նչպես կարելի յե սպիտակ տետրակը սեվ թելով կարել: Չի կարելի»: Ցեվ տեղն ու տեղն ստիպեց ինձ նորից կարել սպիտակ թելով: Այդքան ճշգրիտ էր նա ամեն բանում: Ցեվ այդ գիծը մնացել էր նրա ամբողջ կյանքում:

Ցես ապրել եմ նրա հետ այն ժամանակվա Սամարայի նահանգի Ալեկսյեվկա խուտորում: Այժմ այնտեղ մի շատ լավ կոլտնտեսություն կա «Լենինի անկյուն» անունով: Վլադիմիր Իլյիչն ապրում էր այնտեղ ամառը: 18—20 տարեկան էր նա: Նրա ժամանակը սահմանավորված էր: Կանոնավոր կերպով ամեն որվա կկենար, թեյ կխմեր, կվերցներ տետրակները, բառարանները, գրքերը, կգնար այգու ծայրը: Այնտեղ նա չինել էր սեղան, նստարան, մարզաձողեր: Ինքն էր չինել. ցցել էր ձողեր և կառուցել էր պահանդ:

Կանոնավորապես վորոշ ժամի նստում էր պարապելու, վորպեսզի ժամանակն իզուր չկորչի: Առավոտից նա պարապում էր ավելի դժվար առարկաներով՝ քաղաքատնտեսությամբ, պատմությամբ: Ցեվ այդպես սովորաբար մինչև ժամի յերկուսը, մինչև ճաշ նա անց էր կացնում այդ անկյունում: Ցես գալիս էյի այնտեղ ոտար լեզուներով պարապելու:

Չեր լինում մի որ, վոր նա չպարապեր, վոր գնար վորևե տեղ: Ինչքան էլ մեծ լինեն մարդու ընդունակությունները, առանց այդ տեսակ համառ աշխատանքի անկարելի յե հասնել մի բանի: Ճաշից հետո նա գնում էր զբոսնելու, կամ նույն տեղում կարդում էր գեղարվեստական գրականություն, նոր ստացված ամսագրեր: Ժամանակի այդ ճիշտ դասավորումը մնացել էր նույնությամբ պատանեկական հասակից: Այդ պատճառով էլ նա կարողացավ շատ գործ կատարել:

Նա շատ էր սիրում լեզուները. շատ մեծ ուշադրություն էր նվիրում գերմաներեն և ֆրանսերեն լեզուներին: Նա ձեռք էր բերել բնագիր բառարաններ: Ֆրանսերեն լեզվի անկանոն բայերի նրա աղյուսակները այնպես կանոնավոր էյին գծված ու գրված,— իսկապես ապած լինեյին:

Առանձնապես մոտիկ ընկերներ նա չուներ դպրոցում, բայց դպրոցական ընկերները լավ էյին վերաբերվում նրան: Նա յերբեմն վաղ էր դպրոց գնում, վորպեսզի ոգնի վորևե մեկին խնդիրներում և հին լեզուներում, վոր նա շատ լավ գիտեր, ինչպես և շատ լավ գիտեր նոր լեզուները:

Նրա մեջ շատ վաղ հանդես յեկավ ժուրնալային, գրական աշխատանքի ընդունակությունը: Սիմբիրսկի գիմնազիայում բանահյուսության ուսուցիչը յերբեմն Վլադիմիր Իլյիչին հինգ և խաչ թվանշան էր գնում և դեռ գովում էլ էր, ինչքան ուժ ուներ: Նա միշտ ասում էր մեր մորը, թե Վլադիմիր Իլյիչը գրականագետ պիտի դառնա,— այնքան լավ էր նրա վոճը: Մաթեմատիկայով և բնական գիտություններով Վլադիմիր Իլյիչն ավելի քիչ էր պարապում: Դեպի բնական գիտությունները հակումն ուներ մեր մեծ յեղբայրը, Ալեքսանդր Իլյիչը: Նա շարունակ զբոսնում էր նավակով, հավաքում էր զանազան ճիճուներ, ձվերից կոլեկցիաներ էր կազմում: Իսկ Վլադիմիր Իլյիչը չէր սիրում այդ: Նա ավելի սիրում էր լեզուները, բանահյուսությունը, պատմությունը, գրականությունը:

ՄԵՐ ՄԵԾ ՅԵՂԲԱՅՐԸ

Մեծ յեղբորը նա շատ էր սիրում: Նա Վլադիմիր Իլյիչից չորս տարով մեծ էր: Վլադիմիր Իլյիչը սովորաբար ամեն ինչ անում էր «ինչպես Սաշան», ինչպես ինքն էր ասում: Պատահում էր, մատուցում էյին քաղցրավենիք, նրան դիտմամբ հարցնում էյին. «Վլադիմիր, ի՞նչպես ես ուզում քաղցրավենիք, կաթո՞վթե յուղով»: Նա միշտ պատասխանում էր. «Ինչպես Սաշան և ուզում»:

Մեծ յեղբայրը չափազանց զուսպ եր, հավասարակշռված, մեղմ, իսկ Վլադիմիր Իլյիչը մանուկ հասակում աղմկարար եր, դյուրագրգիռ, վոչ այնքան հարգասահ: Մեծ յեղբայրը նրա վրա ահագին ազդեցություն ուներ: Հետո նա բոլորովին ուղղվեց: Նրա սմենամոտիկ բարեկամը մեր միջնակ քույրն եր. Նրանք տարիքով մոտ եյին իրար, շատ եյին կարդում միասին, իսկ խաղերի մեջ միշտ յերրորդություն եյին կազմում Վալոդյան, Ոլգան և Դմիտրին: Այդ բոլոր խաղերը տեղի եյին ունենում բակում:

Վլադիմիր Իլյիչի վրա չափազանց ուժեղ տպավորություն թողեց մեծ յեղբոր մահապատիժը: Հենց ուղիղ այդ տարում նա ավարտել եր գիմնազիան: Նա գնաց Կազանի համալսարանը: Այն ժամանակ կարգերը չափազանց ծանր եյին համալսարանում. ուսանողներին արգելված եր հավաքվել և ինքնազարգացմամբ պարապել: Կային վերակացուներ, դրանց անվանում եյին «պեդելներ», վորոնք հաղորդում եյին իշխանությանը ուսանողների քաղաքական խոսակցությունները:

Կազանում ուսանողները մի անգամ ցանկացան դուս տալ վերակացուներից մեկին, առհասարակ պահանջում եյին ավելի մեծ ազատություն համալսարանում: Նրանք կազմեցին պետիցիա (հանրագիր) և Վլադիմիր Իլյիչը շատ ակտիվ մասնակցություն ունեցավ այդ բանում: Ուսանողների այդ պետիցիան չընդունեցին: Կանչեցին վոստրիկանություն: Այն ժամանակ բազմաթիվ ուսանողներ դեմոնստրատիվ կերպով դեն գցեցին իրենց ուսանողական տոմսը: Վլադիմիր Իլյիչն ել գցեց իր տոմսը: Մի քանի տասնյակ ուսանողներ կալանավորվեցին: Վլադիմիր Իլյիչն ել կալանավորվեց:

Յեվ ահա, յերբ տանում եյին նրան բանտ, պրիստավն ասաց նրան.

«Ի՞նչ եք կուվում, յերիտասարդ, չե՞ վոր ձեր առաջ պատն է կանգնած»:

Իսկ Վլադիմիր Իլյիչը շատ վճռական եր, և պատասխանում է. «Այո, պատ է, բայց փտած, մատդ կպցնես՝ կփլչի»:

Նրան աքսորեցին Կազանի նահանգը: Այնտեղ նա դատի հսկողության տակ եր գտնվում: Մեծ քույրս նույնպես այնտեղ եր ապրում: Սա հայտնի հսկողության տակ եր, պրիստավը դալիս եր իմանալու, ինչ կա, ինչ չկա, ով է գալիս նրա մոտ: Այստեղ կարելի յեր միայն նստել և պարապել: Յեվ Վլադիմիր Իլյիչը շատ եր պարապում, շատ եր կարդում:

Յերբ Վլադիմիր Իլյիչը Կազանումն եր, նա ծանոթացավ մի քանի հեղափոխականների հետ: Այնտեղ կային մի քանի հին նարոդովոլեցներ: Նրանց տակտիկային, նրանց մեթոդներին նա համաձայն չեր, բայց միշտ աշխատում եր վերցնել նրանցից այն ամենը, ինչ վոր կարելի յեր ոգտագործել հեղափոխական աշխատանքի համար: Նա շարունակ հարց ու փորձ եր անում նրանց:

«Իսկ ի՞նչպես եյիք դուք թաղնվում լրտեսներից, ի՞նչպես եյիք բանում ծանոթություններ հաստատում»:

Ընդհատակյա գործունեության ժամանակ կարեվոր եր, վոր հեղափոխականը կոնսպիրատիվ լիներ, վորպեսզի կարողանար հիմարացնել, խաբել ժանդարմներին և լրտեսներին: Քանի-քանի անգամ կարդալով եր Վլադիմիր Իլյիչն ընկնել ժանդարմների ձեռքը, յեթե ժանդարմները բռնեին նրան, բայց իր հնարագիտության շնորհիվ նա ծլկվում եր նրանցից:

Ընդհատակյա աշխատանքը Վլադիմիր Իլյիչը սկսել է 1890 թվին, յերբ տեղափոխվեց Պետերբուրգ (այժմյան Լենինգրադ): Պայմանները չափազանց ծանր եյին: Տեխնիկա, ինչպես մենք եյինք այն ժամանակ անվանում, այսինքն տպարանում թերթեր տպագրելու հնարավորություն, չկար: Առաջին թերթիկը Վլադիմիր Իլյիչը բաց թողեց ձեռքով գրած: Նա գրեց այն տպագիր տառերով—չորս-հինգ օրինակ: Լրտեսները, խուզարկուները— վոստրիկանության գործակալները— շատ հարպիկ եյին: Այնքան քայլափոխում տեսնում ես,

հետևիցդ գալիս է մեկը, իսկ վորպեսզի դու չհասկանաս, վոր քեզ հետևում են, նա հանձնում է քեզ ուրիշի հսկողությանը, հետո ինքը նորից է հայտնվում: Վլադիմիր Իլյիչը ստիպված եր ուսումնասիրել միջանցիկ բակերը և ամբողջ ժամանակ ուշադիր դիտել՝ արդյոք իր հետևից չեկող չկա՞: Նա ուներ առանձին ձիրք նրանցից փախչելու:

Մի անգամ, 1895 թվին, նա պատմում եր. Նրան հարկավոր եր մի տեղ գնալ, տեսնում է՝ լրտեսը գալիս է հետևից: Վլադիմիր Իլյիչն ուզում է ազատվել նրանից: Աննկատելի կերպով նա վազում-մտնում է մի տան գլխավոր մուտքը, վորտեղ գտնվում եր շվեյցարի սենյակը: Հենց այդ ժամանակ շվեյցարն այնտեղ չեր: Վլադիմիր Իլյիչը մտնում է սենյակը, նստում է բազկաթոռին և պատուհանից տեսնում է, թե ինչպես լրտեսը դես ու դեն է ընկնում,— կորե՛լ է մարդը, կարծես ջուրն է ընկել: Իսկ Վլադիմիր Իլյիչը նստած է բազկաթոռին և բարձրաձայն ծիծաղում է: Մեկն այն ժամանակ ինչնում է սանդուխներից և տեսնում է, թե ինչպես մի անծանոթ մարդ նստած շվեյցարի սենյակում՝ քահ-քահ ծիծաղում է:

ԻՆՉ Վ.ԵՐՑՆԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ՑԵՍ ՆՍՏԱԾ ԵՄ

Բանտն է,— նախակալանքի տունը: Կամերայում մահճակալը, փոքրիկ սեղանը, աթոռակն ամրացրած են պատից: Վլադիմիր Իլյիչը բանտումն էլ վրձռեց չարունակել իր հեղափոխական աշխատանքը: Ցերը նա բռնվեց, ամենից առաջ նրա համար կարևոր դարձավ իմանալ, թե խմբակից ո՞վ չի բռնված: Բանտից կարելի չեր աշխատելու համար գրքեր պահանջել: Նա ուղարկում է իրեն հարկավոր գրքերի մի չերկար ցուցակ: Ցեվ վորովհետև բոլոր ընկերներն էլ ունեչին գանազան մականուններ, ուստի նա այդ լեզալ նամակում, վորը տեղ եր հասնում ժանդարմների ձեռքով, հարցնում եր բոլոր ընկերների մասին: Ցեվ հարցնում եր շատ որիգինալ կերպով:

Կային չերկու Նիժեգորոդցիներ — Վանեեվը և Սիլվինը, վորոնց անվանում եչին Մինին և Պոժարսկիչ: Նա գրում է. «Ուղարկեցեք «Խառնակ ժամանակի հերոսները» գիրքը: Գլեբ Մաքսիմիլյանովիչ Կրժիժանովսկու մասին, վորի մականունն եր «Սուսլիկ» (գետնասկյուռ), նա խնդրում է Բրեմի «Մանր կրծողների մասին» գիրքը: Նադեժդա Կոնստանտինովնային անվանում եչին «Զուկ»: Նա գրում է. «Ուղարկեցեք Մայն-Ռիդի « The minoga »-ն:

Ընկերները պատասխանում եչին նրան. «Մինինին վերցրել են, իսկ Պոժարսկին մնում է» կամ՝ «Առաջին հատորը կա, չերկրորդը՝ վոչ»: Այսպիսով նա իմանում եր, թե խմբակից ով է ազատ և ով է բռնված:

Հարկավոր եր լինում նրան բանտից ուղարկել թերթիկներ: Հարաբերություն պահպանելու մի ամբողջ շարք միջոցներ կային գրքերի և նամակների միջոցով: Սովորական նամակի տողերի արանքում նա գրում եր կաթով, վորը տաքացնելու ժամանակ չերևան եր գալիս: Բայց բանտի սենյակում նստած՝ շատ դժվար է ընտրել այնպիսի վայրկյան, վոր վոչ վոք չտեսնի քեզ: Վերակացուները զաղտագողի և աննկատելի մոտենում եչին: Մոտենում է վերակացուն և նայում է դռան ծակից: Հարկավոր եր չափազանց զգույշ լինել: Նա փոքրիկ թանաքամաններ եր չինում ոչ հացից, մեջը լցնում եր կաթ և գրում եր: Հենց վոր մեկն ու մեկն սկսում եր նայել ծակից, նա խլուրդ կուլ եր տալիս թանաքամանը:

Ցեվ յես հիշում եմ, մի անգամ տեսակցության ժամանակ նա ասում եր. «Այսոր անհաջող որ է. վեց թանաքաման եմ կերել»:

Բանտում նա գրել է կուսակցության ծրագիրը: Այդ աշխատանքի վրա նա խորհել է չերկար ժամանակ, մտցրել է նրա մեջ բազմաթիվ ուղղումներ, նոնակ, մտցրել է նրա մեջ բազմաթիվ ուղղումներ, նոնակ, մո

այդ թերթերի մեջն էր խցկել նա ծրագրի նախագիծը։ Յեվ հանկարծ անսպասելի կերպով գալիս են խուզարկելու նրա սենյակը։ Յեկել էր դատախազի ոգնականը։ Իհարկե, յեթե գտնեին այնտեղ կոնսպիրացիայի ծրագիրը, Վլադիմիր Իլյիչին եժան չեր նստի այդ։ Կամ կբանտարկեին յերկար ժամանակով, կամ տաժանակիր աշխատանքի կուղարկեին։ Նրա մոտ բազմաթիվ քաղվածքներ կային։ Դատախազը՝ նայեց և ասաց. «Այսոր շատ շոգ է, անկարելի յե նայել այդ բոլոր թղթերը»։ Այդպես էլ նա դեպքը ձեռքից բաց թողեց, վոչինչ չգտավ։

Վլադիմիր Իլյիչն ասում էր. «Յես ավելի լավ պայմանների մեջ եմ, քան ուրիշները. ինձ վերցնել չեն կարող. միևնույն է, յես նստած եմ»։

ՀԱՆԳԻՍՏ ՅԵՎ ՎՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հանգստի ժամանակ Վլադիմիր Իլյիչը շատ էր սիրում ամեն տեսակ խաղեր բաց ոդում—գորոդկի, կրոկետ։ Յերբ Վլադիմիր Իլյիչն արդեն չափահասացել էր և պատրաստվում էր արտասահմանում հրատարակել «Իսկրա» (Կայծ) թերթը, նա յեկավ Պոտարակել, մեզ մոտ։ Յեվ այնտեղ ի՞նչ կռիվներ եյին լինում կրոկետ խաղալիս. խաղում էր բուռն կերպով, հափշտակված։ Գորոդկի խաղը տարածված էր Գորկիում։ Նա լավ էր վազում սահուկով։ Սիբիրում, ուր աքսորված էր նա, ինքը դետի վրա սառած էր չինել։ Յերբ Վլադիմիր Իլյիչն ապրում էր Դերմանիայում,— իսկ այնտեղ հո գետերը չեն սառչում—նա գրում էր ինձ, թե դատել է արհեստական սառույցից չինած մի արհեստական սահարան և պատրաստվում է սահել նրա վրա։

Շատ էր սիրում նա գրոսնել հեծանիվով։ Այդ հնարավորությունը նա ստեղծեց միայն արտասահմանում։ Հենց այնտեղ էլ սովորեց նա կատարել մեծ դրոսանքներ։ Մի անգամ քիչ էր մնացել, վոր տուժեր. մի ինչ-վոր վիկոնտ իր ավտոյով ընկնում է նրա վրա, Վլադիմիր Իլյիչին հաջողվում է մի կողմ նետվել, բայց նրա հեծանիվը բոլորովին ջարդվում է։

Վլադիմիր Իլյիչը շատ էր սիրում նաև վորսորդությունը։ Դատելով Սիբիրից գրած նրա նամակներից, նա այնտեղ շատ էր մաս դալիս հրացանն ուսին։ Ձեմ կարող ասել, վոր այն ժամանակ նա լավ վորսորդ էր, բայց սիրում էր հեռավոր զբոսանքներ կատարել հրացանն ուսին։ Հիշում եմ, յերկար ժամանակ նա նամակցություն ուներ մեծ քրոջս սմուսնու հետ այն մասին, թե չի կարելի՞ արդյոք մի կերպ ձեռք բերել լավ վորսորդական շուն։ Հետո, չգիտեմ ով, նրա համար գտել էր մի շուն և նա յերկար ժամանակ զբաղվում էր այդ շան հետ։

Վլադիմիր Իլյիչն առհասարակ շատ էր սիրում կատուներին և շներին։

Յերբ նա արդեն հիվանդ էր այստեղ, մեկը նրան նվիրել էր մի փոքրիկ լակոտ իսպանական սետտեր։ Գտել եյին մի շուն, բայց նա հիվանդացավ ժանտախտով և սատկեց։ Հետո գտան մի ուրիշը։ 1922 թվին, յերբ նա հիվանդ էր, նա շատ էր զբաղվում այդ շնով։ Վորսորդությունը նրա համար ուղղակի հանգստություն էր։ Արդեն Խորհրդային իշխանության որով նա յերբեմն վորսի յեր գնում, մաս էր դալիս անտառներում՝ Գորկիի շրջակայքում։ Նա յերբեմն ցանկանում էր ազատվել աշխատանքի մասին շարունակ մտածելուց։ Նա շատ էր սիրում այդ ձևով վորսորդության դուրս գալը։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԶԲՈՍԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Վորսորդության ժամանակ լինում եյին չափազանց հետաքրքրական հանդիպումներ։ Վլադիմիր Իլյիչը հագնվում էր շատ հասարակ։ Իմ ներկայությամբ լինում եյին այսպիսի դեպքեր. գնում ենք, հանդիպում ենք մի վորևե գյուղացու կամ գեղջկուհու։ Վլադիմիր Իլյիչը միշտ ոգտվում էր ուսիթից և հարց ու փորձ անում Խորհրդային իշխանության

դանագան միջոցառումների մասին, կամ հենց այնպես զրուցում էր: Պատահում էր, վոր մի վորևե մոբաքույր կամ ծերուկ չճանաչելով նրան, սկսում էր հայհոյել Խորհրդային իշխանությանը և Լենինին՝ առանց հիմք ունենալու:

Հիշում եմ, 1918 թվին, քիչ հանգստանալու նպատակով տուն որերին վերցնում էինք բուտերբրոդներ և ավտոյով գնում էինք քաղաքից դուրս:

Ամենից հաճախ, գնում էինք Բարվիխա: Նստում էինք այնտեղ և հանգստանում: Սիրում էինք նոր ճանապարհներ գտնել: Գնում ենք, հանկարծ տեսնում ենք մեր առաջ տափանավի կամուրջ և չգիտես, կարելի՞ յե ավտոյով անցնել նրա վրայից, թե վոչ: Կանգ ենք առնում, վճռում ենք հարցը. կդիմանա՞ կամուրջը, թե վոչ: Կանգնած է մի գյուղացի:

Հարցնում ենք. «Կարելի՞ յե անցնել»:

«Վոչ, ներեցեք,— ասում է,— խոսքերիս համար. այժմ Խորհրդային իշխանություն է, վաղուց չեն նորոգել կամուրջը»:

Ցավ, իհարկե, չէին նորոգում: Ի՞նչ նորոգման մասին կարող էր խոսք լինել, յերբ չորս կողմը ռազմաճակատներ էին: Նորոգման ժամանակ չկար:

Մտնում ենք գյուղը, վազում են յերեխաները. «Ման ածեցեք, ման ածեցեք»: Վլադիմիր Իլյիչը լցնում է ավտոն յերեխաներով և նրանք հաղթական դեմքով գնում են մինչև հարևան գյուղը: Առհասարակ նա շատ էր սիրում յերեխաներին: Ինքը յերեխաներ չուներ, բայց իր քրոջ յերեխաների, Աննա Իլյինիչնայի սաների հետ ժամանակին աղմկալի խաղեր էր սարքում: Արտասահմանում նրա մոտ գալիս էին փոքրիկ բարեկամները: Նա խոսում էր նրանց հետ, խաղում էր:

ԸՆԴՀԱՏԱԿ, ՇԱԼԱՇ, ՇՈԳԵԲԱՐՇՈՎ ԴԵՊԻ ՊԻՏԵՐ

1917 թվի հուլիսյան որերին յես Պիտերումն էի: Այն ժամանակ Վլադիմիր Իլյիչն ստիպված էր թաղ-

նվել, վորովհետև նրա դեմ հալածանք էր սկսվել: Իսկապես այդ հալածանքն սկսվել էր այն որից, յերբ նա վերադարձել էր արտասահմանից: Յերբ սկսվեց Փետրվարյան հեղափոխությունը, Վլադիմիր Իլյիչը Շվեյցարիայումն էր: Կարելի յեր Ռուսաստան ընկնել միմիայն Գերմանիայի միջով, վորն այդ ժամանակ պատերազմում էր Ռուսաստանի դեմ: Վլադիմիր Իլյիչին և մի քանի ուրիշ հեղափոխականների բաց թողին Գերմանիայի միջով և լուրեր տարածվեցին, թե նա յեկել է կնքված վագոնում: Բայց, իսկապես, այդ վագոնը կնքված (պլոմբած) չի յեղել, այլ նրան թողել են անցնել Գերմանիայով այն պայմանով, վոր կայարաններում վոչ վոք դուրս չգա և չխոսի բնակչության հետ, և վագոն էլ վոչ վոքի չեյին թողնում մտնելու:

Այն ժամանակվա լրագրերն այնպես նկարագրեցին գործը, վորպես թե Լենինը գերմանական լրտես է: Բուրժուազիան, վորը շատ լավ էր հասկանում, թե ինչ էր սպառնում իրեն հեղափոխական առաջնորդի գալը, աշխատում էր տարածել այդ հեքիաթը: Մի ինչ-վոր փաստաթղթի հիման վրա դատական քննություն սկսվեց Լենինի դեմ, հետո սկսվեցին խուզարկությունները: Նա ստիպված էր թաղնվել:

Մի որ առաջ ջարդուփշուր էին արել «Պրավդա»-յի խմբագրությունը. ներս էին խուժել յունկերները, ջարդել, փչացրել էին ամեն ինչ, իսկ առավոտյան յեկել էր Յակով Միխայլովիչ Սվերդլովը և հայտնել, թե «Պրավդան» ավերված է, լինելու յեն հետաքննություններ, պետք է հեռանալ տնից: Նա գցեց Վլադիմիր Իլյիչի վրա իր վերարկուն և նրանք միասին գնացին ուրիշի բնակարան: Այսպես էլ նա ստիպված էր թաղնված մնալ մինչև Հոկտեմբերյան հեղափոխության սկիզբը:

Սկզբում նա թաղնված էր մի բնակարանում, հետո անցավ ուրիշ տեղ: Ետերները և մենշևիկներն այն ժամանակ պահանջում էին, վոր նա ներկայանա դատարանին: Նույնիսկ մեր կուսակցության անդամներից մի քանիսն ասում էին. «Ի՞նչպես թե, բան-

վորները չեն հասկանա, թե ինչու է նա թաղնվում, նա պետք է դա և բացատրություն տա»: Այն ժամանակ Ստալինը,— դա նրա մեծ ծառայությունն է,— ասաց. «Վոչ մի դեպքում չպետք է գնալ դատարան, այլապես նրան կսպանեն բանտում: Բանվորները շատ լավ կհասկանան, թե ինչու պետք է նա թաղնվի»:

Ցեվ ահա, ընկեր Ստալինն այնպես կազմակերպեց գործը, վոր Լենինին տեղափոխեցին Սեստրորեցկ: Սկզբում նա ապրում եր վերնահարկում — խոտանոցում, հետո չալաշում, ապա գնաց Ֆինլանդիա:

Բայց ընդհատակումն էլ Վլադիմիր Իլյիչը ամբողջ ժամանակ յեռանդով պատրաստում եր Հոկտեմբերյան հեղափոխությունը: Նրա մոտ մարդիկ եյին գալիս, նա պայմանավորվում եր, հարաբերության մեջ եր մտնում ընկերների հետ, Ստալինի հետ, վորն այդ ժամանակ մնում եր Պետերբուրգում: Իսկ հետո, յերբ տեսավ, վոր մոտենում է վճռական պայքարը, նա շոգեքարշով, վորպես հնոցապան, անցավ Պետերբուրգ:

Կա նրա պատկերը բանվորի հագուստով, պարիկ դրած: Նա տեղափոխվեց Պետերբուրգ, մի ծանոթ հնոլ տուն: Նա գնում եր Կենտկոմի ժողովներին, նրա մոտն էլ մարդիկ եյին գալիս: Իսկ Խորհուրդների յերկրորդ համագումարի նախորյակին նա այդ նույն պարիկով, յերեսը թաշկինակով կապած, ամբողջ քաղաքի միջով գնաց Սմոլնի և արդեն այնտեղից ղեկավարում եր ապստամբությունը:

ՑԵՎ. ՑԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԼԵՆԻՆԸ ՄԵՌԱՎ

(Հատված «Լենինի մտքերը կրոնի մասին» գրքից)

Լենինի մահը ցավով և վշտով համակեց միլիոնավոր մարդկանց սրտերն ու գիտակցությունը: Ամբողջ աշխարհում Լենինի անունը վորպես կոչի զանգ յողջ աշխարհում Լենինի անունը վորպես կոչի զանգ և հնչում, վորը կանչում է բոլոր ճնշվածներին, բոլոր դրկվածներին: Այդ անունը խաղաղության, աղոթքների, խոնարհության, համբերության չի կանչում:

Լենին:

Այդ անունը անողոք պայքարի յե կանչում աշխատավորների բոլոր ճնշողների դեմ, վոտքի յե հանում կապիտալի միլիոնավոր ստրուկներին՝ աշխարհի բոլոր ծայրերում, մեծ խռովության համար բոլոր տեսակի ստրկության դեմ:

Լենին:

Այդ անունը տալիս՝ պայծառ հույսեր են բացավառվում ամբողջ աշխարհի ճնշվածների, պրոլետարների, չքավորների սրտերում, վորովհետև նա պայքարի կոչ արեց նրանց բոլորին և հաղթանակի ուղիղ ճամբան ցույց տվեց: Ուղղվում են կորացումից հոգնած մեջքերը, փայլ առնում աչքերը, տաք արյուն և յեռում յերակներում, սեղմվում են ձեռքերը՝ աշխատանքի և պայքարի համար:

Լենին:

Այդ անունը տալիս՝ դահիր եյին դողում և գոդում են, կապիտալի և հողի թագակիրների, արքաների սրտերն եյին սառչում և սառչում են, վորովհետև նրանք գիտեյին և գիտեն, վոր Լենինը կոմունիզմի կենդանի մարմնացումն է, Լենինը աշխատավորների կենդանի պատկերն է, բոցավառ, պայծառ,

պողպատյա, ինչպես կայծակ, հավատարիմ պահակն է և վրեժխնդիրը նրանց դարավոր ստրկության համար:

Ցեվ այսոր, յերբ նրա մարմինը հովհարում են Թաղման քայլերգի հնչյունները Մխիթյունների տան սյունապարդ դահլիճում, վորտեղ ճրագները փայլփլում են՝ ինչպես արցունքներ սև սգաշղաբշի տակին, վորտեղ պատերից նայում են բոցավառ ալ-կարմիր դրոշակները, վորոնք հաղթականորեն դուրս եյին քշել նախկին «Բարեծնունդ ազնվականության ակումբից» գյուղացիների և բանվորների դարավոր թշնամիներին, այսոր, յերբ լալիս է գյուղացիական և բանվորական ամբողջ յերկիրը մեր և արտում է աշխատավորների վողջ աշխարհը, այսոր, յերբ հազարավոր մարդիկ անշշունչ անցնում են առաջնորդի, բարեկամի, ուսուցչի, ընկերոջ դագաղի մոտով, վերջին հրաժեշտը տալով նրան և անշշունչ ջերմ արցունքներ են թափում բանվորները, բանվորուհիները, գյուղացիները, գեղջկուհիները, կարմիր-բանակայինները, այսոր Լենինի մահը մոլեգին ուրախություն է առաջացնում մեր դարավոր թշնամիների սրտում: Նը-բանք կարծում են, թե Լենինն ընդմիշտ մեռավ, թե մեռավ նաև Լենինի գործը:

Մենք՝ անասավածներս, չենք հավատում Լենինի մարմնի անմահության: Բայց մենք գիտենք, վոր նրա մտքերը, նրա գործերն անմահ են: Միայն այդպիսի անմահություն պետք է վորոնի մարդ, միայն այդպիսի անմահությունն է արժեքավոր, անապական:

Թանկագին է մեզ համար այժմ սիրված առաջնորդի այդ մարմինը, այն ամենը, ինչ վոր մնաց նրանից — մահկանացուից: Մենք թաղեցինք նրա մարմինը Կրեմլի պատի տակին—Կոմունարների պարտեզի տակին, նրան, վոր իր կյանքը նվիրաբերեց ժողովրդի, աշխատավոր մասսաների, բանվորների և գյուղացիների ազատության համար:

Սակայն մենք չենք թաղի ընկեր Լենինի գործը,



ԼԵՆԻՆԸ շալաշում (1917 թ)
Պ. Ստարոնոսով (փայտագրություն)

մենք կշարունակենք այն, մինչև վերջը կհասցնենք այն:

Թող ելի առաջվա նման հնչի այդ թանկագին անունը մեզ համար:

Լենին:

Հույս, ուրախություն, ուսուցիչ, բարեկամ, ընկեր, առաջնորդ ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների:

Լենին:

Ամբողջ աշխարհի ճնշողների համար կայծակնահան ամպրոպ:

Մենք՝ անասուվածներս, տալիս ենք քեզ՝ քո մահկանացու մարմնին մեր վերջին հրաժեշտի ջերմ վողջույնն այն խոստումով միասին, որ քո մտքերը կոմունիզմի մարմինը և արյունը դարձնենք:

ՑԵՍ. ՑԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԹԱՐՄ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

(Հատված «Լենինի մտքերը կրոնի մասին» գրքից)

Կրեմլի պարսպի տակին, որտեղ հավերժական քնով ննջում են արնաքամ յեղած կոմունարները, պառկած ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդը— «Լենինը»:

Վոչ չքեղ տապանադրեր, վոչ չքեղ հուշարձան— միայն հինգ տառ պարզ հանդստարանի վրա.

«Լենին»:

Այդ հինգ տառը այնքան բան է ասում: Միթե պարզ չե մեզ բոլորիս համար. մեռած Լենինը նույնքան հզոր է, որքան և կենդանի Լենինը, դեպի նրան են ձգվում բոլոր զրկվածների, բոլոր ճնշվածների մտքերը, սրտերը:

Ինչո՞ւ նրա մարմինը դուք չծածկեցիք հողի տակ, ինչո՞ւ յեք ձգտում պահպանել այդ մարմինը: Ինչո՞ւ

հազարավոր բանվորներ և գյուղացիներ խնդրել են դամբարանում թողնել Լենինի մարմինը, վորպեսզի կարելի լինի տեսնել նրան: Ի՞նչպես ե բացատրվում անաստվածների վերաբերմունքը, վոր անհավատ մարդիկ ուզում են պահպանել մեռած Լենինի մարմինը:

Մեզ համար թանդագին ե Լենինն իր ամբողջությամբ, այնպես, ինչպես մենք գիտեինք նրան: Յեթե մենք կարողանայինք պահպանել նրան այնպես, ինչպես վոր կար — ի՞նչ ուրախություն կլիներ մեզ ամենքիս համար, վոր ճանաչում եյինք նրան: Այն ամենը, ինչ վոր մեզնից կախված կլիներ, մենք կանեյինք, վորպեսզի պահպանեյինք նրան:

Սակայն, յեթե չի կարելի մշանջենավորել այդ, ինչո՞ւ ուրեմն հրաժարվենք մենք գոնե ժամանակավորապես պահպանելուց այդ մարմինը, քանի դեռ քայքայումը չի հպել նրան: Տեսնել այդ սիրելի, հարազատ դեմքը, նրանով վոգեվորվել նոր աշխատանքի, նոր պայքարի համար—մի՞թե այդ քիչ բան ե:

Շարժանկարը — կինոն մեզ շատ ժապավենպատկերներ ե թողել, և մենք կարող ենք տեսնել, թե ինչպես ե շարժվում Լենինը, խոսում, ծիծաղում, ուրախանում, զայրանում շարժանկարի պատատակեկրանի վրա:

Գրամոֆոնի 16 թիթեղաթերթ ե մնացել մեզ նրա ձառերով. Լենինը մեռավ, բայց մենք կարող ենք լսել նրա ձայնը: Կենդանի ձայն, Լենինին հատուկ ինտոնացիայով:

Այս ամենը գիտությունը, տեխնիկան ե անում: Մի՞թե այդ հրաշք չե: Մի՞թե հնումը չեյին ասի, թե տեսիլք ե այդ: Իսկ այժմ մենք ինքներս ենք մեքենայի միջոցով դուրս քաշում այդ տեսիլքը, հարկադրում ենք մեռած Լենինին շարժվել մեր առաջ շարժանկարի պատատակի վրա, խոսել, ծիծաղել, զայրանալ, լսում ենք նրա ձայնը:

Մենք համոզված ենք, վոր գիտությունը հետապայում կհաղթահարի նաև կենդանի նյութի քայքայմանը: Այժմ գիտությունը մոտեցել ե մարմնի յերիտասարդացմանը: Ո՞վ գիտե, յեթե Լենինը դարձյալ մի քանի տարի ապրեր, գիտությունը թերևս կարողանար յերիտասարդացնել նրա մարմնի բջիջները, նրա արյունատար անոթները, փոխարինել ուղեղային մաշված հյուսվածքը թարմ, նոր հյուսվածքներով, ինչպես վոր այդ նույն գիտությունը հնարավորություն ե տալիս մեզ տեսնել և լսել Լենինին այնպես, ինչպես վոր եր նա կենդանի ժամանակ:

Դամբարանում, Կրեմլի պարսպի տակին, Կոմունարների պարսպի տակին, հանգչում ե Լենինի մարմինը: Գիտությունն առայժմ դեռ անզոր յեղավ նորոգել, յերիտասարդացնել այդ մարմինը, յերբ հիվանդությունը քայքայում եր այն: Սակայն յեթե գիտությունն ոգնում ե մեզ թեկուզ ժամանակավորապես պահպանել այդ մարմինը, չնորհակալ լինենք նրանից նաև այս կարճատև ուրախության համար:

Կաչխատենք գիտության ամրացման և զարգացման վրա: Կհիշենք, վոր գիտությունը տեղ չունի այնտեղ, վորտեղ կրոնն ե տիրապետում: Կհիշենք, վոր հավիտենական կյանք մեզ վոչ վոք չի տա, յեթե մենք գիտության ուժով չկորզենք նրա դաղտնիքը, կպայքարենք, վորպեսզի այդ հավիտենական կյանքը մարդկության բաժին դարձնենք:

Կոմունարների առաջնորդի թարմ գերեզմանի առաջ մենք, անաստվածներս յերդվում ենք՝ պայքարել կրոնական հաշիշի դեմ, ինչպես պայքարում եր նրա դեմ Լենինը:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԼՈՒՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1924 թվի հունվարի 23-ին Վենետիկի «Ֆենիչե» թատրոնում չեխ աշխարհահռչակ ջութակահար Յան Կուբելիկը համերգ էր տալիս:

Մեծ արվեստագետի համբավը հսկա թատրոնը ծայրե ծայր լցրել էր Վենետիկի յերաժշտասեր հասարակությամբ: Շքեղ ոթյակները բռնել էին վենետիկյան հին ազնվականության՝ մարքիզների, կոմսերի շառավիղները, հին և նորահարուստ բուրժուաների անթիվ ներկայացուցիչները: Պարտերը լցված են մտավորականներով, արվեստի մարդկանցով, իսկ գալերեյը՝ ուսանողներով, բանվորներով...

Բոլորը, բոլորը, կարծես խոսք մեկ արած՝ խորին լռությամբ լսում էին արվեստագետին, հափշտակված նրա չքնաղ իրականացումներով... Ապա անվերջանալի ծափերը դղրդացնում էին հոյակապ դահլիճը: Մի պահ անց, յերբ Յան Կուբելիկը պիտի սկսեր հաջորդ նվագը, մի մարդ՝ ներս մտնելով բեմը, դանդաղ հառաջացավ, կանգնեց լուռ մի վայրկյան և ապա՝ բառերը հատ-հատ արտաբերելով ասաց.

«Հեռագիրը հայտնում է Մոսկվայից. Լենինը մեռել է»:

Միա՛ն այսքան.

Մի չչուկ, մի սարսուռ անցավ բոլոր ներկաների մեջ. ապա իջավ մի ծանր, հանդիսավոր լռություն... Գլուխները հակվեցին կրծքերի վրա — ամեն վոք խորհում էր, ամեն վոք խոսում էր իր սրտի հետ:

Այսքան ներշնչող է, խորագրու մեծագույն մարդու մահը: Այս բոլոր ժամանակ, վոր Կուբելիկը կանգնած էր լուռ, մտամփոփ և գլխահակ, վերցրեց աղեղը, դրեց կախարդական ջութակի լարերի վրա,— բոլորի ուշադրությունը դարձավ դեպի նա,— և քաշեց աղեղը. բոլորս, բոլորս զարմացած, չափազանց զարմացած լսեցինք վորոշակի — լարերը հնչեցին մեծ ցույժը՝ «Լենին է մորտո». (Լենինը մեռավ):

Տպավորությունն աննկարագրելի յեր. ամբողջ թատրոնը քարացել էր... Քիչ անց՝ գալերեյից և զանազան կետերից լսվեցին հառաչանքներ, արտասվախառն ձայներ:

Նվագի չարունակությունն անցավ շատ սառն, վոգեվորությունը չքացավ, ծափեր տեղի չունեցան:

Յերբ յես դուրս յեկա փողոց և անցնում եյի հոծ բազմությամբ լցված փողոցների միջով, այնպես գգացի, թե աշխարհը դատարկված է, այլևս մարդ չկա յերկրիս վրա...

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

ԿՈՃԱԿԸ

Լենինը յեկել է մեզ մոտ՝ գործարան։ Ինձ ձայն են տալիս.

— Նատորովա, վերարկուն կվերցնես։

Ակումբը տաք է։ Լենինն սկսեց խոսել։ Վերարկուն դցեց աթոռի վրա։ Յես վերցրի ու տարա հանդերձարանը։ Տեսնեմ՝ ձախ փեշի միջին կոճակը չկա։ Յես իմ ժակետից մի կոճակ պոկեցի՝ Լենինի վերարկուի վրա դրի ու հաստ թելով կարեցի, վոր յերկար դիմանա։ Լենինը գնաց, չնկատեց։ Իսկ կոճակը մի քիչ այնպես չեր։ Յեվ այդ բանն ինձ հաճելի յեր, ու վոչվոքի չեմ հայտնում իմ գաղտնիքը։

Դրանից հետո բավական ժամանակ անցավ։ Անցնում եմ Լիտեյնի փողոցով, տեսնեմ «Ֆենիքս» լուսանկարչատան լուսամուտում Լենինի մեծացրած պատկերը։ Հագինը նույն վերարկուն է։ Ուշադիր նայում եմ, տեսնեմ կոճակը նույնն է—իմ կոճակը։

Լենինն այդ ձմեռ էլ մեռավ։ Յես Լիտեյնի փողոցի լուսանկարչատնից ձեռք բերի նվիրական պատկերը։

Դա հիմա չրջանակի մեջ դրված է իմ հայելու մոտ։

Ամեն որ մոտենում եմ, նայում ու լաց լինում։ Իսկ իմ կոճակը կարված է վրան...

Գրի յե առնված 1927 թ. Արխանգելսկ քաղաքում՝ տնտեսուհի Նատորովայի բերանից։

ՀՅՈՒՐԸ*)

Վ. Պ. Մալաֆյեվա. Վատ ժամանակներ էին— պատերազմ, անբերություն ու վոչ մի ապրանք. չապիկն ինչ է—եղ էլ վոչ մի տեղ չէիր կարող առնել: Նավթն էլ կտրվեց — թեկուզ մարխ վառիր: Կուլակներն, է հարկե, իրենց յերգն էին յերգում, թե իբր Նեռի ժամանակներն են:

Բայց և այնպես ժողովուրդն եսպես եր մտածում. ե՛հ, թեկուզ լավ չենք տաքանում, հիմա սով է ու մութ, բայց Խորհրդային իշխանությունն իրենը կանի: Պատերազմը վերջանա— կապրենք: Յես արդեն չեմ հիշում, թե ինչից սկսվեց, միայն թե ամենքը իրար անցան. յեկեք մեզ համար լույս սարքենք: Սերգեյ Կուրկովն սկսեց վող հավաքել: Մարդ կար, վոր հավատում եր, թե կարող ենք մեր լույսն ունենալ, մարդ էլ կար՝ չեր հավատում: Կուլակները հո ծիծաղում էին: Բայց և այնպես մենք մերն արինք: Սարայում մի մեքենա դրինք, խրճիթի միջով մի թել անցկացրինք. հիմա կլուսավորի, ինչպես քաղաքում:

*) 1920 թ. նոյեմբերի 14-ին Վլադիմիր Իլյիչ Լենինը՝ Ն. Կ. Կրուպսկայայի հետ միասին յեկան Կաշինո գյուղը՝ ելեկտրական կայանի բացմանը ներկա լինելու: Իլյիչն այստեղ զրուցեց գյուղացիների հետ, ապա յելույթ ունեցավ մխինդում մի ճառով, վորի մեջ հաղորդեց—Կարմիր բանակի՝ Վրանգելի նկատմամբ ունեցած հաղթանակների մասին:

Այս պատումը՝ Իլյիչի գալու մասին գրի յե առնված Մոսկվայի մարզի Վոլոկոլամսկի շրջանի Կաշինո գյուղի կոլխոզնիկներ Ալեքսեյ Անդրեյևիչ Աշմարինի (60 տ.) յեվ Վասիլիսա Պավլովնա Մալաֆյեվայի (72 տ.) պատմածներից:

Ել չեմ հիշում, թե խոսքն ումնից դուրս յեկավ, միայն սկսեցին խոսել, թե՝ «Լենինը գալիս է մեզ մոտ»: Ձեզ մատաղ, միթե՞ Լենինն ինքը: Եղ հիմա յենք ուրիշ կերպ հասկանում, բայց այն ժամանակները, ինչպես կնանիքն էին կարծում նրա մասին, Լենինը մի տեսակ թաղավորի տեղն եր: Մարդիկ կային, վոր հավատում էին, թե նա կգա մեզ մոտ, մարդիկ էլ կային՝ ծիծաղում էին, միթամ, թե նա հենց դրան եր սպասում, վոր Կաշինո գա: Բայց և այնպես սպասում ենք: Մարիա Նիկիտիշնա Կաշինայի տունը վերցրինք, զարդարեցինք, ու թեպետ վատ ժամանակներ էին, բայց ժողովուրդը բերում եր—վորը հավ, վորը խնձոր, վորը յուղ... Յես դոնղդող պատրաստեցի: Ուրիշները տանու դարեջուր:

Ա. Ա. Աշմարին. Հիշում եմ մեկ էլ. դռան մոտ շորկախ ամրացրինք, իսկ դրա մոտ մի առողջ գյուղացի կանգնեցրինք, վոր առաջ չվեյցարություն եր արել, ու կարպադրեցինք, վոր Լենինի քուրքը, ղդակը վերցնի, ինչպես այդ քաղաքում են անում:

Վ. Պ. Մալաֆյեվա. Ամեն ինչ պատրաստեցինք, ամեն ինչ սարքեցինք, իսկ նա դեռ չկա ու չկա: Հանկարծ լսում ենք՝ մեքենա յե գալիս:

Ա. Ա. Աշմարին. Վոչ թե հանկարծ: Մենք փողոցում կանգնած եյինք: Լսեցինք — յերեխաները գյուղի ենծայրում աղմուկ բարձրացրին,— եղ Լենինն եր մեքենայի դուռը բաց արել, յերեխաներին կանչում եր իր մոտ: — Այստեղ վո՞ր տեղ է ձեր ելեկտրական կայանը:

Իսկ յերեխաները թե՝ — Նստեցրու — մենք քեզ ցույց կտանք:

Նա յերեխաներին առավ մեքենայի մեջ. մոտեցան...

Վ. Պ. Մալաֆյեվա. Նրա հետ միասին ներս է մտնում Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան: Իսկ մեր այդ չվեյցարը մոտենում է և ասում.

— Համեցեք, ընկեր Լենին:

Իսկ նա. — Չե, թույլ տվեք յես ինքս հանվեմ:

Չթողեց մուշտակը հանել, ինքը հանեց: Ե՛, ամենքը հուզված մոտենում են նրան: Նա այնպես սիրալիր աչքերը կուչ է անում, լավ նայում է ամեն մեկին ու ամեն մեկին էլ բարևում է ձեռք տալով: Նրանք նստեցին: Ամենից առաջ նրան մի գավաթ դարեջուր տվին, վորպես թանկագին ցանկալի հյուրի: Նա գավաթը վերցրեց, ու ասում է. — Խմելով է՞ պատրաստված: — Վոչ, Վլադիմիր Իլյիչ, խմել չենք դցել: Խմեց, բեղերը սրբեց: — Լավն է: Իմ դոնդղողը մատուցին նրան:— Շատ է,— ասում է,— մի կտոր հերիք է:

Եհ, բոլորը նայում են նրան, ու ամեն մեկն ուրախ է. «Աման, սա ի՞նչ լավ մարդավարի մարդ է: Պարզ ու վարվեցող ու զրույց անելու էլ սեր ունեցող:

Ա. Ա. Աշմարին. Զրույցների մասին յես կասեմ: Խոսեցինք եղտեղ հացի-ցորենի բաշխման մասին: Գեղացիք դանդատվեցին. մթամ հայտնի չի մի տնտեսությունից ինչքան հաց կպահանջեն: Հայտնի չլինելու պատճառով շատերը քիչ են վարում: Յեթե հայտնի լիներ՝ ավելի լավ կլիներ: Ապրանքներ չկան, շարաշահերը շատացել են, քիչ է մնում մարդու կաշին քերթեն,— ես բանի մասին էլ դանդատվեցին:

Կային ենպեսներն էլ, վոր ամեն ինչ ծածկումավաղում էին, թե մթամ ամեն ինչ լավ է գնում, ընկեր Լենին: Իսկ եդ բանը նրա համար զզվելի յերմեզ, ասում է, հարկավոր է ճշմարտությունն իմանալ, իսկ խաբեբայություն պետք չի: Կային մարդիկ էլ, վոր բաց ճակատ լավն էլ էին ասում, վատն էլ: Դրանց նա լսում եր ամբողջ ուշադրությամբ:

Ու մի սրտալի անկեղծ զրույց սկսվեց: Նա մեզ հարց ու փորձեց վարի մասին, կալսելու մասին, դեղական գործերի մասին: Տրակտորի, մեքենաների մասին հայտնեց, թե, իրրև, մեքենաների կանցնենք: Խոստացավ տրակտոր ու կալսիչ մեքենա ուղարկել:

Եդ ժամանակ սկսեց մթնել, իսկ դավառից մի յուսանկարիչ եր յեկել, թե՝

—Ընկեր Լենին, շուտով կմթնի, իսկ ինձ խնդիր է տրված՝ անպայման ժողովրդին նկարել ձեզ հետ միասին:

Բոլորը դուրս թափվեցին փողոց: Հավաքվեցին բազմաթիվ յերեխաներ: Ու բոլորը— թե՛ ծերերը, թե՛ յերիտասարդները, թե՛ յերեխաները— աշխատում են Լենինին ավելի մոտ նստել:

Նկարվեցին, գնացին միտինգ: Տղաները չրջապատել են նրան, աղմկում են, իսկ նա ծիծաղում է:

— Հը, ինչպե՞ս է: Հիմա կրոն սովորեցնո՞ւմ են ձեզ:

Տղաները բացականչում են.

—Հիմա կրոն չկա: Յեվ ասված էլ, քեռի, չկա: Եդ յերկարամազ տերտերներն են հնարել:

Լենինն ավելի յե ծիծաղում:

Միտինգում նա կարճ խոսեց. պատերազմը կվերջանա, մեր վերքերը կբուժենք ու առաջ կերթանք: Կսկսենք նոր ձևով մշակել հողը, նոր ձևով կառուցել կյանքը: Ամենագլխավորն այն է, վոր գյուղացիները հետ չմնան բանվորներից, նրանց հետ միասին քայլեն: Կապված լինեն նրանց հետ, իսկ դա— բանվորների ու գյուղացիների միությունը— մի այնպիսի ույժ է, վոր ամեն ինչի կհաղթի և ամեն ինչ կկառուցի՝ ինչպես պետք է:

Վ. Պ. Մալաֆյեվա. Ամեն բան առաջուց գիտեր: «Աչխատանքն,— ասում է,— կթեթեվանա»: Բա մի՞թե ճիշտ չի: Հենց վուշը վերցնենք: Զե՞ վոր փայտե բաներով եյինք թակում, իսկ հիմա— հրեն, ինչ մեքենաներ են առաջ յեկել կոլխոզներում:

Ա. Ա. Աշմարին. Շուտով նա մեզ տրակտոր ու կալսիչ ուղարկեց: Բայց վոչ թե եատեզե*), վոչ էլ չելյաբի, այլ Ֆորդզոն: Ուրիշներն այն ժամանակ չկային: Վարելը մենք եդ տրակտորով վարում եյինք, բայց մոտածում եյինք. «Մեր դաշտերի համար մեքենան անհարմար է:

*) Եատեզե—Ստալինգրադի գործարանի տրակտոր.

Մեզ մոտ նեղվածք է դրա համար. միջնակները խանգարում են»:

Իսկ Վլադիմիր Իլյիչը, իհարկե, գիտեր, որ միջնակների հարցը կծագի մեզ մոտ: Որպես թե, տրակտորը գյուղացու միտքը կբացի, և հին կյանքն ամբողջ կշրջվի: Ցերը նա խոստացավ մեզ տրակտոր ուղարկել, ասաց.

—Կուղարկեմ ու ինքս միանգամ էլ կգամ ձեզ մոտ:

Ու սպասում էինք նրան:

Բայց հետո ահա թե ինչ պատահեց.— յերեկոյան դեմ լուր առանք. «Մեռավ Վլադիմիր Իլյիչը»: Մութն եր արդեն: Սկսեցին մեկը մյուսի հետևից մարդիկ հավաքվել հասարակական խրճիթում: Ներս են մտնում, գլխարկ վերցնում ու գլուխ տալիս.

—Միթե՞ ճիշտ է, տղերք:

Վ. Պ. Մալաֆյեվա.— Կանայք հավաքվել են իրար գլխի: Ենպեսները կան՝ չեն հավատում. «Կարելի յե, ճիշտ չի,— չե՞ որ նա դեռ պինդ եր»:

Էլ ինչը ճիշտ չի, յերբ Կուրկովն յեկավ լրագիրը ձեռքին.—

— Մեռել է: խնդրում եմ՝ վոտքի կանգնել:

Ուզում է յերգել, բայց կոկորդը բռնվել է, և կանայք՝ բոլորը լաց յեղան...

Ա. Ա. Աշմարին.— Սկսեցինք մենք եղտեղ խորհուրդ անել. «Պետք է մարդիկ ուղարկել Մոսկվա»: Վորոշեցինք ուղարկել Սերգեյ Կուրկովին և Դմիտրի Ռոդիոնովին:

Դրանք գնացին: Իսկ կուլակների դամբաչները եստեղ էլ մեջ ընկան իրենց պրովոկացիաներով. «Ախ ու վախ, հիմա հանկարծ Խորհրդային իշխանությունը չուռ չգա»: Բայց ժողովուրդն եստեղ իսկույն հայտարեց դրանց. «Սուտ եք ասում, սողուններ, ցեցեր: Չի կարող եղպես բան լինել, վոր Խորհրդային իշխանությունը չուռ դա: Լենինը մեռավ — հավատարիմ մի մարդ կփոխարինի նրան»: Մենք են ժամանակ ինչպես հարկն է չգիտեյինք ընկեր Ստալինին: Զգում է-յինք այն, վոր այդպիսի մարդ կա անպայման:

Վ. Պ. Մալաֆյեվա.— Դե, եղպես էլ յեղավ, առանց ընդհատվելու, թեև ական առաջը շատ քար գցեցին, բայց և այնպես բանը չընդհատվեց, և գնաց առաջ ու առաջ: Դուրս յեկանք կոլխոզի ճամբան:

Հիմա մենք հարյուրից ավելի տրակտոր ունենք, և կալսիչներ, և թակիչներ, և ճմլող դորձիքներ...

Ցեղական կովեր ենք ձեռք բերել... Են ժամանակ նրան ցույց տալու բան չունեյինք, բացի ելեկտրական լույսից: Իսկ հիմա— վորն ասեմ: Ժողովրդի միջից ուղաչուներ էլ դուրս յեկան, ինժեներներ էլ, բժիշկներ էլ: Ցես հինգ թոռ ունեմ— ու բոլորն էլ սովորում են:

Ա. Ա. Աշմարին.— Ցես իմ մասին կասեմ, չնայած վաթսուն տարեկան եմ: Պարտավորվել եմ տասնումեկ ցենտներ վուշ ստանալ, մի տոնն սերմացու: Հին ժամանակ վրաս կծիծաղեյին. խենթացել է մարդը: Բայց յես հողն ուղարկեցի անալիզի և ռեցեպտ ստացա. պահանջվում է հողը պարարտացնել սուպերֆոսֆատով, ֆոսֆորային ալյուրով, կալյումական աղով, մոխրով և սելիտրայով:

Ցես ամեն ինչ ձեռք բերի: Ցանեցի վոչ թե մի շարքով, այլ խաչաձև: Քաղհան կազմակերպեցի: Ցեվ ավելին տվի, քան խոստացել եյի: Հին ժամանակ կախարդ կասեյին, բայց հիմա վոչ մեկը չի էլ զարմանում:

Լենինն ու Ստալինը մեր կյանքն ենպես կարգի գցեցին, վոր կոլխոզային մարդն ամեն ինչ ձեռք է բերում:

ՎԱՌԱՐԱՆ ՇԻՆՈՂԸ

Մեզ մոտ մի մարդ կար՝ ազգանունը Բենդերին։ Գյուղի գործում ամեն ինչ ձեռքից գալիս եր. վառարանները եր չինում, նստարան, սահնակ։

Մի անգամ նա գնում է անտառ ու սկսում է ահա մի թխկի ծառ սղոցել։ Սղոցում է դա այդ թխկին՝ ու հանկարծ լսում է.

— Բարի որ։

Բենդերինն, ի հարկե, յեռ է նայում։ Տեսնում է՝ ինչ-վոր տղամարդ է կանգնած։

Բենդերինը թե՝

— Ներողություն,— ասում է,— ձերդ բարձր բարեծնություն։

Իսկ այդ մարդը պատասխանում է.

— Յես,— ասում է,— ձերդ բարձր բարեծնություն չեմ։ Յես,— ասում է,— ընկեր Լենինն եմ։

Բենդերինը նորից նրան.

— Ներողություն,— ասում է,— ընկեր Լենին։

Իսկ Լենինը նրան.

— Դե, սղոցի, կարի։

Ու ինքը քաշվում, կանգնում է մի կողմ։ Նայում է, թե այնուհետև ի՞նչ է անելու։ Մի այդպիսի մեծ ծառ ի՞նչպես է առանց ձիու գյուղ քարշ տալու։

Բենդերինը սղոցով չափում է, ինչ չափ իրեն պետք է, կտրում է ու սարից գլոր-գլոր տանում ցած։ Հետո վերադառնում է նորից ու ելի կտրում ծառը։

Լենինն ասում է նրան.

— Բեզ, գուցե, ոգնե՞նք։

— Հարկավոր չի, ի՞նչ եք ասում։ Յես ինքս հախից կդամ։

Հիմա ժամանակն ուրիշ է։ Հենց հնձի ժամանակը։ Նույն այդ Բենդերինը գնում է անտառ, նորից չի-նանյութի։

Կտրում է մի թխկի կամ մի կեչի, անցնում է գետակը և նստում հանգստանալու։ Բանը յերեկոյան դեմ է լինում։

Նստած նայում է, ու տեսնում է ահա յերեք հոգի յեն գալիս հնձածով։

Իսկ նա, այդ Բենդերինը, այնպես մի հանդուգն զեղացի յե։ Գոռում է նրանց վրա։

— Ի՞նչ եք եղտեղ թրեվ գալիս։ Գիտեք չե՞, հիմա խոտը ինչ գին ունի։

Ու հայհոյում է զրանց... Մոտենում են, և մեկը նրանցից ասում է.

— Ախ, ծերուկ, ի՛նչ ժիր հայհոյում ես։

Այստեղ Բենդերինը ճանաչում է նրան։

— Ներողություն,— ասում,— ընկեր Լենին։

Զմեռը գալիս է։ Սարսափելի նեղություն են քաշում վառարան չինողների ձեռից։

Նստել է Լենինն իր տանը և հարցնում է.

— Այստեղ գյուղում մի վորևե վառարան չինող չկա, վոր ազատվենք այս ծխից։

Իսկ այնտեղ Բենդերինին գիտեյին վորպես վառարան չինող։

— Վառարան չինո՞ղ,— ասում են,— մեկը կա այստեղ։

Ցեվ գնում են նրան կանչելու։

Հետաքրքիր է...

Ցերկու զինվորական սահնակով գնում են նրա մոտ, մտնում են տուն ու հարցնում.

— Վառարան չինողը դո՞ւ ես։

Բենդերինը պառկած եր փեչի վրա։ Գլուխը կբռացրեց այնտեղից ու պատասխանեց.

— Յես եմ։

— Պատրաստվիր, գնանք սովխոզ։

Ըհը...

Բենդերինը հուզված, ջղային վիճակումն է։ Ցեվ նա ասում է կնոջը.

— Ե՛, Կատյուխա, մնաս բարով: Մենք էլ իրար չենք տեսնի: Լենինը, յերևի, իմ հին կոպտությունները հիշել է:

Ու այդ զինվորականների հետ նստում ու գնում է սովխոզ:

Հասնում է տեղ: Լենինը դուրս է գալիս բակը և ասում է նրան.

— Իսկ յես, ծերուկ, քեզ հիշեցի: Այդ դո՞ւ եյիր, — ասում է,— անտառում Թիկի կտրում, իսկ հետո մյուս անգամ խոտատեղում վախեցրիր ինձ:

Բենդերինը վախից հիվանդանում է մինչև անգամ:

— Ներողություն, ասում է:

Իսկ Լենինը նրան.

— Ե, այդ դատարկ բան է: Խոտատեղում դու ինձ տեղին հայհոյեցիր, յես լավ չեյի արել, վոր հնձած խոտերի վրայով եյի գնում: Իսկ հիմա արի խոսենք, թե քեզ ինչու համար եմ կանչել: Յես մի մեծ խնդիրք ունեմ քեզ: Տեսնո՞ւմ ես՝ ինչպես եմ ապրում: Ամբողջ պատերը ծխից սևացել են: Դու կարո՞ղ ես ծխնելույզ կարգի քցել:

— Կարող եմ,— ասում է:

Այդտեղ Բենդերինը կավ է պահանջում, աղյուս և պահանջում և սկսում է աշխատել:

Աշխատանքը վերջացնում է, Իլյիչը շնորհակալություն է հայտնում նրան, վճարում է ինչ պետք է և նստեցնում է հետը թեյ խմելու:

Յեվ ահա Բենդերինը սահնակով գալիս է տուն և Ծանր ու մեծ ասում է կնոջը.

— Կատյուխա, յես ընկեր Իլյիչի վառարանը սարքեցի և հետն էլ թեյ խմեցի:

Գրի յե առնված 1937 թ. փետրվարին Մոսկվայի մարզի Պոդոլսկի շրջանի Գորկի գյուղում՝ Ալեքսեյ Միխայլովիչ Շուրիգինի պատմածից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Յես այն ժամանակ տասնմեկ-տասներկու տարեկան եյի: Մայրս ինձ ուղարկեց Յամ*)՝ խանութը: Յամը— չորս վերստ հեռու յե մեկնից: Գնում եմ: Մեկ էլ հետևիցս մի մարդ է հասնում: Հագինը կաշվե տուժուրկա յե, գլխինը կեպի:

Հարցնում է.

— Դու, աղջիկս, ո՞ւր ես գնում:

—Յամ, Գորբաչից ալյուր առնելու:

— Իսկ ինչո՞ւ ես գնում Գորբաչի մոտ: Գնա կոոպերատիվ, այնտեղ ավելի եժան է:

— Իսկ վորտե՞ղ է կոոպերատիվը: Յես չգիտեմ:

Նա ցույց տվեց ինձ կոոպերատիվը, իսկ ինքը գնաց դեպի Գորկի:

Հիմա, մի շաբաթ անց, ուսուցչուհի Կլավդիա Նիկոլայեվնան ասում է ինձ.

— Գնանք, Նատաշա, Գորկի:

— Ինչո՞ւ համար:

— Յես այնտեղ մի ծանոթուհի ունեմ: Հիվանդանոցում աշխատում է:

Ե, վեր կացա, գնացի հետը:

Տեսնեմ— այդ մարդը գալիս է:

Նա ինձ իսկույն ճանաչեց, մոտեցավ ու հարցնում է.

— Հը՛, աղջիկս, ալյուրը վո՞րտեղից առար:

Յես ասում եմ.

— Կոոպերատիվից:

Նա ծիծաղեց ու գնաց:

Յերբ նա գնաց, Կլավդիա Նիկոլայեվնան ասաց ինձ.

— Նատաշա, դա Լենինն է:

Գրի յե առնված 1937 թ. Մոսկվայի մարզի Պոդոլսկի շրջանի Փ. Բրյանցի գյուղում՝ գյուղխորհրդի քարտուղար Ծ. Սուսլովայի (25 տ.) պատմածից:

*) Յամը գյուղ է Գորկիի մոտ, ուր ապրում եր Իլյիչը:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ*)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Այն ժամանակ յես միլիցիայի Ֆիննական ջոկատի պետի տեղակալն եյի, և մենք պետք է հսկեյինք Լենինին Ֆինլանդական կայարանի մոտ: Առաջադրանքն ստացել եյինք Վիբորգի ռայկոմից:

Բայց առաջադրանքը մենք չկարողացանք կատարել: Ժողովուրդը մեզ հետ հրեց, զինվորներն ու նաֆաստիները, վորոնք յեկել եյին զրահապատներով, հրապարակը լցրին բերնե-բերան: Հրացաններն ել մեզ չոգնեցին: Մենք հարյուր հիսուն հոգի եյինք, հագնված ճիշտ այն ժամանակվա զինվորական ձևով: Յեվ մեր պատվո պահակը ավազի նման ցրվեց:

Յես յերբեք չեյի հանդիպել մարդկային ուժի այդպիսի զորության:

... Ցերեկվա ժամը չորսին մենք իմացանք, վոր գալիս է Լենինը և չնայած այն բանին, վոր ուշ եյինք իմացել, բանվորներն այնպիսի հսկայական ցույցեր կազմակերպեցին, վոր բոլորովին հնարավոր չեր փողոցներով անցնել:

Կազմակերպված շարժվում եյինք դեպի Ֆինլանդական կայարանը և յերգում: Զվարթ գնում եյին կանայք ու յերեխաները և յերգում:

Գնում եյին Բալտիկական նավատորմի նավաստիներն իրենց սև համազգեստով ու յերգում: Գնում եյին բանակայինները և յերգում:

---

*) Լենինգրադի տարբեր գործարանների 12 բանվորների կոլեկտիվ պատմածը:

... Ձեռքիս բռնել եյի կարմիր շորի մի կտոր, վորի վրա գրված եր. «Կեցցե՛ ազատությունը»: Այդ կարմիր կտորը հինգ թվականից մի դարբին պահել եր գնդանի տակ: Նա այնքան հնամաշ եր, վոր ստիպված եյինք մի կարմիր տախտակ սարքել և կտորը զգուշությամբ կախել տախտակի վրա: Բոլորին թույլ չեյին տալիս կառամատույց: Մենք խոնվեցինք կայարանի մոտ: Ամենուրեք խոսակցում եյին: Յեվ հանկարծ հնչեց յերաժշտությունը:

... Մենք նրան սպասում եյինք գիշերվա ժամը տասներկուսին, բայց գնացքն ուշացավ և ժամանեց յերկուսի մոտ: Սակայն վոչ մի մարդ չգնաց, վոչ մի զինվոր տեղից չշարժվեց: Յեվ բանվոր դասակարգը չարտնջաց, վոր ժամանակն ուշ է:

... Մենք շատ յերկար սպասեցինք.— ահա՛-ա-հա՛, հիմա գնացքը կգա: Մի քանիսի մեջ տագնապ ու յերկյուղ նկատվեց:

— Բան չի՞ պատահել:

Ցերկյուղ կար, թե չլինի՞ վորևե դժբախտություն և պատահել, արդյոք Ժամանակավոր կառավարությունը չի՞ պայթեցրել յերկաթգիծը:

— Ո՞ւր է գնացքը:

— Գնացքը կանգ է առել այս-ինչ կայարանում,— պատասխանում են կայարանի աշխատողները — բանվորական պատգամավորությունները հանդիպել են և պահել գնացքը Ֆինլանդիայում:

Բոլոր փողոցներում ու նրբափողոցներում անմիջապես միմյանց հայտնում են, իսկ ճառախոսները գոչում՝

— Գնացքն ուշացել է, շուտով կժամանի:

Յեվ սկսեցին հանգստանալ:

... Ցերը մթնեց, գործարանների հրդեհաշեջ մասերից վերցրին ջահեր ու վառեցին: Իսկ լուսարձակները չորս կողմից հրապարակի վրա սփռում եյին իրենց լույսերը...

... Մի ամբողջ զրահապատ դիվիզիա ժամանեց Իլյիչին հանդիպելու համար— հակառակ Կերենսկու հրամանի: Յեվ կանգ առան կայարանի մոտի հրապարակում ու նրբափողոցներում: Յուրաքանչյուր զրահապատ ավտոմեքենայի վրա ամրացված եր մի փոքրիկ կարմիր դրոշակ...

... Մարտական վիճակում մարդիկ փակված նրստել եյին ներսում և նայում եյին դիտողական բացվածքներից: Դա հատկապես նրա համար եր արված, վոր յեթե Իլյիչի ժամանմանը խանգարող դեպք լիներ, ապա այդ զրահապատները պետք ե դրոհ տային:

... Մութն եր, թիթեղե ու պղնձե նավթային հապարավոր ջահերը ցաք ու ցրիվ յերևում եյին մասոայի ձեռքին: Իսկ ցածում մութն եր,— հրապարակում ելեկտրական լույս չկար:

... Յեվ հանկարծ լսվեց չոգեքարշի սուլոց, ու բանվոր դասակարգը գոչեց.

— Յեկա՛վ...

Այն ժամանակ ուրախությունը յեռում եր մարդու մեջ:

... Լենինը հագնված եր ճիշտ այնպես, ինչպես այժմ արձանն ե.— չկոճկված սև վերարկուով, գլխաբաց, իսկ կեպին դրպանը դրած:

... Յես հենց կողքին եյի կանգնած: Նրան ասացին.

— Վլադիմիր Իլյի՛չ, ձեզ սպասում և բանվորների և զինվորների պատվո պահակը: Մի քանի խոսք ասացեք:

Ներվա նման պարզ հիշում եմ, նրա առաջին խոսքերն յեղան.

— Ընկեր բանվորնե՛ր, շնորհավորում եմ ձեզ պայքարն սկսելու առթիվ: Յեվ կեցցե՛,— գոչեց նա,— կեցցե՛ սոցիալիստական հեղափոխությունը:

Այստեղ կանգնած եր ժամանակավոր կառավարության պատվո պահակը, պատրաստված եյին վողջույնի ճառ ասողները:

... Յեվ բոլորն առաջ շարժվեցին նրան հանդիպելու:

Բայց կանգ առան: Չե՞ վոր բոլորը չեյին կարող առաջ շարժվել, Լենինին անցնելու տեղ չեր լինի:

Նա վագոնից դուրս յեկավ: «Ուռռա՛» բացականչությունները և յերաժշտությունը դեռ շարունակվում եյին: Գլխարկներ եյին վեր նետում:

Այդ ժամանակ Լենինն ել վերցրեց գլխարկը (այստեղից ել գլխարկը հետո դրեց գրպանը) և ուրախ ժպտում եր...

... Վագոնից դուրս գալիս նրա առաջին քայլը վճռական եր... Նա իր հայացքով լուսավորեց բոլոր ներկաներին և գնահատեց իր առջև կանգնած ուժերը, արհամարհանքով անցավ կապիտալիստական կարգերը պահպանող տաս մինիստրների՝ այդտեղ խմբված վհատակի մոտով և վոչինչ չպատասխանեց այն հռետորին, վորը փորձեց խոսել ժամանակավոր կառավարության կողմից: Յեվ բոլոր այդ ժամանակավորները վոչինչ դարձան Լենինի միայն մի հայացքով: Իսկ Լենինն առաջ նետվեց հրապարակ, դեպի ժողովուրդը:

... Յերբ Լենինը դուրս յեկավ վագոնից և վոտք դրեց առաջին կառամատույցը, նրան շրջապատեցին բանվորները, և նրա առաջին ճառը յեղավ յերրորդ կարգի դահլիճում, ուր նրան բերել եյին բանվորները կառամատույցից ձեռքների վրա և կանգնեցրել մի մեծ կլոր սեղանի վրա:

... Սպասում եյինք, վոր դուրս կգա հոյակապ մի կերպարանք, վիթխարի մի մարդ:

Յեվ հանկարծ կողքից դուրս յեկավ մի շատ համեստ կերպարանք: Այդ ժամանակ բոլորը կորցրին իրենց, շփոթվեցին և չգիտենալով ինչ անել, բռնեցին նրան և բարձրացրին բոլորից բարձր, այսինքն՝ դրին զրահապատի վրա, վորը կանգնած եր այստեղ:

Իսկ նա... նախ, մի րոպե, մի քիչ շփոթվեց: Բայց հետո, յերբ սկսեց խոսել, ուղղվեցին կնճիռները և այդ ժամանակ նա, Ֆինլանդական կայարանում, գոչեց աշխարհի վերակառուցման թեզիսը:

... Յերբ նա յերևաց, բոլորը գոչեցին: Նրան տարան ձեռքների վրա: Յեվ այն ժամանակ, յերբ նրան տանում եյին, նա ցանկացավ կայարանում կանգնել: Բայց Կոմիսարը Վլադիմիր Իլյիչին առաջարկեց կանգնել զրահապատի վրա: Ու վայրկենապես նավաստիներն ու բանվորները նրան թոցրին ու բարձրացրին զրահապատի վրա:

Վլադիմիր Իլյիչը բարձրացավ զրահապատի վրա և բարձր կանգնեց:

Նա ձեռքը վեր բարձրացնելով՝ մի պահ տեղում անշարժ մնաց: Նրա այդ դիրքն ընդմիշտ մնաց բանվորների սրտերում:

Այնուհետև անմիջապես վորոտաձայն սկսեց.

— Ընկեր բանվորնե՛ր, նավաստինե՛ր և զինվորնե՛ր: Բուրժուազիան այժմ պատերազմ է մղում մի բուռը բանկիրների և գեներալների շահերի համար:

... Նա դուրս յեկավ վոչ թե գլխավոր դարպասից, այլ այն դարպասից, վորը մի քիչ հեռու յե: Հենց վոր դուրս յեկավ, նրան զրահապատի վրա բարձրացրին բանվորները: Այստեղ կար նաև վոչ մեծ մի նվագախումբ:

Յեվ Լենինն սկսեց խոսել: Նա խոսում եր կանգնած:

Նա կանգնած եր վերարկուն հագին, կոճակներն արձակած: Հիշում եմ նրա բաց գլուխը, գլխարկը

գրպանում դրած: Յես կանգնած եյի մեքենայի մոտիկ:

Տասնհինգ–քսան րոպե խոսում եր կանգնած:

... Իսկ ինչո՞ւ նա կանգնեց զրահապատի վրա:

Այդ զրահապատը նավաստիները քշել–բերել եյին Լենինի պահպանության համար, իսկ հետո արդեն զրահապատն ոգտագործվեց վորպես քաշող ուժ և Լենինին տեղափոխեց Կշեսինսկայայի պալատը: Ընդհանրապես չեր յենթադրվում, վոր նա զրահապատով կգնա: Թե չե կարող եր նա վոտքով ել գնալ բանվորների հետ:

... Այդ ժամանակ զրահապատը թշչաց, մոտորը հանդաց: Յեվ անմիջապես բանվորներն ու նավաստիները մի քանի շարք շղթա կապած շրջապատեցին զրահապատը և ժողովրդի մեջ ճանապարհ բացվեց: Մեքենան շարժվեց, իսկ ճանապարհը հետևից ու առջևից լուսավորում եյին լուսարձակները: Իսկ Նեվայից ցոլարձակները (ռեֆլեկտոր) լույս եյին գցում ուղիղ զրահապատի վրա:

Յերկար ժամանակ զրահապատը գնում եր մինչև Կշեսինսկայայի տունը՝ Կամենոստրովսկի պողոտայի վրա: Յեվ մարդկային շղթայի հետ միասին, մեքենայի մոտ, մի քիչ առջևից, գնում եյի նաև յես, ամբողջ ժամանակ աչքս չհեռացնելով զրահապատից, վորի վրա կանգնած եր Իլյիչը:

ԼԵՆԻՆԸ ԽՈՍՈՒՄ Է ԶԻՆՎՈՐ— ՃԱԿԱՏԱՅԻՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կրասնի Վիբորժեց» գործարանի բանվոր Իվան Պետրովիչ Սմիրնովը պատմում է.

1917 թ. վերջում յես Լենինի մոտ յեղա Սմոլնիում, № 56 սենյակում: Ինձ չուտով ներս թողին. յես

գինվորական էր (գնդի հրամանատարի ոգնական, գնդային դեպուտատ)։ Ինձ անցաթուղթ տվին և գնացի Լենինի մոտ։

Միջանցքով անցնելիս, տեսա № 56 սենյակի դուռը։ Դռան մոտ կանգնած էին երկու ժամապահ—հրացանով նավաստիներ։ Ցեռ ներկայացրի անցաթուղթը և մտա մի փոչ մեծ, նեղ սենյակ։ Սեղանի վերևում կախված եր մի ջահ, իսկ սեղանի վրա կային շատ գրքեր ու թղթեր։

Ընկեր Լենինը կանգնած եր սեղանի մոտ և ինչ-վոր բան եր նշում մի հաստ գրքում։ Մինչև այդ, տեսնելիս չգիտեի, և փոչ մի անգամ չեի տեսել, իսկ նրա նկարները դեռ չկային։ Նա հագել եր հասարակ կոստյում ու վերնաշապիկ ոճիքով և փողկապով։

Ցեռ հարցրի.

— Կարելի՞ յե։

Նա շուռ յեկավ և ասաց.

— Կարելի յե, կարելի յե, խնդրեմ։

Վլադիմիր Իլյիչը սկսեց ինձ հարց ու փորձ անել, թե յես վո՞րտեղ եմ ծառայում, վո՞ր գնդում, ո՞վ է գնդի հրամանատարը,— հի՞ն հրամանատարությունն է, թե՞ նոր, ինչպե՞ս է աշխատում գինվորական կոմիտեն, ի՞նչ է նշանակում թևիս կապած կտորը (վորը յես կրում եի վորպես գնդային դեպուտատ)։

Ցեռ սկսեցի պատմել, թե ինչպես մենք փոխեցինք հին հրամանատարությունը, ընտրեցինք գնդային կոմիտեն և գնդի հրամանատար նշանակեցինք իմ ֆելդֆեբել ընկերոջը, իսկ ցարական հրամանատարին՝ գնդապետ Գալակտիոնովին յերկաթուղային կամուրջից նետեցինք ջուրը։

Վլադիմիր Իլյիչն ինձ լսում եր ուշադիր, մի կողմ դնելով գիրքը։ Ցերը յես նրան պատմում եի այն մասին, թե ինչպես հրամանատարին կամուրջից գետը նետեցինք, նա նայեց ինձ և ծիծաղեց, կարծես ուզեց ինչ-վոր բան ասել, բայց լռեց և աչքերը կկոցելով, նայեց ինձ։

— Դե, իսկ այժմ ի՞նչպես եք տանում աշխատանքը,— հարցրեց նա կռանալով իմ կողմը և ձեռքով ծունկս թփթփացնելով։

Ցեռ ամեն ինչ նրան հերթով պատմեցի, թե բանակում և գյուղում մենք ինչպես եյինք ագիտացիա տանում հոգուտ բոլշևիկների։ Նա շատ գոհ մնաց։

— Կեցցե՛ք, լավ եք անում, այդպես էլ պետք է։

Ցեվ այդպես, պատմելով մեր գնդի կյանքից ու կենցաղից, յես Վլադիմիր Իլյիչի մոտ նստեցի մեկ և կես ժամ։ Մենք չա՞տ բանի մասին զրուցեցինք նրա հետ, բայց հիմա ո՞վ կհիշի։ Ցերկա՞ր ժամանակ է անցել այն որվանից։

Ցես նրա հետ այնպես եի զգում ինձ, ինչպես իմ հին բարեկամի հետ։

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՖԵՈԴՈՍԻԱ ՆԻԿԻՏԻՇՆԱՆ ՑԵՂԱՎ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Հայրս տանիքներ սարքող եր, աշխատում եր Սմոլնիում, բայց հենց հեղափոխությունից առաջ մեռավ։ Այնպես վոր ռոճիկն էլ կիսով չափ մնաց չստացված։ Ցեկավ ժամանակավոր կառավարությունը, մայրս գնաց փողի համար. բայց վերադարձավ ամոթով։ Նրան միայն հարցրել եյին.

— Իսկ դու տեսե՞լ ես, պառա՛վ, թե դորտերն ինչպես են թռչում։

Զմեռը մեզ նեղեց, մայրս ասաց.

— Բոլորը Լենինին գովում են հիմա. մի չգնա՞մ եդ Սմոլնին։

Մի առավոտ էլ վեր ենք կենում՝ պառավը չկա։ Կարծում ենք՝ գնացել է ժամ, բայց Սմոլնի յեր գնացել... Ցեվ ի՞նչ եք կարծում։ Անցնում է բոլոր կաբինետները և մտնում է Վլադիմիր Իլյիչի մոտ... Տեսնում է՝ գրում է ու հետն էլ սառը թեյ է խմում կանֆետով...

Մայրս բոլորովին չի կարծում, դե դա նա յե— Լենինը—այն ժամանակ նրա պատկերները քիչ էին,— և հարցնում է.

— Դուք, պարոն, խնդիրնե՞ր եք ընդունում, թե՞ քննում եք:

Լենինը ժպտում է.

— Նայած, ինչպես պատահում է, տիկին: Ի՞նչ եք ուզում:

— Մարդիկ ինձ Լենինի մոտ են ուղարկել, Վլադիմիր Իլյիչի: Ասում են, քու գործը, Ֆեոդոսիա Նիկիտիչնա, բոլոր գլխավորների մեջ միայն Լենինը կարող է լուծել... Իսկ յես նայում եմ ձեզ, թե վոնց արագ եք գրում, ու մտածում եմ. «Այ, լավ գրագետ պարոն է: Ցերևի, հասարակ մեծավորներից չի...»: Լենինին վո՞ւրտեղ գտնեմ, իմ գրության մեջ չե՞ք մտնի:

Մայրս շատ հանգիստ նստում է ու կարճ պատմում.

Լենինի աչքերը ուրախ փայլ են ստանում, ծիծաղում է:

— Ճիշտ է, Ֆեոդոսիա Նիկիտիչնա... Առանց Լենինի յոլա կերթանք: Կանչում է աշխատակցին, տետրից մի թուղթ է տալիս.

— Ընկեր, շտապ կարգավորեցեք Ֆեոդոսիա Նիկիտիչնայի գործը:

Մայրս տուն է գալիս ու փողը դնում է սեղանին:

— Բոլոր մեծավորները Սմոլնիում լավն են: Առանց Լենինի ել գործը գլուխ բերին:

Իսկ մի ամիս անց շուկայից բերում է մի լուսանկար:

— Ա՛յ, առել եմ են մեծավորին, վորի կարինետում նստել եյի...

Մենք նայեցինք ու զարմացած գոչեցինք.

— Մայրի՛կ, ախր դա Լենինն ինքն է յեղել:

Գրի յե առնված 1928 թ. Հյուսիսային Ցերկաթուղու վագոնում:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՐ ԼԵՆԻՆԸ ԹԱԳՆՎՈՒՄ ՌԱԶԼԻՎՈՒՄ, ՆԱԽ՝ ՁԵՂՆԱՀԱՐԿՈՒՄ, ԱՊԱ՝ ՇԱԼԱՇՈՒՄ

Պատմել է բանվոր Ն. Յեմելյանովի վորդի Ալեքսանդր Նիկոլայևիչ Յեմելյանովը, վորի մոտ թագնվել եր Վ. Ի. Լենինը:

1917 թ. հուլիսին, Ստալինի պնդումով, Իլյիչը բարեհաջող կերպով հեռացավ Պետրոգրադից և փոխադրվեց մեզ մոտ՝ Ռազլիվ, իմ հոր՝ Յեմելյանովի տունը:

Հորս, Սեստրորեցկի գործարանի բանվոր բոլշևիկ Նիկոլայ Յեմելյանովին և նրա ամբողջ ընտանիքին, մեծ բախտ վիճակվեց՝ մտերմանալ Իլյիչի հետ: Յեմելյանովի ամենամեծ տղան յես եյի, տասնյոթ թվին՝ տասնյոթ տարեկան, իսկ յերեք յեղբայրներս՝ մեկը տասնվեց, մյուսը՝ տասնչորս, յերրորդը՝ տասներկու տարեկան: Մենք Լենինի մշտական խոսակիցներն եյինք ձեղնահարկում, խոտհարքում և շալաշում (հյուղակում):

Հայրս՝ հին փականագործ (նա աշխատել եր դինագործարանում 25 տարի, մինչև մազերը սպիտակեցին), հին կուսակցական, Սեստրորեցկի փետրվարյան մարտական դրուժինաների կազմակերպիչը—Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի հանձնարարությամբ, նախապես պատրաստված պլանով խնամքով թաղցրել եր Լենինին:

Լենինն աշխատում եր մեր խոտանոցում և այստեղից ղեկավարում եր կուսակցությանը: Այն ժամանակ մեզ մոտ ընկերներ եյին գալիս նաև Կենտրոնական Կոմիտեյից:

Ցերբ Լենինը յեկավ մեզ մոտ, ուշ գիշեր եր և մենք՝ Յեմելյանովի չորս տղաներս, արդեն քնած ե-

լինք: Լենինին մենք տեսանք խոտանոցում միայն առավոտյան, մեզ հետ միասին պառկած: Մենք տեսանք Լենինին արդեն խուզված և սափրված: Հետո իմացանք, որ մեր մայրն եր դերս մեքենայով խուզել նրան ուշ գիշերին և մորս ձեռքով եր, որ կատարվեց ամենքին ծանոթ Լենինի դեմքի կերպարանափոխումը և ստացվեց ընդհատակյա այն պատկերը, որը նկարված եր սեստրորեցկյան անցագրի վրա:

Լինում են մարդիկ, որոնք անմիջապես գրավում են ձեզ, անմիջապես զգում ես, թե ի՛նչ մարդ է, և պարտավոր ես նրան լիովին վստահել:

Հենց այդպիսի մարդ եր Լենինը: Մեզ զարմացրեց նրա համեստությունն ու պարզությունը:

Հայրս մեզ նախազգուշացրել եր, որ Լենինը գալու յե. նա մեզ ասաց.

— Վերջ. վոչ վորի չասեք:

Մենք արդեն մանկությունից վարժված եյինք գաղտնապահության, այնպես որ յերբ Լենինը մեզ մոտ յեկավ, մենք զգույշ եյինք պահում մեզ և մեր լռությամբ պահպանում եյինք Լենինին:

Մենք պառկում եյինք քնելու հենց որ մթնում եր, բոլորս միասին, Իլյիչի կողքին, մենք՝ Յեմելյանովի չորս տղաները: Պատահում եր, որ մութի մեջ չոշափում եյինք տեղը, որ չդիպչենք նրան: Լենինի համար մենք վերմակը դցում եյինք խոտերի վրա, որը խոտը նրան չծակի, հետո սավանը և ելի վերմակ: Շատ թեթև եր քնում Իլյիչը. մի փոքրիկ աղմուկ և նա արդեն արթուն եր: Բայց մնում եր հանգիստ և բոլորովին չեր ջղայնանում:

Լենինը յերկար չմնաց մեր խոտանոցում:

Վորքան ել սքանչելի լինեյին ձեղնահարկի հարմարությունները, այնուամենայնիվ դրությունն այնքան ել ապահով չեր: Ամեն րոպե կարող եյին նրան նկատել, այդ պատճառով ել մենք ստիպված եյինք մտածել և գտնել ավելի ապահով տեղ:

— Խոտհարքի ժամանակ է,— ասաց հայրս,—լավ

կլինի, յեթե Իլյիչը տեղափոխվի դաշտը, ինչպես հնձվոր, մանավանդ վոր կերպարանափոխվելուց հետո, նա բանվորի շատ նման է:

Միտքը խիստ լավ եր, Իլյիչը հավանեց, մանավանդ վոր կտուրի տակ խոտանոցում ապրելը յերևի նրան այնքան ել դուր չեր գալիս:

Լենինին թաղցնելու յուրաքանչյուր քայլը մենք կշռում եյինք յոթն անգամ:

Հայրս հաշվի յեր առել, որ Լենինը կարող է մնալ խոտանոցում ամենաշատը 5–6 որ, վո՛չ ավելի: Խիստ վտանգավոր եր պահել Լենինին այդ պայմաններում: Հայրս շատ եր տանջվում և վախենում Լենինի համար:

Յեվ մենք վճռեցինք տեղափոխել նրան անտառ, ամենախոր տեղը, ուր բոլորովին մարդ չկա, այնտեղ նրա համար ավելի լավ կլիներ:

Այդ անտառը սկսվում է համարյա թե Լենինգրադից և հասնում ճահճային ծովափ և ֆիննական խուլ անտառները: Այնտեղ կան այնպիսի ճահճուտ վայրեր, որից չես կարող դուրս գալ:

Հինգ որ շարունակ, յերեկոյան, յերբ հայրս վերադառնում եր աշխատանքից, մենք անցնում եյինք լճով դեպի խոտհարք և աշխատում այնտեղ մինչև գիշերվա ժամի 12–ը: Այդպես հնձեցինք մենք և պատրաստեցինք խոտի մի մեծ դեզ, վորպեսզի ցույց տանք, թե իրոք հնձվորներ եյինք: Խոտի դեզը չորս մետր բարձրություն ուներ, փոցխերով դիզեցինք խոտը՝ իսկական հնձողների նման: Այդ արինք մենք— հայրս, իր չորս վորդիներով — Ալեքսանդրը, Կոնդրատին, Սերգեյը և Նիկոլայը:

Այդ ժամանակ, մինչդեռ մենք այնտեղ աշխատում եյինք, Վլադիմիր Իլյիչը մեր խոտանոցում, վերևը՝ մարագում նստած խոտի վրա, սեղանի առաջ՝ գրում եր մինչև մութը: Նա գրում եր հոդվածներ և մի մեծ գիրք՝ «Պետություն և հեղափոխություն»: Նա զարմանալի կերպով հանգիստ եր: Նա կարդում եր

անխոնջ բոլոր լրագրները, իսկ մենք՝ հետո այրում էինք, բոլոր հեռքերը վոչնչացնելու համար:

Ուշ յերեկո յեր: Արևն արդեն մայր եր մտնում. յերբ հայրս ասաց ինձ, վոր պատրաստեմ ճուկ վորսալու բոլոր գործիքները և հանձնեմ Վլադիմիր Իլյիչին, վոր պետք է անցներ Ռազլիվի մյուս ափը, վորպես ձկնորս: Իլյիչը մոտեցավ նավակին, ուսերին դրած փոցխ, դերանդի, ցցեր և կարթեր:

Մենք ուրախ էինք, վոր Իլյիչը մեզ հետ մեկնում եր ավելի ապահով տեղ, մեր սիրած անկյունը՝ լճի այն կողմը, վորտեղ նա կլիներ լիակատար առանձնության մեջ:

Խաղաղ յերեկո յեր: Մոտեցանք լճափին, կապեցինք նավակը և գնացինք դեպի հյուղակ: Մինչև այնտեղ 15 բոպեի ճանապարհ եր գիզգաղներով: Հասանք: Այնտեղ եր յեղբայրս՝ Նիկոլայը: Նա վառ եր պահում խարույկի կրակը:

Վլադիմիր Իլյիչը դիտեց հյուղակը: Յեվ գիշերն արագ անցավ այդ նոր տեղում, ուր հաջորդ որերում, Իլյիչը՝ խոնավ-ցողապատ գետնի վրա գրում եր իր գիրքը, այն մասին, թե ինչպես պետք է հեղափոխություն կատարել և նոր պետություն կառուցել:

Հաջորդ որը առավոտյան խարույկ վառեցինք, թեյ յեփեցինք, խմեցինք ու սկսեցինք հավաքել խոտը: Իլյիչը վերցրեց փոցխը և շուռ եր տալիս խոտը, չորացնում: Նա շատ նման եր հնձվորի և հաճույքով աշխատում եր խոնավ գետնի փոքրիկ տարածության վրա՝ Ռազլիվի այն կողմը:

Այն ժամանակ յես 17 տարեկան էի, իսկ յեղբայրս Կանդրատին՝ 16: Նա պատանեկական յեռանդով համարում եր իրեն կանաչ անարխիստ և իր կարծիքով՝ նույնիսկ ավելի ճախ եր տրամադրված, քան թե Իլյիչը, հենց այդ պատճառով էլ ծրագրային յերկար վիճաբանություններ էին տեղի ունենում փոքրիկ հյուղակում նրա և Լենինի միջև:



Լենինը ճառ է ասում զրահապատից (1917 թ.)
Պ. Սարոնոսով (փայտագրություն)

Ամենափոքր յեղբայրս, Նիկոլայը, Լենինի հետ եր շարունակ: Մենք նրան համարում եյինք Լենինի խոհարարը և կապ պահպանողը: Նա խարույկի վրա պատրաստում եր թեյ, յեփում եր կաշա, ձկնապուր, իսկ ձուկը մենք վորսում եյինք լճից և բերում զամբյուղով, գետնախնձոր և կրուպա զնում եյինք Սեստրորեցկում:

Մոռենում եր աշունը: Հաճախ անձրևներ եյին գալիս: Շատ վատ յեղանակ եր: Զուրը չեր թափվում չալաշը, բայց այնտեղից դուրս գալն անհնարին եր: Իսկ հյուղակում մութն եր:

Իլյիչը դուր ժամանակ չեր կարող կորցնել: Ցերեվում եր, վոր նա տանջվում է: Փոքրիկ հնարավորության դեպքում նա դուրս եր գալիս հյուղակից և գրում «Պետություն և հեղափոխություն» գիրքը:

Ցերկու կամ յերեք ժամվա անձրևից հետո մի քիչ փայլում եր արևը, իսկ հետո նորից յերկինքը ծկսում եր լաց լինել, և Լենինը հարմարվում եր յեղանակին:

Պահել Լենինին այս պայմաններում՝ անհնարին եր, այդ՝ վտանգավոր եր նրա առողջության համար: Վորոշվեց տեղափոխել նրան Ֆինլանդիա:

Փաստաթղթի պատրաստության համար մենք ոգտագործեցինք գործարանից վերցրած անցաթուղթը, վորը իրավունք եր տալիս անցնել սահմանը:

Այժմ անհրաժեշտ եր Իլյիչին բանվորի գրիմ անել և լուսանկարել: Ցեկավ մեկը՝ ապարատով: Լուսանկարը պատրաստ եր: Կպցրինք այն՝ փաստաթղթին: Մնում եր կնքել: Հայրս մաքսանենգորեն կնքեց այն՝ մենշևիկյան-եսերական կոմիսարիատում: Իսկ համարը մեզ չհաջողվեց դնել: Այդպես էլ փաստաթուղթը մնաց առանց համարի:

Ցեվ մի մուշապատ յերեկո Իլյիչը հեռացավ հյուղակից:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ ԹԱԳՆՎԵՑ ՖԻՆՆԱԿԱՆ ՅԱԼԿԱԼԱ ԳՅՈՒՂՈՒՄ

Աննա Միխայլովնա Պարվիյայնեն,
68 տարեկան, ապրող Պարվիյայնենի
այրին:

Իմ աղջիկ Լյուսյուլին ինձ ասում է.

— Մայրի՛կ, պատրաստեցեք այն սենյակը, որն առանձին մուտք ունի բակի կողմից: Սեղան և փոքրիկ նստարան դրեք: Հյուր է գալու:

Բայց ով է,— չի ասում:

— Մենք կբերենք Պետրոգրադից մի լավ ընկեր:

Մեր փայտաշեն տնակը կանգնած էր անտառի կողքին, գյուղից հեռու: Տեղը լեռնոտ էր, չոր ավազոտ: Կրասավեց լիճը մի կողմից, իսկ Կաֆի-Յարվի լճակը՝ մյուս կողմից:

Մենք պատրաստեցինք հյուրի համար փոքրիկ սենյակ, որը կառուցված էր ֆիննական ձևով: Սենյակն ուներ մի պատուհան: Իսկ ամբողջ լայնությամբ — մահճակալ ու սեղան:

Մահճակալը կարդի բերինք, սեղանին դրինք լամպը:

Ցերը մթնեց, ձին ուղարկեցինք կայարան: Սպասում ենք:

Քիչ հետո լսեցինք. բակում աղմկում են անիվները և ձին խրխնջում է:

Դուրս յեկանք դիմավորելու:

— Ցեկա՛նք— ասաց Եյնոն,— ցած իջնելով սայլակից: Ահա մեր հյուրը — Կոնստանտին Պետրովիչ Իվանով:

Իվանովը ձեռքը մեկնեց մեզ, բարեվեցինք: Նա յերեխաներին նույնպես առանձին — առանձին բարեվեց:

Լապտերի լուսով մենք տեսանք Իվանովին—մրոտված, վատ հագնված մի հասարակ բանվոր՝ կանգրեցինք նրան մտնել բնակարան: Իսկ Յոհանը մնաց՝ ձին արձակելու:

Նստեցինք սեղանի չուրջը. Իվանովը դիվանի վրա, նրա կողքին Լյուսյուլին, իսկ մյուս կողմը՝ Եյնոն:

Իվանովը խմեց սուրճը և կերավ ախորժակով. մի ամբողջ որ վոչինչ չէր կերել նա: «Կեղտոտ, հոգնած. — մտածում ենք.— ո՞վ է նա»: Իսկ խոսելուց յերևում էր, որ հասարակ մարդ չէ:

Առավոտյան Իվանովը գնաց բաղնիք: Եյնոն խոհանոցից տաք ջուր տարավ նրա համար:

Նա այնտեղ լվացվեց: Վերադարձավ բնակարան, սուրճ խմեց, կերավ և սկսեց ածիլվել:

Հետո Եյնոն, Լյուսյուլին և հյուրը գնացին զբոսնելու: Նրան ցույց տվին լճերը. վճիտ Կաֆի-Յարվին և մուգ կապույտ Պիտկե-Յարվին՝ շրջապատված մթին անտառներով:

Նրան ասացին.

— Ընկե՛ր Իվանով, դուք այստեղ կարող եք գալ լողանալու և ձուկ վորսալու:

Հետո գնացինք դաշտը, ուր հայրիկը վար էր անում, Եյնոն, Լյուսյուլին և հյուրը պառկած եյին ու հետևում եյին, թե ինչպե՛ս է նա աշխատում: Հետո Իվանովը վեր կացավ և գնաց նույնպես հորս հետ աշխատելու:

Ցեվ ծիծաղում էր, վոր Պարվիյայնենի արորը գնում է ուղիղ մեկ ղծով, իսկ իրենը ծուռ ու մուռ:

Հետո Իվանովն սկսեց հարց ու փորձ անել Պարվիյայնենին. քանի՛ ժարդ կա գյուղում, ինչպե՛ս են նրանք ապրում, ի՞նչ են անում և ինչպե՛ս է նրանց տրամադրությունը:

Վերադառնալով զբոսանքից՝ անմիջապես ճաշեցինք:

Իսկույն Լյուսյուլին և Եյնոն մեկնեցին Պետրոգրադ, մենք մնացինք հյուրի հետ:

Իվանովն Եվերսի և Վերների հետ առավոտյան գնում էր անտառ: Եվերսը ութ տարեկան էր, իսկ Վերները՝ վեց: Մինչև ճաշը սունկ էին հավաքում, ճաշից հետո՝ գնում էին հաբալասի հավաքելու:

Վերներն ու Եվերսը ռուսերեն խոսել չգիտեին: Ման էին գալիս Իվանովի հետ անտառում: Նա նրանց ասում է.

— Պունադեն բունանի: Կարմիր հատապտուղներ:

Յերեխաները գլխները շարժում են: Ծիծաղում և յերեքով միասին հավաքում են:

Յերբեմն Իվանովը գնում էր լողանալու ԿաֆիՅարվի լճում: Լողանում էր լճում, բայց գդակը գլխից չեր հանում, կեսկան աչքերի վրա յեր քաշում շարունակ: Նա լավ էր լողում, շատ լավ: Իսկ յերեխաները զարմանում էին:

— Նա գդակով է լողանում: Ինչո՞ւ համար:

Իվանովը բացատրում է նրանց.

— Գլուխս կարող է մրսել, այդ պատճառով էլ գդակը չեմ հանում և այդպես եմ լողում:

Իսկ նա չեր հանում այն պատճառով, վոր կեղծամ ուներ դրած: Նա զբոսնում էր նաև նավակով և ձուկ էր վորսում: Զեր ձանձրանում:

Նրա ընկերներն էին մեր փոքրիկ յերեխաները: Նա յերեխաներին այնքան էր սիրում, վոր շատ անգամ բռնում էր նրանց ձեռները և միասին յերեքով գնում էին անտառը, համաբյա իրար գրկած: Իվանովն անտառից վերադառնալով՝ նստում էր գրելու: Գրում էր շատ և մանր:

Վոչ մի բոպե չեր կորցնում: Առավոտյան գրում էր: ցերեկը՝ գրում: Յերեկոյան՝ գրում:

Նա պատրաստ էր ապրել, ուր էլ վոր լինի, միայն թե աշխատեր:

Մտնում ես նրա սենյակը, իսկ նա նկատում է և պահում է գրածը: Մտածում էինք. «Զի ուզում, վոր տեսնենք, թե ինչով է զբաղվում»: Իսկ հետո, յերբ ավելի յերկար մնաց, չեր զգուշանում բոլորովին:

Մտնում ես սենյակը, իսկ նա գրում է շատ հանգիստ, գրում է մանր և արագ:

Ամեն առավոտ Եվերսն անցնում էր լիճը, իսկ հետո վոտով գնում էր կայարան, վերադարձին լրագրեր էր բերում Իվանովի համար:

Կիրակի որը Եյնոն և Լյուսյուլին վերադարձան Պետրոգրադից:

— Ինչպե՞ս է դուք գալիս ձեզ այստեղ, չե՞ք ձանձրանում, ընկեր Իվանով,— հարցնում են նրանք Իվանովին:

— Լավ է,— պատասխանում է նա,— յես այստեղ շատ ընկերներ ունեմ, այսպիսի հանգիստ տեղ մինչև այժմ չեմ տեսել,— ասում է,— յես հանգիստ եմ քրտնում և գիշերները: Մինչև հիմա յես այսպես հանգիստ չեմ ապրել: Յես մի որ կգամ ձեզ մոտ՝ կնոջս հետ միասին: Կարելի՞ յե:

Ծեր Պարվիյայնենը պատասխանում է.

— Մեծ հաճույքով, յերբ վոր կամենաք:

Նստեցինք սուրճ խմելու:

— Դուք կարծում եք, վոր յես չգուշակեցի, թե ո՛վ եք դուք,— ասում է Պարվիյայնները.— Յես գիտեմ, վոր դուք վոչ թե Կոնստանտին Պետրովիչն եք, այլ Վլադիմիր Իլյիչը: Զե վոր դուք Լենինն եք:

Իլյիչը ծուռ նայեց Եյնո Սերամովիչին:

— Իսկ դուք ինչո՞ւ եք այդպես կարծում,— հարցնում է Լենինը:

— Յես վոչինչ չեմ ասել,— արդարանում է Եյնոն:

— Մենք շարունակ կարդում ենք ֆիննական լրագրներում, վոր Լենինը թաղված է Ֆինլանդիայում: Դիտեցի ձեզ և տեսա, թե ով եք դուք:

Պարվիյայնենը ուրեմն գլխի յեր ընկել, վոր իրենց մոտ ապրում է Լենինը:

Իսկապես վոր Եյնոն վոչ մի խոսք չեր ասել Պար-

վիյայնենին: Նա ինքը հասկացավ: Տեսավ, վոր մարդը չատ կրթված է, բայց վատ է հագնված:

Բայց Լենինն անհանդիստ լինելու առիթ չուներ: Պարվիյայնենը չեր մատնի նրան՝ թեկուզ միլիարդներ տային նրան:

Պարվիյայնենը է՛լ ավելի խիստ սկսեց պահել գաղտնիքը: Ցեվ յերբեք ցույց չեր տալիս, վոր վախենում է: Միայն թե հանդիստ լինի Լենինը, միայն թե վոչ վոքից չվախենա, հանդիստ ապրի իր մոտ:

Ցեվ մենք Լենինին պահում էյինք, ինչպես հարազատի, վորպեսզի վոչ մի կողմնակի մարդ վոչինչ չըհասկանա:

Իլյիչը կեղծումով եր: Տեսքով չատ նման եր Ֆիններին: Իլյիչը չատ սիրեց այդ կեղծամը և բոլորովին մոռացավ, վոր ինքը մաղ չունի: Միայն մի բան, ինձ ասում եր հետո ազջիկը, նրան կարող եր մատնել, —այդ նրա խոսակցությունն եր: Իլյիչն ուներ առանձնահատուկ ձայն, այնպես վոր անմիջապես կարելի յեր ճանաչել այն՝ հազարների մեջ: Բայց գյուղից ով էլ վոր գար, չեր կարող հասկանալ, թե ով է մեզ մոտ ընակվողը:

Ազատ ժամանակ իմ ամուսինը Լենինի հետ պատկում էյին խոտի վրա և զրուցում: Լենինը դալիս եր մեզ մոտ նաև խոտ հարելու և հնձում եր մեզ հետ միասին:

Նա հետաքրքրվում եր ֆիննական կյանքով և մեր առանձնությունը նրան չատ դուր եր դալիս. անտառի տասելյունը, հանդիստ լճերը նա չատ եր հավանում:

Նա ասում եր:

— Շատ լեղուներ գիտեմ, բայց ֆիններեն չգիտեմ:

Ցեվ աշխատում եր սովորել ֆիննական սովորական բառեր և խնդրում եր յերեխաներին՝ սովորեցնել իրեն ֆիններեն խոսել:

Ցարկալայի մեր տնակը մինչև այժմ էլ կանգուն է արտասահմանում, և վոչ վոք չի ապրում այնտեղ:

ԼԵՆԻՆԸ ՀՆՈՑԱՊԱՆ

Իլյիչը թաղնվում եր կառավարությունից Ռազլիվ կայարանի մոտի անտառում, վրանի տակ: Աշնային ցրտերն սկսեցին և անձրևներ յեկան: Վրանի տակ այլևս ապրելն անհնար դարձավ: Լենինի ընկերները վորոշեցին ոգնել նրան անցնելու արտասահման, Ֆինլանդիա:

Մեծ դժվարությամբ ընկերները համոզեցին Լենինին ժամանակավորապես հեռանալ Ռուսաստանից:

Հարկավոր եր Իլյիչին ոգնել հասնելու մինչև մոտիկ կայարանը, վոր գնար Պետրոգրադ, այնտեղից էլ նորից գնացքով սահմանի վրայով անցներ Ֆինլանդիա:

Ցեվ ահա մի գիշեր Իլյիչը և նրա յերեք ընկերները գնացին անտառի միջով մինչև յերկաթուղու կայարանը:

Մութն եր: Նրանք գնում էյին զգուշավոր և կամաց, վորովհետև անտառում ամեն քայլափոխին կարող էյին հանդիպել սահմանապահների: Նրանք անմիջապես կհարցնեյին.

— Ովքե՞ր եք: Ինչո՞ւ յեք գիշեր ժամանակ թափառում սահմանի մոտ: Ցեվ կձերբակալեյին բոլորին. ամենից առաջ Լենինին:

Նրանք գնում էյին ճանապարհով, հետո ծռվեցին կողքի արահետը, հանկարծ ճանապարհին հանդիպեցին մի գետակի: Ճանապարհորդները հանվեցին, անցան գետը մինչև ծնկները թրջվելով և ընկան ճահճի մեջ—ճահիճն էլ անցան և դուրս յեկան ինչ-վոր դաշտ: Դաշտի վրա ծուխ եր տարածված, փչում եր ածխա-

հոտ: Այստեղ անտառը հրդեհվել եր. թփերը դեռ այրվում էին:

Լենինը և նրա ուղեկիցները յերկար թափառում էին ծխացող թփերի մեջ, շունչները կտրվում եր ծխից: Վերջապես դուրս յեկան հրդեհի միջից:

Ո՞ւր գնալ— նրանք մոլորվել էին: Մթությանմեջ դժվար եր գտնել ճանապարհը. Հանկարծ ինչ-որ տեղ, այն կողմը շոգեքարշը սուլեց: Ընկերները գնացին այդ կողմը —հետախուզության, վորտեղից լսվեց սուլոցը:

Իլյիչն անտառում սպասում եր: Յերկար ժամանակ հետախույզները չեյին վերադառնում: Վերջապես ընկերները վերադարձան և հաղորդեցին, վոր կայարանը մոտիկ է: Ճանապարհ ընկան: Կամաց, աննկատելիորեն մոտեցան նրանք կայարանին և թաղնվեցին թմբի հետևը: Պլատֆորմում վխտում էին սպաները՝ հրացաններով զինված:

Յերբ գնացքը մոտեցավ, Իլյիչի ընկերներից մեկը— Շոտմանը մոտեցավ վագոնին և այդ ժամանակ սպաները նրան նկատեցին: Նրանք յերկար հարցաքննում էին թե ինչու յե յեկել կայարան, ո՞ւր և ինչո՞ւ համար է գնում: Նա ասաց, վոր ինքն ամառանոց է յեկել և այժմ գործով քաղաք է մեկնում: Նրան հավատացին և բաց թողին: Իսկ այդ ժամանակ Իլյիչը և մյուս ընկերներն հաջողեցրին վագոն մտնել: Գնացքը շարժվեց: Ճանապարհի առաջին մասը հաջողությամբ անցան, նրանք յեկան Պետրոգրադ:

Մնում եր անցնել սահմանը: Այդ այնքան էլ հեշտ բան չեր: Սահմանի մոտ կանգնած եր ռազմական պահակախումբը: Բոլոր ուղեվորներին խուզարկում էին, հարցաքննում: Դրա համար էլ վորոշել էին, վոր Վլադիմիր Իլյիչը գնա շոգեքարշի վրա վորպես հնոցապան: Մի մեքենավար, ընկ. Յալավան, բոլշևիկ եր: Նա հանձն առավ Իլյիչին տանել Ֆինլանդիա —իր շոգեքարշով:

Լենինը միրուքը և բեխերն ածիլեց, շորերը փոխեց և այդպես նրան դժվար եր ճանաչել: Ընկեր Շոտմանը պետք է ուղեկցեր Իլյիչին մինչև Ֆինլանդիա: Նրանք յեկան կայարան հենց գնացքը մեկնելու րոպեին:

Գնացքը մոտեցավ: Շոգեքարշի վրա յեր մեքենավար Յալավան: Լենինը բարձրացավ շոգեքարշը, անմիջապես թևերը քշտեց և սկսեց փայտ լցնել հնոցը:

Շոտմանը մտավ մարդատար վագոնը: Յալավան շչակը հնչեցրեց և գնացքը շարժվեց: Սահմանի վրա, Բելոոստրովում, ստուգում էին բոլոր ուղևորների փաստաթղթերը. կարող եր պատահել, վոր խուզարկեյին էլ: Ահա գնացքը մոտեցավ Բելոոստրովին: Սպաներն անմիջապես ներս մտան վագոնները: Այդ ժամանակ մեքենավար Յալավան անջատեց շոգեքարշը գնացքից և տարավ խավարի մեջ կայարանից հեռու ջրհանի մոտ—ջուր վերցնելու: Լրտեսները փնտռում էին Լենինին բոլոր վագոններում: Իսկ Լենինն այդ ժամանակ նրանցից մի քանի քայլի վրա նստած եր շոգեքարշում, ջրհանի մոտ: Ընկեր Յալավան դիտավորյալ ջուր եր վերցնում շատ յերկար ժամանակ, մինչև գանգը խփելը: Հետո միանգամից մոտեցրեց շոգեքարշը, միացրեց վագոններին ու գնացքը շարժվեց: Լենինն ապահով հասավ Ֆինլանդիա:

ԻԼՅԻՉԸ ՄԵՌԱՎ

Յես եղ բոպեին թեյ եյի խմում: Մեծ վորդիս՝ Վասիլի Գեորգիևիչը ներս վազեց, թե՝

— Հայրիկ, Իլյիչը մեռավ:

Եղ պատահեց հոկտեմբերի քսանմեկին. ժամը վեցից հիսուն բոպե անց Վլադիմիր Իլյիչը մեռավ:

Թեյի ամանը ձեռիցս ընկավ՝ ջարդվեց: Մարմնովս տաք ու հով անցավ...

Քուրքս, փափախս վերցրի։ Եղ գիշեր հենց մեզ մոտ եյին Կուզմինսկ գյուղացի Սաարշինին յեղբայրները։ Նրանք էլ հուզվեցին, իրար անցան։

— Գնանք Գորկի,— ասում եմ դրանց։

Նրանք թե՝

— Մեզ ենտեղ մոտ չեն թողնի։

Յես ասում եմ.

— Գնանք, վազենք շուտ։

Յերբ տեղ հասանք, պահակները կանգնած եյին դուրսը։ Անցանք առանց դես ու դենի։ Սենյակում պառկած եր Վլադիմիր Իլյիչը՝ դարչնադույն հագուստը հագին. մի ծերունի գլխակողմը պատվավոր պահակ եր կանգնել. մեկ էլ վոտների կողմը կանգնել եր մի տարիքավոր կնիկ՝ վոչխարի մորթուց քուրքը հագին։

Չեմ հիշում՝ ինչ պատահեց հետո, յես հեկեկացի.

— Վլադիմիր Իլյիչ, դուք անժամանակ մեռաք։

Գրի յե առնված 1937 թ. Մոսկվայի մարզի Պոդոլսկի շրջանի Յամ գյուղում Գ. Վ. Սկորոմիսլովի (63 տ.) պատմածից

ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ

Ավտոգենի գործարանի բանվոր Ալեքսեյ Սերգեյևիչ Գուրանցեվը պատմում է.

Ժամը յոթին նա մահացավ, իսկ տասնմեկին գումարվեց խորհուրդների համագումարը. մոտ հազար մարդ կլիներ, վողջ համագումարը դահլիճ մտավ ինչպես մի մարդ։ Գյուղացիության մեջ աղմուկ ընկավ։ Բոլորը վազեցին։ Բարձրացան այն սարը, որտեղ ապրել եր Իլյիչը։

Յերեք որ Իլյիչը պառկած եր Գորկիում։ Գյուղացիներն իրենց զամբիկները նստած գալիս եյին հրաժեշտ տալու։ Իսկ չորեքշաբթի, մահվան 3-րդ որը, նրան փոխադրեցին Մոսկվա։ Շչակը սուլեց և գնացքը շարժվեց։

Ու այդ որվանից № 127 շոգեքարշը հպարտանում է։ Նրա վրա փակցված է պղնձե պլակատ, ասող և նշան։ Այդ շոգեքարշը շատ թանկագին է յերկաթուղայինների համար։

«Դինամո» գործարանի բանվոր ընկ. Վեժիսը պատմում է.

Լենինյան ոգո գնացքով յես Գորկիից Մոսկվա գնացի։

Շա՛տ ծանր է խոսել այդ մասին։

Գորկիից վագոնով կայարան եյինք գնում, տանելով Իլյիչի մարմինը։ Մոտակա գյուղերի գյուղացիների և բանվորների բազմությունը խիստ սառնամանիքին հրաժեշտ եր տալիս Իլյիչին։ Ամեն կայարանում մոտենում եր բազմահազար ժողովուրդ։ Հետո արդեն բանվոր դասակարգի շարքերից բոլոր առաջավորները մտան կուսակցության մեջ և հայտարարեցին.

— Լենինը չկա, կեցցե՛ Լենինիզմը։ Լենինը չկա, կոլեկտիվ կերպով կկառուցենք սոցիալիզմը։

«Կարմիր Հոկտեմբեր» գործարանից ընկ. Ա. Վ. Ռյումանցեվան պատմում է.

... Դուրս յեկա սպիտակեղեն փռելու և տնվորներից մեկն ինձ ասաց.

— Ռյումանցևա, մեզ, բոլորիս, մեծ դժբախտություն է պատահել։

— Ի՞նչ դժբախտություն։

— Կամաց, մի՛ գոռա։ Վախճանվել է մեր Լենինը...

Հարևանները հարցրին.

— Ի՞նչ եյին ասում բժիշկները։ Ինչո՞ւ նրանք թողին, վոր նա մահանա։

Իսկ նա ասաց.

— Մնացին ընկերները և նրանք առաջ կտանեն գործը: Նա մեզ ցույց տվեց, թե ինչպես պետք է գործել և առաջ գնալ:

Ջուլհակուհի ընկ. Դ. Ա. Մոկոլովան պատմում է.

Ցերբ նա մեռավ, ի՞նչ եր կատարվում մեզ մոտ, սոսկալի՛ յեր: Դա մի հարված եր, ամենադաժան հարվածը հեղափոխության վողջ ընթացքում. ամբողջ Մոսկվան կարծես աչխարհում կորցրեց ամեն ինչ:

— Լենինը մեռավ:

Ցես գնացել եյի Թաղմանը: Այնքա՞ն մարդ կարասես ամպ եր իջել. վոչ վոտքով, վոչ ել կառքով անցնելու ճար չկար: Ամբողջ Մոսկվան տնքում եր: Իլյիչի մարմինը բերում եյին Պավելեցկի կայարանից. յես գնացել եյի հանդիպելու և հասա մինչև Միությունների տունը:

... Մյուս որն առավոտյան Թարմ ծաղիկների մի պսակ տարա մեր գործարանի կողմից: Տանում եյի պսակը և լաց լինում:

Ի՞նչ եմ յես, ի՞նչ են իմ արցունքները: Ի՛մ արցունքները քի՛չ են: Իսկ ինչպե՞ս եյին լաց լինում մյուսները. նույնիսկ ասում եյին՝ ավելի լավ է մեռնենք...

Ջուլհակուհի ընկ. Ա. Ս. Վորոնովան պատմում է.

Նրան կենդանի ժամանակ յես չեմ տեսել, բայց տեսա, յերբ մեռած եր և պառկած սյունաղարդ դահլիճում:

... Մենք գնում եյինք սառնամանիքին, ամբողջ որն անցնում եյին հերթերը:

Բոլոր յերկրներում նա առաջին մարդն եր, նույնիսկ բուրժուազիան այդ խոստովանեց:

Նրա չափ պարզ մարդու յես յերբեք վոչ մի տեղ չեմ հանդիպել:

Ձե՞ վոր նա բանվորի հոգու մեջ է դրել իր ուսմունքի ամբողջ իմաստությունը:

Բայց կար ժամանակ, յերբ մենք ապրում եյինք շղթայված և ենջարանների մեջ ապրելու ազոթք եյինք անում:

«Մուրճ և մանգաղ» գործարանի բանվոր ընկ. Գլադիշեվը պատմում է.

Ծանր եր հաշտվել նրա մահվան հետ:

Ինչպես կարմիր-գվարդիական, Ֆրոնտներում պայքարած, յես մտա լենինյան կուսակցության մեջ:

Ինչպես կարմիր-գվարդիական, Իլյիչի կոչով Հոկտեմբերի համար պայքարած, յես մտա կուսակցության մեջ:

Ինչպես նրա ուսմունքը սիրող և նրա գործի շարունակող, յես մտա կուսակցության մեջ:

Ինչպես հին բանվոր, կապիտալիզմի կողմից տրորված և ճզմված, յես մտա կուսակցության մեջ:

Ինչպես Լենինի ծրագրով ավելի շատ մետաղ արտադրել ցանկացող, յես մտա լենինյան կուսակցության մեջ:

Ելեկտրոգործարանի մի բանվոր պատմում է.

Ասենք թե յես կմեռնեմ, իսկ Լենինիզմը կապրի, քանի բանվոր դասակարգը չնչում է:

Ելեկտրոմոնտյոր ընկ. Ա. Բ. Լարիոնովը պատմում է.

... Լենինիզմը չի կարելի պահել մարդու գանգի տուփի մեջ: Ինչ վոր Իլյիչի գրքերից սովորել ես, զուրս է հորդում քեզնից և գնում դեպի միլիոնավոր մասսաները:

«Մուրճ և մանգաղ» գործարանի մի բանվոր պատմում է.

... Լենինիզմն ուսումնասիրվում է վոչ թե ինչվոր պրոֆեսորական ամբիոնից, այլ ամենորյա աշխատանքի մեթոդներում:

Ելեկտրոմոնտյոր, նախկին նավատի ընկ. Դ. Ի. Դիբինը պատմում է.

...Յեվ յերբ մենք բաց ենք անում Լենինի գրքերն ու Ստալինի «Լենինիզմի հարցերը», անհասկանալին դառնում է հասկանալի, իսկ անպարզը դառնում է պարզ:

«Կարմիր Հոկտեմբեր»-ի ջուլհակուհի ընկ. Դ. Ա. Սակոլովան պատմում է.

Նրա գործը յերկրագնդի չափ մեծ է:

Կիրովի գործարանի մի բանվոր պատմում է.

...Նրա առաջնորդության աշակերտի, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, կուսակցությունը Լենինյան նավը կհասցնի Յեվրոպայի և Ամերիկայի ափերը:

Ելեկտրոգործարանի մի բանվոր պատմում է.

...Յեվ կյանքը Լենինի մահից հետո, նրա գծած ուղիով, Ստալինի ղեկավարությամբ ել ավելի առաջ գնաց...

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ գիմնազիայի տարիներին

ԼԵՆԻՆԸ ՄԵԶ ՖՈՒՏԲՈԼԻ ԳՆԴԱԿ ՏՎԵՑ

Պալոդյան, վոր ապրում եր Կրեմլում և սովորում եր Կենագործկոմի անվան դպրոցում, պատմում է.

«Ամռանը մենք պետք է դյուղ գնայինք, բայց Ֆուտբոլի գնդակ չունեյինք: Դիմեցինք դպրոցական խորհրդին, բայց պարզվեց, վոր դպրոցը միջոցներ չունի: Դպրոցի վարիչը մեզ խորհուրդ տվեց դիմել Իլյիչին:

Բայց յերեխաները չեյին ուզում նամակ գրել նրան, ասում եյին, թե Իլյիչն այդպիսի մանր բաներով չի զբաղվի:

Վերջապես նամակը գրեցինք, ութ հոգի ստորագրեցինք և ճանապարհ ընկանք Ժողկոմխորհ, դեպի Իլյիչի առանձնասենյակը:

Մենք նամակը հանձնեցինք պահակին, վոր տա Իլյիչին:

Յերկու որից հետո դպրոցն ստացավ մեր նամակը, վորի վրա մակագրված եր.

«ՊՈՒՐ»-ի (Հանրապետական քաղաքական Վարչություն) խանութին:

Ըստ հնարավորության պետք է բավարարել յերեխաների խնդիրքը:

Ժողկոմխորհի նախագահ՝

Վ. ՈՒԼՅԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)»

Հետևյալ որը մենք կաչվե մի լավ Ֆուտբոլի գնդակ ունեյինք:

ՀՍՍՀ-ՍՍՌ Ա. Մ. Գորկու անվան գրադարան

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Ցես և Աղյան հայրիկիս հետ գնացինք սանատորիա՝ Իլյիչին տեսնելու:

Ցես ու Աղյան խաղում էյինք: Մեզ մի հացավ Իլյիչը: Խփում էյինք ու փախչում:

Իլյիչն էլ խփեց ինձ ու փախավ:

Ցես վազեցի ու բռնեցի նրա թևը, բայց նա պուկ յեկավ և սկսեց ծիծաղել:

— Չբռնեցիր, չբռնեցիր:

— Ինչպե՞ս թե, չե՞ վոր բռնեցի:

— Վո՛չ, դու ինձ չես բռնել, այլ իմ պիջակի թևը:

Այն ժամանակ Իլյիչի ձեռքը վիրավոր եր և նա պիջակի մի թևը չեր հագնում:

Վերա Սվերդլովա (12 տար.)

ԻԼՅԻՉԸ ՇԱԲԱԹՈՐՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

Մի դեպք պատմեցին ինձ Իլյիչի մասին, թե ինչպես և նա աշխատել մայիսի մեկին: Բանվորները դերաններ էյին կրում: Մի բանվոր Իլյիչի հետ բարձրացնում է մի շատ մեծ և ծանր դերան: Ինչպես յերևում է, Իլյիչը վատ է բռնած լինում և ձեռքից գցում է դերանը:

Այն ժամանակ այդ բանվորը բարկանում է Իլյիչի վրա:

— «Դե՛, ընկեր, բարձրացնում ենք, բարձրացնենք»...

Իլյիչը շփոթված ասում է, վոր վատ է բռնել.

— «Սպասիր, ընկե՛ր»:

Հետո յերբ բանվորին ասում են, վոր նա Լենինին և նկատողություն արել, բանվորը քորում է ծոծրակը և կարմրում ինչպես խեցգետին:

Ինչպես յերևում է, իր խոսքերի համար շատ եր ամաչում:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

(Հորեղբորս պատմածից)

Մի գեղեցիկ որ հորեղբայրս, վոր շոֆեր եր, գնում է Կրեմլ ավտոմեքենայով: Նրա մեքենան հանկարծ խրվում է ցեխի մեջ ու նա չի կարողանում առանց ուրիշի ոգնության մեքենան դուրս հանել ցեխից: Դժբախտաբար այդ ժամանակ վոչ վոք մոտիկ չի լինում: Ահա գալիս է մի մարդ հնամաշ վերարկու հագած: Մարդը մոտենում է ավտոմեքենային. հորեղբայրս նրան տեսնելով, ոգնություն է խնդրում: Մարդը պատրաստակամությամբ սկսում է հորեղբորս հետ դուրս քաշել մեքենայի խրված ակը: Հորեղբայրս նստում է մեքենան և նորից շարունակում իր ճանապարհը:

Մի քանի րոպե հետո հորեղբայրս իմանում է, վոր այն մարդը վոչ թե մի հասարակ բանվոր է յեղել, այլ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահը:

Հորեղբայրս հաճախ եր պատմում այդ դեպքի մասին, սիրով հիշելով Լենինին:

ԻԼՅԻՉԸ ԹԱԳՆՎՈՒՄ Է

1917 թ. հոկտեմբեր ամսին, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, մի ուշ յերեկո, յերբ յես ու քույրս նստել էյինք մենակ, դուռն ուժեղ կերպով բաղխեցին: Այդ ժամանակ մայրիկը կոոպերատիվումն եր (նա, կարծեմ, վարիչ եր): Մենք վազեցինք դուռն մոտ և հարցրինք. «Ո՞վ է»: Անծանոթ ձայնը սկսեց խնդրել, վոր մենք բաց անենք դուռը:

Մենք չէյինք ուզում բաց անել, բայց անծանոթը կարողացավ համոզել, վոր նրան հարկավոր եր տեսնել մայրիկին, և մենք, չնայած մայրիկի խիստ պատվե-

ին, վոր դուռը չբանանք, դուռը բաց արինք: Ներս մտավ կապույտ ակնոցներով մի ծերունի: Շատ սիրալիր ժպտալով՝ նա նստեց, իսկ մենք աչքներս հառել էյինք նրա վրա: Մայրիկը սեղանատանը լույս տեսնելով վազելով յեկավ: Բարկացավ մեզ վրա, հետո նայեց անծանոթ ծերունուն և հարցրեց նրա անունը: Ծերունին, այսինքն ընկեր Լենինը (ինչպես յես իմացա հետո), զարմացած հարցրեց. «Մի՞թե դուք ինձ չեք ճանաչում»:

Մայրիկը յերկար նայեց և վերջապես ճանաչեց: Հետո նրանք սկսեցին զրուցել, իսկ մայրիկը մեզ ուղարկեց քնելու:

Յես համառեցի (հետաքրքիր եր անծանոթ մարդուն նայել), բայց ծերունին նայեց ինձ և ասաց. «Գնա քնիր. ա՛յ, աչքերդ փակվում են»: Ել ի՞նչ կարող էյի ասել. քանի վոր փակվում են, ուրեմն պետք է գնալ և քնել:

ԼԵՆԻՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՆՐԻ ԲԱՐԲՈՒՍ

ՄԱՐԴԸ ՂԵԿԻ ՄՈՏ

(Հատվածներ «Ստալին» գրքից)

Երբ Մոսկվայի մեծ թատրոնում տեղի էր ունենում Մաքսիմ Գորկու հոբելյանը հավերժացնող հանդիսավոր նիստը, ընդմիջման ժամանակ նախկին կայսերական կամ մեծ-իշխանական օթյակի հետևի սալոնում հավաքվեցին ղեկավար գործիչները: Ի՞նչ ազմուկ եր, վոր նրանք բարձրացրին այնտեղ: Ի՞նչպիսի քրքիջ: Այնտեղ էին Ստալինը, Որջոնիկիձեն, Մոլոտովը, Վորոշիլովը, Կագանովիչը: Նրանք պատմում էին եպիզոդներ քաղաքացիական պատերազմից, հիշում էին ծիծաղաշարժ դեպքեր. «Մի՞տդ է, վոնց թրմփացիր ձիուց...». «Հա, եդ անիծած մատակը, չդիտեմ՝ ինչ եր պատահել դրան...»: Հոմերական քրքիջ, պատանեկական կենսուրախություն, հուժկու զվարթություն, վորը դողդողացնում եր սալոնների ցարական հարդարանքը — դա վերակառուցման մեծ բուռլակների կարճատև ու թարմաշունչ հանդիստն եր:

Լենինը նույնպես ծիծաղում եր լիաթոք, ամբողջ հոգով:

«Ցես յերբեք չեմ հանդիպել մի մարդու,— պատմում է Մաքսիմ Գորկին,— վոր կարողանար այնքան

վարակիչ կերպով ծիծաղել, ինչպես Վլադիմիր Իլյիչը: Տարորինակ եր նույնիսկ տեսնել, վոր այդպիսի խըստաշունչ մի ռեալիստ, մի մարդ, վորն այնքան լավ տեսնում, խորապես զգում է սոցիալական մեծ վոդբերգությունների անխուսափելիությունը, անշըրջվելի յե կապիտալիզմի աշխարհի հանդեպ իր ատելության մեջ, կարող է ծիծաղել յերեխայի պես, արտասվելու չափ, ծիծաղից թուլանալու չափ: Հոգեկան մեծ, ամուր առողջություն պետք եր ունենալ այդպես ծիծաղելու համար»:

Ով ծիծաղում է յերեխայի պես, նա սիրում է յերեխաներին:

Յերբ գիշերով անցնում ես Կարմիր հրապարակով, այդ լայնարձակ տեսարանը կարծես յերկուսի յե բաժանվում. այն, ինչ կա հիմա — յերկրագնդի բոլոր լավագույն մարդկանց հայրենիքը,— և այն հնադարյանը, ինչ կար 1917 թվից առաջ: Յեվ թվում է ձեզ, թե նա, ով պառկած է դամբարանում գիշերային ամայի հրապարակի մեջտեղ, միակն է աշխարհում, վոր քնած չե այս ժամին. նա արթուն հսկում է այն ամենի վրա, ինչ տարածվում է իր շուրջը՝ քաղաքների վրա, գյուղերի վրա: Նա ճշմարիտ առաջնորդն է, այն մարդը, վորի մասին բանվորներն ասում եյին բերկրանքից ժպտալով, թե նա իրենց ընկերն է և ուսուցիչը, միաժամանակ նա հայր եր և ավագ յեղբայր, վորը իրապես գլուխը խոնարհել է ամենքի վրա: Դուք նրան չեյիք ճանաչում, բայց նա ճանաչում եր ձեզ, նա մտածում եր ձեր մասին: Ով ել վոր լինեք դուք, կարիք եք զգում այդ բարեկամին: Յեվ ով ել վոր լինեք, ձեր բախտի լավագույն բաժինը գտնվում է այն մյուս մարդու ձեռքում, վորը նույնպես արթուն հսկում է բոլորի վրա և աշխատում է — գիտնականի գլխով, բանվորի դեմքով, հասարակ զինվորի հագուստով մարդը:

ՀԱՅ

(Հատվածներ վեպից)

Տաղնապի շչակները, Լենինի հրամանով, հնչեցին Պսկովի գրավումից յերկու ժամ հետո: Մոնչում եյին Պետրոգրադի բոլոր ֆաբրիկաները: Սմենկոյի կողմից չտապող բանվորներին բաժանում եյին դենք և փամփուշտ: Հավաքը նշանակված եր Սմոլնիում:

Ամբողջ գիշերը մայրաքաղաքի բոլոր ռայոններից, բոլոր ծայրամասերից գնում եյին զինված մարդկանց խմբեր Սմոլնիի լայն բակը, վորտեղ վառվում եյին խարույկներ, լուսավորելով բանվորների խըստաշունչ, խոժոռ դեմքերը, նրանց մաշված զգեստը, վոր հապճեպ կերպով փոխվել եր զինվորականի դոտով, փամփշտակալով, գնդացրային ժապավենով,—ճակատայինների չինելները և քրքրված փափախները, բալթիական նավաստիների գդակների վոսկե տառերը. նավաստիները կանգնած եյին առանձին, ասես թե այդ անսովոր զորատեսը լոկ մեկն եր հեղափոխության փոթորկաշունչ քամու տակ կատաղվող քաղաքացիական ավրալներից:

Կային շատ կանայք —շալերով, լաչակներով, կիսամուշտակներով, վոմանք հրացաններով: Տեղ-տեղ մուգ բազմության մեջ ցոլում եյին ուսանողական գլխակները: Խարույկների լույսով շառագունած սյունաշարքից՝ լղարիկ ձիերը չափ գցած՝ արշավում եյին հեծյալները: Մարդիկ քաշ եյին տալիս գնդացիրներ, թրերի կապոցներ, հրացաններ: Խռպոտած ձայներ կանչում եյին գործարանների անունները: Մարդիկ խումբ-խումբ վազում եյին դես ու դեն, շարք եյին կազմում, զենքերը բաղխելով իրար:

— Զգա՛ստ— խզվում էին ձայները։— Շարվի՛ր, զենք գործածել իմացողները մեկ քայլ առա՛ջ... Դարձյալ սլանում էին բրդոտ, խրխռացող փոքրիկ ձիերը։ Սյունաշարքի տակ շրխկոցով բացվում ու դոցվում էին դռները։ Դուրս էին վազում զինվորականները, սուզվում բազմության մեջ... Խարույկ նետվեց ինչ-վոր մեկի բերած վոսկեզոծ աթոռը, կայծեր հանելով վեր։ Խոնավ ամպերը պատառոտում էին երենց ծվենները մերկ ծառերի կատարներին, պարուրում էին Սմոլնիի յեռանկյունի ֆրոնտոնը։

Սուվորովի լայն պրոսպեկտի խավարից մոտենում էին պիտերյան բանվորների նորանոր ջոկատներ, վրոնց վոտքի յեր հանել խղճուկ մահճակալներից և թախտերից, նկուղներից և հյուղակներից շչակների անլռելի տագնապը...

Սմոլնիի միջանցքներում բանվորները շարժվում էին միաձույլ պատի նման, վոմանք սանդուխներից վերև, ուրիշները՝ զենքերով և թղթի կտորների վրա հապճեպ գրված հրամաններով,— դեպի ցած, սառնամանիք գիշերվա մեջ, դեպի կայարանները։

Ցերբորդ հարկում, վորտեղ գտնվում եր Լենինի առանձնասենյակը,— այդ հրահրոցի մեջ, բազմությունը ճեղքելով անցնում էին սուրհանդակները, ժողովրդական կոմիսարները, կուսակցական կոմիտեների քարտուղարները, զինվորականները, Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Պետրոգրադի խորհրդի անդամները։ Այստեղ տեսնում էին միջանցքի պատին սեղմված, գլուխը կորցրած «ձախ կոմունիստների»։ Այստեղ Իվան Գորան իր ականջով լսեց, թե ինչպես պուտիլովյան մի հին բանվոր, յերկաթե չրջանակավոր ակնոցով «ձախ կոմունիստների» պարագլխի ոձիքից բռնած, ասում եր նրան.

— Դղումի գլուխ, ժողովրդական պատերազմն ա՛յ թե յերբ է սկսվում... Սա քեզ համար մեկ ֆունտ ծուխ չի, հասկացա՞ր...

Վլադիմիր Իլյիչը իր առանձնասենյակում դրդռված, արագաշարժ, ծաղրական-խայթող, վճռական դեկավարում եր մբրիկը։ ուղարկում եր հաղարավոր յերկաթուղներ, հարյուրավոր մարդիկ։ Հեռախոսից վազում եր դեպի դուռը, կանչում եր մեկին, հարց ու փորձ անում, հրամաններ տալիս, պարզաբանում, կարճ հարցումներով, կտրուկ, հստակ ձևակերպումներով, ինչպես խթաններով, ծառս եր հանում այդ ահռելի իրարանցման և թոհուբոհի մեջ չվարած մարդկանց կամքը։

Հենց այստեղ էլ, սեղանի վրա թղթերից և գրքերից տեղ ազատելով, աշխատում եր Ստալինը։ Ռազմաճակատից հասնող տեղեկությունները զարհուրեցնող եյին, ամոթալի։ Հին բանակը վերջնականապես հրաժարվում եր հնազանդվելուց։ Նավաստիական ջոկատը, վորի վրա մեծ հույսեր եյին դրել, հանկարծակի, նույնիսկ թշնամու հետ չփման չմտած, թողել եր Նարվան և հետ վազել մինչև Գատչինա... Կարճատև դադարի պահերին Վլադիմիր Իլյիչը արմուկները դրած սեղանի վրայի թղթերի կույտերին, սևեռուն նայում եր Ստալինի աչքերին։

—Կհասցնե՞նք։ Գերմանական դրագունները վաղն առավոտյան արդեն կարող են լինել Նարվյան դարպասների մոտ։

Ստալինը պատասխանում եր նույն միահավասար, վոչ-բարձր, հանդարտ ձայնով, վորով տանում եր բոլոր խոսակցությունները։

— Ցեռ կարծում եմ — կհասցնենք... բաժանված են հրացաններ և գնդացիրները... Նա կարդաց մի տեղեկանք։ Գերմանական հրամանատարությունն արդեն իրազեկ է բանվորների տրամադրության մասին... Լրտեսներ բավական կան... Աննչան ուժերով գերմանացիները հազիվ թե սիրտ անեն այժմ քայլել Պետրոգրադի վրա...

Հարևան դատարկ սենյակում, վորտեղ միակ սեղանի վրա փռված եր տաս-վերստանոց քարտեզը, աշխատում եր շտաբը։ Լենինը ռազմական մասնագետներին կանչել եր Մոգիլյովից, վորտեղ նրանք լիկվի-

գացիայի եյին յենթարկել նախկին զորակայանի շտաբը: Լենինը նրանց ասել եր. «Զորք մենք չունենք,— Պետրոգրադի բանվորները պետք է փոխարինեն զինված ուժերին»:

Գեներալները ներկայացրին մի պլան. անհապաղ Նարվայի և Պսկովի ուղղությամբ ղրկել հետախուզող խմբեր՝ յուրաքանչյուրը յերեսունից-քառասուն մարտիկներից բաղկացած, և միաժամանակ կազմավորել ու նրանց ղեկավարությանը հասցնել հիսունից-հարյուր հոգուց բաղկացած մարտական ջոկատներ: Լենինը և Ստալինը հավանություն եյին տվել այս պլանին: Իսկույն և յեթ, նույն սենյակում, ուր կային մի սեղան և մի տաբուրետ,— շտաբն սկսեց խմբերի և ջոկատների կազմավորումը և նրանց ճակատ ուղարկելը:

Ամբողջ գիշերը գնացքներ եյին մեկնում դեպի Պսկով և Նարվա: Բանվորներից շատերն առաջին անգամն եյին հրացան ձեռք առնում: Կարմիր բանակի այդ առաջին ջոկատները դեռևս չնչին եյին իրենց թվով և մարտական նշանակությամբ, սակայն մարդիկ սեղմել եյին ատամները, լարված եր յուրաքանչյուր նյարդը, պրկված եր յուրաքանչյուր մկան: Գնացքները սուրում եյին գիշերվա խավարի մեջ ճյուռնատպատ տափաստաններով: Պիտերյան բանվորները հասկանում եյին, վոր պայքարի յեն մտնում հզոր մի թշնամու հետ և այդ թշնամին կրում է համաշխարհային իմպերիալիզմ անունը: Այդ գիտակցությունն ավելի ահավոր զենք յեղավ, քան գերմանական թրները, զանոթները և գնդացիրները:

Գերմանացիները հույս ունեյին առանց նեղության մտնելու Պետրոգրադ: Նրանց բազմաթիվ զորձակալները Պետրոգրադում պատրաստում եյին կատրած—պայթեցում ներսից: Հազարավոր գերմանացի ռազմագերիներ — դաղտնի հրամաններով հավաքվում եյին այնտեղ հյուսիսից, արևելքից, Սիբիրից: Պիտերյան քաղքենիները փսփսում եյին իրար ականջի, նայելով քաղաքում անգործ թրև յեկող խումբխումբ գերմանացիներին: Բայց մի մութ գիշեր

Պետրոգրադը, Լենինի և Ստալինի կարգադրությամբ, միանգամից մաքրվեց գերմանական դավադիրներից: Պայթեցումը չհաջողվեց:

Յերբ լրտեսները սկսեցին գերմանացիներին հաղորդել Պիտերյան բանվորների գրգռվածության, բանվորական ընդհանուր զորահավաքի մասին, յերբ նրանց առաջապահ զորամասերը սկսեցին դեմ առնել նորակազմ պրոլետարական զորամասերի կրակին,— հյուսիսային մայրաքաղաքի գրավումը թվաց վտանգավոր և անհուսալի մի գործ:

Յերեք լոզունգներ նետվեցին այդ ահավոր ժամանակ. առաջին—կենտրոնացնել պարենավորման գործը, հաստատուն գներ դնելով հացի վրա, վորը պետք է վերցվի կուլակությունից պարենջոկատների «խաչակրաց արշավանքով», յերկրորդ — համախմբել պրոլետարիատին, աշխատավորներին ամենալայն, դեռևս խավար և ընկճված խավերին, և յերրորդ՝ կազմակերպել գյուղի չքավորությանը, գյուղական անծայրածիր տնտեսություններում սփռված բատրակներին, չքավորներին, սակավազորներին:

Վլադիմիր Իլյիչը չուռ տվեց ելեկտրական կոճակը, հանգցնելով աշխատասեղանի լամպը (ելեկտրականությունը պետք եր խնայողությամբ գործածել): Շփեց հոգնած աչքերը: Զվարագուրված բաց լուսամուտից այն կողմը կապտին եր տալիս խաղաղ յերեկոն: Ճայակները քնկոտ պտույտ եյին գալիս Կրեմլի աշտարակի վրա:

— Ցես հենց նոր տեղեկություններ ստացա, ճիշտ է, դեռևս չստուգված,— ասաց Ստալինը:— Ցարիցինում, Սարատովում և Աստրախանում խորհուրդները վերացրել են հացի մենաշնորհը և հաստատուն գները...

— Քյալլադյոզնե՛ր,— Վլադիմիր Իլյիչը ձեռքը մեկնեց մատիտին, բայց չվերցրեց.— Լսե՛ք,— ախար դա, սատանան գիտե, թե ինչ է:

— Չեմ կարծում, վոր սոսկ քյալլադյոզություն

լինի... Ստորին Պովոլժյեյում հացամթերումների դործում իսկական վակխանալիա յե... Դեռ ավելի վատ է Հյուսիսային Կովկասում և Ստավրոպոլի նահանդում: Այսոր չե վաղը Կրասնովը կկարի Տիխորեցկայայի ճանապարհը: Մենք կկորցնենք և՛ Կովկասը, և՛ Ստավրոպոլը... Այսպես շարունակել վոչ մի բանի նման չե...

Աշտարակի վրա ինչ-վոր բան անհանդստացրեց հայակներին, նրանք բարձրացան և նորից թառեցին:

— Կոնկրետ կերպով ի՞նչ եք առաջարկում դուք, ընկեր Ստալին:

Ստալինը լուցկին քսեց տուփին, գլխիկը թեքելով դեն թռավ, նա վառեց յերկրորդը, փոքրիկ բոցը լուսավորեց նրա կիսախուփ, կարծես քմծիծաղից փայլող աչքերը՝ փոքր ինչ բարձրացրած նեբքևի կոպերով:

— Մենք թերագնահատում ենք Ցարիցինի նշանակությունը: Այսորվա որը Ցարիցինը հեղափոխության հիմնական ֆորպոստն է,— ասաց նա, ինչպես միշտ, կարծես զննելով յուրաքանչյուր բառը:— Տիխորեցկայա—Ցարիցին— Պովորինո— Մոսկվա մագիստրալը մեզ մնացած միակ սննդատու յերակն է: Կորցնել Ցարիցինը—նշանակում է թույլ տալ, վոր Դոնի հակահեղափոխությունը միանա Աստրախանի և Ուրալյան զորքի կազակային վերնախավերին: Ցարիցինի կորուստը անհապաղ կստեղծի հակահեղափոխության միացյալ ճակատ Դոնից մինչև չեխոսլովակները: Մենք կորցնում ենք Կասպիականը, մենք անոդնական վիճակի մեջ ենք թողնում Հյուսիսային Կովկասի խորհրդային զորքերը:

Վլադիմիր Իլյիչը վառեց լամպը: Ճերմակ լույսը ափուվեց թղթերի ու դրքերի վրա, նրա մեծ կարմրավուն աղվամազերով ձեռքերի վրա, վորոնք չտապ փնտռում եյին ինչ-վոր թերթիկ: Ստալինը խոսում եր կիսաձայն.

— Մեր ամբողջ ուշադրությունն այժմ պետք է ուղղված լինի Ցարիցինի վրա: Նրան պաշտպանել կարելի յե,— այնտեղ կան յերեսունհինգ-քառասուն հազար բանվորներ և շրջաններում հացի ամենահարուստ պաշարներ: Ցարիցինի համար պետք է կռվել:

Վլադիմիր Իլյիչը դտավ իրեն պետք յեղածը, կոթնեց սեղանին, մի ձեռքի ափը դնելով ճակատին, արագ աչքի անցրեց դրված թերթիկը:

— Հացի համար կատարվող «խաչակրաց արշավանքը» պետք է գլխավորել,— ասաց նա:— Սխալ է յեղել, վոր այդ չի արված առաջ: Հիանալի յե, հիանալի յե: Նա հետ ընկավ բազկաթուռին, և նրա դեմքը դարձավ աշխույժ, խորամանկ:— Վորոշվում է պայքարի կենտրոնը,— Ցարիցին: Հիանալի յե: Ցեվ ահա հենց այստեղ էլ մենք կհաղթենք...

Ստալինը մեղմորեն ծիծաղեց բեխերի տակ: Զսպված հիացմունքով նա նայում եր այդ մարդուն—պատմության մեծագույն լավատեսին, վորը դժվարությունների ամենածանր բոպեներին իսկ կանխատեսում եր այն նորը, ծնունդ առած այդ դժվարություններից, վորը կարելի յեր վերցնել իբրև դենք—պայքարի և հաղթանակի համար...

Մայիսի յերեսունմեկին Մոսկվայի «Պրավդա»-յում հրապարակվեց այս մանդատը.

«Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամ, Ժողովրդական կոմիսար Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից նշանակվում է պարենավորման դործի ընդհանուր ղեկավար Ռուսաստանի հարավում, ոժտված արտակարդ իրավունքներով:

Տեղական և մարզային ժողկոմխորհները, պատդամավորների խորհուրդները, հեղկոմները, ջոկատների շտաբները և պետերը, յերկաթուղային կազմակերպությունները և կայարանապետները, դետային և ծովային առևտրական նավատորմի կազմակերպությունները, փոստ-հեռադրական և պարենավորման կազմակերպությունները, բոլոր կոմիսարները պարտավորվում են կատարել ընկեր Ստալինի կարդադրությունները:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Վ. ՈՒԼՅԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)»

ԼԵՆԻՆ

(Պոեմից)

Ժամանակն է,
ըսկսում եմ
պատմությունս՝
Լենինի մասին։
Բայց վոչ նրրա համար,
վոր չունեմ այլևս
վիշտ—
Ժամանակն է՝
նրրա համար—
վոր թախիծըս սուր—
Արդեն դարձել է ցավ
և պարզ և գիտակցուն։
Ժամանա՛կ,
կրկին
լոզունգները լենինյան
դու փոթորկի՛ր։
Այդ մե՞նք պիտի թափենք
լճերը արցունքի։
Լե՛նինը
և այժմ
ամենից ավելի
կենդանի՛ յե դեռ։
Նա մեր ուժը



Վ. Ի. ԼԵՆԻՆԸ զրուցում է Ս. Վ. ՍՏԱԼԻՆԻ հետ Պետրոգրադում, բանվորական բնակարանում (1917 թ.)

Դվ. Պ. Վասիլիևի

դիտությունը
զենքն է մեր։
. . . . . .
Բայց հասատատ են։
Ձերժինսկու քայլերը
դաղաղի մոտ։
Այժմ՝
կարող եր
դիրքերից իջնել Չեկան։
Այժմ՝
աչքերից մելիոնավոր
և աչքերից իմ զուրդ
Արցունքների
ծծակն և լոկ սառել
կախվել մեր այտերին։
Վո՛չ։
այսոր
վրշտով մի խսկական
սի՛րտ իմ, սառի՛ր։
Այսոր—
մենք թաղում ենք
ամենից մարդկայնին
Ցերկրաղնդովն անցած
բոլոր մարդկանցից։
Ցերկրային եր նա։
բայց վոչ թե նրանցից,
ով հայացքով խրվում է
մի սեփական տաշտակ։
Ցերկրագունդն
ամբողջը—
ընդգրկելով մեկից՝
տեսնում եր
այն,
ինչ վոր՝ ժամանակով է վակ։
Նա՝
ինչպես և դո՛ւք և յե՛ս—

Հայ գրքի պետական հրատարակչություն
Հանրապետական գրադարան
Հայ. Ա Սահակյան
Ա. Մեսրոպյան անվան

Ճիշտ այդպիսին եր նա.
Միայն թե՝
Թերեվրս
Հենց աչքերին մոտիկ
մաշկն իր՝ մաքերով
ավել եր կնճռակալ,
Շուրթերն ել
մերինից
ծաղրոտ
ու պինդ։
Բայց վոչ թե սատրապյան
պնդություն եր դա,
Վոչ հաղթական կարգով
ճընշում,
քաշում ե սանձ։
Նա՝
սիրում եր ընկերոջը
մարդկային մի
քնքշությամբ։
Նա՝
թշնամու հանդեպ
յելնում եր
յերկաթից ել կարծր։
Ուներ
թուլություններ ել,
վոր ծանոթ են մեզ։
Ինչպես և մենք—
հաղթահարում եր
հիվանդություններ։
Սակայն թե՝
ինձ—բիլյարդը—
աչքերս կչռեմ։
Շախմատն ել՝ նրան.
Առաջնորդին՝ դա ավելի յի պետք,
Շախմատից
անցնելով՝

թշնամուն իրական
Հանեց նա մարդամեջ
նախկին պեշկանների
հզոր զորաշարքեր։
Շարեց՝
վորպես
դիկտատուրա մարդկային
և բանվորական՝
Կապիտալի
բանդային տուրքերի
հանդեպ։
Մեզ համար
և ի՛ր
Միևնույն բաներն են թանկագին։
Ուրեմն ինչո՞ւ
կանգնած
թեև կոդքին իր դաշտի՝
Յես,
կյանքս ամբողջ՝
ցնդած այդ հրճվանքից
Թեկուզ հենց մեկ
չնչին իր
կատյի։
Յեվ վոչ թե—յես միայն.
Յես ի՞նչ.
ուրիշներից յես լա՞վն եմ,
ի՞նչ...
Մինչև իսկ չկանչեյինք՝
այլ բացեյինք
բերան—
Ո՞վ ձեզնից —
գյուղերից,
կաշուցը դուրս գալով՝
հանքահորերից—
Դեպի առաջ՝
չեր նետի իրան։

Տարուբերման մեջ,
ասես՝ մի քիչ կոնծած
գինի և վիշտ՝
Բնաշխարհն
պահվում եմ
տրամվայի դծից։
Այն ո՞վ պիտի
վողբար
մահուկը իմ
հիմա,
Սգերթում այս մեծ,
անսահմա՛ն մահվան։
Դրոշակներով
Գրնում են—
և այդպես,
կարծես
Կրկին դարձել է
Ռուսաստանը
վաչկատուն։
Յեվ Սյունաշարդ Սրահը
դողդողում՝
ծայրեծայը դարձել է վոտնահար։
Ինչո՞ւ համար։
Ինչո՞ւ այդ.
և ինչի՞ց։
Խղվել է ձայնը
հեռագրի
սղվոր մի բառոցից։
Յեվ ձյունե աբցունք կար
չիկնած թարթիչներին
դրոշակների։
Ի՞նչ է արել
նա,
և ո՞վ է,
վո՞բառեղից։
Մարդն այդ

բոլոր մարդկանցից էլ
մարդկային։
Կարճ է
և մինչև վայրկյանը վերջին
իսկ
Մեզ հայտնի չէ
կյանքն
Ուլյանովի։
Բայց յերկար այն կյանքը
Լենինի
Պետք է դեռ գրել՝
և նկարագրել նորից։
Հեռու վաղուց—
առաջ քան
յերկուհարյուր տարի
Ցելել է
Լենինի
համբավը վիթխարի։
Լսո՞ւմ եք,
կլայեկով
և յերկաթով պինդ
Կարելով
դարերը հին՝
Ձայնը
նախորդների
Գուժոն և Բրոմլեյի՝
Ձայնը
առաջին շոգեմեքենայի։
Յեվ կապիտալը՝
նորին մեծություն
անթագակիր.
և անպատակ՝
Ուժը գեղջկական
հայտարարեց
իրը նվաճման հեռան։
Կլանում եր քաղաքը,

հաղիշտակում,
դրոփում։
Ուռցրնում եր
կասմանների
վորովայնն ադահ.
Իսկ դաղդյահի կողքին
նիհար,
կորաքամակ,
Դասակարգն եր բարձրանում
բանվորական։
Յեվ արդեն՝
սպառնում եր—
ծխնելույզները
միտելով դեպի վեր՝
— Դեպի վոսկին
ուղին մեր
կամրջեցեք—
մաքուր։
Մենք կծնենք,
կուղարկենք
կգա նա յերբեք—
Մա՛րդը,
պայքարողը,
պատժողը,
վրիժառուն։
Յեվ արդեն
իրար են խառնվում
ամպերն ու ծուխ։
Ասես՝
հեռուները
միևնույն գնդի։
Յերկինքներն ահա—
դառնում են կրկնակի—
Ծուխերը՝
բարձրանալով՝

ծածկում են ամպերին։
. . . . . .

— Քանդեց
ժողովուրդը
կապանքը ցարի։
Ռուսաստանում — փոթորիկ,
Ռուսաստանում— ամպրոպ,—
Կարդաց
Վլադիմիր Իլյիչը
Շվեյցարիայում,
կարդաց լրագրերից,
հուզմունքով
դողով,
Բայց ի՞նչ կըհաղորդի
սպառուը լրագրի։
Ա՛յ, թե սավառնակով
դեպի յերթեր ճեղքես—
այնտեղ,
ապրստամբած բանվորներին
ողնես.
Միակ իր ցանկությունն եր
միակ իր միտքն եր այս։
Մեկնեց—
կուսակցական կամքին այդ
հընազանդ։
Գերմանական վագոն—
կընիքը գերմանական։
Ո՛,— յերթե իմանար
Հոհենցոլլերն այն,
Վոր ռումբ եր Լենինը
և նրբա
միապետության համար։
Պիտերցիները
դեռ յեվրս
Համբուրվում եյի՞ն
մանկան պես ցատկելով։

Բայց
ժապավենով կարմիր
հագիվ պարաղավորված՝
Նեվսկին—
արդեն վրխտում եր
դեներալներով.
Յեվ քայլ առ քայլ
կրդան,
կրհասնեն վերջակետին,
կրհասնեն
և սուլոցին վոստիկանական:
Արդեն
ըսկսում են ցուցել
ճանկերին
բուրժուաները
թաթերիցը իրենց
բրդապատ:
Ըսկզբում մանրունքը—
տառե՛խը վոնց վոր,—
Հետո խոշորները՝
շպրտից մինչ լոքոն:
Հետո Դարդանե՛լսկին,—
կուսական անունն եր Մելյուկով,
հետեվից եկ
Միխայլչիկն և գոռում
թագադրման շուքով:
Պրեմյերը
վո՛չ թե իշխանություն—
այլ ձեռագործումն և նրբին:
Սա
հո նարկոմ չի
կոպիտ:
Ալիո՛րդ և ուղղակի—
գընա,
և չոյի՛ր:
Սարքում հիսթերիկա

և թենորով իրա
յերգում և գվել:
Դեռե՛վրս
ցող անգամ
չեր ընկել
մեզ
Փետրվարյան
ազատությունի՛ցն այդ հին:
Մեր դեմ
պաշտպանողականներն
առան ճիպոտ:
«Ժողովուրդ բանվոր,
հառաջ դեպի Ֆրոնտ»:
Յեվ այս տեսարանին
իբրև մի լրացում՝
մեզ մատնողներն անդուլ
և մինչ
և հետագա—
մեր շուրջը պահակախումբ՝
ես-եր Սավինկովներ,
ըստոր մենշևիկներ՝
վորպես ուսյալ կատու:
Յեվ այս քաղաքը,—
վոր
ուռչում եր ճարպերից—
Նեվա գետի կողմով
Ֆինլանդ կայարանից
Վիբորգսկով
հանկարծ
մտավ զրահապատ:
Յեվ հողմն
ուժեղ ու թարմ
կբրկին
հանեց յերկինք
փրփրապատ ալիքը
հեղափոխության.

Հոսում են ճուլարան
բըլուզ և կեպիներ.
«Լենինը— մեզ հետ է.
Լենինը
կեցցե՛»:
—Ընկերնե՛ր,
և գլխավերևը հարյուրակների
առաջ պարզեց նա
ձեռքն իր
ձեռքն առաջնորդող:
— Նետե՛նք ես-դեկության
մաշված ցընցոտին:
Կորչի՛ իշխանությունը
համաձայնող:
Կորչի՛ իշխանությունը
կապիտալիստի,
Մենք
ցածի խավերի
ճայնն ենք հըզոր,
բանվորական ցածի
վողջ աշխարհի:
Կեցցե՛ կուսակցությունը
կոմունիզմը կառուցող:
Կեցցե՛ ապըստամբությունը՝
հանուն խորհուրդների.
Յեվ առաջին անգամ
ամբոխի առա՛ջը ապշահար՝
հենց այստեղ
մեր դեմ,
մոտիկ այնպես
բարձրացավ
վորպես մի գործ
և պարզ և կառուցվող
անհասանելի խոսքը՝
«Սոցիալի՛զմ»:
Այստեղ հենց՝

հետևում սուլող զավոդների,
փայլող հորիզոնում՝
վողջ հասակովը մեկ—
աշխատավորական
դալիք
կոմունան բարձրացավ—
առանց բուրժուաների՝
առանց պրոլետարներ,
առանց ստրուկ և տեր:
Շամաձայնողական,
վոլորուն
փոկերի հաստության
իջնում էլին
կացնի պես
խոսքերն Իլյիչի:
Յեվ ճառն ընդհատվում եր
մռունչի փլված քներով.
«Ձի՛շտ ես դու,
Լե՛նին,
ժամանակն է,
այո՛»:

ԼԵՆԻՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՈՒՄ

Փիրուզ լեռներից, անապատներից դեղին ու հրկեզ,—
Վորպես ուխտավոր, ո՛վ վեհ դամբարան, յեկա դեպի
քեզ:

Խոնարհվել եյին սգով քեզ վրա դրոշակները մեր,
Բայց դո՛ւ, ով անգին, պառկել ես, ինչպես կենդանի
անմեռ:

Ջամբուլը քեզ հետ, ինչպես իր հոր հետ խոսում է
սրտով,
Յեվ հին արյունը վառվում է նորից ջահելի խանդով:

Խոր լռության մեջ հնչում է սիրտըս, ինչպես նուրբ
դոմբրա,
Ամենից բարձր, ամենից մաքուր լարերի վրա:

Կանգնել է ահա դամբարանը քո աշխարհի սրտում,
Յեվ գետերի պես ժողովուրդները դեպ քեզ են
հոսում:

Թուրքմենն է գալիս, ուզբեկն է գալիս և զազախն
ահա,
Վորպեսզի տեսնեն քո դեմքը վսեմ դարերում անմահ:

Վորպեսզի հայտնեն քեզ վորդիական խոսքեր
սրտագին,

Վորպեսզի իրենց յեղբումը անխախտ ասեն քեզ
կրկին:

Մենք կըպահպանենք քո ամեն խոսքը՝ հզոր և արդար,
Նրանք մեր լույսն են, իսկ ահեղ վորոտ՝ թշնամու
համար:

Քո վեհ խոսքերի գինը շատ բարձր է հանուր
աշխարհում,
Ինչպես աղբյուրի ջուրը կենսատու տոթ
անապատում:

Իմաստուններից դու մեծագույնը, դու արև անմար,
Վոր ջերմացրիր քո արև—սրտով մոլորակը մեր:

Միլիոն խեղճերին, վոր ապրում եյին վշտի, հոգսի
մեջ,
Դու յերջանկության բացիր ճշմարիտ ուղին լայն ու
մեծ:

Դու մեռար, ավաղ, և վորբ մնացին յերկրներ, ցեղեր,
Բայց վեհ Կրեմլի բուրգերից ահա ծագեցին աստղեր:

Յեվ լսում ենք մենք գիշեր ու ցերեկ, անդուլ, ամեն
որ
Քո անհուն սրտի բաբախումները մշտազոր, հզոր:

Մարդկության համար, վորպես կյանք և լույս և
յերջանկություն
Հաղորդ է ապրում մեր մայր—քաղաքի բարձր
Կրեմլում:

Նա իմաստուն է, անվեհեր է նա՝ արծիվ լեռների,
Քեզ նման նա մեզ վարում է անշեղ՝ հաղթանակների:

Գոռ մրրիկների ամպրոպի միջից թեվերով ուժգին
Նա յերջանկություն բերեց տառապող
ժողովուրդներին:

Իմ վորդիներին, իմ թոռան, ծոռան, սերունդին
դալիք
Ցեռ ահա՛, վորպես ոսկիս ավազը, պատվեր եմ
տալիս,

Իմաստուն մարդուց, անմահ Լենինից ապրել
սովրեցեք,
Յեվ ժողովուրդին մինչև ձեր վերջին շունչը
սիրեցեք:

Գիտցեք խոհերը, զգացմունքը ձեր բոլորն հավաքել,
Ձեր կամքը ամրողջ, ուժերը բոլոր նվիրաբերել—

Նրան, ում վորպես ազնիվ ընկերի, Լենինը սիրեց,
Նրան, ում վորպես հարազատ յեղբոր Լենինը սիրեց.

Վորին աշխարհը խոր հիացմունքով Ստալին է
կոչում,
Ում մեջ Լենինի արեգակնային հանճարն է ապրում:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՆԻՆԸ ԱՆՄԱՀ...

Այն ո՞վ է ասում՝ թե մեռավ Լենին...
Մի՞թե կմեռնի արևը պայծառ,
Կամ թե կմարի՞ շունչը ովկյանի,
Արդյոք տեսե՞լ եք Մարսը խավարի,
Կամ անհետանա Հիմալայի սարն:

Նրա գործերը՝ մի-մի արևներ,
Յեվ ավանդները՝ խորանիստ ովկյան.
Նրա պատգամներն—Մարսի բևեռներ—
Վեհ ու անսասան վորպես Հիմալայն:

Բայց այն ո՞վ դիտե... գուցե և լինի,
Վոր մի որ մեռնի արևը հսկա,
Գուցե պատահի,

Վոր անդամ ցամքի ջրերի արքան,
Խամրի, չքանա և Մարսը վոսկյա,
Խորտակվի հիմքից Հիմալայի սարն...

Ու Լենինը դեռ
Կմնա անմահ բյուրավոր դարեր.
Նրա անունը
Այս ամենից ել հզոր է, անմեռ...

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Կանգնել եմ ահա պատկերի առաջ,
Դիտում եմ նրա գծերը դեմքի.
Սա հանճա՞ր է մի, թե՞ զորավար քաջ,
Վոր պաշտամունքը դարձավ ամենքի:

Գանգը լայն է լերկ, անհաս ու հպարտ,
Ճակատը՝ անհաչտ–կռիվների դաշտ,
Խոր աչքերի մեջ՝ այրող անապատ,
Անողոք իրա հրով կռապաշտ:

Նայում է հեգնոտ անցած աշխարհին
Ցեվ կարծես ծաղրում բուրժուաներին.
— Վորքան էլ ուզեք վեր կենալ նորից,
Դատապարտվա՞ծ եք մահվան այսորից:

ԼԵՆԻՆ

Մեզնից հեռացար
Լե՛նին, դու անմահ,
Ու մեզ թողեցիր
Վորբ ու սգավոր,
Ցեվ ինչան ահա
Սդո յերիզներ
Աշխարհի վրա—
Ազգերին բոլոր:
Թբիլիսին հիմա
Մեծ Մոսկովի հետ
Սգում է տխուր,
Վչտոտ է դարձել,
Բեռլինը այնտեղ
Ամպել է դուցե,
Մահդ բոլորիս
Սրտերն է խանձել:
Սակայն... ո՛, յերբեք
Արցունք չենք թափում,
Դու դե՛մ ես յեղել
Լացին, արցունքին,
Հուզվում ենք... մահին
Նզովք ենք կարդում,
Վորը լեզի յե
Ածել մեր գլխին:

Մեր սիրան է հուզվում,
Զարկում է անպարտ...
Մենք վոսոխների
Բներ կքանդենք,
Կլինենք միշտ էլ
Քեզ նման հպարտ,
Քեզ նման, Լե՛նին,
Դու անմահ արեգ:
Ցերդվում ենք, դրոշդ
Միշտ վեր կպահենք,
Ճնշված մարդկության
Կտանք յերդ ու սեր...
Լե՛նին, աչքերդ
Վո՞նց պիտի թաղենք,
Մենք հողին չենք տա
Ճակատդ լուսե:
Ցեվ քո աչքերից
Հուր շողաց անչեջ,
Քո վառ ճակատից
Կյանք շողաց պայծառ...
Դու բոլոր մարդկանց
Բոց սրտերի մեջ
Կշողաս, վորպես
Անմահ հուշարձան:
Կանցնի ժամանակ
Աղմուկով մի նոր,
Վշտերը կանցնեն
Սև ծխի նման,
Սերունդը գալիք,
Լե՛նին, միշտ սիրով
Հիշատակը քո
Կպահի անմար:

ԴՈՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Սևաչյա գարունը դուրս է բացվել ձյան չադրա-յից և սուր մտիկ է տալիս իր սուրմայած թարթիչ-ներով:

Գնացքը վինչում, թռչում է Լենինականի դաշ-տում:

Վագոնի պատուհանից դուրս եմ նայում դաշ-տին,— նա որորվում, բացվում, փակվում, ծավալ-վում է ծովի պես, վազում գնացքի հետ ու պտտվում:

Իսկ յերկնքում լայնաթև ճախրում է Արագածը իր տիեզերական արծվենի պարը:

Գինով ես դառնում ճամբի որորից: Նիրհ է դա-լիս աչքերիդ, և յերազ:

Վագոնում չորս կողմս նստած է մի նախիջեվան-ցի, կողքին՝ կինը, յերազկոտ ու տեսլապաշտ արևելքը— տաս տարեկան աղջիկը, փթթած դարնան ծաղիկ: Մի քիչ հեռու—մի աղրբեջանցի կոմյերիտական՝ կարտուզով: Հարևան դարակի վրա ծալապատիկ է արել մի պարսկաստանցի Նաբուզոդոնոսոր, սևսաթ խուճուճ ասորի: Ահա և նույն տեղից մի իսրայել, մերուքը՝ սարից գահավիժվող ճերմակ գլետչեր:

Հետևյալ կուպեյում խռնված են կարմիր բանա-կայինները, կալմեջ են արել մի չիրակեցի արծաթ ծերուկի: Խոսեցնում են ու իրար աչքով անում:

— Ասել է՝ լավ-լավ ես, բիձա:

Աչխույժ բիձան դրստվեց տեղում ու գլուխը ցցեց ոքլորի պես:

— Լավ, աղի պես։
— Վա՛յ, ասել է բուրժույ ես։
— Վո՞վ...
Ծերուկն այստեղ ցցած գլուխը սրեց դեպի խոսակիցը.
— Վո՞վ է բուրժույը...
— Բա ի՞նչ, վոր ասում ես աղա յես, դե են ա նոքար էլ կունենաս։ Ներանք կաշխատեն, դու կուտես։
Աքլորակռիվը տաքացավ։
— Ծո, դուք ո՞ւմ կուռեցնեք։ Սաղ ըլեն ձեռքերս— ինչի՞ պիտի էմ գործս ուրիշին տամ։ Գեղովի կհերկեմ, կցանեմ, կքաղեմ, գեղովի կուտեմ։ Ցես հոգի աղեն եմ, դութանի աղեն։
— Մաշալլահ, բիձա, մաշալլահ, ե, ձեռքդ զոռ ունի՞, բանո՞ւմ է։
— Լաա՛վ։ Ճանկս հող չընկնի։ Վոր ընկավ, կդողացնեմ։ Ա՛յ ողուլ, աշխարհքը կշտացնողը մենք չե՞նք։ Քեֆիդ աշե։
Բանակայինները ծիծաղեցին։ Բայց ուզում են խոսացնել։ Զարահճիությունները բռնել է։
— Ասել է՝ դրությունդ լավ է։
— Եե՛ֆ։ Լաա՛վ։ Մեկ աշխարք էլ խաղաղություն ընկներ՝ ամեն բան կթամամեր։
— Մեր աշխարհը խաղաղ է, բիձա։
— Հըլբըթ։ Ցես ուրիշ աշխարքը կսեմ։ Թե չե քանի են մարդը ենտեղ կայնած է՝ մեր աշխարքը խաղաղ, անխախտ կա ու կմնա։
— Ո՞վ, ի՞նչ մարդ է։
— Լենինը։
— Լենի՞նը։
— Ինքը Լենինը։ Էլ վո՞վ։ Կայնել է սարի պես ու աշխարքին մտիկ կուտա։ Եսոր քաղաքն եր, ման կուգար։
— Ո՞վ։
— Լենինը։
— Ուրիշը կլինի, բիձա։

Բիձան անկեղծ ու ճշմարիտ ձայնով կրկնեց.
— Ծը՛, Լենինը ինքը։
— Դու քո աչքո՞վ տեսար։
— Ջանըմ, ինդլիզի թագավո՞ր է, ինչ է, վոր չտեսնեմ։ Մեզի պես հասարակ մարդ է։ Ենքան եմ տեսե՛լ։
— Բանակային, բանվոր կլինի տեսածդ, բիձա։
— Ջե, ջանըմ, ինքը Լենինն է, աչք չունի՞մ, ինչ է։ Են որը նստանք, խոսանք, խոսանք, շատ բան ասավ։
— Ի՞նչ ասաց։
—Են, ինչ որ ասավ՝ են սրտից դուրս եկավ, մոտավ իմ սիրտը։ Ենտեղ իմացա, վոր Լենինն է։ Կրակ մարդ է, մարդ չե։
Բանակայինները կոտրած ժպիտներով նայում են։ Նայում եմ և յես։
Խե՞նթ է, ի՞նչ է։ Թե պարծենալու համար հնարում է։ Գուցե թյուրիմաց յերևակայություն։
Բայց նրա աչքերը փայլում են ճշմարիտ մտքի նշույլներով։ Նա նայում է մարդարեյի պես։ Նա հափշտակված է ինչ-վոր տեսիլով։ Նայում է, տեսնում ինչ-վոր իրականության մեջ մի պատկեր, վոր չը՝ պատողները դեռ չեն տեսնում։ Նրա կատեգորիկ տոնը, նրա ասածի ֆանտաստիկան ժպիտ է ծնում, բայց նրա աչքերը խորապես համոզում են։ Նա տեսել է իրան—Լենինին։
—Են որերը խարար որ եկավ, թե Լենինը գալիս է, կրակների մեջ եյինք։ Դառն ու դաժան ժամանակեր։ Իրար կուտեյինք։ Եկավ Լենինը, արծվի պես թռցրեց աշխարքը, հանեց լուսը։
Բանակայիններն էլ աչքով չեյին անում։ Ծերուկը «տեսել» եր Լենինին, ծերուկը «նստել-խոսել» եր Լենինի հետ։
Դիմացի աղբրեջանցին սարքեց իր չայամանը, լցրեց թեյը դինու բաժակի մեջ ու սկսեց խմել—վո՛չ—ծանր խոհ վայելել վաղորդյան թեյը։

— Ո՞ւր ես գնում, քիրվա,— հարցրեց մեկն իմ կողքին նստածներից:

— Վաթան:

— Վո՞րտեղ է վաթանը:

— Նախիջևանի մհալում: Քանդվեց են ժամանակ: Բաղու գնացի: Հիմի գնամ, մի ամիս մնամ:

— Բա ասում ես քանդվեց գեղը:

— Լենինը չինում է:

— Լենինը՞:

— Հա, խաբար եկավ, թե ենտեղ է:

Խոսակիցս ինձ է մոտիկ տալիս զարմացած ու թագուն ժպտալով:

Աղբրեջանցին լուրջ է արձանի պես:

— Լենինին ճանաչո՞ւմ ես, քիրվա:

— Լենինին լավը յես եմ ճանաչում:

— Դու ի՞նչ մարդ ես:

— Արաբոչի:

Արաբոչի— դա ի՞նչ բան է:

— Արաբոչի: Կա՝ բիրժավոյ, կա արաբոչի*): Ցես արաբոչի, Բաղու: Առաջ բաղմանչի եյի: Գնում եմ գյուղ, հիվանդ եմ: Ելի գնալու յեմ Բաղու:

— Վո՞րտեղ ես տեսել Լենինին, քիրվա:

— Բաղու, Բալախանի:

Ու շատ համոզված նայում է հատակին:

— Ցեկավ Լենինը, հավաքեց բոլոր արաբոչիներին ու ասաց, վոր եկ սրանից դենը խան ու սուլթան չիա, բիրժավոյ չիա: Հիմի խանը՝ ռահաթն է, արաբոչին:

— Ի՞նչ տեսակ մարդ է Լենինը:

Աղբրեջանցին վեր նայեց, մոտիկ տվեց խոսակցի աչքերին:

— Արաբոչի յե, ա՛յ, եսպես մարդ է, վոնց վոր յես:

Ձեռը դրեց սրտին:

---

*) Այսինքն՝ ռաբոչի—բանվոր:

— Դարվիշ մարդ է Լենինը, խաս դարվիշ: Սաղ Հնդստան, Բաղդադ, Ֆարսիստան, Չինամաչին մանե յեկել, աչխարքի Ֆուխարային տեսել է: Հիմի Նախիջևան է:

Ու ծխում է մտախոհ:

— Լենինը մահացած է, քիրվա:

Թեթև իրոնիան դծվեց Թուրքի շուրթերի անկյուններում:

— Լենի՞նը... Չհավատաս: Քանի աչխարքը կա, Լենինը կլինի՛:

Ու նայում է խոսակցին՝ ուղիղ աչքերի մեջ: Հանդիմանում է կարծես:

«Ինչպես չի հասկանում այս հասարակ ճշմարտությունը»...

Ցերդում է Շիրակը վագոնների մեջ, խոսում, ծիծաղում, քահ-քահ խնդում— իսկ Շիրակի քամին փրփռում է պատուհաններում:

Ցերազում եմ:

Ո՞վ է սրանց տեսած Լենինը... Ո՞ւմ են տեսել սրանք, վոր այդպես խոր մտել է նրանց յերևակայության մեջ:

Հնարո՞ւմ են, հորինո՞ւմ:

Դղրդում է գնացքը Շիրակի դաշտում, որորվում, պարում են լեռները, շառաղունում է արևելքը և արևը բարձրացնում է իր վոսկեղեն սրերը:

Ցեվ այստեղ, ճամբին, մասսաների բանաստեղծը, թե՞ մասսաների ֆանտազիան հորինում, հյուսում է Լենինի եպոսը Լենինականի դաշտում:

(Գերմանիա)

ԼԵՆԻՆ

(Հատված)

Մտահոգ տանում ենք խաղաղված Լենինին։
Դադաղիդ մոտ, ահա, պատվո պահակ։
Ցեվ ամեն մի յերկրի բանվորների արյունը
Զարկերակների մեջ զարկում է խիստ արագ։
Բանվորների արյունը արագ է զարկում։
Քո անունով են յերդվում, ո՛, Լենին՝
Ցեվրոպայում, Ամերիկայում, Ասիայում,
Աֆրիկայում,
Հյուսիսում, Հարավում, Արևելքում և Արևմուտքում,
Ամբողջ աշխարհի չորս ցամաքներում,
Ամբողջ աշխարհի բոլոր կողմերում,
Հնչում է՝—Լենին,—
Ամենուրեք, ուր կան շահագործվող, ճնշվող,
Ամենուրեք, ուր կան թշվառացած, լկված,
անզգծ անպաշտպաններ.
Ամենուրեք, ուր կան իրենց հարկադրաբար
վաճառքի հանողներ,
Վորոնք վոր քաղցել են և մատնել իրարու...
Ամենուրեք, ուր վոր մարդիկ որորոցից
Ցենթակա յեն ստոր, ճորտի աշխատանքի,
Ամենուրեք, ուր վոր մարդիկ կրակում են
Իրենց ընկերների, յեղբայրների վրա...
Ամենուրեք, ուր վոր կյանք ստեղծողները չեն
Փրավել դեռևս իշխանությունն իրենց...
Ամեն մի ժողովուրդ ուղարկում է այսոր
Կարմիր մի դինվոր քո դերեզմանին, Լե՛նին,
Ցեվ ամեն մի կարմիր դինվորից աճում է
Հզորագոր մի Կարմիր բանակ, Լե՛նին։
Բանվորները հիշում են քեզ վոչ խոսքերով,

Բանվորները հոգնել են խոսքերից ավելորդ.
Բանվորները հիշում են քեզ գործով, Լե՛նին.
Առաջ, ո՛, Ռոտ Ֆրոնտ...
Լենին, միտքդ պարզ եր, հզկած, ինչպես բյուրեղ.
Զգաստ եր և խոնարհ,— Ցեվ այսպես ապրում ես՝
Բանվորական կովող բանակի սրտում և հոգում։
Բարեկամ՝ աշխարհի վողջ բանվորների,
Ընկեր Լենին.
Քո մտքերով նրանց ուղի յես ցույց տալիս.
Ձե՞ վոր միտքդ քեզ համար հզոր զենք եր։
Այսորվանից զենքը իրենց ձեռքերի մեջ՝
Հեռևում են քեզ միլիոն պրոլետարներ։
Հատարակ բանվորի հագուստը իր հագին՝
Պառկած է Լենինը դադաղում։
Կենդանի յե—նրա կոչը՝ ուղղած մեզ բոլորիս.
Դուք, յերկրագնդի ժողովուրդներ,
Փչե՛ք շղթաները։ Առա՛ջ։ Մա՛րշ։
Գերմանիա, առա՛ջ,
Աղատվի՛ր ճորտական լծից։
Խփի՛ր կարմիր թմբուկ.
Խփի՛ր կարմիր փող դու.
Մարտական ջոկատներ պրոլետարիատի,
Միացե՛ք։
Ատիճաններով յելե՛ք դեպի գործարանատերերի
Պալատները։
Նվաճեցե՛ք յերկիրը,
Նվաճեցե՛ք մաշինները,
Նվաճեցե՛ք ֆաբրիկները,
Նվաճեցե՛ք ձեր հայրենիքը,
Նվաճեցե՛ք, վերջապես, վողջ աշխարհը։
Քո լուությունը, մեռած Լենին,
Մեռյալի անմռունչ լուությունը չե...
Վո՛չ, դա հրաման է, դա կոչ է դեպի կռիվ.
Բանվորական մասսաներ վողջ յերկրների,
Սեղմեցեք շարքերը։
Կուռ շարքերով, դեպի առա՛ջ, մա՛րշ։

ՆԱՑԻՐԻ ՉԱՐՑԱՆ

ԼԵՆԻՆ

(Հատված «Ստալին» պոեմից)։

1

Կրեմլի անքուն սրբահներում տաղնապ է, տոթ,
յեռուղեռ։
Հեռախոսները զիլ զանգում են անդադար վողջ գիշեր։
Քարտեզի դեմ կանգնած է նա, Իլյիչը,—լուռ ու
լարված,
Հեռագրական համբավներով ու հարցերով
պաշարված։
Հաղթական յելք է նա փնտռում, այրվում անխոնջ,
անբսպառ՝
Շողացնելով ճակատն ինչպես հսկայական մի լամպար։
Լուսարձակներն իր հանճարի նետելով մոտ ու
հեռուն՝
Պրոլետեցնում է դեպքերի քառասային գիշերում,
Անվերջ գրծում է քառասում հազար ուղի, հազար գիծ.
Լենինը յելք է վորոնում որհասական ողակից։
Արևմուտքում—այնտեղ, չքնաղ Ուկրայնայի
դաշտերում
Գերմանական սովալլյուկ յերկաթե գայլն է վոռնում,
Հոշոտելով քաղաք ու գյուղ՝ անցնում է նա անողոք,
Մինչև հանքերը Դոնբասի ,մինչև Ռոստով,
Տագանրոգ,
Արյունկրզակ լիզում է նա յերկրի հյութերն
անընդհատ,

Դուրս է տանում վագոններով ցորեն ու ճարպ ու
յերկաթ։
Արևելքում Կոլչակն է բիրտ իր խաժամուժ գնդերով,
Չեխոսլովակների հորդան է մոլորված ու խրոով,
Խզված է լայնարձակ Սիբիրը Մոսկվայից, Պետերից
Իր հացառատ ավաններով, արոտներով հյութալից։
Իսկ հարավում, դանդաղ Դոնի ըստեղներում
անսահման
Կոզակներին է դրդրդրում Կրասնովը՝ նենգ ատաման,
Զինում նրբանց ոտարերկրյա խոստումներով ու
տանկով,—
Նա Ռուսաստանը վաճառում է Ֆրանսական
Ֆրանկով։
Գիշատիչներն են լող տալիս Հյուսիսային ովկիանում,
Բրիտանական գայլաձկներն այնտեղ դեսանտ են
հանում։—
Արևելքից, արևմուտքից և հյուսիսից, հարավից
Նրբանք խուժում են՝ վոռնալով արյան, վոսկու
ծարավից։
Ամեն կողմից ռազմաճակատ, ինչպես հրբե մի ողակ,
Յերկինք հասնող հրդեհներում խեղդվում են գյուղ ու
քաղաք։
Անդուլ սեղմում է թշնամին և նոր ուժեր հավաքում
Յեվ մրտածում է Առաջնորդն այդ կրրակե ողակում.
«Նորից մտել ենք պատերազմ, հոգնած և մերկ և
անհաց,
Յեվ բախտը հեղափոխության նրբա յելքից է
կախված»։
Լենինը յելք է վորոնում, հաղթանակի ճանապարհ՝
Շողացնելով ճակատն ինչպես հսկայական մի լամպար։

2

Անդուլ սեղմում է թշնամին ողակը ժանտ։
Իսկ ներսից՝
Մենշևիկները, եսերները թշնամուն գաշնակից,

Ցեվ «ձախեր»-ի վոհմակը նենգ, և նա, մատնիչը, Հուդան—
Խորխորատներ են պատրաստում անիվի տակ պատմության:
Նրանք ճրչում են ջղաձգ միտինգներում, փողոցում,
Հանուն Մարքսի, հայրենիքի նենգաբար կուրծք են ծեծում,
Ու վաճառում իրենց յերկիրն, իրենց պատիվն ու հոգին:
Նրանք խփում են թույլ տեղին և սաբոտաժ են անում,
Դարան մրտած՝ հայրենասեր հերոսներին ըսպանում,
Ցեվ Մոսկվայում, Սամարայում, Սարատովում, Ռիբինսկում,
Ցերկրի բոլոր կենտրոններում, յերկրի սրտում ու կրծքում
Ոռովարար իրենց խուժանն են կուտակում տենդագին՝
Ձեռք մեկնելով դահիճներին՝ Կրասնովին, Կոլչակին,
Դրսից վոսոխ, ներսից վոսոխ, չանտաժ ու դավ ու վոճիր,
Ճակատներից ամեն վայրկյան գուժում է նոր հեռագիր,
Դեպք է դալիս դեպքի վրա, վրտանգի հետ նոր վրտանգ,
Դրդրդում են դեպքերն ահեղ, կործանարար վորպես տանկ:
Նա մերթ նայում է քարտեզին, հեռախոսին մոտենում,
Ու մերթ քայլում է ժպտալով, ձեռքը պահած դրպանում,
Ըստորագրում է դեկրետներ, դրրություններ ընթացիկ,
Բայց նրա կամքը վիթխարի մի աղեղի նման ձիգ՝

Լարված է նույն նրպատակին, իր թիրախին է նայում,
Փընտռում է վրճռական ողակը դեպքերի շրղթայում,
Այն ողակը, վորից բռնած վորպես կամքի մի տիտան՝
Նա նոր ընթացք ու հուն տրվեց հազարամյա պատմության:
Ինչպես այն դետը հորդաջուր, դեպի ովկիան հոսելիս,
Ցերբ վոր հանկարծ յերկրաշարժից լեռները փուլ են դալիս
Ցեվ նրրա հունը խանդարում,— ուռչում է բուռն, անդադար,
Ու լեռան կուրծքը պատռելով բացում է նոր ճանապարհ,—
Այնպես Լենինն է կուտակվել, ահագնացել, վարարել՝
Նրրա համար չրկա վիճակ անհուսալի և անել:
Միտքը փորում է անդադար մի նոր ընթացք, ուղեղիծ—
Լենինը յելք է վորոնում որհասական ողակից:

3

Բայց ի՞նչ են իմպերիալիզմի տանկերը դոռ, համարձակ,
Ցեվ ցարական դեներալները՝ Կորնիլով ու Կոլչակ,
Մենշևիկյան, եսերական դավերը նենդ, այլանդակ,
Վոր մկների նման փորում են վիթխարի լեռան տակ—
Ի՞նչ է նրանց մահվան դալարքը մոլեգին և չփերթ,
Ցերբ նրրանց դեմ կանգնած է լինքը—պատմությունն իրրև բերդ,
Ցերբ նրրանց դեմ կանգնած է լինքը—ժողովուրդ մի հզոր,
Լեռների պես անընկճելի, շղթաներով բյուրավոր:
Ձի՞ վոր նրրա շարքերի մեջ, միշտ նրրա հետ, միշտ առաջ,
Բոլշևիկներն են արշավում կորյունների նրման քաջ,

Վորոնք սովոր են սըրաթև դեպի արև սավառնել
Ու հայրենի հողի համար կռվել, հաղթել ու մեռնել:
Արդեն ռազմի ճակատներում կարմիր գընդերը խիզախ
Հաղթանակի, փառքի համբավ են տարածում աջ ու
ձախ.
Վորոշիլովը դոնբասյան բանվորների բըռունցքով
Գերմանական բանակների յերկաթե քիթն է փշրում,
Շչորսն է նետվում դեպ վոսոխ աքիլլեսյան
մոլուցքով՝
Գումաբտակները կոփելով մըշտաբորբոք մարտերում:
Այդ Շահումյանն է ծածանում Բաքվի վըրա
համարձակ
Նորհուրդների իշխանության բոսորափայլ դըրոշակ,
Այդ Զապաևն է սըլանում հողմի նըման մարտից
մարտ,
Վազում է փառքն իր առջևից իբրև ահեղ ավանդարդ,
Այդ ժողովուրդն է անընպատ, հավերժական վորպես
հող,
Թևավորված կոմունիզմի պատգամներով լուսաշող.
Ի՞նչ են նըրա հորձանքի դեմ գընդերը սև, ըսպիտակ,
Ժողովուրդը կպահպանի իր հայրենիքն՝ անխորտակ:
Բայց կա ուրիշ մի թըշնամի տանկից, դավից ել
ահեղ,
Հրեատանային թընդյուններից ու հըրդեհից խելահեղ.
Բըռնում է նա հերոսներին իր ժանտ, վոսկրոտ
մատներով,
Նըրա շնչից խամրում են կամք, խիզախություն ու
կորով,
Հըսկան ընկնում է ուժասպառ, հանճարի լույսը
հանգում,
Մայրը սիրած մանկան համար դառնում է գայլ
արնախում,
Նըրա շնչից թոշնում է սերն, այտերի վարդն ալ-
կըրակ,
Ծաղկափըթիթ դեղեցկուհին դառնում է դեչ մի
կմախք,

Հոգին դառնում է անապատ, մեռնում են իդեա ու
յերազ,
Կյանքի ծառից մարդիկ ընկնում են՝ չծաղկած,
դեռահաս...
Այդ սովն է, սովը սոսկալի—նա մոտեցել է արդեն,
Կանգնած է հեղափոխության, ժողովըրդի դեմ առ
դեմ,
Վոսկրոտ իր ձեռքը կարկառած քաղաքների
կոկորդին՝
Քայլում է նա և շողացնում իր ահավոր դերանդին.
Քայլում է նա և իրեն հետ մոլուցք ու կիրք է բերում,
Կըրճըտացնում է ատամներն անհուսալի հերթերում,
Կըրճըտացնում է ատամներն ու կատաղի նըվում.
«Հա՛ց»...
Իսկ հացն այնտեղ կուլակային ամբարներում է
թաղված:
Փթում է հացն ամբարներում կամ յերկրից դուրս է
հոսում,
Վոր դառնա փող ու ինդանոթ շուկաների քառսում:
Դըրսից վոսոխ, ներսից վոսոխ, սովը նըրանց
դաշնակից.
Լենինը յելք է վորոնում այդ յեռատակ ողակից:
«Հացն է ողակը վըճռական,— ժըպտում է նա
խորամանկ,—
Հացի համար կազմակերպել խաչակըրաց արշավանք»:
Մերկացըրած սըրի նըման միտքը շողում է գլխում
Յեվ նա վազրի մի վոստյունով դեպի սեղան է
մղվում:

4

«Կրասնովն ուզում է Ռուսիայից անջատել Դոն ու
Կուբան
Յեվ այդ մարդերը հացառատ հանձնել ոտար
պետության,
Զըրկել հացից մեր սովատանջ բանվորներին,
դյուղացուն:

Ժողկոմխորհը ժողովրդին դեպի պայքար է կոչում։
Կոչում է ձեզ դեպի պայքար՝ հանուն հացի ու
կյանքի,
Պետք է խլենք մեր հացն ու կյանքը պարազիտ
կուլակի,
Սպեկուլյանտի ճիրաններից—զենքի ուժով, անխընա։
Վոչ միայն հող ու գործարան, այլ հացն էլ պետք է
դառնա
Համայնական։ Պետք է մաքրել յերկաթուղու ամեն
գիծ
Զեխոսլովակ խուժաններից ու Կրասնովյան
վոհմակից։
Պետք է ստեղծել աշխատանքի հանգստավետ
մթնոլորտ,
Վոր բարիքով լցվի, աճի յերկիրը մեր կենսահորդ։
Թող բյուրավոր պրոլետարները Մոսկվայի, Պիտերի
Դաղմեն հացի գումարտակներ, գընան խորքերը
յերկրի,
Հետ խլեն հացը թալանչուց ու գիշամոլ կուլակից։
Վոչ հողը, վոչ իշխանությունը ու վոչ էլ հացը փրկիչ
Մենք չենք զիջի ժողովրդի դահիճներին արնախում։
Կրասնովն ու սովը ձեռք-ձեռքի յեն մոլեգնած
հարձակվում։
Մա՛հ յերկուսին, ի զե՛ն, Պիտե՛ր, ի զե՛ն, Կուբա՛ն,
Դո՛ն, ի զե՛ն»—
Զանգահարում է Ստալինին. կոչը պատրաստ է
արդեն։

5

Գալիս է նա սահուն, հանգիստ ու համաչափ
քայլերով,
Նույն ծրխամորճը շուրթերին, կարծես անհոգ,
անխրոով։
Իլյիչն ուրախ և անհամբեր դիմավորում է նրան—

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ և Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ Կարմիր գվարդիականների ճեմ, Սմոլնիում (1917 թ.)
Նկ. Գ. Պապիկի

Յեվ ըսկըսում է անմիջապես՝
— Սովը կանգնած է դրան։
Յեվ մո՛տ է չատ, չափազանց մո՛տ է կատաստրոֆն
տհռելի։
Ամավոր ծանրը մայիսից հետո կըդան ավելի,
Քան ծանրագույն հունիս, հուլիս և ոգոստոս։
Անկասկած,
Յերկրի վիճակը ծայրահեղ իրեն լարմանն է հասած...
Յեվ գուցե սա յե ճըգնաժամն ամենասուր ու դժվար։
Գալիս են դառըն փորձության դաժան որեր,
չարաթներ։
Յեթե այսոր վերջրենք նըրանց դիմադրությունն
անպատկառ,
Յեվ մինչև հունձ մեզ հաց ճարենք զենքի ուժով,
անեբեր—
Երդեն անհաղթ ենք...
Շեշտակի նա ժողովրդին է նայում։
Մի պահ տիրում է լրջություն Կրեմլի կըլոր
սըրահում։
Ծուխն է յելնում ծխամորճից բազմագալար խոհի
պես։
Ծըխի միջից յերկու հայացք, յերկու արծիվ
սըրատես
Իրար դիտում են, թափանցում ու կըռահում են
խիզախ,
Զատում ամեն մի խորություն, ցըրում ամեն
մթնշաղ։
Եւ բարձրանում է սիրտը ջերմ, ինչպես ալիքն
ովկիանում։
Մըտերմի ցո՞վ է այդ, արդյոք, թե հիացմունք է
անհուն.
Իլյիչը չա՞տ է գունատվել, կարծես հոգնած է,
հիվանդ...
Սակայն վոգին փթթում, ծաղկում է ինչպես հոգն
արդավանդ։
Ինչպես հստա՞կ է նա տեսնում հորիզոնները, հեռուն,

Ն. Ա. Մասլոյան

Ինչպես խիզախ է նա ճակատում ամենակուլ բոցերում,
Ինչպես տեսնո՞ւմ է պայքարի ամեն կեռման յելևեջ,
Կշռում է նա զաստակարդերն, տես առած ոտի մեջ:
Բայց ժամը չէ... և Թող լրեն ցավակցություն,
հիացում:
Յեվ Ստալինը մեղմ, զանգաղ իրեն կարծիքն է
հայտնում:
«Ձկան անել զբրուԹյուններ, իրոք վոր լավ է
ասված,
Հայն է ողակը հիմնական և կունենանք նաև հաց:
Դրրա համար մենք ույժ կտանք հարավային
ճակատին:
Պետք է հրզոր, հավատարիմ ձեռք ուղարկել
Յարիցին:
Յարիցինը գրավելով՝ նրանք Դոնից մինչ Ուրալ
Կմիանան ու կստեղծեն մեր դեմ ճակատ միացյալ,
Կառնեն հարավ ու Կասպ— անբավ այդ ամբարները
հացի,
Կը պաշարեն և զորքը մեր Հյուսիսային Կովկասի,
Հետո Դոնից մինչև Ուրալ մեկ ճակատով միաձույլ
Հարձակվեն Մոսկվայի վրա...
Վոչ, մենք անխոնջ և անդուլ
Պիտի կանգնենք Յարիցինի պաշտպանության
դիրքերում:
Հաղթանակի բախտը հիմա այնտեղ է լոկ վճռվում:
Յարիցինը պահել, մեռնել, բայց Յարիցինը չըտալ·
Այս կլինի մեր պայքարի նշանաբանն անայլայլ:
— Իրավացի՞ յեք...—
Աչխուժով Իլյիչը վեր է կենում
Ու սենյակում քայլում արագ՝ ձեռքը պահած
գրպանում:
Կարծես մի սիրտ է փոթորկվում յերկու հրզոր կրծքի
տակ,
Յերկու գլխով է լույս տալիս մեկ միաձույլ արեգակ:
Ինչպես վոր Մարքսը և Ենգելսը, դեռ իրար հետ
անծանոթ,

Վարանելով մարդկային ցեղը փրկելու բանալին,
Պայծառատես մտքի թևով հայտնվեցին իրար մոտ,
Այնպես հոգով իրար կանխում են միշտ Իլյիչն ու
Ստալին:

6

Ու մայիսի քսանիններին Ժողկոմների Խորհրդում
Լենինն արդեն այն պատմական վրկայականն է
կարդում.
«Ժողկոմխորհի անդամ ժողկոմ ընկեր Իոսիֆ Ստալին
Նշանակվում է դեկավար Ռուսաստանի հարավին՝
Յերկրին պարեն հայթայթելու: Ցեվ նա ունի
անսահման
Իրավունքներ: Ժողկոմխորհները մարզային,
տեղական,
Զոկատների պետերն ամեն և շտաբները նրրանց,
Յերկաթուղու կոմիտեներն ու վարչական ամեն անձ,
Ծովի, դետի առևտրական նավատորմները բոլոր,
Հեռագրական ու փոստային ամեն հիմնարկ, լիազոր,
Գարենային կոմիսարները— պարտավոր են, անշեղ,
Նրրա ամեն կարգադրությունը կատարել ամեն տեղ»:

Հունիս, 1918 թ., Մոսկվա-Գալիցին

ՆԱՏԻՐ ՉԱՐՅԱՆ

Լ Ե Ն Ի Ն

Վոչ, դու ապրում ես, առաջնո՛րդ,
Հավերժական, վորպես արև.
Հանճարդ, կյանքդ լուսահորդ
Վոչ մի վայրկյան չեն դադարել։

Մեզ հետ ես դու ամեն վայրկյան,
Արյան պես վառ ու կենդանի,
Յե՛վ հողմերում ատելության,
Յե՛վ հաղթական սիրո ժամին։

Մեզ հետ ես դու կյանքով նորոդ
Յերկրի նման չոչափելի։
Դու մահացած ես թվում լոկ
Տարեդարձի այս որերին։

Յեվ թվում է յերազ, կատակ,
Վոր դու, այդքան մեծ ու անհուն,
Տեղավորված ես Կրեմլի տակ
Մի մարմարե դամբարանում։

Վո՛չ, այդ միայն մի տրամաբանություն
Զեն է կյանքի քո հարատև.
Դու կաս Կրեմլից մինչև Մադրիդ,
Ու Բեռլինից մինչև՝ Տոկիո։

Քո անունով են գրոհում
Կոմունիզմի դնդերն անթիվ
Գվադարրամի ճակատներում,
Զավոդներում Լենինգրադի։

Մեր յերջանիկ հայրենիքի
Յուրաքանչյուր հարկի ներքո
Ու վանդակում ամեն կրծքի
Կա, վորպես չունչ, անունը քո։

Կաս դու մեր վառ մանուկների
Շարքերի մեջ ամեն վայրկյան,
Յե՛վ իբրև հասկ արտում բերրի,
Յե՛վ յերգերում գուսանական։

Դու կաս, քանի վոր քեզ նման
Քո զինակիցն է վառ չողում,
Ապրում ես դու Ստալինյան
Մեծ որենքի ամեն տողում։

Լենին, դու կյանք ես հարակեզ,
Դու պատմություն ես մարդկային,
Վոր շառաչում է գետի պես
Դեպի ովկյանն ապագայի։

Յեվ քանի դեռ կանգ չի առել
Կյանքի ընթացքը կենսահորդ,
Դու կփայլես վորպես արև,
Վորպես ուղի և առաջնորդ։

ՀԻՆԳ ՑԵՐԵԿ ՈՒ ԴԻՇԵՐ

Յեվ նախքան ծածկելը դամբարանում
Ալրոդ մարդկանցից՝ հավիտյան,
Դրեցին սյունազարդ դահլիճում
Հինգ ցերեկ ու գիշեր՝ նրան:

Հոսեցին ամբոխներ մարդկային,
Տանելով առջևից դրոշներ,
Վոր տեսնեն պրոֆիլը դեղին,
Կրծքի ալ նշանը, վոր ուներ:

Հոսեցին... իսկ Մոսկվայի վրա
Դաժան եր ցուրտը, ո՛, այնքան,
Կարծես թե նա տարավ հետն իրա՝
Մասնիկները մեր ջերմության:

Յեվ Մոսկվան հինգ գիշեր չքնեց-
Պատճառը այն եր՝ քնեց նա,
Յեվ լուսինը շուրջով, տրամերես՝
Պատվո լուռ պահակ եր վրան:

ՅԵՐԳ ՅԵՐԴՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Հիշում ենք մենք որերի մեջ մի տխուր որ.
Եբցունքի պես ձյունն եր ինչում ջինջ ու մաքուր.
Այն մեծ յերկրում՝ անծայրածիր, ձյունաթափով՝
Ամենամեծ, խմաստնադույն մարդը մեռավ:

Սառեպներում մոլեգնում եր բուքը վայրի,
Ձյունն եր դիզվում, սառնամանիքն ահեղ ճայթում.
Իսկ Մոսկվայում
Հրաժեշտ տալով վեհ հանճարին և ընկերին,
Ստալինը ուխտ կատարեց, տվեց յերդում:

Յեվ տեսնում ենք՝ մենք վկաներս այս մեծ որվա,
Վոր յերդումն այս կենդանի յե և հաստատուն.
Վոր դործ դարձան խոսքերն այս պարզ և հեռատես,
Պատմության մեջ մտան, վորպես խմաստություն:

Կյանքը ծաղկեց դործարանում և դաշտերում,
Ալեվալից և պողաճոխ, ինչպես պարտեզ.
Դիշեր-ցերեկ պահակներում, պատնեշներին
Մարտիկներն Հայրենիքի կանգնել են վեռ:

Ստալինը մեզ տանում է հաղթանակի,
Ժողովուրդը խմբվել է շուրջը նրա.
Նա յերդվեց. մենք ել նրան տվինք յերդում.
Մենք նրա մեջ մեր Լենինին ճանաչեցինք.
Մեծ Լենինը Ստալինի մեջն է ապրում:

ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ապրում էր, ինչպես հասարակ մի մարդ,
Վորպես սեագործ բանվոր — պրոլետար,
Մատաղուցդ դեմքով, տեսքով բոցազարդ,
Լենին էր նրա անունը պայծառ:

Նա յելավ, աճեց շարքերից մեր կուռ,
Լեռան գլխի պես, բարձրացավ նա վեր,
Կանգնեցինք նրա շուրջը մարտերում,
Ինչպես ամրակուռ, վեհ ապառաժներ:

Յեվ մենք հանձնեցինք մեր բախտը նրան,
Նա առաջնորդ էր, անդին դեկավար,
Մեկտեղ, միասին մենք նրա նման
Հին աշխարհի դեմ մղեցինք պայքար:

Մենք նրա խոսքը լսել ենք ընդմիշտ,
Բոլորս գիտենք նրա խոսքն անդին.—
Մեր շարքերը կուռ պիտ լինեն զրանիտ,
Ամրոցը ներսից չպետք է քանդվի:

Յեվ մենք հանձնեցինք մեր բախտը նրան,
Նա առաջնորդ էր, անդին դեկավար,
Մեկտեղ, միասին մենք նրա նման
Հին աշխարհի դեմ մղեցինք պայքար:

ՄԵՏԱՔՍԵ ՄԻ ԹԱՇԿԻՆԱԿ

Նստած եմ յես սեղանիս մոտ,
Աշխատում եմ, գիշեր է ուշ,
Մեկ էլ տեսնեմ մեր Գուլշենը,
Դուռը բացեց՝ յեկավ զգուշ:

«Գրո՞ւմ ես դու, իմ մտերիմ,
Հայացքը քո՝ կրակի բոց,
Ո՞ւմ մասին ես այդպես գրում,
Ասելո՞ւ ես դու ինձ, թե վոչ:

Շա՛տ եմ ուզում յես իմանալ
Ո՞վ է հերոսը գովական,
Կարդա, լսեմ յերգը զուլալ,
Իմ մտերիմ, իմ բարեկամ»:

Գուլշեն աղջիկ է անուշում,
Սիրտը նրա յերկինք է վառ,
Նրան մերժել յես չեմ ուզում,
Ու կարդացի յերգս պայծառ.

«Մենք թշնամուն ջախջախեցինք,
Լուսե նոր կյանք ենք կառուցում,
Թշվառներին տալիս ենք խինդ,
Պայքարի ձև ու հնացում:

Լենինը չի մեռել, Գուլշեն,
Նա ապրում է ամեն սրտում,
Յերկիրը մեր այս հոյաշեն
Դեպի առաջ է նա տանում:

«Յերդն, իհարկե, ուրա՞խ բան է,—
Ասաց Գուլչեն խոր հուզմունքով,—
Բայց այն, ինչ վոր լոկ յես ունեմ,
Աշխարհ արժե՝ վոսկով լի ծով»:

Հետո Գուլչեն ասաց՝ «Դե առ
Յրտով հյուսած իմ թաշկինակ».
Զորս ծոպերը բոց եյին վառ,
Ծալքերը հուր, անշեջ կրակ:

Թաշկինակը լավ եր հյուսված,
Վրան վոսկե հուր պատուտակ,
Յեվ Լենինն եր նուրբ նկարված,
Իր անաղարտ սիրով հստակ:

— Անունն ի՞նչ է,— հարցրի նրան:
Սրտի խորքից նա ասաց ինձ.
«Ում հիշատակն է սրբազան
Յեվ թանդ ամեն մարդու կյանքից:

Անմահ է միտքն առաջնորդի,
Պայծառ է նա պայծառներից,
Նվիրել ես յերդդ անգին
Նրա անմեռ հիշատակին:

Քանի՞ դիշեր մինչ արեգակ
Լուսացրել եմ՝ քունս կտրած,
Վոր Լենինի դեմքը վսեմ
Իմ մատներով հյուսած տեսնեմ»:

Յեվ թաշկինակն են աննման
Գուլչեն կրծքին սիրով սեղմեց,
Ապա հյուսվածքն այդ սրբազան
Իր նուրբ ձեռքով նա հարթուկեց:

ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻ

ՁՅԱՆ ՓԱԹԻԼՆԵՐ

Ամեն կածան, դաղանի հետք ու ճամբաներ
Ծածկեց ձյունով սուլող բուքն յերեկվա.
Յեվ թափվում են, թափվում հանդարտ
ձյան փաթիլները,
Ձյունով ծածկում լուռ յեղևնին մոտակա:

Քարացել է սառցե թախծով շղթայակապ,
Լռությունը խեղճ ու թշվառ դյուղերի,
Ահա նորից դեմս կանգնեց, ինչպես տագնապ,
Այն մահաշունչ որը տխուր, թախծալի:

Թվում եր, թե յերկրագունդն է չեղել ճամբան
Յեվ տիրել է վողջ աշխարհին սեվ խավար,
Սառն եր այնպես և հուսահատ շունչը ձմռան,
Վոր հեվում եր, տխուր վողբում դողահար:

Ձեմ մոռանա Գորկիի մոտ լացը մարդկանց,
Վոր Լենինի վերջին ճամբով քայլեցին,
Հաղարավոր դեմքեր թախծոտ ու տխրամած
Առաջնորդին, հրաժեշտ տալով, ողացին:

Ժապավենի պես ձգվեցին լայն հովիտում,
Ձյունաթմբից մինչ ձյունաթումբ՝ վշտով լի
Փաթիլ-փաթիլ վերից կամաց ձյունն եր
թափվում,
Ձյունն եր նստում ՄԵՆ ԼԵՆԻՆԻ դագաղին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԺԱՐՈՎ

ԼԵՆԻՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Լուռ շարքերում վոչ հառաչանք և վոչ արցունք,
Ցուրան է իջել և տներին, և դեմքերին, ինչ ցուրտ է,
ցուրտ:

Հետո խորին մի լռություն, մի լռություն...
Այն պատի պես բարձր է, անտես վիշտն արթուն:

Վիշտը մարդկանց այն պատի մոտ անհուն է, մեծ...
Ցեվ տագնապն է աճում, աճում լռության մեջ:

Բարեկամնե՛ր, մենք այդ տխուր դիշերներին,
Մեծ ու անհուն վիշտը տարանք մեր ուսերին...

Բյուր դեմքերին ցուրան է թառել—փրփուրի պես,
Ցեվ Շոպենի արցունքներով տագնապն հնչեց:

Հնչեց, պոռթկաց—սակայն հետո հանկարծ մարեց,
Բայց Շոպենյան տագնապն անգամ, ո՛, մերը չեր:

Մեր կսկիծին—սահման չկար՝ մորմոք ու ցավ,
Հանկարծ լացեց Վագները լուռ և տխրաձայն:

Որկեստրներն եյին լացում զայրույթով լի,
Թանձրանում եր բողոքը մեծ այն կորստի
անդառնալի:

Հպարտ, ազնիվ և հոգեմաչ, մեծ ու հզոր,
Ակկորդներում լսում եյի թախիծը խոր:

Ցեվ սարսուռից ցնցվեցի յես, յես զգացի,
Թե ինչպես եր կյանքը տրոփում դադարի մոտ:

Բարեկամնե՛ր, դիշերներին, ցերեկներին
Մենք մեծ ուժ ենք կրում հպարտ մեր ուսերին...

Այս նոր ու թարմ դերեզմանի, ամյունի մոտ
Մարքեր, ուժեր եյին ծնվում, խմբվում նոր-նոր:

Մենք հասկացանք յերջանկություն—ինչպես և նա,—
ինչպես մեռնել,
Ո՛, այդ մասին Վագներն անգամ դժվար յերգեր:

Նա մեր դարում դեռ չի ապրում, դեռ չի ծնվել,
Ով կարող եր դրա մասին յերգեր հյուսել...

ԼԵՆԻՆԸ

Հայրիկը մեր, Լենինը մեծ
Աշխարհը վորբ թողեց այսոր.
Մեր սրտերին ի՜նչ ցուրտ բերեց
Յեվ ի՜նչքան շատ մոքեր այսոր։

Գնաց անդարձ Լենինն անգին,
Մութը պատեց արեգակին,
Սեվ գետի պես վիշտն ահագին
Յերկրիս վրա հոլովեց այսոր։

Աշխարհը՝ նեղ, գիշերն՝ յերկար,
Խոր լռություն իջավ աշխարհ.
Լռության մեջ՝ քեզնով վարար,
Արտասվում է յերդը այսոր։

Նշենիներն այգիներում
Ալ ծաղիկներ են վար թափում,
Մեծ պաշտպանը աղքատ մարդուն,
Ավա՜ղ, չկա Լենինն այսոր։

Ե՛յ Սուլեյման, սիրտդ է արտում,
Յեվ ձեռներդ են վշտից դողում,
Խարույկներ են չորս դին վառվում,
Ի՜նչքան ցո՜ւրտ է, ցո՜ւրտ է այսոր։

ԾՈՎԸ ՀԱՌԱՋՈՒՄ ԵՐ

Ղրիմի թաթարերենից

Հինգ գիշեր, հինգ որ, հինգ որ ու գիշեր
Ծովն եր մոլեգնում, մռնչում անդուլ,
Ճերմակ փրփուրով, շիթերով պղտոր,
Ծառս եյին յելնում ալիքներն ահեղ
Յեվ զարկվելով ժայռերին հզոր,
Փշրվում եյին ու դառնում փոշի։

Հինգ գիշեր, հինգ որ, հինգ որ ու գիշեր
Հեծում եր ծովը, վոնց զառանցանքում.
Հանդարտվեց միայն վեցերորդ որում,
Ծածանվեց, ծփաց մանրիկ ծուփերով,
Կարծես՝ ծածկվել եր ճկան թեփերով։

Վեցերորդ որում, առավոտյան վաղ
Կարմիր կտուցով մի սև աղավնի
Մեր ափը յեկավ, գուժեց լուրը չար,—
«Փորկում Լենինը, Լենինը մեռավ»...

Նորից դալկադեմ իրիկնամտին
Մրրկահավերն ամեն կողմերից
Յեկան, ճչացին մութ ծովի վրա.
Գիշերը պայթեց փոթորիկն ուժգին,
Ջարդ-փշուր արավ նավակներ անթիվ,
Կոտրեց կայմերը շոգենավերի։

Մահվան խոր վշտով վառնում եր քամին
Ցարձր Յայլայի խավար կիրճերում,
Յեվ սոճիների մթին անտառում

Բոլանն եր փչում, և ձյունն հողմածեծ
Ծածկում եր ամեն շավիղ ու կածան
Յեվ խրճիթները հովիտների մեջ։
Յեվ ահեղ ձայնով մեռելաթաղման
Յերբ եր մոնչում — Լենինը մեռավ։

Շրջապատի մեջ՝ կապույտ-կապուտակ,
Մեռելի նման ջունատ, դաղդաղում,
Այու-դաղ լեռ՝ խոժոռ ու լռին
Լսում եր հողմի մռայլ վոգբերին.
Յեվ կանգնած եր նա՝ հզոր, ալեհեր,
Հավիտյան, ինչպես յերկիրն ու ովկյան։

Լենինն ել այդպես։ Մեր միլիոնավոր
Սրտերում, կյանքում, ասես, ովկյանում
Կանգնած է նա վեհ։ Յեվ հավերժ է նա՝
Սեգ Այու-դաղի գրանիտների պես։

ՎԵՇՈՒԴ ԳՐԻԳՈՐ

ԼԵՆԻՆԸ

Ժողովրդին է նա սիրել,
Մեր հերոս ընկեր Լենինը.
Ազատություն է ձեռք բերել
Սիրելի ընկեր Լենինը։

Նա հյուսիսից մինչի հարավ,
Ի՜նչ մեծ աշխատանքներ տարավ.
Ժողովրդին ազատ արավ
Մեր հերոս ընկեր Լենինը։

Մեր փակված աչքերը բացեց,
Մութ ու խավարից ազատեց,
Յերկիրը սավետ դարձրեց
Պաշտելի ընկեր Լենինը։

Նվաղում է Գրիգորը,
Արածներից ասեմ վո՞ր,
Լուսավորեց մեր սև որը
Մեր հերոս ընկեր Լենինը։

Լ Ե Ն Ի Ն

(Սարաթոչ դիվանի)

Հանճարեղ մեծ Լենինը մեր այս աշխարհին ճար դառավ,
Լենինը մեր այս աշխարհին ճար դառավ, հնար դառավ,
Այս աշխարհին ճար դառավ, հնար դառավ, հարմար դառավ,
Ճար դառավ, հնար դառավ, հարմար դառավ, պատճառ դառավ։
Պատճառները մատածեց և նա փրկության հույս տվավ,
Մատածեց և նա փրկության հույս տվավ, վառ լույս տվավ,
Նա փրկության հույս տվավ, վառ լույս տվավ, խրախույս տվավ,
Հույս տվավ, վառ լույս տվավ, խրախույս տվավ, նժար դառավ։
Նժար արդար բնական, նաև մատչելի նա արավ,
Բնական նաև մատչելի նա արավ, առաջ տարավ,
Ցեվ մատչելի նա արավ, առաջ տարավ, վեհ ու անդավ,
Նա արավ, առաջ տարավ, վեհ ու անդավ, լույս վառ դառավ։
Հուր լույսով նա, Վերդի, միշտ վառ կմնա առհավետ,
Նա, Վերդի, միշտ վառ կմնա առհավետ և այսուհետ,
Վառ կմնա առհավետ և այսուհետ, մինչ վերջին կետ,
Առհավետ և այսուհետ, մինչ վերջին կետ վարար դառավ։

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՍՏԱԼԻՆԸ

Մեծ Լենինը այս որերը դուշակեց,
Մարդկությանը լավ ծրագիր մշակեց.
Շատ տանջանք ու դառնություններ ճաշակեց,
Լույս ծրագիրը մեզի թողեց ու գնաց,
Իրան հավերժ անմահ անունը մնաց։

Բազում ազգեր մեկտեղ բերեց, միացրեց,
Գեն ու վոխը նրանց սրտից վերացրեց,
Ճնշված մարդկանց ազատեց ու լիացրեց,
Բարի, անմահ անուն թողեց ու գնաց,
Մեր սրտերում սեր ու հարգանքը մնաց։

Ահա մեր հայը Ստալինը ժրաջան,
Զար թշնամյաց ջնջեց արեց ցիր ու ցան,
Մեր յերկիրը շինեց ծաղկած բուրաստան,
Կեցցե՛ Ստալինը իր ընկերներով,
Կեցցե՛ սավետը իր ժողովրդով։

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Այն դամբանի առաջ կանգնեցի յես յերկար,
Հոգիս տրտմութեամբ լի, սիրտս լեցուն հույզով,
Այն դամբանի վրա վայլուն ամեն մի քար
Վոզոզված եր վորքա՛ն թախիծով ու լույսով:

Յեվ այդ քարերի տակ՝ յերկրներից բերած,
Ղեկավարն եր ննջում մեր կռվի ու դարի,
Այն դամբանի առաջ իմ հայացքը մնաց
Մտերիմ ու ծանոթ մի հարազատ քարի:

Այդ իմ յերկրի քարն եր այն դամբանի վրա,
Բարաշարում կեցած պատգամավորը լուռ,
Ու սառել եր այնտեղ՝ հայացքի մեջ նրա
Յերկրիս յերախտապարտ համակրանքը անլուր:

Այդ իմ յերկրի քարն եր մտերիմ ու ծանոթ,
Վորպես հուղարկավոր, արցունքների նման,
Նա իմ յերկրի կողմից ցողում եր վիշտ, կարոտ՝
Այն մեծ ղեկավարի դամբանի վրա:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԼԵՆԻՆ–ԴՅՈՒՅԱԶՆԻ ԿՌԻՎԸ

(հատվածներ պոեմից)

ՀԱՄԲԱՎ ԱՌԱՋԻՆ

Կյանքն եր տխուր ինչպես սև ամպ, ինչպես ուռի վչտահար,
Սիրտը պարզ եր, լեզուն փակ եր, արև չկար, լույս չկար,
Գարնան սրտից արյուն կդար, յերբ գահ յելած փող ու ցար՝
Բևեռային գիշերվա պես՝ իշխում եյին դարից–դար.
Ու ցարի սև յերկնքի տակ՝ ժամանակն եր մտակուր,
Ժողովրդի գլխով կանցներ ինչպես սև չանթ, ինչպես թուր:—
Անգաստանը, չեն վոստանը՝ հարուստներին ու ցարին,
Մաղված սարը, ջուրն ու բարը՝ հարուստներին ու ցարին,
Վոսկու լեռը, ուղտի բեռը՝ հարուստներին ու ցարին,
Լույսն ու վարդը, կինն ու զարդը՝ հարուստներին ու ցարին,
Մարմար տունը, անուշ քունը՝ հարուստներին ու ցարին,
Զմրուխտ, գոհար, յերկինք ու սար՝ հարուստներին ու ցարին,
Բաց դուռ ու բախտ, յերգ ու դրախտ՝ հարուստներին ու ցարին,

Սրար–աշխարհ հարուստներին ու ցարին,
Աշխարհ դմակ, իրենք դանակ դիվային...

ՀԱՄԲԱՎ ՅԵՐԿՐՈՐԴ

1.

Ծնվեց յերկրում մի լույս–հավատ և անունը՝ բոլշևիկ,
Յեվ դուրս բղխեց, դարուն ցողեց ինչպես Բինդյուն անուշիկ,
Նրա ակունքն եր հրեղեն հսկա սիրտը Լենինի,—
Յեվ հաղթող եր կյանքը դյութող ինչպես ծով–լույսն արևի.
Յեվ ով սրտանց խմեր անանց լույս–աղբյուրից այդ ղուլալ՝
Սիրտը կռվի կրակ կառներ, միտքը՝ հավատ, դեմքը՝ փայլ,
Կյանքն ու կայքը աշխարհի հետ հանց մի խնձոր կաներ կես
Իր բոլշևիկ յեղբոր պես...

2.

Յեվ աշխարհի յոթ կողմերից ծարավ սրտերն հազար ու բյուր՝
Յելան, յեկան անմահական այդ աղբյուրից ջուր խմելու.
Յեվ խմեցին ու հագեցան, արբացան, բոցեր դարձան,
Վոր հրդեհեն բերդը ցարի,— մահն ու դահը անեն կործան...
Յեվ խմեցին, վոգի առան, սրեր առան, կրակ դառան,
Վոր աշխարհի կարգը փոխեն, կյանքով լցնեն հանդ ու մառան:
Ու գոռացին կարկտաբեր ամպի նման.
— «Մեր վոսկորին հասավ դանակն հարստի,

Ու չար սուրը նենդ ցարի,
Հաց ենք ուզում, հուրն է մարում մեր սրտի,
Բացեք դռներն ասաղերի.
Ել չենք ուզում դնալ կռիվ անտեղի,
Թափել արյուն անարատ:
Շատ ենք հոգնել, հովն ենք ուզում մայր հողի,
Հողն ենք ուզում մենք ազատ:
Մենք ուզում ենք յերկրին արքա չնստի.
Մեր վոսկորին հասավ դանակն հարստի»:

Այսպես կանչեց ով աղբյուրից ջուր խմեց,
Ով դյուցազնի հսկա սրտից հուր խմեց,
Ով անտուն եր,
Ով բանվոր եր—ով մշակ,
Յելավ, հորդեց ու ծածանեց դրոշակ:

ՀԱՄԲԱՎ ՅԵՐՐՈՐԴ

Իջավ աշուն, մշուշն իջավ, անտառ ու ծառ լղարեցին,
Թեվ ու թռչուն հարավ իջան ու դեռերը քիչ պաղեցին:
Դունատվեցին ծով ու դաշտեր, հազան յեղյամ, դուման ու մեգ,
Զյան չալմաներ դրին Ուրալ ու Կովկասյան լեռները սեգ,
Սակայն յելավ արևի պես Լենին–դյուցազն հազած զրահ,
Որը կարծես ամառ դարձավ, յերբ ձայն գցեց յերկրի վրա,
Ու Նևայից մինչև Վոլգա, ու մինչև Դոն, մինչև Զանգու
Նրա կայծակ ձայնը գնգաց մինչ աշխարհի ափերն հեռու:

— «Ով գարերով սով է տեսել,
Ով կարիքի ծով է տեսել.
Յելեք, յեկեք՝ ով տուն չունի,

Ով անտուն է ու քուն չունի,
Ով հող չունի,
Ով փող չունի,
Ով հուր չունի,
Ով ջուր չունի,
Ով հաց չունի,
Ով լաց ունի.
Ով վոտքերին շղթա ունի,
Ու դուշմանն է դուշման ցարի
Ու նրա շուն հարուստների,
Ցելեք, յեկեք ու միասին
Շղթան գնենք նրանց վզին
Ու մեզ բերենք կյանք ու արև,
Ազատություն, կանաչ արև...»:

ԼԵՆԻՆԻ ԾԱՌԸ

1.

Մեր աշխարհում, մի ամառ,
Արևն այրում դաշտ ու ծառ,
Ծիծաղում եր յերկնքում
Ու յերկիրը վողջ դրկում:
Նրա բոցում չնչի տակ
Աղբյուր, առու և առվակ
Շոգում եյին, պապանձում
Ցեվ ծովերին նախանձում:
Հովիվները վար փախել,
Հոտերն եյին մակաղել
Զով խորշերում ձորերի,
Ուր ջրերը մեծ գետի
Ժպիտ տալով տերևին՝
Ծաղրում եյին արևին:
Բայց հեռավոր մի ճամբի
Կարոտել եր թուխ ամպի
Պաղ անձրևին ջինջ ու հորդ
Շոգից հոգնած մի ճամբորդ:

2.

Ճամբին գետյուռ չեր խաղում,
Սոսկ արևն եր չոգչոգում,
Շուրջը, հեռվում, ամեն տեղ
Կատաղում եր չոգն ահեղ:
Բայց ճամբորդը չեր լալիս,

Զով սամեր եր ման դալիս,
Ու չեր գտնում վոչ մի տեղ,
Ուր չհեվար չոգն ահեղ.
Ճամբին փոշոտ ու անծայր
Չեր սոսափում վոչ մի ծառ,
Վոր կռնար, հով աներ,
Շոգը սրտից դուրս հաներ.
Չեր յերևում գյուղն հեռու,
Չկար ցամաք մի առու...
Կամ սամերոտ մի ժեռ քար՝
Վորի չքին հովանար:

3.

«Թե հանդիպեմ անտառի,
Կամ սամերոտ մի ծառի...
Ախտ ե այրում չոգը չատ».
Ասաց ճամբորդն անվհատ,
Քայլեց նորից դաշտերով,
Վեր բարձրացավ մի սարով
Իջավ հովիտ մի չքնաղ,
Դեմքին գարկեց հովը պաղ,
Բայց ամենից դյութական՝
Զարդարում եր հին ճամբան
Տերևախիտ մի նոր ծառ՝
Շուքը թավիչ, չունչը՝ սառ,
Վոր ճամբորդին կախարդեց
Ցեվ նա պարկը ցած դրեց,
Հանդիստ առավ ծառի տակ՝
Շուքը վրեն զով վերմակ:
«Սիրաս իջավ, հովացավ,
Քամին վրաս ծով դարձավ,
Թոչնել եյի այն չոգից,
Ջահելացա յես նորից,—
Թող յոթ կյանքով անտառի
Ապրի տնկողն այս ծառի»,—

Ասաց ճամբորդն հովացած,
Մեկ ել բերից իջավ ցած,
Գառների հոտն հովվի հետ
Մտավ ձորը ծաղկավետ.
Ու ճամբորդը ձայն տվեց,
Ձայնը ձորում զողանջեց,
Թե՝ հե՛յ, հովիվ բարեկամ,
Կանգնիր սրտանց մի հարց տամ.
«Սարի մարդ ես, կիմանաս,
Ո՞վ ե տնկել այս ծառը,
Վորից չոգն ու ամառը
Կարծես քաշվում, վախենում,
Ու հեռու յեն միշտ մնում,—
Ծառն ել խոնարհ՝ միշտ դեռին՝
Հովն ե փռում անցորդին,
Զով ե տալիս ու կանչում,
Տարին բոլոր կանաչում»...
Ցեվ հովիվը ձեռն այտին
Այսպես ասաց անցորդին.
«Դա են ծառն ե Լենինի,
Վոր աշխարհին հով կանի,
Շոգած սրտին հով կտա,
Մեծ Լենինի ծառն ե դա,
Նա յե տնկել, վոր աճի,
Նրա ձեռքը կանաչի»:
Լռեց հովիվն ու գնաց
Ցեվ ճամբորդը չընչաց՝
«Թող յոթ կյանքով անտառի
Ապրի տնկողն այս ծառի»:

Ա. ԲԱԶԻ

ԻՆՉՊԵՍ ՅԵՍ ՏԵՍԱ ԼԵՆԻՆԻՆ

Անցյալ յերեկոյան՝ յես, Կարենն ու Շուշիկը կարդում եյինք Լենինի մասին, նայում եյինք նրա պատկերները: Վճռեցինք պատի թերթում դրել «Լենինի մանկությունը» և պատկերներն ել կպցնել վերևը:

Հետո Շուշիկն ու Կարենը գնացին, յես մնացի մենակ: Թեպետ ուշ եր, բայց ելի չարունակեցի կարդալ:

Ներս յեկավ մայրս:

— Լեվոն, դե բավական է՝ կհոգնես, գնա քնի՛ր,— ասաց նա:

— Ա՛յ, իսկույն, մայրիկ, մի քիչ ել կարդամ, հետո կքնեմ:

Այսպես կարդում եյի, չլսելով մայրիկիս: Աչքերս կպչում եյին, բայց ելի չեյի պոկվում գրքից: Մի յերկու անգամ ննջեցի, դլուխս թափահարեցի, բայց ելի զարթնում եյի ու շարունակում կարդալը:

Հետո, հիշում եմ, լսեցի մայրիկիս ձայնը.

— Լեվոն, քնել ե՞ս,— ասաց նա:

Ու մեկ ել հիշում եմ, վոր մայրիկը զարթեցրեց ինձ, ու ձեռքիցս պինդ բռնելով, տարավ դեպի անկողինս:

Դրանից հետո ել միտս չի, թե ի՞նչպես հանվեցի ու պառկեցի: Միայն դիտեմ, վոր հանկարծ ընկա մի ուրիշ տեղ, չա՞տ հեռու տեղ...

... Իբրև նատեցի ոդանավ ու թռա դեպի Մոսկվա:

— Ո՞ւմ մոտ եք գնում,— հարցրեց ինձ մի մարդ, յերբ տեղ հասանք:

— Մեր մեծ ուսուցիչ Լենինի մոտ:

Ինձ իսկույն տարան Կրեմլ, Լենինի բնակարանը:

— Ա՛, Լեվոն, բարև,— ասաց Լենինը, մազերս շոյելով. այդ ի՞նչպես ես յեկել:

— Ոդանավով եմ թռել...

— Ոհո՛, ի՛նչ քաջն ես յեղել...իսկ ընկերներիդ՝ Կարենին ու Շուշիկին բերել ե՞ս հետդ:

— Չե՛, նրանց իմաց չեմ արել:

— Մյուս անգամ վոր դաս, հետդ կբերես: Դե՛, քաջ Լեվոն, պատմիր տեսնենք, ինչ կա ձեզ մոտ:

Ցես սկսեցի պատմել մեր հոկտեմբերիկների մասին:

— Լավ եք սովորո՞ւմ, իրար ոգնո՞ւմ եք, հարցրեց նա:

— Այո, յես Շուշիկին եմ ոգնում, իսկ Կարենն ել ինձ է ոգնում...

— Իսկ դու, փոքրիկ Լեվոն, քաղցր բան սիրո՞ւմ ես. ուզում եմ քեզ մի տուփ կանֆետ ընծայել:

— Չե, չնորհակալ եմ — ասացի յես ու ամաչելուց կարմրեցի:

— Դե լավ, կուզե՞ս, հոկտեմբերիկի մի նախշուն շոր ընծայեմ:

— Չե՛, չե՛, չնորհակալ եմ...

— Բա ի՞նչ կուզես, Լեվոնի՛կ, մի ասա տեսնեմ:

— Ցես կուզեմ, քեռի Լենին, վոր դու դաս մեզ մոտ և միշտ մեզ հետ լինես:

— Այդպե՞ս... լա՛վ. քո խնդիրդ կկատարեմ. դու կգնաս՝ կասես քո ընկեր-հոկտեմբերիկներին,— յեթե նրանք լավ սովորեն, լավ ընկերներ լինեն, իրար սիրեն, իրար ոգնեն — յես միշտ ձեզ հետ կլինեմ... իմացա՞ր...

— Այո:

— Ուրեմն, Լեվոնիկ, ինչ վոր ասացի, չմոռանաս... իսկ այս գիրքն էլ քեզ ընծա.— այստեղ իմ պատկերներն են:

Ցես վերցրի գիրքն ու մնաս բարև տալով, դուրս յեկա: Նստեցի ոգանավ ու ճանապարհ ընկա: Մտքումս շարունակ կրկնում եյի Լենինի խոսքերը, վորպեսզի չմոռանամ:

Բայց մի տեսեք, ի՞նչ դժբախտություն պատահեց.— հենց վոր իջա ոգանավից, մոռացա Լենինի խոսքերը... Ա՜խ, ի՞նչ պիտի անեմ,— մտածում եյի յես.— ի՞նչ պիտի ասեմ իմ ընկերներին:

Այսպես տանջվում եյի ու շտապում դեպի տուն...

... Մեկ էլ հանկարծ աչքերս բաց արի, տեսնեմ՝ մայրիկը ձեռքը քսում է ճակատիս:

— Մայրիկ, յես վո՞ւրտեղ եմ:

— Մկը տանն ես, քո անկողնումը...

— Մի՞թե... բա են ի՞նչ ասաց Լենինը... մոռացել եմ մայրիկ, ձեռքդ էլի քսիր ճակատիս, կարելի յե հիշեմ...

— Հա՛, Լեվոնիկ, այդ ի՞նչ անհանգիստ եյիր քնած — ասաց մայրիկը. ի՞նչեր եյիր խոսում յերազում...

— Ի՞նչ եյի ասում, մայրիկ:

— Ասում եյիր ու կրկնում — յեթե դուք լավ հոկտեմբերիկներ լինեք, լավ սովորեք, լավ ընկերներ լինեք, միշտ իրար ոգնեք, յես ձեզ հետ կլինեմ...

— Վա՛յ, մայրիկ, հենց այդ խոսքերն են—ասացի յես, վեր թռչելով տեղիցս ու պինդ բռնելով մայրիկիս ձեռքը. դե՛, մեկ էլ ասա.

Մայրիկը նորից կրկնեց:

— Դե հիմա գրիր թղթի վրա:

Մայրիկը գրեց թղթի վրա Լենինի խոսքերը, իսկ յես շտապով հագնվեցի ու թուղթն առնելով, դուրս թռա տանից, գնացի Շուշիկի ու Կարենի մոտ, վոր յերազս պատմեմ:

ԴՈՒՐԳԵՆ ԳՈՐՑԱՆ

ԼԵՆԻՆ

Դիտում եմ կարոտով պատկերդ հարազատ,
Իմ հոգում ապրում ես ու կապրես առհավետ.
Լենինը չի՛ մեռել, Լենինը Թանկագին
Ապրո՛ւմ է, ընչո՛ւմ է միշտ մեզ հետ:

Հունվարյան այն որին, մեծ սիրտը աշխարհի
Անհատակ այն վշտից, յերբ մի պահ դադարեց,
Միլիոն մարդ, մեկի պես բարձրացավ այն ժամին,
Կարոտի յե՛րդ հյուսեց ու յերդեց.

Լենի՛ն, արե՛վ ես դու,
Լենի՛ն, անմա՛հ ես դու,
Դու անմար ու վա՛ռ ես
Մեր սրտում:

Արծրվի նման վե՛ս, արևի լույսի պես,
Դու մտար ամեն տուն, գործարան ու խրճիթ,
Դարերով ճնշվածին պայքարի կոչեցիր,
Շողացիր վոնց դրոշ արևվկեզ:

Ցեվ տարար դրոհի բանվորին, գյուղացուն,
Ափից-ափ, ամենուր քո ձայնը վորոտաց,
Ո՛, Լենի՛ն, քո վառած Հոկտեմբերն աշխարհում
Ավետեց մի չքնաղ լուսաբաց:

Հունվարյան այն որին, յերբ աշխարհն եր սգում,
Ցերը վիշտն եր համակել սրտերը բյուրավոր,
Ստալինը քո վսեմ տվեց քեզ մի յերդում,
Հիշո՛ւմ ենք այդ յերդումն ամեն որ.

— Ցերդվո՛ւմ ենք մեծ Լենին, պատդամդ կատարել,
Ընթանա՛լ քո դծած ուղիով անդադար,
Քո սնած յերկիրը լույսի պե՛ս պահպանել,
Ճակատին՝ անունդ բոցավառ:

Առաջ է սլանում ժամանակն անդադար,
Ցերկիրը դարձել է անթառամ մի այգի,
Ստալինյան արեվով կապե՛լ է նա կամար,
Դարձել է մի ովկիան բերկրանքի:

Միլիոն մարդ կառուցման, խնդության այս ժամին,
Ցերը յե՛րգն է ծավալվում մեր ազատ աշխարհում,
Թե ջահե՛լ, թե մանո՛ւկ, ալեզարդ ծերունի
Կրո՛ւմ են քեզ իրենց սրտերում:

Մոսկվայում հարազատ կա մի լույս դամբարան,
Ննջում է նա այնտեղ՝ Լե՛նինը մեր անմեռ,
Շողո՛ւմ է մեր սիրո, կարոտի հուրն անմար,
Ցեվ այսպես կշողա նա դարեր:

Կքայլեն սերունդներ ու կանցնեն դարերով,
Չի՛ լինի վոչ մի դա՛վ, վոչ մի ցա՛վ աշխարհում,
Կհորդի մեր խոսքը ովկիանի նման խոր,
Աստղերի լույսի պես անհատնում:

Շողո՛ւմ են սուտակե աստղերը Կրեմլի,
Ծնվում է այնտեղից արևը ամեն որ,
Փայլո՛ւմ է անհողդողդ ափերը Գալիքի
Ժողովո՛ւրդը անմահ և հզոր:

Թեվ առած Ստալինի յերկնի պես սիրուց խոր,
Ցերկիրը թնդո՛ւմ է մի յերգից լուսավառ,
— Լենինը չի՛ մեռել, Լենինը ամեն որ
Ապրում է, շնչում է միշտ մեզ հետ:

Լենի՛ն, արե՛վ ես դու,
Լենի՛ն, անմե՛ռ ես դու,
Դու անմար ու վա՛ռ ես
Մեր սրտում:



Վ. Ի. ԼԵՆԻՆԸ, Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ ԵՒ Կ. Ե. ՎՈՐՈՇԻԼՈՎԸ Ճառում ելույթ ունենալիս:
Դեկ. Գ. Գ. Գ.

ՀԱՄՀ-ՍՕՐ
Հ.Ա. Մասիսեան
Ա. Մեսրոպեան անվան

ԼԵՆԻՆՆ ԱՊՐՈՒՄ Է

1.

Մտածում էր լուռ՝ տխուր էր Լենան,
Ցերը վոր ներս մտավ աղջիկն հարևան:

Փոքր էյին նրանք — յոթ–ութ տարեկան՝
Ընկերուհիներ և լավ բարեկամ...

— Դու լա՞ց ես լինում... Ի՞նչ կա Լենա ջան,
Ու փարվեց նրան դանդրահեր Սեղան:

Զգացվեց Լենան և լցվեց կրկին,
Արցունքն աչքերից հոսեց հատակին:

Հեկեկում էր նա, պատմել էր ուզում,
Ձայնը չէր դալիս... չէր դառնում լեզուն:

— Քո ցավը տանեմ, ասա՛, Լենա ջան,
Ինչո՞ւ յես լալիս... Բա յես չիմանամ:

Գրկեցին իրար նրանք՝ տխուրաչ,
Ցերկու պիոներ—յերկու վառ կակաչ:

2.

Լենան Սեղայի ձիդն ընկավ լալով,
Իր անդուսպ վիշտը այսպես պատմելով.

— Վերջերս պապան, հաճախ էր տխրում,
Հոգնած տուն դալիս և տխուր գնում:

Այսոր տուն յեկավ հիվանդի նման,
Կարծես ինչ վոր վիշտ տանջում էր նրան...

Հեռախոսն հանկարծ զիլ զանգահարեց.
Հայրս շտապով դեպի նա վազեց...

Հավաքելով իր ուժերը վերջին,
Հեռախոսն հազիվ դրեց ականջին:

Մթնեցին աչքերն՝ չշնչաց... Լենի՞ն...
Հեռախոսափողն ընկավ սեղանին...

Դողացին ծունկերն իմ ծեր պապայի,
Ցերեկաց մի պահ — գլորվեց թախտին...

Ուզեցա իսկույն ջուր տանել դեմքին,
Նա աչքը բացեց, բռնեց ձեռքը իմ:

Հոսում եր առատ արտասուքն աչքից...
— ...Լենա՛ ջան...Լենինը գնաց աշխարհից...

— Այսոր նոր տեսա... Լենան հեկեկաց,
Վոր պապաս ունի արտասուք ու լաց:

Կանչեցին նրան: Նա գնաց Ցեկա,—
Գնաց: Ու մինչև հիմա նա չկա...

3.

Փարվեցին իրար, լաց յեղան յերկար,
Լենայի պապան մինչև տուն յեկավ:

Տխուր եր դարձյալ—հոգնած չափաղանց,
Բայց աղջիկներին նա այսպես ասաց.

— Լենինն չի մեռել, ապրում է, բալեք,
Ձեր սրտերումն է և ամենուրեք...

Լենինն ապրում է և կապրի ելի՝
Հակա կրծքի տակ Մեծ Ստալինի:

Գնացեք բալեք և լավ սովորեք,
Լենինն ապրում է և կապրի՛ հավետ:

Ա. ԲԱՐՏՈ

ՅԵՐԳ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Նրա մասին միշտ յերգում են
Ազատ վայրում ու բանտում.
Նրանք, վորոնք աշխատում են
Գործարանում ու հանքում:

Ճապոնացիք՝ ճապոներեն,
Լեհացիներ՝ լեհերեն,
Արաբացիք՝ արաբերեն,
Իսկ ռուսները՝ ռուսերեն:

Ցեվ իմացեք, վոր ամեն մի
Նրանց յերգած նոր յերգերում՝
Այլ տառերով բայց միշտ ու միշտ
Այս խոսքն է միշտ զրընգում:

Այդ խոսքն ասվում է—Լենին:
Դա շա՛տ մեծ խոսք է—Լենին...

Այդ մեծ խոսքը կիրգիզերեն
Հնչում է մոտ, հարազատ,
Այդ մեծ խոսքը գերմաներեն
Հիշեցնում է որն ազատ:

Իսկ մայիսի մեկին նրան
Վողջ յերկիրներն են յերգում.—
Լենին խոսքով՝ հեշտ է նրանց
Պայքար մղել աշխարհում:

Նրան յերգում է արաբն էլ,
Չինացին յերգում վառ:
Այդ խոսքովը հեշտ է կռվել
Մեծ Հոկտեմբերի համար:

Այդ խոսքն ասվում է—Լենին.
Դա շատ մեծ խոսք է—Լենին...

Ցեվ յերգում է նրան նեգրը,
Ցակուտն էլ, վոր ցուրտ բուքին
Լծել է իր յեղնիկները
Ու նստել է սահնակին:

Նրան յերգում են ամեն տեղ:
Ցակուտները՝ յակուտերեն,
Լամուտները՝ լամուտերեն,
Իսկ ռուսները՝ ռուսերեն:

Այդ խոսքն ասվում է—Լենին:
Դա շատ մեծ խոսք է—Լենին...

ԴԵՎՈՐԴ ԱՌՈՎ

(Ըստ Խաբախի)

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԼԻ-ՉԱՆԸ

1.

Պեկինում մարդիկ կան բոլոր տեղերից.
Պեկինում այնքան փողոցներ:
Փողոցում Լի-Չանը յերկար թափառեց.
Թափառեց կուլին գործազուրկ:

Ու հետո—դաշտերում... Վերահսկիչը չար
Ամեն որ ծեծում եր Լի-Չանին,
Այն որից, ինչ Լի-Չանը մշակ դարձավ,
Չթողին իր մեջքը դինջանա:

Դաշտերում, ուր բանում եր թեյը բուրավետ՝
Մի անդամ փրչեց տաք մի քամի
Ու թիկնեղ մի ճամբորդ կորցրեց դաշտերում
Մի կտոր թերթ լրագրի:

Հողնաբեկ ու ծեծված բանվորը վերցրեց
Ու կարդաց պատմությունը հուզիչ.
Մի յերկրում հիմա տեր, ղեկավար է դարձել
Վոչ ժանտ մանդարինը, այլ կուլին:

Ու այնտեղ տրորած այդ թերթի դեմքին,
Վոր ընկել եր դողդոջ ծունկերին,
Նկարված եր ավագը աղատ այն յերկրի,
Ուր դրված եր անունը—Լենին:

Ու թեյի դաշտերում կուլիները խղճուկ,
Այն որից՝ թե ցերեկ, թե գիշեր՝
Անհամար հեքիաթներ են հյուսում,
Թե Լենինը նրանց կհիշե։

Թե պիտի տապալվի մանդարինը։
Դաշտերից բերնձի ու թեյի
Լենինը—դեպի ըմբոստ Պեկինը—
Կկանչի բոլոր կուլիներին։

Ցերեկ արևի տակ։ Ցերեկ մտրակի տակ։
Իսկ մթին գիշերը բոլորած շրջան՝
Ցերկար յերազում են, շշնջում կամաց.
Թե ուր է Լենինը. Լենինը, Լենինը չեկավ...

Ու նայում են այդ հին
Տրորած թերթին,
Նրկարի աչքին կկոցուն,
Մտրակը մոռանում են, ու տարվում յերկար
Լրադրի այդ հին թերթերով։

2.

Վռնդվեց Լի-Զանը։
Կրկին ընկավ Պեկին.
Նա զսպում եր մաղձն իր։
Փողոցներն անթիվ են։ Ամբոխը՝ մի հեղեղ։
Լի-Զանին կրծում է քաղցը։

Ու հանկարծ...
Լսեց Լի-Զանը
Ճիչը լրագրավաճառի։
Ճչում հուզում եր հնչում։
«Մեռավ ամենամեծ բոլշևիկը.
«Ռուսաստանում,
«Լենինը
«Մեռավ...

Տատանվեց Լի-Զանը։ Լի-Զանը դունատվեց։
Ցեվ մթագնեցին աչքերը Լի-Զանի։
Լի-Զանը իջավ մի տան սանդուխքի,
Ու մշուշը իջավ Լի-Զանի աչքին։

Լենինը մեռավ։ Իսկ նրանք հապա.
Ի՞նչ անեն նրանք— կուլիները չին։
Ու մի՞թե անվերջ նրանց ուսերին
Գնդակն ու մտրակը պիտի շառաչեն։

Մեռավ Լենինը։ Նա, վոր թերթիկից
Աղոտամբուխյան նշանն եր տվել։
Ջեր լացել յերբեք Լի-Զանը մտրակից.
Իսկ այժմ—
Լի-Զանը դառն հեկեկաց։

3.

Դարձան, վոլորվեցին ամիսներ, շաբաթ,
Ու դարձավ Լի-Զանը ռիկշի—
Լի-Զանը մի դրաստ փոշեպատ—
Լի-Զանին ո՞վ ասես՝ չքշեց։

Պեկինում փողոցներ կան մաքուր։
Պեկինում կան տներ բարձրահարկ։
Կթողնե՞ն, վոր անցնի այն տեղով
Ռիկշու պես կեղտոտ մի ավանակ։
Լի-Զան,
Կողքի կեղտոտ փողոցներից կերթաս։
Վեց փթանոց կին ե քաշում Լի-Զան ռիկշին.
Վեց փթանոց մի կին՝
Հագին խաս ու կերպաս։
Կինը
Անճաը ռիկշուն
Ուր ուզեց կըքշի։

Ու Լի–Զանը քաշում է չլինքով,
Վորպես յեզ.
Նա հեզ է, անմռունչ...
Իսկ սրտում այն ճիչն եր ճըլընգում,
Թե՝ չկա այլևս Լենինը փրկիչ:
Բայց հանկարծ...
Դըղիրդ:
Վորոտ ու պայթյուններ:
Ու ցնցվեց Լի–Զանը:
Լի–Զանը կանգ առավ,
Յած նետեց ուսից՝ լուծը ծանրաբեռ...

Տեսնում է.
Անթիվ կուլիներ...
Փողոցով հոսում են նրա դեմ:
Տեսնում է.
Շողշողուն սուրեր ու սվիններ—
Սուել,
Ճոճում,
Պարպում են կուլիները մերկ:
Տեսնում է.
Զինատառ կարմիր դրոշներ:
Ու փողոցի լայնքով
Այդ բոլորի վրա
Գալիս է Լենինը.
Լենինը,
Այնպես,
Ինչպես այն թերթի տրորած դեմքին.
Աչքը կկոցում է Լենինը,
Կանչում է Լի–Զանին՝
— Յեկ...
Յեկ...
Ու մատը մեկնած
Նշում է վեր—
Դեպի թաղերը մաքուր ու մեղկ:

Ծալվում են ծունկերը Լի–Զանի,
Հուզմունքից ծնոտն է դողում,
— Վոչ վոքի, վոչինչ չգիջանել:
Հեղեղով ամեն ինչ վողողել:

Ու հեղեղը առավ Լի–Զանին:
Լի–Զանի թոքերը լայնացան—
Յնծաղեմ Յին–Զոն
Լի–Զանին
Յերկարեց փայլուն մի հրացան:

Նա տվեց պարկերով փամփուշտ,
Վարժեցրեց հրացան պարպելուն,
Ու հիմա մեր Լի–Զանը անհաշտ
Պայքարում է շքեղ Պեկինում:

ՈՒՄՆ Ե ՄՐՑԱՆԱԿԸ

Արամենց դպրոցը մեծ հողամաս ուներ և դպրոցական խորհուրդը վորոշել եր այդ հողի մի մասի վրա բանջարանոց չինել: Դպրոցի վոր խումբը, կամ վոր ողակը ամենից լավ մշակեր իր մարդը, նրան դպրոցական խորհուրդը մրցանակ պիտի տար:

Վարիչն ասում եր, վոր շատ լավ, շատ գեղեցիկ բան ե լինելու մրցանակը, բայց թե ի՞նչ — եդ վոչ վոք չգիտեր:

Արամը, Գոհարը. Պողոսն ու Սառան վորոշեցին ամեն միջոց գործ դնել, վորպեսզի մրցանակ ստանան:

— Գոհար ու Սառա, դուք փոքրիկ փոցխով հողը կմանրացնեք, կփափկացնեք, յես ու Պողոսն եկ մեր մարդի հետևից գոմաղբը կբերենք, լավ կպարարտացնենք, կարգադրեց Արամը:

— Բա ո՞ւր ա փոցխը, հարցրեց Գոհարը:

— Բա ինչո՞վ կբերենք, ասաց Պողոսը:

— Փոցխը... փոցխը... կմկմաց Արամը, փոցխն ընկեր Վահրամը (դպրոցի վարիչը) կտա, իսկ յեթե չտա, յես ու Պողոսը փեսից կշինենք, աղբն եկ յես ու Պողոսը մեր պատգարակով կբերենք,— հնարը գտավ նա:

Այնուհետև նրանց ողակը շարունակ ժողովներ եր անում, շարունակ մտածում եր իրենց մարդը լավ մշակելու մասին, շարունակ մտածում եր իրենց ստանալիք մրցանակի մասին, թե ի՞նչ ե լինելու:

— Ընկեր Վահրամ, վոր մեր մարդը ամենից լավը լինի, մրցանակը մեզ կտաս չե՞,—հարցնում ե Գոհարը, իր կլոր աչքերը չռելով:

— Մրցանակը ձեր ողակին կտրվի, բայց կպատկանի ձեր խմբին, վորովհետև ձեր ողակը ձեր խմբի մի մասն ե— ուրեմն դուք կոլեկտիվի մի կտորն եք:

— Ջա՜ն, ջա՜ն, մեր խումբն ու մեր ողակը մրցանակ կստանա,— ասում եյին յերեխաներն ու ավելի սիրով աշխատում:

Ամբողջ որը նրանք իրենց մարդի մոտ եյին—. հողը մաքրում, պարարտացնում եյին, աղը խառնում, բոլոր ստացած սերմերը մատով մեկ-մեկ ընտրում, լավերը թողնում ցանած ժամանակը շարունակ հետևում, քաղհանում, ջրում եյին:

Մայիսի 15-ին դպրոցական խորհուրդը չրջեց բոլոր մարդերը, խորհրդի անդամներն իրենց տետրերում նշանակում եյին, վոր հետո վորոշեյին, թե ո՞ւմ պետք ե մրցանակ տային: Բոլորը սրտատրոփ սպասում եյին:

Բոլորին հավաքեցին դպրոցի դահլիճը:

Ընկեր Վահրամն առաջ բացատրեց՝ թե ինչո՞ւ յեն մարդ չինում և ինչո՞ւ պետք ե լավ մշակեն, ու հետո հայտարարեց, վոր մրցանակը տարել ե յերկրորդ խումբը, և յերկրորդ խմբից Արամենց ողակը:

Իսկ մրցանակը մի փունջ լավ ու սիրուն վարդ.— վարդը մայիսի ծաղիկներից ամենալավն ե, վերջացրեց ընկ. Վահրամը:

Մեծ վարդափունջը դրված՝ յերկրորդեցիք վազեցին իրենց դասարանը:

— Ցեկեք բաժանենք, ասաց մեկը.

— Չե՛, չբաժանենք, բոլորը միասին պահենք, չե՞ վոր մենք կոլեկտիվով ենք մրցանակ տարել:

— Չե՛, չե՛, յեկեք տանք Արամենց ողակին, չե՞ վոր նրանց մարդն ե ամենալավը:

— Իսկի յել չե,- ասաց Արամը-ճիշտ ե, մեր մարդն ե լավը, բայց մրցանակը ստացել ե մեր ամբողջ

խումբը, յես առաջարկում եմ ես վարդերով զարդարել ընկեր Լենինի կիսանդրին:

Նրանց դպրոցի դահլիճում դրված եր մանուկ Լենինի կիսաբձանը— դրան եր ասում Արամը:

— Հա՛, հա՛ հա— Լենինի համար:

— Լենինի կիսանդրին,—ճչացին բոլորը: Մի քանի բոպեյից հետո՝ մանուկ Լենինի ճակատը զարդարված եր վարդերով:

— Յեկե՛ք, յեկե՛ք, ասում եյին յերեխաները, ընկ. Վահրամի վերարկուից քաշելով.

— Յեկեք, տեսեք, ո՞վ է ստացել մրցանակը...

Յերբ վարիչը նեբս մտավ ու տեսավ մանուկ Լենինի աբձանը զարդարված, հիացավ.

— Կեցցեք, ա՛յ, ձեր խմբի ամենալավ մրցանակը:

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

(Լոպարական ժողովրդական յերգ)

Ծովի Ջրերում
Սառույց է լողում,
Ծովի Ջրերում
Կղզի յե լողում:

Այդ կղզու վրա,
Ծովի Ջրերում,
Մի մեծ առաջնորդ
Մարտիկ է ապրում:

Նա դուրս է արել
Գյուղից, ավանից
Վաճառականին,
Հրաման տվել
Սամոյեդներին
Ու լոպարներին,
Վոր կառավարեն
Իրենց յերկիրը,
Յերկիրը ազատ,
Սիրով, միասին:

Զարկվում են կղզուն
Անթիվ ալիքներ,
Իսկ քամին նրան
Պահակ է կանգնել:

Այդ կղզու վրա
Լենինն է կանգնած
Յեղջերվի մորթուց
Տաք շորեր հագած։

— Ո՛յ, կղզի դու մեծ,
Դու սար ահագին,
Յերևա՛ դու մեր
Լոպարի աչքին։

Ո՛յ, Լենին Իլյիչ,
Առաջնորդ մարտիկ,
Մի ծտիկ արա
Լոպարի կյանքին,
Մեր յերկրում հիմա
Յեղջերու կա շատ,
Ապրում ենք սիրով,
Ուրախ և ազատ։

Ո՛յ, Լենին Իլյիչ,
Դու կաս մեր սրտում,
Հայտնում ենք մենք քեզ
Շնորհակալություն։

Զարկվում են կղզուն
Անթիվ ալիքներ,
Իսկ քամին նրան
Պահակ է կանգնել։

— Ո՛յ, Լենին, դու մեծ
Մարտիկ առաջնորդ,
Այդ սառցե սարից
Հյուր արի մեզ մոտ։

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ

Լենին պապին էլ
Մանուկ է յեղել
Մեզ նման պստիկ,
Ժիր ու սիրունիկ,
Բռնել է թիթեռ,
Սիրել ծաղիկներ,
Սահնակով սղղալ,
Յերգել ու խաղալ։
Բայց խաղ ու պարից,
Սահնակ, թիթեռից,
Մանկից առավել
Ուսումն է սիրել։

ՇՈԳԵՓԱՐՇ № 127

«Այս շոգեքարշը տանում էր այն սգո գնացքը, վրով տեղափոխել էին համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի աճյունը Գերասիմովկա պլատֆորմից մինչև Մոսկվա կայարանը— հունվարի 24-ին, 1924 թ.»:

Մակագրություն շոգեքարշի վրա:

Վո՛չ, չի մեղմանում...
Վո՛չ, չի պակասում...
Նույնն է ցավը հին ու ծանոթ:
... Տնքաց Պավլեցկին
Վերջին չչակով
Սառը ոդի մեջ—
Վերջին մի կարոտ...
Ահա մի կայան,
Զյունի մեջ կորած,
Ունի նա դեղին
Փայտե մի ծածկոց.
Ահա մի կայան
Ամայի քնած,
Զյունով, սառույցով
Ամբողջ պարուրված:
Անտառ և դյուղեր
Զյունի մեջ կորած.
Ճերմակ սեմաֆոր,
Թեքված և հեռում.
Ահա և անժամ

ԼԵՆԻՆԸ խորհուրդների համագումարում, 1917 թ.
Պ. Ստարոնոսով (փայտագրություն)

Անցնող մի գնացք,
Այրեց նա կարծես
Ռելսերը զնգուն...

Դանդաղում է նա,
Թե վազում արագ,
Շչակն է պատռում
Գորշ կուրծքը նրա...
Զգվել են ահա
Ռելսերը փայլուն,
Սոճե ճգներով
Զուգված, զարդարուն:
Ահա մի կայան՝
Ամայի, քնած,
Խանգարվեց այսոր
Հանգիստը նրա.
Մարդիկ կան այնտեղ
Վչտոտ, տխրամած,
Թախիծ կա այնտեղ
Սրտերում բոլոր...
Մարդիկ խմբվեցին.
— «Մեռավ» ասացին.
Պատռվեց հանկարծ
Սառույցը ոգի.
Ահա մահալից
Պատմական համար
Հարյուր քսանը յոթ...
Գնացքն է մոտիկ...
Յեկավ և յերկար
Հեվում եր, անքում,
Գոլորշին ոգում
Ողակ առ ողակ.
Ինչո՞ւ յեր հաճախ
Աչքերը արորում
Մրատ ձեռներով
Հնոցպանն անվախ...

ՀԱՅԿ-ՍՍՌ Ա.Ա. Մասիսյան

Հեվում եր, ոնքում,
Գնացքը հոգնած,
Յեվ ցուրտ եր մահը,
Հոնվար ամսի պես.
Մասսան յերերաց...
Սոճու ճամբեքով
Շարժվում եր դանդաղ
Ահա մի գաղաղ...
Լինում է հաճախ,

Արևն է մթնում,
Յեվ ձյունը ճերմակ
Սեվանում հանկարծ,
Վազում է, ահա,
Վազում է, լալիս,
Ինչպես յերեխա,
Մի մեծ չոգեղնացք:

Ահա փայլեցին
Լույսերը հեռվում,
Լացեց ու ոնքաց
Շչակը նորից.
Ու ձիգ ճամբեքին,
Վազող, դալարուն,
Հնչում եր յերկար
Սուլոցը վերջին:

Վերստերի ոյուներ,
Ու ձյունը ցրիվ...
Յեվ չեն մոռանա
Ռելսերը պողպատ,
Վազող անիվներ,
Կրկնվող, վշտոտ—
— Լե—նի—նը չկա...
— Լե—նի—նը չկա...
— Լե—նի—նը չկա...

—Բայց նա մեզ հետ է,
—մեզ հետ...

Արագ և արագ
Վազող անիվներ,
Յեվ ծուխը փռվող,
Ինչպես սև դրոշ,
Դրոշն այն վերջին
Ճամբին Իլյիչի...

ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳՈՐԳԱԳՈՐԾԸ

Ցես քույը ունեմ գորգագործ,
Ճկուն, արագ մատներով,
Մեկ էլ ժպտուն աչքերով
Ու մազերով վոսկեգոծ:

Գործարանում նա՝ վարպետ,
Պես-պես թելեր առնելով
Թելը թելին խառնելով,
Տեսեք, ինչ գորգ է հինել:

Ձեռքն է շարժել նա թեթեվ,
Գորգի ափին իբրև զարդ
Նա հինել է ալվան վարդ,
Իսկ կողքին էլ մի տերեվ:

Նախշուն, չորուն թելերով
Մեխակ, նարգիզ է հյուսել,—
Ծաղկեպսակ է կազմել,
Գորգն է զուգել փնջերով:

Իսկ պսակի մեջ հետո,
Շարժումներով իր ազատ
Դեմք է հինել հարազատ,
Այնքան ծանոթ, այնքան մոտ...

Գորգի վրա—լայն ճակատ,
Խոր մտքերով ակոսված,
Աչքեր թեթև կկոցած,
Շուրթին ժպիտ անարատ:

Մի ամսվա մեջ իր գորգին
Շունչ է տվել քույրը իմ,
Դեմքն է հինել սիրելի՝
Մեծ հանճարեղ Լենինի:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ

ԼԵՆԻՆԻՆ

Ցեղեգնե խարիսուլ խրճիթի փոսում,
Գործարանների լաբիրինթոսում,
Բամբուկե հյուղում, արտում բրընձի,
Յեվ խոր հանքերում վոսկու, պղընձի,
Շրջում ես անքուն, զինում ես անդուլ—
Այն ո՞վ է ասում, թե մեռել ես դու:

ԻԼՅԻՉԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

Կոհակներիդ ձայնը հեռվից,
Ծո՛վ, հնչո՛ւմ է իմ ականջին,
Դեռ թողում են գույներդ ինձ՝
Յերազներիս պես առաջին:
Յերգիդ զվարթ ու դյութական՝
Ներգործում է դեռ տիրաբար,
Ոստիվի պես մի լեռնական—
Լոռեցի քեզ, ծո՛վ իմ յեղբայր:
Լսում եմ քեզ ու յերազո՛ւմ
Նավակներդ անրջաթև,
Յերբ մի խորին ու նո՛ր հուզում
Փոթորկում է ծովն ու յեթեր:
... Զյուն է իջնում մեծափաթիլ՝
Հոկտեմբերյան Պետրոգրադում,
Ու ծաղիկներն հազարաթիվ՝
Փողոցներն են լուսազարդում:
Նեվան դանդաղ ու հորդահոս
Ընթանում է կոհակ-կոհակ,
Ինչպես անծիր ու գորշ ակոս՝
Գնում-սուզվո՛ւմ յերկնքի տակ:
Յեվ մարդկային հեղեղն ահա,
Մշուշաբոր փողոցներից
Սմոլնի՛ յե հոսում անահ—
Ալիքներով վորոտալից...
Ուր արտակարգ նիստ է, դղո՛րդ
Վառքի յելած ժողովրդի,
Ու վիթխարի այդ շենքի մոտ,
(Այնքան նման հսկա բերդի),

Խարույկնե՛ր են վառել ուրախ—
Պահակները Հոկտեմբերի:
Յեվ չորս կողմից բացած յերախ
Զբահապատն ողմկալի—
Սպասո՛ւմ է ահա արթուն:
. . . . . .
Վերը՝ հսկա մի դահլիճում,
Խոր չչուկ է անցնում հանկարծ,
Ու սրտերին սարսուռ բերում,
Ինչպես անծիր մի լուսաբա՛ց:
Հետո հանկարծ և վորոտով
Պայթում է հորդ մի ծափողջո՛ւյն,
Յե՛վ հաց, և՛ հող, և՛ հաշտություն
Վողջունում են այն ջինջ մարդուն,
Վոր յերևում է հազիվ-թաքայլ...
Սրտում հրդեհ ուրախության՝
Նա համարձակ և անայլայլ
Հայտարարում է վճռական.
«Իշխանությունն ամբողջ յերկրի՝
Բանվորների, զինվորների
Խորհուրդների՛ն...
Յե՛վ հաց, և՛ հող, և՛ հաշտություն
. . . . . .
Այդ Լենինն է դալիս հանդես՝
Հանուն կյանքի, արդարության,
Հանճարովն իր պայծառատես՝
Առաջնորդը Հոկտեմբերյան.
Նա, վոր զինեց բոլոր մարդկանց—
Ընչաղուրկ ու անոթեան,
Ու արնավառ դրոշ պարզած՝
Ուղի գծեց նո՛ր մարդկության:
Ու Նրա հետ, վորպես ընկեր,
Մեծ զինակից հավատով լի՝
Քայլեց անդուլ և անվեհեր՝
Պողպատակուռ—Ստալին...
Հավատարիմ՝ իր Յերդումին,

Ժողովրդին՝ անպարտելի,
Նա մեզ բերեց սոցիալիզմի
Պերճ դաշտերին յերջանկալի։
Հացով, հողով ու հաշտությամբ,
Խչխանությամբ Խորհուրդների,
Մեր նավն ահեղ, մրրկաթափ՝
Նորոգ ափե՛ր դեռ կրքերի—
Վողջունելու համար ցնծուն
Կոմունայի որը պայծառ,
Մարդու անպարտ ազատությունն
Ու աշխատանքը փրկարար...։

ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

ԼԵՆԻՆ

Մոտեցա...
Սիրտս ասես կանգ առավ...
Յեվ յես փչաքաղ նայեցի տխուր.
Մեծ հոկտեմբերի հայրը հրավառ
Պառկել եր, ննջել մտասույզ ու լուռ։

Սակայն նման չեր այս քունը յերբեք
Առաջվա քնին, վոր ննջում եր նա,
Յերբ յելնում եր, վոնց բոցավառ արեգ,
Աչքերը, վորպես այգը հուրհուրան։

Նայեցի յերկար...
Սիրտս մղկտաց...
Դուրս չեկա տրտում ու դառնաթախիծ...
Բայց մեծ Լենինի արեվով ներկված
Մոսկովը շողաց ու դուրդուրեց ինձ.—

Տվեց սեր, յեռանդ, խինդ արեվաներկ,
Ժպտաց դիմառատ մոր պես հարազատ,
Այստեղ եր քայլում Լենինը արեգ,
Աշխարհին տալով լույս, արև ու կյանք։

Յեվ ի՞նչպես հանդչի նրա սիրտն անշեջ,
Ում անունը մեծ պայքար է ու կյանք.
Նա հար կշողա մեր սրտերի մեջ,
Ինչպես մեր կյանքի անգին արեգակ։

ՋԱՆՆ ՔԵԶ ՋԱՆ
(ժողովրդական)

1.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Քո կիսամաշ են ծանր ու մեծ,
Յոթ կարկատան փափախի տեղ,
Կեպիդ այդ նոր ու փառահեղ,
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ կիսամաշ յոթ կարկատան փափախի տեղ
Կեպիս այս նոր ու փառահեղ
Ինձ պարգևեց ԼԵՆԻՆԸ մեծ:

2.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Քո չուլ փալաս արխալղի տեղ
Կոստյումը քո այդքան չքեղ
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ չուլ փալաս արխալղի տեղ
Կոստյումն իմ այսքան չքեղ
Ինձ պարգևեց ԼԵՆԻՆԸ մեծ:

3.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Քո ծվատված աբայի տեղ,
Վերարկուն քո մահուդ չքեղ,
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ ծվատված աբայի տեղ,

Վերարկուն իմ մահուդ չքեղ
Ինձ պարգևեց ԼԵՆԻՆԸ մեծ:

4.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Քո լալկված խեղճ լեզվիդ տեղ
Այդ հուրհրան թրի նման
Կարուկ լեզուդ սուր ու հնչեղ
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ հուրհրան թրի նման
Կարուկ ու սուր ճարտար լեզուն
Ինձ պարգևեց ԼԵՆԻՆԸ մեծ:

5.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Քո խուլ, խարխուլ տնակի տեղ
Սենյակդ ճոխ, կոկ ու լուսեղ,
Արևով լի, արեվակեղ
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ անարև տնակի տեղ
Սենյակս կոկ, ճոխ ու լուսեղ
Ինձ պարգևեց ԼԵՆԻՆԸ մեծ:

6.

Ջանս քեզ Ջան,
Բատրակ Խեչան,
Դաժան կյանքի գորշ հատակից,
Բիրտ տերերի ծեծի տակից,
Ուրախ կյանքի պայծառ հանդես
Ո՞վ կանչեց քեզ, ո՞վ կանչեց քեզ:
— Դաժան կյանքի գորշ հատակից,
Բիրտ տերերի ծեծի տակից,
Ինձ ճոխ կյանքի հանդես կանչեց
ԼԵՆԻՆԸ Մեծ:

ԼԵՆԻՆՈՒ ԽԱՂ

Խեղճ ու նաչար չատ լաց արին,
Նիկոլ ընդավ, աչկ պաց արին.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Պետրոպոլա եկավ լուռը,
Կարթին դիվանխանի տուռը.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Ֆաղիրներաց ծագի արև,
Զանգինքներաց որբն է սև.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։
Գունեյ սարը պռնեց ղոչուն,

Խմբապետքեր տուռցեր ին չուն.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Ռազուն թալեց իրեք դեխից,
Խմբապետքեր փախան կեղից.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Քեղարթա սարը դուման եր,
Բալշեվիք ազրայիլ նման եր.
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Բոլշևիք եկավ կղակ-պոլոզ,
Գառնեցըքոնց պըռներ ի մոզ,
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Խընդոն ասեց.— Մեր պան ի զուր,
Թողեք փախենք բայց ո՞ւր,
բայց ո՞ւր։
Եա վո՞վ արեց, եա վո՞վ արեց,—
Եարիկ զըմմեն Լենին արեց։

Ասել է 65 տարեկան անգրագետ գյուղացի Պետրոս Շիրոյանը (բնիկ Բաշ-Կալայի շրջանից)։

ԼԵՆԻՆ ՈՒ ՍՏԱԼԻՆ

(Բրդական ժող. յերգ)

Լո՛, լո՛, լո՛, լո՛...
Հերոս զորքեր բոլշևիկյան
Քոլոզներ դրին ու վեր կացան,
Քշեցին անգութ ցարի վրա,
Վոր նրա տունն անեն վերան.
Թնդաց, դղրդաց աշխարհը բոլոր,
Լո՛, լո՛, լո՛, լո՛...

Ներանց առաջից գնում եր Լենին,
Ներանց առաջից գնում եր Ստալին
Կարմիր դրոշակ բռնած ձեռքին,
Առաջ եյին տանում կարմիր զորքին,
Կռվի յեր գնում աշխարհը բոլոր,
Լո՛, լո՛, լո՛, լո՛...

Ասել ե Բասայե Բաբբը.

ՅԵՍ ՄԱՏԻՏՍ ԿՈՏՐԵՑԻ...

Դիշերն ինչ՛լ եր արդեն:— Իմ սենյակում մեն-մենակ՝
Նստել եյի յես լամպի դողապարուն լույսի տակ
Յեվ տետրակիս եջերին գրում եյի ու ջնջում...
«Ո, մի՞թե ինձ են պահել վիշտ ու ցավերն
աշխարհում»,—
Հարցրրի յես՝ ինքս ինձ:—
Հոգիս խռով եր ինձնից, տխուր եյի յես մի քիչ,
Ծաղիկն ինչպես բաղեղի—փարվել եյի լոկ գրչիս.
Յեվ իմ հոգուց, ակամա, կիսատողեր հոսեցին...
Դողում եր սիրտս ահով՝ տերևի պես աշնային,
Ցերբ այդ պահին ընկերքս՝ փոքրիկ սենյակս մտավ
Յեվ արյունեց իմ հոգին,— դուժ բերեց ինձ, անհուն
ցավ...
— «Գիտե՞ս, չկա՛ Լենինը, Ուսուցիչն ու Առաջնորդը:
. . . . . .
Հարվածեցին կարծես ինձ, դարձան շուրթերն իմ
դեղին,
Հետո չիթերն արցունքիս ջինջ եջերը թրջեցին...
Տրտո՛ւմ եյի այդ գիշեր, հոգիս՝ մշուշ, միգամած,—
Յես մատիտս կոտրեցի, յերգս անավա՛րտ մնաց:

ԼԵՆԻՆ

Իմաստուններ՝ը, լավ իմացեք,
Լենինը մի նոր դա՞ր ստեղծեց.
Նա շատ վաղուց գլխի ընկավ,
Կեղեքողի տունը քանդեց.
Տանջվող, արդար բանվորների
Ցավին ճար ու դարման արեց.
Գնաց հասավ յերկրե-յերկիր՝
Սովետական կա՞րգ հռչակեց:

Սովետական կարգ հռչակեց,
Քանդեց ցարի դահը և տուն.
Զնդանները նա բաց արեց,
Տվեց մարդկանց ազատությո՞ւն:
Գլխի ընկավ բանվորն խսկույն,—
Ֆաբրիկ, գավոդ գործի դցեց.
Աշխատանքը մարդու համար
Պատվի արժան գո՛րծ դարձրեց:

Կոմունիզմի ընթացքը ճիշտ
Ինքը՝ Լենինը վորոշեց.
Յեվ թերթերը ավետեցին
Նոր, յերջանիկ որերը մեծ:
Հիմի յեկել է սոցիալիզմ,
Զքվի՛ր-դնա՛, դու ցավ ու վիշտ.
Կեցցե՞ն մեր նոր Խորհուրդները,
Կոլեկտիվը ուղի յե ճիշտ:

Թովուզ (Ադրբեջան):

ՅԵՐԳ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Գիտենք մենք, վոր մեծ Լենինը
Հոգատար եր դեպի մեզ,
Կառներ նա մեզ իր ծնկներին,
Յեվ հարց կտար ժպտերես:
—Ինչպե՞ս եք ապրում, բալիկներ:
Յեվ կասեյինք մենք նրան.
— Յերջանիկ ենք մենք բոլորից,
Կատարված է քո պատգամ:
Յերկիրը մեզ նվիրում է
Հոկտեմբերի անունից
Սիրուն պալատ և այգիներ,
Ուրախ ճամբար խնդալից:
Մեր այս ուրախ կյանքի համար
Դու քո ուժերն ես տվել,
Ապրում ենք մենք ավելի լավ,
Քան յերգերում է յերգվել:

ԱՊՐԻԼ ՅԵՎ ՀՈՒՆՎԱՐ

Ծնվեց Լենինն ապրիլ ամսին,
Մեռավ Լենինն հունվար ամսին,
Յեվ այդ յերկու ամիսները կարմիր ու սև
Մեր սրտերում այնպես ամուր են մնացել:

Ապրիլն—ամիս է գարունքի, ուրախության,
Տվել է մեզ Ազատարար:
Հունվարն—ամիս է մոլեգին դաժան ձմռան,
Վոր Լենինին մեզնից տարավ:

Յեվ ապրիլին մենք կը հագնենք կարմիր
շորեր,
Իբրև նշան ուրախության,
Վոր ծնվել է Լենինը մեր,
Իսկ հունվարին—սև հագուստներ,
Իբրև նշան նրա մահվան:

Ապրիլ ամսին մենք կը յերգենք ուրախ
յերգեր,
Իսկ հունվարին տխո՞ւր մի յերգ,
Ապրիլ ամսին մեզ հետ կերգի արևը մեր,
Իսկ հունվարին քամին կը լա սրտակեղեք:

Ապրիլ ամսին կծաղկեն նուշն ու ծիրանին,
Կը բռնի ոգն անուշ այնպես..
Յեվ խնդությամբ կվերհիշենք մենք Լենինին,
Վոր ապրիլը պարգևեց մեզ:

Ատաղեր չկան հունվարի խուլ գիշերներին,
Յերկիրն լալիս է խավարում.
Յեվ նրա հետ լալիս ենք մենք, մեր Լենինին,
Վոր մահացել է հունվարում:

ԱՐԱՔՍ

ԻՆՉ ԼԱՎՆ Է ԼԵՆԻՆԸ

ԼԵՆԻՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Հանգստի որ եր: Առավոտվանից Դորան անհանգիստ եր: Շտապ հագնվեց, շտապ լվացվեց ու հագաքեց ընկերներին:

Նա մտածում եր մի շատ լուրջ բանի մասին, դրա համար էլ դեմքը խոժոռելով, կամացուկ ասաց.

— Այ թե իմանա՞ք, Դինա, Լենա, Եֆրիկա, Մավրիկ...

— Ի՞նչ,— աղաղակեցին յերեխաներն ու սկսեցին վազվզել իրար խառնված:

— Սպասեցեք, շարաճճիներ, հանդարտ,— հանդիմանեց Դորան, մոռանալով, վոր ամենաչարաճճին ինքն է յեղել միշտ:

Դորայի մտքերը շատանում էին, դեմքն ավելի յեր լրջանում, կարծես հասակ եր առնում, կարծես մեծ, շա՞տ մեծ մարդ եր դառնում:

Թե իմանայիք՝ ի՞նչպես եր նա լուրջ:

Նա համարձակ առաջ գնաց, ապա աղաղակեց.

— Գնացեք ձեր տներն ու բերեք կարտոնի կտորներ, կառուցում ենք...

— Ի՞նչ,— նորից աղմկեցին յերեխաները:

— Լենինի դամբարանը,— պատասխանեց Դորան, կապույտ աչքերը չհեռացնելով սենյակի կենտրոնից:

— Դամբարա՞նը,— կրկնեցին յերեխաներն ու վազեցին իրենց տները:

Փիչ հետո յերեխաները վերադարձան վազելով,

չնչառպառ լինելով, ձեռքներին բռնած կարտոնի կտորներ։

Դորան քայլում էր սենյակում։ Փոքրիկ Մավրիկը փորձում էր նրան ծիծաղեցնել, բայց իզուր, այս անգամ այդ նրան չէր հաջողվում ու դրանից էլ սատանի դայրանում էր։

Ցերեխաները լուրջ էին, այնքան լուրջ, որ ամեն ինչ մառացել էին, միայն աշխատանքն էր նրանց իսկական աշխարհը։

Նրանք մտքով Լենինի հետ էին։ Ով ինչ գիտեր, ու լսել էր Լենինի մասին, այժմ մտաբերում էր ու շրթունքները սեղմած՝ կարում կարտոնները։

Հետո կտրած կարտոնները նետվում էին կարմիր դույնով։

Իսկ Դորան վորպես մի ճարտարապետ, սենյակի մեջտեղում կանգնած, քառակուսի կարտոնները դարսում էր իրար վրա։

— Լավ կարտեղեք,— բղավում էր նա ու էլի դարսում։ Նրան ոգնում էր ճարպիկ Մավրիկը։

Դորան ուրախացավ և քիչ մնաց ցատկեր, երբ դամբարանն արդեն պատրաստ էր, բայց հիշեց, վոր ինքը ղեկավար էր ու հանդարտ ժպտալով կանգնեց։

ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԿՌԻՎԸ

Լենան պակաս հնարագետը չեր։ Նա տեղից ցատկեց և դամբարանի չորս կողմը կարմիր սահման գծեց։

Դորան այդ խելացի մտքից այնպես ուրախացավ, կանգնեց դամբարանի մոտ, կարմիր սահմանից ներս ու աղաղակեց։

— Այստեղ կարմիրներն են՝ յես, Լենան ու Եֆրիկան։ Իսկ Դիանան ու Մավրիկը՝ սպիտակներ են։ Դուք կլինեք չար վոստիկաններ, այնքա՜ն չար, ու կհարձակվեք մեզ վրա։

Դորան մի քիչ մտածելուց հետո մատը թափահարելով ավելացրեց։— Իսկ մենք կարմիրներս, չենք թողնի, վոր սպիտակները տրորեն մեր կարմիր սահմանը։

Եվ ժամանակ չկորցրին։ Դորան, վորպես մի կարմիր պահակ, կանգնեց դամբարանի առաջ։ Նրան հետևեցին Լենան, Եֆրիկան։

Սպիտակները՝ Դիանան ու Մավրիկը՝ չունչները պահած, դատարանի մոտենում էին։

Կարմիրները քնած չեյին։ Դորան քաջ հրամանատարի պես աղաղակեց։

— Հարձակում, կրակ··· անպիտան սպիտակների վրա,— բայց ինքը տեղից չշարժվեց՝ զինվոր էր անվախ։

Քանի գնում, խաղը տաքանում էր ու իրական դառնում։

Լենան ու Եֆրիկան կռվում էին իսկական զինվորների պես— տրա տա՛-տա՛-տա՛, բո՛ւ··· վորպես թե թնդանոթներ էին արձակում ու կրակում հրացաններից։

Սպիտակներն էլ պակաս կռվողներ չեյին։ Դիանան քրտնել էր։ Խորամանկ Մավրիկն ուզում էր ծիծաղեցնել կարմիրներին, թուլացնել նրանց ու այդպիսով սահմանն անցնել։

— Նա փիշտ-փիշտ··· անելով խփեց Եֆրիկայի փորին, Եֆրիկան թուլացավ ծիծաղից և այդ ժամանակ քիչ էր մնում Դիանան անցներ սահմանը։

Դորան, յերբ տեսավ ընկերները վտանգի մեջ են, տեղից պոկվեց ու կատվի պես ճկուն ցատկումով բռնեց Դիանայի վոտքը։

Ցերբ Մավրիկը տեսավ իր ընկերը բռնվեց, ինքն էլ չփոթվեց··· այդ ժամանակ Եֆրիկան բռնեց Մավրիկի ականջից ու սկսեց քաշել։

— Դե, գնացեք, բուրժուաներ, լավ կերաք,— ծիծաղում էին կարմիրները։

— Մենք սրան մի լավ կծեծենք,— ասաց Եֆրիկան։

— Չե,— պատասխանեց Դորան,— մենք սրանց գնահատենք մեր կողքին ու պատմություններ կանենք։

Պարտված սպիտակներն այնպե՞ս լուռ եյին ու յենթարկվում եյին կարմիրների հրամաններին։

ՀՐԱՇԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Դորան մի քիչ մտածեց ու աչքերը չհեռացնելով դամբարանից, սկսեց պատմել.

— Զմեռ ժամանակ եր, այնպես ցուրտ ու ենքան ձյուն, յերբ մեռավ մե՛ծ, շատ մե՛ծ առաջնորդ ընկեր Լենինը...

— Գիտեք, յերեխաներ, ընկեր Լենինը ենքան ե բուրժուաներին ատել, հետո ասել ե, վոր պետք ե բուրժուաներին տապալել...

Եֆրիկան ուզում եր անպայման մի բան ավելացնել ու սաստիկ անհանգստանում եր.

— Ը՛հ, վատ բուրժուաներ, —նա դարձավ դեպի Մավրիկն ու Դիանան,— ենքան եք բանեցնում բանվորներին առավոտվանից մինչև կես գիշեր, ելի առավոտ ու գիշեր, հետո ենքան քիչ եք փող տալիս, վոր հացն ել կուշտ չեն ուտում,— ապա Եֆրիկան անհամբեր ու հանդուգն մատը թափահարեց նրանց վրա։

Դիանան ու Մավրիկը քիչ եր մնում լաց լինեյին։

— Մենք չենք ուզում սպիտակներ լինել, մենք ել ենք ուզում կարմիրներ լինել,— լացակումած ասացին նրանք։

— Մենք շատ ենք սիրում Լենինին, սա խաղ եր, այնպես չե՞,— ասաց Դիանան ու կանգնեց տեղից։

Եֆրիկան ու Լենան ծիծաղում եյին...

Քիչ եր մնում յերեխաները նորից ընդհարվեյին, յերբ Դորան, վորպես մեծ մարդ, կարգադրեց.

— Թող Դիանան ու Մավրիկն ել կարմիրներ լինեն։

Նրանք այնպես ուրախացան, այնպես ուրախացան ու բոլորը հաշտ ծիծաղեցին։

Ապա վերջում, յերեխաները լուռ պատվո պահակ կանգնեցին Լենինի դամբարանի մոտ և ամեն մեկն այժմ մտածում եր. ի՞նչ հրաշալի յե Լենինի պատմությունը, ինչքա՞ն լավն ե Լենինը։

ԼԵՆԻՆ ԳՈՉԵՑԻ...

Ինչպես մոր գրկում մանկիկը կայտառ՝
Ցեսս իմ մայրը յերկրի գրկում ածեցի,
Ու թոթովախոս իմ լեզվով պայծառ
Առաջին անգամ՝ Լենին գոչեցի:

Լենին գոչեցի.— Լե՛նին, իմ ծնո՛ղ,
Դու յես յերկինքն ու արևն իմ կյանքի,
Քո՛նն եմ յես հավետ մտքով լուսաշող
Դու՝ անափ ովկիան սիրո՛, բերկրանքի՛:

Անցան տարիներ ու յես ածեցի,
Դարձա Լենինյան անհողդողդ զինվոր,
Ու կրկի՛ն անգամ յես խո՛ր զգացի
Գուրգուրանքը ջերմ իմ Լենին մեծ հոր:

Քեզ եմ պարտական իմ կյանքով ամբողջ
Լե՛նին, հարազա՛տ ու հավերժ անմահ,
Քո գրկում բացված՝ յես մի վառ բողբոջ
Կյանքն եմ յերջանիկ վայելում հիմա:

Ո՞Վ ԵՐ ՆԱ

1.

Մի ընտանիքում վեց մանուկներ եյին վազվզում:

Ներանցից մեկը փոքր եր, չարաճճի, բարձրաձակատ մի տղա:

— Մայրի՛կ, նվագիր «Ուլիկը», խնդրում եր նա մորը և հետո ել խորամանկորեն ժպտում:

Նվագում է մայրը, յերգում է բարձրաձակատ տղան:

— Մի տատիկ կար, նա ուներ...

— Մի մոխրագույն լավ ուլիկ... շարունակում են մյուսները:

Այնտեղ է նաև չորս տարեկան տղան և նա յել է յերգում:

Բարձրաձակատ տղան խորամանկաբար թարթում է աչքերը, հետո վճռեցած դեմքով նայում է փոքր յեղբորը և լացակումած ձայնով յերգում.

— Հարձակվեցին ուլիկին
Են մոխրագույն գայլերը,
Մընաց միայն տատիկին՝
Պըճեղներն ու պոզերը... հի՛... հի՛... հի՛... հի՛...— համարյա լացով ավարտում է բարձրաձակատ տղան և աղի արցունքով հեկեկում է փոքրիկը...

— Ձի՞ս ամաչում, այ տղա,— հանդիմանում են քույրերը չարաճճի տղային,— ինչո՞ւ յես յերեխային վախեցնում:

— Պետք է սովորի, թե չե լացկան կլինի,— ժըպտալով ասում է բարձրաձակատ տղան:

Ցերանի իմանաս՝ ո՞վ եր նա:

2·

Յերեկո յե։ Սեղանի վրա դրված է նավթի լամպը։

Սեղանի մոտ նստած են յերկու յերեխա, վորոնք պարապում են ուշադրությամբ։ Անկյունում փոքրիկ աղջիկը պարապում է վեց տարեկան տղայի հետ։ Զորս կողմը լուռ է և անդորը։ Բոլորն զբաղված են աշխատանքով։ Բայց... ահա՛, դուռը բացվեց և ներս մտավ բարձրաճակատ տղան, ձեռքերը յետևը դրած։

Նա վոտքի մատների ծայրերով մոտենում է անկյունին, յերևում է անհանգիստ է, ուզում է չարաճճիություն անել։

— Կուզե՞ք բուրգեր չինենք,— փսփսալով ասում է նա իր քրոջն ու յեղբորը։

Անկյունում սկսվում է աշխատանքը։ Բուրգեր են չինում։

Անցնում է մի քանի րոպե և լսվում է մի ինչ վոր թրխկոց, քանդվում են բուրգերը...

— Մայրի՛կ, չի թողնում, վոր պարապենք,— աղաղակում է սեղանի մոտ նստած փոքրիկ աղջիկը։

Հենց այս ժամանակ ներս է մտնում հայրը, նայում չարաճճին և ասում.

— Գնանք կաբինետ։

Կաբինետում հայրը հարցնում է խիստ.

— Դու ինչո՞ւ դասերդ չես պատրաստում։

— Ցես բոլորը դիտեմ վաղվա համար, հայրիկ։

— Կասուգենք,— ասում է հայրը և սկսում է դասերը հարցնել։

Տղան պարզ և ճիշտ պատասխանում է բոլոր հարցերին։

— Ցե՞ր պատրաստեցիր դասերդ,— հարցնում է հայրը զարմացած։

— Ցես դասերս պատրաստելու կարիք չեմ զգացել, հայրիկ, ուսուցիչն ամեն ինչ բացատրեց դասարանում։

— Անշուշտ զարմանալի տաղանդի տեր է,— մրմնջում է հայրը։

Բարձրաճակատ տղան ժպտում է։

Ցերանի իմանաս՝ ո՞վ եր նա։

3·

Կազան քաղաքում ուսանողները հուզվում էյին, բողոքում ցարական կառավարության ու նրա որենքների դեմ։

Համալսարանում կազմակերպվեց ուսանողների ժողով, նրանց չրջապատեց վոստիկանությունը։

Մի բարձրաճակատ ուսանող բռունցքը բարձրացրած դիմում եր դեպի տեսուչն ու հետն էլ աղաղակում.

— Դուրս տարե՛ք գորոդովոյներին, դուրս տարե՛ք գորոդովոյներին...

Հենց նույն գիշերը ձերբակալեցին այն ուսանողին իր իսկ բնակարանում։

Վոստիկանը նրան կառք նստեցրեց։ Նա ճանապարհին այսպես եր խոսում ուսանողի հետ.

— Ինչո՞ւ յեք ապստամբում, չե՞ք տեսնում, վոր ձեր առաջ պատնեշ կա...

— Պատնեշ կա, սակայն փտած է այդ պատնեշը, կհրեմ և կքանդվի,— համարձակ կերպով պատասխանեց ուսանողը։

Ցերանի իմանաս՝ ո՞վ եր նա։

4·

Ցարական կառավարությունը ձերբակալում եր հեղափոխականներին և Սիբիր աքսորում։

Աքսորվածներն այնտեղ էլ էյին շարունակում իրենց հեղափոխական աշխատանքները։

Աքսորվածներից մեկն եր նաև բարձրաճակատը։

Աքսորվածներն յերբեմն վորսի էլ էյին գնում։

Այնտեղ շատ նապաստակներ կային։

Զմեռը նավակով գնում էին մի կղզի և այնտեղից նապաստակներով բեռնավորված վերադառնում:

Բարձրաճակատ հեղափոխականը շատ էր սիրում վորսի գնալ, սակայն նա շատ էր տաքանում, նապաստակը հենց յերևում էր թե չէ՝ խկուն թնդում էր նրա հրացանը:

Մի անգամ, յերբ գնացել էին աղվեսավորսի, մի աղվես վազեց ճիշտ դեպի բարձրաճակատը, դեմ ընկավ նրան և ապա վազեց, թաղնվեց անտառում:

— Ինչո՞ւ չսպանեցիր, — հանդիմանեցին նրան ընկերները:

— Գիտե՞ք ինչ, չափազանց գեղեցիկ էր,— պատասխանեց նա:

Ցերանի իմանաս՝ ո՞վ էր նա:

5.

Զմեռ է: Ցերեխաները սահում են սահնակով:

Փոքրիկ աշակերտ Սիշուկն էլ այնտեղ է:

Նա սահնակը տարել է բլուրի գագաթը և այնտեղից սլանում է ցած: Տեսնում է ներքևում յերկու մարդ կա, նրանցից մեկը բարձրաճակատ...

— Հե՛յ, ճամբա տվե՛ք, ապա թե վոչ՝ կտրտրեմ... բացականչում է Սիշուկը... Բարձրաճակատը հեռանում է ճամբից և բարձրաձայն ասում.

— Խնդրեմ, համեցեք...

Սիշուկը նայում է այն մարդուն և նրա սիրտը սկսում է արագ բաբախել, ճանաչում է նրան:

Այն յերկու մարդը շարունակեցին իրենց ճանապարհը, տեսան՝ ձեռնոց է ընկած, իսկ քիչ հեռու մի փոքրիկ աղջիկ է խաղում:

— Փոքրի՛կ, այս ձեռնոցը դո՞ւ յես կորցրել... հարցնում է բարձրաճակատ քեռին:

Ցերանի իմանաս՝ ո՞վ էր նա:

6.

Սա կատարվեց 1924 թվի հունվարի 21-ին:

Վոդջ Խորհրդային Միությունը հուզվեց:

Ցերկաթգծերը սկսեցին կայծակի արագությամբ տարածել սրտամորմոք մի լուր...

Աշխատավորները կնճռոտ ճակատով և վշտացած խոսում էին.

— Վախճանվեց...

— Վախճանվեց...

— Վախճանվեց...

Այսպես էր լսվում և՛ այստեղ, և՛ այնտեղ, և՛ քաղաքում, և՛ գյուղում...

Մի քանի որից հետո՝ ծով ժողովուրդ էր խուրվում դագաղի մոտ, վորի մեջ պառկած էր ցածրահասակ, բարձրաճակատ մարդը...

Դա... մեծ Լենինն էր...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖՈԼԿԼՈՐ



ԼԵՆԻՆԻ վերջին յելույթը Մեծ թատրոնում, 1922 թ. հոկտեմբ. 20-ին:
Նկ. Պ. Վասիլյեվի

ԼԵՆԻՆ ՀՍԿԱՆ

ժողովրդական պոեմ «ԼԵՆԻՆ ՓԱՇՆԱ»-յից· փոխադրեց՝ ՍԱԲՄԵՆ

1·

Ն ո՞վ է, վոր ժողովրդին պահում է,
Են ո՞վ է, վոր ռանչպարներին ոգնում է,
Են ո՞վ է թե թիկունք տալիս բանվորին·—
Նա մի հսկա յե, անունը՝ Լենին:

2·

Մի արդար որենք կա, անունը՝ բոլշևիկ,
Ես որենքի ստեղծողն է Լենին հսկան:
Բոլշևիկը՝ հարուստներին մահ ու չարիք,
Ժողովրդին՝ թե՛ պահապան, թե՛ բարեկամ:

3·

Աշխարհի դանձ-կարողությունն հարուստների
մոտն եր բոլոր,
Կայք, ունեցվածք, անդ-անդաստան հարուստների
մոտն եր բոլոր,
Արծաթ, վոսկի, գոհար, ոլմաստ հարուստների
մոտն եր բոլոր·
Աղքատն եր ու իրա յերկու դատարկ ձեռներ·
Հարուստներին՝ գարուն, ծաղիկ, աղքատներին՝
ձյուն ու ձմեռ:
Հարուստն ուտում՝ յեղ ու մեղը, նստում ողեն
ինչպես փաշա,
Աղքատն չուներ մի զուլդ տրեխ, չոր գարեհաց,
թթու չոր թան:

Հարուստն զարկեր հողի գլխին, իր աշխատանքը
անել սար,
Աղքատը խեղճ մաշվեր, տանջվեր, մինչև իրա
հոգին դուրս գար:
Մեկ ե խոսքը հարուստների, սուլթանների՝
արնախում սարդ:
Բայց աբի տես, վոր նրանք քիչ, աղքատները
շա՛տ են ու շա՛տ:
Քիչը շատին կողոպտում եր, ուտում նրա
վաստակն արդար,
Չե՞ վոր նրա ձեռքին եր դեռ ուժն ու զենքը,
զորք, զորավար:

4.

Դանակն արդեն կտրել, հասել եր վոսկորին...
Մի աղքատի տղա յեր են հսկա Լենին.
Կռվի յելավ ցար-սուլթանի պետության դեմ,—
Կռվով,— ասաց,— աղքատներին ազատեմ...

5.

Տերությունը քաշեց յեկավ զորք-զորապետ.
Հարուստները դրին իրենց դանձն ու վոսկին.
Աղա-բեկերն յելան ինչպես մի պղտոր գետ,
Ու ոգնության եկան են ցար-թագավորին.
Բանց մի վիշապ արշավեցին դեպի Լենին:

6.

Լենին կանչեց իրա աղքատ ֆաղիրներին,—
Կանչեց քյասիբ, բանվոր, չարքաշ ծառաներին,
Ինչքան կային՝ թափվան Լենինին ոգնության,
Քամու նման սարից, ձորից, սուր սլացան,
Քլունգ, մահակ, փայտ, չաք արած՝ թուր-
հրացան:

7.

Լենին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Ստալին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.

Կլիմ հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Սերգո հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կիրով հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կալինին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Շահումյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Միկոյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Արշավեցին հսկաները կամքով համառ,
Նրանց հետքից սուրաց կարմիր զորքն անհամար:

8.

Տերություններն ու հարուստներն իրենց զորքն
առան յեկան.
Ամեն կողմից նեռա թափվեցին բանակները
տերունական.
Ոգնականներն իրենց զորքը առան եկան.
Աղվես Ինդլիզն իրա զորքը առավ եկավ.
Ֆրանգստանն իրա զորքը առավ եկավ.
Կոլոտ Ճապոնն իրա զորքը առավ եկավ.
Ամերիկան իրա զորքը առավ եկավ.
Չին-մաչինը իրա զորքը առավ եկավ.
Ոսման-Տաճիկն իրա զորքը առավ եկավ.
Աջամ-Պարսիկն իրա զորքը առավ եկավ.
Մսրա Սուլթան իրա զորքը առավ եկավ.
Ալման-Գերման իրա զորքը առավ եկավ.
Նրանք բոլորն կռվի եկան Լենինի դեմ,
Վոր ազատված ժողովրդին հաղթեն, ջարդեն:

9.

Հարուստների զորքի մի մասն՝ վոդով վարձկան,
Մի մասը՝ նուրբ, փափուկ ապրած, նազուկ,
անբան,
Հարուստների զորքի մի մասն՝ վախկոտ,
ջանսահ,
Մի մասն՝ մարդիկ, անծանոթ ու ոտարական:

Են, վոր փողով եր եկել, իրա գլուխն եր պահում,
Են, վոր փափուկ եր պահվել, իրա գլուխն եր
ծածկում,
Են, վոր վախկոտ ջանպահ եր, վախենում եր
ու ծլկում.
Փախչում եյին լեղաճաք զորքի շարքերը անծեր,
Մնայն ոտար ու անհոդ մարդիկն եյին մնացել...

10.

Են, վոր Լենին քաջի մարդիկն եյին, մեկ սիրտ
եյին, մեկ հոգի,
Իրենց տիրած դերքը յերբեք չեյին տալիս վոչ
վոքի.
Բոլորն էլ զուրկ, դժբախտ, անտուն աղքատներ,
Բոլորն էլ զուրկ, անյեղ, անարտ ռանչպարներ,
Բոլորն էլ զուրկ, անգործ, աղքատ բանվորներ,
Աշխարհի խեղճ, սիրտը վառված մարդիկ եյին
բոլորն էլ:

11.

Զորքն ու ժողովուրդը զարկին զարկվան իրար
հետ,
Ծեծին ծեծկվան իրար հետ:—
— Ե՛յ, վրեժի ժա՛մն է,— կանչեց Լենինը
զորապետ,
Զարկե՛ք, ձեր թշնամուն փուչ արեք,
Զարկե՛ք, վոր միշտ ազատ չունչ առնեք:

— Ե՛յ,— ձայն տվեց ցար-սուլթանը իր
զորքերին,—
Զարկե՛ք եղ մերկ, չփլախ-չփլուխ նախիրներին,
Ով շատ ջարդի, նրան կտամ խաչ ու մեդալ.
Քաղցածների եղ խուժանը կուզի խլել
Թուրս ու թագս, տերությունս սուրը ու արդար:

Զարկին, զարկվան առավոտից մինչ իրիկուն.
Զորքերի մեջ ինչքան կային ռանչպար մարդիկ,
Զորքերի մեջ ինչքան կային բանվոր մարդիկ,
Ասին՝ ինչո՞ւ զարկենք մենք մեր ֆաղիր
յեղբայրներին,
Բոլորն փախան ու միացան մեծ Լենինին:

12.

Զարկին, ծեծկվան առավոտից մինչ իրիկուն,
Փոշուց-ծխից մթնեց արևը յերկնքում:
Նրանք ունեն ռումբ, սուր ու թուր, թոփ-
թնդանոթ,
Սրանք՝ փշտով, դարաբինա, լոմ ու սղնակ,
Նրանք ունեն մոսին, մարտին, գնդակ, վառոդ,
Սրանք՝ յեղան, բահ, անթարոց ու դաղանակ,
Նրանք ունեն տանկ, գնդացիր ու սավառնակ,
Սրանք՝ ճիպոտ, մուրճ, գերանդի, փոցխ ու
դանակ...

— Ե՛յ,— ձայն տվեց Լենին հսկան,
Հեծավ իր ձին, սուրաց առաջ...
Մինչ յե՞րբ,— ասաց,— մեր արյունը պիտի
ծծեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— ես աշխարհը պիտի
դավթեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— մեր իրավունքը տի խլեք,
Մինչ յե՞րբ,— ասաց,— աշխարհը տի
տիրապետեք...
Ասաց, քշեց առաջ՝ կարմիր դրոշը վեր բռնած,
Նրա հետքից բանվոր գնաց հազար-հազար.
Նրա հետքից մշակ գնաց հազար-հազար.
Նրա հետքից ռանչպար գնաց հազար-հազար.
Նրա հետքից անտուն քաղցած հազար-հազար.
Նրա հետքից անգործ, դերի հազար -հազար.
Նրա հետքից անհոդ, անջուր հազար-հազար:
Բռնեցին վոդջ աշխարհ, սար-ձոր, ամեն կողմից.

Բռնեցին կիրճ, քար ու կապան, ամեն կողմից·
Բռնեցին լիճ, չայիր–չիման, ամեն կողմից·
Բռնեցին արտ, արոտ, դաշտեր, ամեն կողմից·
Բռնեցին ծով, դեռեր–ադբյուր, ամեն կողմից·
Բռնեցին ժայռ, ենտառ, թփուտ, ամեն
կողմից···
Զարկին, զարկվան, դուման ելավ աշխարհ
բռնեց,
Զարկին, զարկվան, լեշը շերտ–շերտ դեռին
փռվեց։
Ընկածների արյունն ելավ կապեց մի դետ,
Եդ արնագետ գլորում եր ժայռեր, քարեր,
Ամեն մի քար, ամեն մի ժայռ՝ մի հսկա լեռ։
Զարկին, զարկվան, տերությունները մեկ
կողմից,
Զարկին, զարկվան ժողովուրդը մյուս կողմից։
Նրանք ունեն ռումբ, թնդանոթ, վառոդ, դնդակ,
Սրանք՝ փշտով, փայտ, խաչերկաթ, զարարինա-
Նրանք ունեն մոսին, մարտին, ավին, նիզակ,
Սրանք՝ շամփուր, մանգաղ, յեղան, դերանդի,
բահ·
Նրանք ունեն տանկ, գնդացիր ու սավառնակ,
Սրանք՝ ճիպոտ, քար, հողակոշտ, կացին,
ուրագ···
Զարկին, զարկվան, թողի ամպերը ահագին
Քանց Մասիս սար՝ ելան հասան արեգակին։
Ցար–սուլթանի զորքերի մեջ ինչքան կային,
Են, վոր փողով էր եկել, իր գլուխն եր պահում,
Են, վոր փափուկ եր պահվել, իրա գլուխն եր
ծածկում,
Են, վոր վախկոտ, ջանպահ եր, վախենում եր ու
ծլկում·
Փախչում եյին լեղաճաք զորքի շարքերը անծեր,
Միայն ոտար ու անհոգ մարդիկն եյին մնացել···

13·

Կեսորն թեքվեց, Լենին քաջի զորքը նեղվեց···
Ի՞նչ տի աներ փայտ–քլունգը տանկերի դեմ,
Ի՞նչ տի աներ մանգաղ, կացին մոսինի դեմ···
Լենին հսկան լուր ուղարկեց, ոգնող ուղեց·
Լենին հսկան հավար գցեց, ոգնող ուղեց։
Ոգնող քյոմագն թափվան, եկան չորս կողմերից·
Եկան հասան սև բանվորներ հազար–հազար·
Նրանց հետքից հողագործներ հազար–հազար·
Նրանց հետքից նոքյար, հոտաղ հազար–հազար·
Նրանց հետքից մերկ–քաղցածներ հազար–հազար,
Նրանց հետքից անհող–անջուր հազար–հազար···
Ոգնությունը քամու նման եկավ հասավ,
Լենին քաջի կողմը պնդվեց, հզորացավ,
Թագավորի կողմը հոգնեց ու թուլացավ։

14·

Զարկին, զարկվան, դումանն ելավ աշխարհ
բռնեց·
Զարկին, զարկվան, լեշը շերտ–շերտ դեռին
փռվեց։
Ընկածների արյունն ելավ կապեց մի դետ,
Եդ արնագետ գլորում եր ժայռեր, քարեր—
Ամեն մի ժայռ, ամեն մի քար՝ մի հսկա լեռ։
Զարկին, զարկվան, Լենին քաջի զորքը զոռեց,
Զո՛ւ քաշեցին, առաջ թռան քաջերն առյուծ·
Ջնայեցին էլ գնդացիր, տանկ, հրացան,
Կրծքով բացին իրենց ճամբան զորքի միջով,
Վոտքերի տակ լեշը շերտ–շերտ կոխին անցան,
Յերկինք–դետինք փակեց, ծածկեց արյան մի
ծով։
Յոթն ընկնում եր, մեկն անցնում եր, նետվում
առաջ·
Լեշն թափվում եր ինչպես աշնան խուիլ տերև···

Ընկնում էին, մեկն՝ անգլուխ, մեկը՝ անթև,
Ամեն կողմից՝ վիրավորի լաց ու հառաչ։
Լենին հսկան կերթար առաջ՝ բայրաղ բռնած.
— Հե՛յ, հե՛յ, տղերք, առաջ թռեք, որը մեռն
է...

Առաջ անցավ քսդցածների բանակն ահեղ,
Տերունական զորքը խառնվեց, փախավ ցրիվ...
Լենին քաջի զորքը թափվեց ինչպես մորեխ,
Ինչպես յերկնքից մեկեն իջած անթիվ արծիվ,
Ինչպես զարնան հեղեղալի գետերն անդութ,
Ինչպես ծովի փոթորիկը փրփրածին,
Ինչպես կայծակ, մայիս ամսի վարար կարկուտ,
Ինչպես սամում... յերկինք–գետինք խառնվեցին։
Լենին հսկան գրոհ տվեց, բոլորն առավ,
Առավ նրանց թնդանոթներ–զենքեր բոլոր,
Առավ նրանց սավառնակներ, ռումբեր բոլոր.
Առավ նրանց զնդացիրներ, տանկեր բոլոր,
Բոլոր առավ, նրանց թողեց տկլոր ու մերկ,
Տվեց–ցրվեց, քանդեց, փռեց աշխարհով մեկ...

15.

Թշնամու զորքն՝ վոր մեկն ընկավ, վոր մեկն
փախավ.
Թողերն կտրավ, բաժին դարձան չար սատանին։
ՏերուԹյան պես, են ռուսական մեծ սուլԹանին,
Անտաշ, զմբռ, են բաց–բերան, լիրբ, անամոթ,
Են մարդ կախող, են սիրտ դաղող անխիղճ
ցարին
Վողջ–վողջ բռնին, քաշ տվեցին Լենինի մոտ։
Լենինն ասաց,— եդ ի՞նչ արիր, կոնծող հիմար,
Քու ի՞նչ ռանն եր կառավարել ժողովրդին,
Պիտի սատկեք ամբողջ ցեղով, վորդոց–վորդի։
Են ցարն ասաց,— քու վոտքերին մեռնեմ, Լենին,
Մի՛ սպանի, մատաղ եմ քեզ, խնայի՛ր մեզ,

Մի կտոր հող տուր, սեխ ցանեմ, դառնամ
խոնարհ մի բոստանչի.
Քու շնորհքով բալեքիս հետ ապրեմ մինչև...։
— Ցես չեմ խաբվի, վերջ տուր չողոմ եղ
խոսքերին.—

Ասաց Լենին, քաշեց սուրը, գլուխն զարկեց...
Գլուխն զարկեց, կեղտոտ լեշը գցեց քյուլխան,
Փողոցների շներն բոլոր թափվան–եկան,
Քաշքշեցին, լեշը արին պատառ–պատառ։
Ցարի գլուխն զարկին յերկար ցցի ծերին,
Վեր պարզեցին քանց արյունոտ սպանված ցին,
Վողջ աշխարհը պատեցին, մինչև նեխվեց,
Հետո բերին, աղբանոցում խոր թաղեցին...

16.

Սատկեց դմբոն, վոր նստել եր յերկրի վզին։
Քանի՛–քանի՛ վոճիրներ եր են գայլն արել.
Քանի՛–քանի՛ ոճախներ եր են դեվն մարել.
Քանի՛–քանի՛ մանուկներ եր խեղճ վորը թողել.
Քանի՛–քանի՛ ջահել–ջիվան սաղ–սաղ թաղել.
Քանի՛–քանի՛ մայրեր, քույրեր սեվեր հագան.
Քանի՛ կյանքեր ճրագի պես փչեց հանգան.
Քանի՛ ջեյրան կանայք արեց վորբևայրի,
Քանի՛ դաչտեր արեց խոպան չոր ու վայրի.
Քանի՛ մարդիկ մղկտացին զնդաններում.
Քանի՛–քանի՛ յերկրին բերեց մահ ու արյուն.
Քանի՛–քանի՛ ըմբոստ, կարիճ գլուխ զարկեց.
Քանի՛–քանի՛ պատերազմներ, կռիվ սարքեց.
Ուզում եր նա յերկինք, գետինք հրին հանձնի,
Աշխարհը գա իրա թրի տակով անցնի։

17.

Լենին հսկան բոյշևիկի որենք դրեց.
Ցերկրի կարգը գլուխն ի վեր նա շուռ տվեց.

Են առաջվա հարուստներին արեց կատու,
Խլեց ամեն ինչ նրանց ձեռքից, թողեց անտուն։
Են առաջվա աղքատներին արեց տան տեր.
Նրանց տվեց յեղ, կով, այգի, հող ու հանդեր։
Են բեկերին, աղաներին դարձրեց գերի,
Գործից գցեց, քշեց խորքերն եղ բոլորին.
Են առաջվա չորաններին, նոքարներին
Ուսում տվեց, զեկավարներ կարգեց յերկրին։
Վողջ յերկիրը գլուխ տվեց բանվորներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց ռանչպարներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց նոքարներին։
Են վոր խեղճ եր, անճար, քաղցած, տարավ
առաջ,
Ով հարուստ եր, աղա ու բեգ, գլխին զարկեց,
Քշեց, գնաց մոր թեվի տակ մտավ անդարձ,
Կամ թե քաղցած, ծարավ չրջեց, վերջը սատկեց։
Յերկիրն մաքրեց են իմաստուն Լենին հսկան,
Թողեց նրան, ով սիրում է սուրը աշխատանք.
Ինչպես արև, ինչպես հզոր մի բարեկամ,
Ժողովրդին առավ իր լայն թեվերի տակ...

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

(Նրա մահվան առթիվ)

Լենինը մի լուս եր, եկավ ու գնաց,
Իրա խոսք ու կոռծը աշխարքը լցվավ.
Քանց լուսավոր աստղ փայլեց ու անցավ,
Ափսո՛ս քեզի, ափսո՛ս, աննման Լենին։

Արևելք, արևմուտք, հարավ ու հյուսիս,
Ամեն տեղ տարածվեց քո վառ փառքի լիս-
Տո՛ւ յես մեծ մարքարե, փրկող ամենքիս,
Ափսո՛ս, հազա՞ր ափսոս, աննման Լենին։

Տու ամբողջ յերկրի փոխեցիր կարքը,
Շուռ տվիր կլխիվեր, ոահմանիր վարքը,
Աշխարհե աշխարհ հասավ քո անվան փառքը,
Ափսո՛ս, վոր մահացար, մեր ընկեր Լենին։

Թշնամի ազդերը ընկեր չինեցիր,
Զրկված պանվորներին առաջ քաշեցիր,
Խեղճ, ֆաղիր գեղացու հոքին փրկեցիր,
Հազա՞ր ափսոս մեռար, դու մեր լավ Լենին։

Գրի առավ՝ բանահավաք՝ Գ. ԹԱՐ-
ՎԵՐԴՅԱՆ

ԼԵՆԻՆԻ ՑԵՐԳԸ

Լսե՛ք պատմեմ իրականից,
Թե իսկը ո՞վ եր Լենինը.
Հասկացող եր ամմեն բանից,
Շնորքի ծով եր Լենինը։

Ծով խելքովը աշխարհ չափեց,
Ինչքա՜ն ճիդ ու ջանքեր թափեց,
Թշնամին տեսավ, սարսափեց,
Ընդերներով եր Լենինը։

Ընդերներով չատ-չատ տարի,
Աշխատեցին ժիր ու արի.
Մեծ հոքի յեր, խղճով բարի,
Շատ անունով եր Լենինը։

Անունը պայծառ ու մեծ եր,
Լուս տվող կրակ ու բոց եր.
Բարի, մարթասեր, անկեղծ եր,
Եհտիբարով եր Լենինը։

Եհտիբարով քաջ զեկավար,
Գտավ բանվորին դեղ ու ճար.
Շատ հոքսեր քաշեց անհամար,
Ինթիզարով եր Լենինը։

Ինթիզարը առավ գործով,
Իմաստուն, խելացի փորցով.
Սաղ թշնամիքը թափեց ծով,
Զարբը զորով եր Լենինը։

— Զարբըտ զոռ, բանվոր, գեղացի՛,
Ասավ՝ թեզ արա միացի,
Բոլոր աշխարհը տիրացի. —
Այսպես խոսող եր Լենինը։

Խոսող եր, խոսքերը անդին,
Շուռ տվեց աշխարհը իր հանդին.
Շինելով նորը, քանդեց հինը,
Հինը կործանող եր Լենինը։

Կործանեց ուժեղը, չարը,
Վեր քարին չթողեց քարը.
Կտրվեց բուրջույի ճարը,
Խիստ հետևող եր Լենինը։

Հետևեց, յերկիրը շինեց,
Անապատները ջուր անցուց,
Ծովը ծովի հետ միացուց,
Քաջ աշխատող եր Լենինը։

Աշխատողին պառծանք լինի,
Հետևողներին կյանք լինի,
Նազուք, խոսքերըտ թանգ լինի,
Արժանավոր եր Լենինը։

ԱՅԺՄ ԼՈՒՍԱՎՈՐ Ե ՏԱՅԳԱՆ

(Եվենկական հեքյաթ)

Ինչպե՞ս է մարդն ապրում տայգայում: Կուշտ յեղաբ՝ բավական է:

Այդպես էլ եվենկներն էին ապրում տայգայում: Գետից գետ էին անցնում, սարից սար էին գնում և սկյուռ վորսում:

Ման է գալիս եվենկը տայգայում, սկյուռ ապանում, առաջին ձյունին յեղեվնին է դիտում, նայում, թե ինչպես են վոստերն աճում: Իսկ ինչ նկատում է՝ ուրիշներին չի ասում. Թո՛ղ իրենք տեսնեն: Բայց վորդուն ասում է:

Այդպես էլ Դոլբոնեն եր ապրում: Ցերը հարևանը մի սկյուռ ավելի յե բռնում, Դոլբոնեյի քունը չի տանում, ուզում է յերկուսը բռնել, և ավելի թանդ է ուզում ծախել: Գնում է վաճառականի մոտ ու առաջուց սիրան առնում, հոտ-մոտ քաշում, գներն իմանում, վոր ավելի թանդ ծախի:

Ցերը հարևանը մի կտոր ավելի շաքար, մի բուռ ավելի ալյուր է գնում՝ Դոլբոնեն նախանձից հայհոյում է հարևանին, հենց ուզում է նրան խեղդի:

Այդ ժամանակ Վլադիմիրը յերևան յեկավ ու սկսեց խոսել.— դուք, ասում է, ապրում եք անտառում, վոսկու վրա յեք ման գալիս, հարստության մեջ ապրում, բայց աղքատ եք: Վոսկին պետք է մարդուն, սկյուռն էլ պետք է մարդուն: Իսկ դուք, ասում է, ինչո՞ւ եք իրար նախանձում: Հարկավոր է, ասում է, վոր միասին ապրեք, միասին վորս անեք, միասին առևտուր անեք:

Դրա վրա վաճառականներն ասում են. «Վլադիմիրը շար մարդ է. Վլադիմիրը թագավորի թշնամին է: Ով սպանի Վլադիմիրին, թագավորը յերեք ռուբլի պարգև կտա նրան»:

Դոլբոնեն միտքը դրեց սպանել Վլադիմիրին ու յերեք ռուբլի պարգև ստանալ:

Մի որ էլ Վլադիմիրը գնաց վորսի: Գնում է Վլադիմիրը, իսկ նրա յետևից Դոլբոնեն ծառից ծառ է թռչում: Կարո՞ղ է Վլադիմիրն ազատվել եվենկի ձեռքից:

Նայում է Դոլբոնեն ու տեսնում, վոր Վլադիմիրը գնում է ու գետնին նայում, ասես մի մեծ մտածմունք գլուխը ներքև է քաշում: Իսկ հրացանը զուր տեղը կախված է նրա ուսից: Դոլբոնեն թեև խիստ բարկացած եր, բայց եդ վոր տեսավ, վախ զգաց. «Եդ ի՞նչ է մի գլուխ մտածում ու չի կրակում»:

Ցեվ Դոլբոնեն սկսեց նշան բռնել: Գլխին է նշան բռնում, տեսնում է Վլադիմիրի գլուխը չկա, միայն մարմինն է հրացանահատիկի առջևից գնում: Հրացանը կախ է գցում Դոլբոնեն ու նայում.— Վլադիմիրը գնում է բոյովը մեկ, գլուխն էլ իր տեղը: Նորից է ըսկըսում նշան բռնել, նորից գլուխը չկա: Եդպես բան Դոլբոնեն յերբեք չեր տեսել: Ցեկ, ասում է, մեջքին խփեմ, հա մեջքն էլ չի՞ փախչի: Սկսում է մեջքին նշան բռնել, նայում է ու տեսնում— վոտքերը գնում են, դրանց վրա էլ գլուխը, իսկ մեջքը չկա: Այ սարսափելի բան, հրացանահատիկը դատարկ տեղի յե նայում:

Վախեցավ Դոլբոնեն. չլինի՞ կուրացել եմ, մտածում է: Սրբում է աչքերը, նայում է չորս կողմը ու տեսնում մի դահուճ[1]) է նստել: Նշան է բռնում՝ դահուճը նստած է, կարելի յե կրակել, բայց չի կրակում. կը վախեցնեմ Վլադիմիրին, մտածում է: Ցեվ շարունակում է ճամբեն. նայում է, տեսնում Վլադիմիրը չկա. նոր եստեղ եր, հիմա չկա: Սկսեց վոտքի հետքերին հետևվել. հետքերն առաջանում են, բայց Վլադիմիրը չը-

---

[1]) Վայրի հավ:

կա: Դոլբոնեն սկսեց վազել ու մտածել—այնպես է Վլադիմիրը քայլում, վոր չեմ կարողանում հասնել: Բայց վոր հետքերին նայես՝ Վլադիմիրը հանգարտ քայլում է: Վազում է Դոլբոնեն ու հևում: Մտածում է՝ միայն թե հասնեմ— թե հրացանը չբանի վրան, պարմայով[2]) կսպանեմ—ո՞ւր կարող է թաղնվել: Պարման արջին ել կարելի յե դեմ անել:

Հանկարծ կկուն կվկվաց: Դոլբոնեն վախեցավ ու մտածեց. «Ինչո՞ւ յե կկուն կվկվում: Չե՞ վոր աշուն է»: Ապա մայրահավը մնջաց: Դոլբոնեն ասաց. «Ինչո՞ւ յե մայրահավը մնջում: Մայրահավը գարնանն է մնջում, իսկ այժմ աշուն է»: Նայում է ու տեսնում՝ սկյուռները սոճու վրա իրար յետեվից են ընկել: Բոլորովին վախեցավ Դոլբոնեն ու մտածեց. «Ե՛ է, վատ բան է լինելու, սկյուռներն աշնանն իրար յետև են ընկել— ձագերն ել ձմեռը կծնվեն, կսառեն ու է՛լ վորս չի լինի: Մայրահավի ճտերը կսառեն՝ միս չի լինի, սով կլինի, մահը վրա կտա: Բայց և այնպես Վլադիմիրին պետք է սպանել»:

Հենց այս եր մտածում Դոլբոնեն, յերբ մայրահավը ճյուղի վրայից գոռաց նրան. «Ի՛նձ սպանի, Վլադիմիրին մի՛ սպանի»: Սկյուռն ել գոռաց նրան. «Ի՛նձ սպանի, Վլադիմիրին մի՛ սպանի»: Կկուն ել ձայն տվեց. «Ի՛նձ սպանի, Վլադիմիրին մի՛ սպանի»: Վազում է դայլը, յեղևնու յետևից դուրս է թռչում արջը, իշայծյամը կոտոշներն է ճիգ տալիս, ջրաղվեսը փորսող է տալիս, ամենքն ել գոռում են. «Ի՛նձ սպանի, Վլադիմիրին մի՛ սպանի»:

Յեվ բոլորովին վախեցավ Դոլբոնեն ու մտածեց. «Թե դայլին սպանեմ՝ արջն ինձ կդդի, թե արջին սպանեմ՝ դայլն ինձ կուտի. թե կկուին սպանեմ՝ մայրահավն ինձ իր թևերով կծեծի. թե մայրահավին սպանեմ՝ կկուն կկոցահարի. իշայծյամին սպանեմ՝ ջրաղվեսը կխեղդի. ջրաղվեսին սպանեմ՝ իշայծյամն իր վոտներով

---

2) Տեղի, նիզակի մի տեսակ:



Կարմիր Հրապարակում
Պ. Ստարոնցով (փայտագրություն)

քացի կտա ու կջարդի. սկյուռին սպանեմ՝ ամենքն էլ կբարկանան»:

Յեվ Դոլբոնեն վոչ մեկին չսպանեց, այլ սպանեց նապաստակին:

Հենց վոր սպանեց նապաստակին՝ տեսավ Վլադիմիրը կանգնել է իր կողքին:

Յեվ ծիծաղում է ու ասում.

— Ինչո՞ւ ինձ չսպանեցիր, Դոլբոնե՛:

Դոլբոնեն ասում է.

— Գլուխդ չկար:

— Ինչո՞ւ մեջքիս չխփեցիր:

— Մեջքդ էլ չկար:

—Իսկ ինչո՞ւ գոտկատեղիս չխփեցիր:

— Դու ինքդ էլ չկայիր:

Վլադիմիրն ասում է.

— Հիմար ես դու, Դոլբոնե՛, յե՛կ գնանք տուն:

Ու գնացին տուն: Գազանները ցրվեցին անտառում, ամեն մեկը գնաց իր բանին.— սկյուռն սկսեց ընկույզ հավաքել փչակում, մայրահավը՝ հապալաս[1]) կոցահարել, արջը՝ մորի ուտել, գայլը՝ նապաստակներ պատառոտել, ջրաղվեսը՝ բույնը փորել, կկուն էլ իր ձայնը կարեց:

Դոլբոնեն ամաչում էր Վլադիմիրի հետ քայլելուց: Ուստի ասաց.

— Ամաչում եմ քեզ հետ գալ:

Վլադիմիրն ասաց.

— Ինչո՞ւ յես ամաչում:

— Դոլբոնեն գայլից էլ վատ յեղավ, ուզեց սպանել քեզ:

Վլադիմիրն ասաց.

— Չե, վոչ թե ավելի վատ, այլ հենց գայլի պես: Գայլը նապաստակին բռնում է, միսն ուտում, մորթին գցում, իսկ մորթին փող արժի: Դու ուզում էիր ինձ սպանել, յերեք ռուբլի ստանալ, իսկ յես դուցե ավելի արժեմ:

---

1) Հատապտուղ է. брусника:

Այդ ժամանակ Վլադիմիրի տաս տարին լրացավ և նա գնաց տայգայից։

Ման և գալիս Դոլբոնեն տայգայում ու մտածում. «Ինչո՞ւ Վլադիմիրի գլուխը չկար»։

— Ցես եյի ծածկել,—ասում է սպիտակ յեղևնին։

— Ինչո՞ւ Վլադիմիրի մեջքը չկար։

— Ցես եյի ծածկել,— ասում է գլխացավիկը[1])։

— Ինչո՞ւ Վլադիմիրն ինքը չկար։

— Մենք եյինք ծածկել,— գոչում են գազանները։

Վատացավ Դոլբոնեյի վորսը։ Նշան է բռնում նա սկյուռին, իսկ սկյուռը ճայն է տալիս.

— Դու ուզում եյիր սպանել Վլադիմիրին, իսկ Վլադիմիրը մեզ բոլորիցս ավելի թանգ է,— և փախչում է նրանից։

Նշան է բռնում Դոլբոնեն իշայծյամին, իսկ իշայծյամը գոռում է.

— Դու ուզում եյիր սպանել Վլադիմիրին, իսկ Վլադիմիրը մեզ բոլորիցս ավելի թանգ է,— և փախչում է նրանից։

***

Շատ տարիներ անցան։ Տայգայում սկսեցին խոսել, թե Տալյակեն գետի[2]) մոտ ձմեռանոց են հիմնել, սկյուռ են առնում՝ ալյուր տալիս, աղ, շաքար, մահուզ տալիս, ամեն բան տալիս են ու շատ են տալիս, վաճառականների տվածից հինգ անգամ ավելի։ Իսկ ով սկյուռ չունի՝ պարտքով են տալիս։

Դոլբոնեն էլ գնաց Տալյակենի ձմեռանոցը և այսպես ասաց.

— Սկյուռ չունեմ, բայց ալյուր է պետք։

Յեվ նրան ասացին.

— Եվե՞նկ ես դու, հրացան ունի՞ս, շուն ունի՞ս, աչք ու վոտք ունի՞ս։— Ա՛ռ։

Դոլբոնեն հարցրեց.

— Ինչո՞ւ յես տալիս, բա վոր չհանձնե՞մ։

Պատասխանեցին նրան.

[1]) Богульник—թունավոր պտուղներով ճահճային թուփ է։

[2]) Մի փոքր գետակ է Տուրինի կուլտբազայի մոտ։

— Ո՞ւր կթաղնվես. մյուս անգամ է՛լ չենք տա։ Դոլբոնեն ասաց.

— Ճիշտ է, ո՞ւր թաղնվեմ։ Յեթե չհանձնեմ՝ վաճառականը կբարկանա ու է՛լ չի տա։

Նրան ասացին, վոր

— Հիմա վաճառականներ չկան։

— Լա՛վ. թաղավորը կբարկանա։

— Թաղավոր էլ չկա։

— Բա ի՞նչ է յեղել։

— Ցած գցեցին։

— Բա ո՞վ է առտուր անում։

Ասացին.

— Պետությունն է անում, Խորհրդային իշխանությունն է անում։

Դոլբոնեն չեր կարողանում հասկանալ։ Հարցրին նրան.

— Յերեխաներ ունե՞ս։

— Մի տղա ունեմ։

— Տղայիդ տար Իլիմպեյի տունդրան[1])։ Հիմա այնտեղ մեծ ձմեռանոց են հիմնել. բժիշկ կա այնտեղ, ուսուցիչ կա, տղայիդ կարդալ-գրել կսովորեցնեն, ինքն էլ կոոպերատիվում կսկսի առևտուր անել։ Հետո ելմի մեծ քաղաք կգնա և ուսում կստանա։

Դոլբոնեն հարցրեց.

— Եղ մեզ մոտ ապրող Վլադիմիրը չի՞, վոր թաղավորին ցած է գցել ու առտուր է անում։

Ասացին.

— Վլադիմիրն է։ Միայն թե նա այստեղ չեր ապրում, ուրիշ տեղ եր ապրում։

Դոլբոնեն ասաց.

— Ինչո՞ւ յեք ստում։ Այստեղ եր ապրում, հիշում եմ։

Դոլբոնեն գնաց տուն ու շարունակ մտածում եր. «Ինչպե՞ս թե Վլադիմիրն այստեղ չեր ապրում. չե՞ վոր այստեղ եր ապրում։ Այ թե վո՛նց է լինում, վոր մար-

[1]) Իլիմպեյ գետի անունով։

դու դլուխը պտտվում է—այստեղ էր Վլադիմիրն ապրում, բայց ասում են՝ չէր ապրում»:

Քանի՞ մարդ է ապրում տայգայում.— այնքան, ինչքան աստղ կա յերկնքում: Վոր ամենքին էլ նախանձես՝ վոտքի վրա կչորանաս: Իսկ յեթե միասին ապրենք, ինչպես Վլադիմիրն է ասում, լավ կլինի— մեկը մի բուռ վառոդ կտա, մյուսը պիստոն կտա, մի ուրիշն էլ խորհուրդ կտա: Լա՛վ բան արեց Վլադիմիրը, չա՛տ լավ բան արեց:

Յեվ Դոլբոնեն այս յերգը յերգեց.

Տգեստ էր Դոլբոնեն ու չար:
Վլադիմիրը խելք բերեց աշխարհ:
Հիմա տայգան լուսավոր է.
Բայց Վլադիմիրն ո՞ւր է ապրել:

Գրի յե առնված Արևմտյան Սիբիրում՝ 1931 թ.

ԼԵՆԻՆՅԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

(Բելոռուսական հեքյաթ)

Գյուղում ապրում էին յերկու յեղբայր: Դաշտը վարում էին, հողը արցունքով ջրում և իզուր մեջքները ծռում: Նրանց հացն ու անասունը վերցնում էին պանները, իսկ փոխարենը վարձատրում էին բռունցքներով:

Տանջվեցին-տրորվեցին յեղբայրները մի տարի չէ, յերկու տարի, հայտնի չէ ինչքան: Շուրջը՝ մյուս գյուղացիներն էլ յեղբայրներից ավելի լավ չէին ապրում:

Հոգնեցին –ձանձրացան յեղբայրները ուրիշի ապրուստի համար աշխատելուց: Վորոշեցին գնալ մայրաքաղաք Ռուսաստանում արդարություն փնտռելու: Գնացին:

Գնում են մի ամիս, մի տարի: Տեսնում են՝ հրես մի մեծ գյուղ: Գյուղի մեջտեղը—պանի տուն, իսկ կողքին—քարաշեն յեկեղեցի:

«Արի,— մտածում են յեղբայրները,— մտնենք այստեղ, հարցնենք՝ արդարությունը վորտեղ է ապրում»:

Գնում են նրանք գյուղով, իսկ նրանց դեմ գալիս է պանը՝ կառք նստած:

— Ո՞ւմ գյուղացիներն եք, ո՞ւր եք գնում և ի՞նչ եք փնտռում,— հարցնում է պանը նրանց:

Յեղբայրները պատասխանում են նրան:

— Մենք ապրում էինք դառն աղքատության մեջ, ելեզպես ապրելու ճար չունենք: Գնում ենք արդարություն փնտռելու: Մեզ սովորեցրու, պան, վո՞ւրտեղ գտնենք նրան:

— Լավ,— ասում է պանը,— յես ցույց կտամ ձեզ

արդարությունը, եթե ցանկանում եք։ Բայց թե՝ դրա համար դուք մի տարի պիտի աշխատեք ինձ համար։

Յեղբայրները համաձայնեցին։

Ու աշխատեցին նրանք, աշխատեցին. դաշտը վարեցին, հողն արցունքով ջրեցին։ Անցավ մի տարի։ Յեկան նրանք պանի մոտ և ասացին.

— Դե, սովորեցրու մեզ, պան, արդարությունը վո՞րտեղ գտնենք։

— Ե, ահա ձեզ արդարությունը,— պատասխանում է պանը նրանց,— դուք, կեղտոտ տկլորներ, պետք է աշխատեք մեզ՝ պաններիս համար։

Յեղբայրները թքեցին ու հեռացան-գնացին։

Գնացին մի ամիս, գնացին մի տարի։ Հասան մի գյուղ։ Տերտերը դալիս եր դեմից։

Յեղբայրները դարձան նրան.

— Սովորեցրու, տեր-հայր, վո՞րտեղ գտնենք արդարությունը։

— Լավ,— ասում է տերտերը,— յես յերկնային թագավորից ձեզ համար արդարություն կաղերսեմ, իսկ դուք դրա փոխարեն մի տարի կաշխատեք ինձ համար։

Յեղբայրները համաձայնեցին։ Ու աշխատեցին նրանք, աշխատեցին. տերտերի վարատեղը վարեցին, հողն արցունքներով ջրեցին։ Տարին անցավ։ Յեղբայրներն յեկան տերտերի մոտ, և տերտերն ասավ նրանց.

— Լավ աշխատեցեք, ասածուն մի բարկացնեք,— ահա՛ ձեր արդարությունը։

Յեղբայրները թքեցին ու հեռացան-գնացին։

Գնում են մի վաճառականի մոտ։ Դուրս է գալիս նա հարուստ-փարթամ, հաստլիկ, պանից ու տերտերից էլ հաստ։

— Լավ,— ասում է վաճառականը, կսովորեցնեմ ձեզ՝ վորտեղ արդարությունը գտնեք, միայն թե մի տարի պիտի աշխատեք ինձ համար։

Յեղբայրները համաձայնեցին։ Սկսեցին վաճառականի համար աշխատել, մեջքները ծռել։ Սովորեցրեց վաճառականը նրանց, թե ինչպես խաբել ազնիվ ժողովրդին, խեղճերին։ Դեռ տարին չանցած՝ փոքրն ասավ.

— Յես էլ արդարություն վորոնելու չեմ գնա։ Աշխարհում գյուղացու արդարությունը չկա։

Յեվ նա վերադարձավ իր գյուղը։ Իսկ մեծ յեղբայրը համառ եր— չուզեց առանց արդարության տուն վերադառնալ։ Մենակ գնաց գործարանատիրոջ մոտ։

Գործարանատերը հարուստ եր ավելի թե պանից, թե տերտերից, թե վաճառականից։ Մեծ յեղբայրն սկսեց աշխատել նրա մոտ։ Իսկ գործարանում շատ մարդ եր աշխատում։

Աշխատեցին շատ տարիներ, մեջքները ծռվեցին, բայց արդարություն չտեսան։ Մի անգամ յեղբայրը մի կամացուկ զրույց լսեց։

Մենակ մի մարդ կա, վոր արդարությունը գիտի։ Եղ մարդու անունը Լենին է, իսկ նա ապրում է Պիտերում։

Հիշեց յեղբայրն այդ անունը ու գնաց այդ մարդուն փնտռելու։

Քայլեց շատ որեր, գուցե և ամիսներ։ Յեկավ Հասավ Պիտեր։ Տեսավ մի բանվոր եր գնում։ Նա մոտեցավ դրան ու կամաց հարցրեց.

— Ասա՛ Լենինին վորտե՞ղ գտնեմ։

Իսկ բանվորը նրան ավելի կամաց.

— Գնանք, յես քեզ կտանեմ-կհասցնեմ։

Գալիս մտնում են նրանք մի սովորական սենյակ։ Շուրջը ամեն տեսակ գրքեր են, շատ գրքեր։ Դուրս յեկավ նրանց մոտ մի մարդ, վոր հաղնված եր վոչ հարուստ, բայց մաքուր։ Դուրս յեկավ և սիրալիր ասավ.

— Բարև, ընկերներ, ի՞նչ լավ բան կասեք։

Պատմեց յեղբայրը նրան, թե ինչպես եր արդարություն վորոնել։ Յերկար խոսեց Լենինը նրա հետ

գործարանում յեղած կարգերի մասին, հարցուփորձեց գյուղի աղքատների մասին, և հետո ասավ.

— Դու ճիշտ ես արել, վոր արդարություն փնտռելու համար գործարան ես գնացել. այնտեղ ապրելի չուտ կլիմանաս, թե նա վորտեղ է: Դուք արդարությունը ձեր ձեռքին եք պահում:

Յեվ պատմեց Լենինը նրան, թե ինչպես պետք է պայքարել բանվորական արդարության համար, վորպեսզի չծառայեն վոչ պաններին, վոչ վաճառականներին, վոչ գործարանատերերին, և թե ինչպես պետք է դրանց դուրս քշել Թագավորի հետ միասին:

Վերադարձավ յեղբայրը գործարան և սկսեց ընկերներին լենինյան արդարությունը պատմել: Մեկը պատմում է— տասը լսում են, տասը պատմում են— հարյուրը լսում: Յեվ տարածվեց լենինյան արդարությունը ամբողջ աշխարհում:

Շատ տարիներ այդ արդարությունը չբջեց գործարաններում ու գյուղերում: Բանվորներին ու գյուղացիներին վոտքի հանեց՝ պայքարի: Իսկ տասյոթթվի հոկտեմբերին այդ արդարությունը յերևաց ու խոսեց բարձրաձայն, ու նրա ձայնը զողանջեց ամբողջ աշխարհում: Բանվորները ու գյուղացիները կռիվ գնացին կալվածատերերի ու գործարանատերերի դեմ: Իսկ նրանց կռվի տարավ-առաջնորդեց ինքը Լենինը իր ամենալավ ոգնականի՝ Ստալինի հետ միասին: Յեվ լենինյան արդարությունը հաղթանակեց:

Այդ որվանից բանվորները ու գյուղացիները ել չեն աշխատում պանների ու գործարանատերերի համար, մեջք չեն ծռում, հողը արցունքով չեն ջրում,— իրե՛նք են իրենց գործարանների, իրենց հողի ու կյանքի տերը:

ԼՈՒՍՆԻՑ ՅԵՎ ԱՍՏՂԵՐԻՑ ԾՆՎԵՑ ԼԵՆԻՆԸ

Ուզբեկական լեգենդ

Մարդիկ չեն կարող ապրել առանց յերջանկության: Յեվ նրանք փնտրում են այդ յերջանկությունը, զգում են, թե վո՛րտեղ է, ու գնում են դեպի նա: Բայց նրա ճանապարհն ընկած եր ցուրտ, ձյունապատ լեռների վրայով: Յեվ դա դեռ վոչինչ. յերջանկության ճանապարհին պառկած եր ոկ-իլենը—սլաքանման ոձը: Բոլոր չար վոգիները հրամայել եյին այդ ոձին.— մարդ չթողնես: Յեվ նա չեր թողնում: Բայց մարդիկը չեն կարող առանց յերջանկության ապրել: Յեվ ահա մարդիկ հնարեցին նետ-աղեղը: Զինվեցին այդ նետ-աղեղով ու գնացին յերջանկություն փնտրելու: Բայց իզուր. աղեղի նետերը չեն կարողանում խոցել, սպանել ոկ-իլենին. նրանք կոտրվում են, նրանք միայն խուտուտ են ածում չար ոձին: Մի-թե արին մարդիկ և հնարեցին վահանը: Ու վահանով ծածկված չարժվեցին դեպի յերջանկությունը, բայց այս անգամ ել ոկ-իլենը ծակծկեց նրանց վահանները, և մարդկային շատ արյուն թափվեց:

Այդ ժամանակ մարդիկ հուսահատված հնարեցին նորանոր զենքեր— չեն կարող ապրել մարդիկ առանց յերջանկության— և աղդ-աղդի յետևից, ցեղ-ցեղի յետևից չարժվեցին-գնացին դեպի յերջանկությունը: Բայց ոկ-իլենն առաջվա պես վոչ-վոքի չեր թողնում: Ոկ-իլենը հետզհետե ավելի յեր ամրապնդվում, մարդկային ամեն մի հնարագիտության հետ դառնում եր ավելի և ավելի ուժեղ: Յեվ մարդիկ չգիտեին ի՛նչ անեն, ուզում եյին արդեն կես ճանապարհին կանգ առնել:

Յեվ այդ ժամանակ ահա մի մարդ յերևաց. նա հագնված եր դեկխանի պես. նրա ձեռքերը ծածկված

Եյին կոշտերով, ինչպես դեկխանի ձեռներ, և նրա ձեռին հաց կար: Նա վոչ մի զենք չուներ, այլ միայն հաց: Ու մենակ այդ հացը ձեռին նա գնաց ակ-իլենի դեմ: Մարդը մոտեցավ ակ-իլենին, ակ-իլենը մոտեցավ մարդուն, ու յերկուսն էլ կանգ առան: Ակ-իլենը ուժը հավաքեց ու հարձակվեց մարդու վրա: Մարդը չպաշտպանվեց. նա միայն առաջ մեկնեց կոշտերով ծածկված ձեռները, վորոնց մեջ հացն եր: Ակ-իլենը լեղուն կըպցրեց հացին, ակ-իլենը դիպավ-դարկվեց հացին և ընկավ ու սատկեց: Յեվ յերջանկության հանապարհը բացվեց, ու մարդիկ այդ դեկխանի նման մարդու յեռևից գնացին դեպի յերջանկությունը: Այդ մարդը, վոր նրանց տարավ առաջ և ազատեց ոձից, չքավոր եր, բայց ծնվել եր լուսնից ու աստղերից և նրանցից ստացել իր ուժը:

Ականջ դրեք, լսեցեք, ուզբեկնե՛ր.—այդ ազատարար մարդուն կոչում են Լենին:

Գրի յե առնված Ուրգուտում (Ուզբեկստան):

Ռեն.Ա Ռեշնաբեր
Ա. Ցեղասպանության անվան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիշողություններ Լենինի մասին

		Եջ
Ի. ՍՏԱԼԻՆ	Լենինի մահվան առթիվ։ *Խորհուրդների համամիութենական II համագումարում արտասանած ճառից, 1924 թ. հունվարի 26-ին։* . . .	7
Ի. ՍՏԱԼԻՆ	Լենինի մասին. *ճառ կրեմլյան կուրսանտների յերեկույթում 1924 թ. հունվարի 28-ին* .	9
	Ընկեր Ստալինի ճառից՝ *Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական ոկրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1937 թվ. դեկտեմբերի 11-ին։*	22
	Ընկ. Ա. Միկոյանի ճառից՝ *Յերևանի Ստալինյան ընտրական ոկրուգի ընտրողների ժողովում 1937 թվ. դեկտեմբերի 9-ին։* . .	23
Մ. ԳՈՐԿԻ	Վ. Ի. Լենին *(հատվածներ)*	25
Ս. ՈՐՋՈՆԻԿԻՋԵ	Լենինի մոտ *(հիշողություններից)* . .	35
Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ	Ախտուում *(հիշողություններից)*. .	38
	Լենինի ճամակներից	47
Մ. ՈՒԼՅԱՆՈՎԱ	Լենինի մասին	49
ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ	Լենինը մեռավ *(հատված «Լենինի մտքերը կրոնի մասին» գրքից)* .	63
ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ	Թարմ գերեզմանի վրա *(հատվածներ «Լենինի մտքերը կրոնի մասին» գրքից)*	65
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ	Լենինի մահվան լուրի տպավորությունը	68

Բանվորների յեվ գյուղացիների պատմածները Լենինի մասին.

Կոնակը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 73
Հյուրը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 74
Վառարան շինողը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. . . . 80
Հանդիպում. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 83
Բանվորների պատմածները Լենինի մասին (*Լենինգրադի տարբեր գործարանների բանվորների կոլեկտիվ պատմածը*). *Թարգմ.՝* Արմ. Թամազյան 84
Լենինը խոսում է զինվոր-նակատայինի հետ բանակի դրության մասին. *Թարգմ.՝* Արմ. Թամազյան 89
Թե ինչպես Ֆեոդոսիա Նիկիտիչնան յեղավ Լենինի մոտ. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 91
Ինչպես եր Լենինը բազմվում Ռազլիվում, նախ՝ ձեղնահարկում, ապա՝ շալաշում։ *Թարգմ.՝* Վեսպեր 93
Թե ինչպես Լենինը բազմվեց Ֆինլանդական ցալկալա գյուղում. *Թարգմ.՝* Վեսպեր. 98
Լենինը հնոցապան. *Թարգմ.՝* Արտաշ. 103
Իլյիչը մեռավ. *Թարգմ.՝* Ս. Զորյան 105
Դագաղի առաջ. *Թարգմ.՝* Արմ. Թամազյան . . 106

Ցերեխաների պատմածները Լենինի մասին

Լենինը մեզ ֆուտբոլի գնդակ տվեց 113
Հանդիպում Լենինի հետ 114
Իլյիչը շաբաթոյակի ժամանակ 114
Հիշողություն Լենինի մասին 115
Իլյիչը բազմվում է 115

Լենինը գեղարվեստական գրականության մեջ

ՀԱՆՐԻ ԲԱՐԲՅՈՒՍ Մարդը դեկի մոտ (*Հատվածներ «Ստալին» գրքից*)։ *Ֆրանսերենից թարգմ.՝* Վ. Թերզիբաշյան 119
ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ Հաց (*հատվածներ վեպից*)։ *Թարգմ.՝* Վ. Թերզիբաշյան 121
Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ Լենին (*պոեմից*). *Թարգմ.՝* Գ. Աբով . 128
ԶԱՄԲՈՒԼ Լենինի դամբարանում. *Ռուսերենից թարգմ.՝* Ավ. Իսահակյան 140
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Լենինը անմահ 143
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ի. Լենին 144
ԱԼԻՈ ՄԱՇԱՇՎԻԼԻ Լենին. *Վրացերենից թարգմ.՝* Գ. Արտուճի 145
ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ Լենինականի դասում 147
ԻՈՀԱՆՆԵՍ ԲԵԽԵՐ Լենին (*հատված*). *Ռուս. թարգմ.՝* Ս. Տարոնցի 152
ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ Լենին (*Հատված «Ստալին» պոեմից*) . 154
ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ Լենին 164
ՎԵՐԱ ԻՆԲԵՐ Հինգ գեղեկ ու գիշեր. *Թարգմ.* Գ. Սարյան 166
ԶԱՄԲՈՒԼ Յերգ յեղումի մասին. *Ռուս. թարգմ.՝* Ավ. Իսահակյան . . . . , . 167
ՍԱՆԴՐՈ ԵՈՒԼԻ Մեծ առաջնորդը. *Վրացերենից թարգմ.՝* Գր. Արտուճի 168
ԵՐԳԱՇ Մեսամսե մի բաշկիրական (*ուզբեկական*). *Ռուսերենից թարգմ.՝* Արմ. Թամազյան 169
ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻ Ձյան փաթիլներ. *Ռուսերենից թարգմ.՝* Հր. Պողոսյան 171
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԺԱՐՈՎ Լենինի թաղումը. *Թարգմ.՝* Գ. Բարյան 173
ՍՈՒԼԵՅՄԱՆ ՍՏԱԼՍԿԻ Լենինը. *Ռուս. թարգմանեց՝* Ավ. Իսահակյան 174
Ծովը հառաչում եր (*Ղրիմի թաթարերենից*). *Ռուս. թարգմ.՝* Ավ. Իսահակյան
ԱՇՈՒՂ ԳՐԻԳՈՐ Լենինը 177
ԱՇՈՒՂ ՎԵՐԴԻ Լենին 178
ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ Լենինը և Ստալինը 179
ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ Պատգամավոր 180
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ Լենին-դյուցազնի կռիվը . . . 181
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ Լենինի ծառը 185
ԱՐԱԶԻ Ինչպես յես տեսա Լենինին . . 188
ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ Լենին 191
ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ Լենինն ապրում է . . . 193
Ա. ԲԱՐՏՈ Յերգ Լենինի մասին. *Թարգմ.* Ս. Տարոնցի 195
ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎ (*ըստ Իսբախի*). Լենինն ու Լի-Զանը . 197

Բանվորների յեվ գյուղացիների պատմածները Լենինի մասին.

Էջ

Կոնակը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 73
Հյուրը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 74
Վառարան շինողը. *Թարգմ.՝* Ս. Զորյան. . . . 80
Հանդիպում. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 83
Բանվորների պատմածները Լենինի մասին *(Լենինգրադի տարբեր գործարանների բանվորների կոլեկտիվ պատմածը). Թարգմ.՝* Արմ. Թամազյան 84
Լենինը խոսում է զինվոր-նակատայինի հետ բանակի դրության մասին. *Թարգմ.՝* Արմ. Թամազյան 89
Թե ինչպես Ֆեոդոսիա Նիկիտիչնան յեղավ Լենինի մոտ. *Թարգմ.՝* Ս. Զորյան. 91
Ինչպես եր Լենինը բազմվում Ռազլիվում, նախ՝ ձեղնահարկում, ապա՝ շալաշում։ *Թարգմ.՝* Վեսպեր 93
Թե ինչպես Լենինը բազմվեց Ֆինլանդական ցալկալա գյուղում. *Թարգմ.՝* Վեսպեր. 98
Լենինը հնոցապան. *Թարգմ.՝* Արաքս. 103
Իլյիչը մեռավ. *Թարգմ.՝* Ս. Զորյան 105
Դագաղի առաջ. *Թարգմ.՝* Արմ. Թամազյան . . 106

Ցերեխաների պատմածները Լենինի մասին

Լենինը մեզ ֆուտբոլի գնդակ տվեց 113
Հանդիպում Լենինի հետ 114
Իլյիչը շաբաթոյակի ժամանակ 114
Հիշողություն Լենինի մասին 115
Իլյիչը բազմվում է 115

Լենինը գեղարվեստական գրականության մեջ

ՀԱՆՐԻ ԲԱՐԲՅՈՒՍ Մարդը դեկի մոտ *(Հատվածներ «Ստալին» գրքից)։ Ֆրանսերենից թարգմ.՝* Վ. Թերզիբաշյան 119
ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ Հաց *(հատվածներ վեպից)։ Թարգմ.՝* Վ. Թերզիբաշյան 121
Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ Լենին *(պոեմից). Թարգմ.՝* Գ. Աբով . 128
ԶԱՄԲՈՒԼ Լենինի դամբարանում. *Ռուսերենից Թարգմ.՝* Ավ. Իսահակյան 140
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Լենինը անմահ 143
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ի. Լենին 144
ԱԼԻՈ ՄԱՇԱՇՎԻԼԻ Լենին. *Վրացերենից թարգմ.՝* Գ. Արտունի 145
ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ Լենինականի դասում 147
ԻՈՀԱՆՆԵՍ ԲԵԽԵՐ Լենին *(հատված). Ռուս. թարգմ.՝* Ս. Տարոնցի 152
ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ Լենին *(հատված «Ստալին» պոեմից)* . 154
ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ Լենին 164
ՎԵՐԱ ԻՆԲԵՐ Հինգ գեղեկ ու գիշեր. *Թարգմ.* Գ. Սարյան 166
ԶԱՄԲՈՒԼ Ցերգ յեղումի մասին. *Ռուս. թարգմ.՝* Ավ. Իսահակյան 167
ՍԱՆԴՐՈ ԵՈՒԼԻ Մեծ առաջնորդը. *Վրացերենից թարգմ.՝* Գ. Արտունի 168
ԵՐԳԱՇ Մեստոխ մի բաշկիրական *(ուզբեկական). Ռուսերենից թարգմ.՝* Արմ. Թամազյան 169
ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻ Ձյան փաթիլներ. *Ռուսերենից թարգմ.՝* Հռ. Պողոսյան 171
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԺԱՐՈՎ Լենինի բաղումը. *Թարգմ.՝* Գ. Բորյան 172
ՍՈՒԼԵՅՄԱՆ ՍՏԱԼՍԿԻ Լենինը. *Ռուս. թարգմանեց՝* Ավ. Իսահակյան 174
Ծովը հառաչում եր *(Ղրիմի թաթարերենից). Ռուս. թարգմ.՝* Ավ. Իսահակյան 177
ԱՇՈՒՂ ԳՐԻԳՈՐ Լենինը 178
ԱՇՈՒՂ ՎԵՐԴԻ Լենին 179
ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ Լենինը և Ստալինը 180
ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ Պատգամավոր 181
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ Լենին-դյուցազնի կռիվը . . . 185
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ Լենինի ծառը 188
ԱՐԱԶԻ Ինչպես յես տեսա Լենինին . . 191
ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ Լենին 193
ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ Լենինն ապրում է . . . 195
Ա. ԲԱՐՏՈ Ցերգ Լենինի մասին. *Թարգմ.* Ս. Տարոնցի 197
ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎ (ըստ Իսբախի). Լենինն ու Լի-Չանը . 197

ՍԻՄԱԿ	Ումն է մրցանակը	202
	Լենինի մասին (լոպարական ժողովրդական յերգ)	205
ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	Լենին պապին . . .	207
ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ	Շոգեքարշ № 127 . . .	208
ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ	Դարգագործը . . .	212
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՅԻ	Լենինին	213
ՎԵՍՊԵՐ	Իլյիչը Հոկտեմբերին Պետրոգրադում	214
ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ	Լենին	217
ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ	Զանս քեզ Ջան (ժողովրդական)	218
ԼԵՆԻՆՈՒ ԽԱՂ	Ասել է Պետրոս Շիրոյանը . .	221
ԼԵՆԻՆ ՈՒ ՍՏԱԼԻՆ	(քրդական ժողովրդական յերգ)	222
ՍՈՒԼԵՅՄԱՆ ՌՈՒՍՏԱՄ	Ցեսմատիսս կոտրեցի. Ադրբեջանե-րենից թարգմ. Վեսպեր . .	223
ԱՇՈՒՂ ՍԵՖԴԱՐ	Լենին. Ադրբեջ. թարգմ.՝ Վեսպեր	224
Տ. ՍՊԵՆԴԻԱՐՈՎԱ	Ցերգ Լենինի մասին. թարգմ.՝ Հ. Հայրապետյան . . .	225
	Ապրիլ և հունվար. թարգմ.՝ Գ. Սարյան	226
ԱՐԱՔՍ	Ի՞նչ լավն է Լենինը . . .	227
ՍԱՔՈ ՍԱՐԳՍՅԱՆ	Լենին գաչեցի	232
Բ. ԹԱԲՈՒԿԱՇՎԻԼԻ.	Ո՞վ եր նա. Վրացերենից թարգմ.՝ Ս. Ավչյան	233

Խորհրդային ժողկոր

Ժողովրդական պոեմ «Լենին փաշա»-ից փոխա-դրեց՝ Սարմեն	241
Լենինի յերգը. Դրի առավ բանահավաք Գ. Թար-վերդյան	251
Լենինի յերգը	252
Այժմ լուսավոր է տայգան (եվենկական հեքյաթ) ռուս. թարգմ.՝ Վ. Միքայելյան . . .	254
Լենինի յերգը. աշուղ Նազուք	
Լենինյան արդարություն (Բելոռուսական հեքյաթ) Ռուս. թարգմ.՝ Ս. Զորյան	261
Լուսնից և աստղերից ծնվեց Լենինը (ուզբեկա-կան լեգենդ). Ռուս. թարգմ.՝ Ս. Զորյան .	265

Կազմը, տիտուլը, գլխագիրը, գլխատառերը և վերջագիրը՝ Նկ. Ա. Դարիբյանի

Լեզ. խմբագիր՝ Վ. Թերզիբաշյան

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան

Սրբագրիչ՝ Ա. Դայան

Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տ. Մինասյան

Գլավլիտի լիցենզիա՝ Վ. 2020. Հրատ. 4768.

Գաղափար 820. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագրական 17 մամ.

Մեկ մամ. 24,480. Նշան. Հեղինակային 10 մամ.

Հանձնված է արտադրության 8 դեկտեմբերի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 10 ապրիլի 1939 թ.

Գեոհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65.

«Ազգային գրադարան»
NL0167578

7 [redacted] r

16327